891.54
Զ 83



ՍՏԵՓԱՆ
ԶՈՐՅԱՆ

Աստղաոտոտ դրոշ



Հայպետհրատ

ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ

ՍԱՎԱՌՆՈՂ ԴՐՈՇ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ



ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1960

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ

Մինասը ակնոցներն աչքերին, իր խանութի առջև նստած, լրագիր է կարդում։ Նրան լսում են պայտար Պողոսը, ժամկոչ Անտոնը, անտառապահ Վանոն, դարբին Թորոսը և մի քանի գյուղացի մարդիկ, կանայք ու երիտասարդներ։ Մինասի աջ կողմը, խանութի շեմքին, կավե ամանների մոտ, նստած է Տոլստոյի նման մի ծերունի, ձախ կողմը կանգնած է չոր-չոր դեմքով, ձեռքերը կրծքին խաչած. մի պառավ կին և միամիտ աչքերով սրան-նրան է նայում շարունակ։ Մյուս գյուղացիներն էլ իրար սեղմված, ոտքի վրա, շրջապատել են Մինասին։

Ամեն օր նրանք այսպես հավաքվում են Մինասի մոտ, և նա նրանց համար կարդում է պատերազմի մասին։

Այսօր էլ նա կարդում է պատերազմական լուրեր, և ամենքը, լուռ ու մունջ դեմք ընդունած, ինչպես այդ անում են եկեղեցում Ավետարանի ընթերցմանը ունկնդրելիս, լսում են նրան։

— «Գեր... մանա... կան միլի... տարիզմը,— կարդում է Մինասը աջ ցուցամատը շարժելով,— արդյունք է վիլ... հելմ Հոհեն... ցոլլ... երնի Եվրոպայում իր հեգե... մոնիան...»։

— Սպասիր, Մինաս,— ընդմիջում է նրան Տոլստոյի դեմքով ծերունին,— էդ հայերե՞ն ես կարդում։

— Իհարկե, հայերեն եմ կարդում,— պատասխանում է Մինասը.— չես տեսնո՞ւմ՝ հայերեն գազեթ է։

— Ոնց որ ռուսերեն ըլեր,— ասում է ծերունին։

— Իսկի էլ չէ, ո՞րտեղի ռուսերենն է, երբ հայերեն եմ կարդում,— ասում է Մինասը և շարունակում.— լսեցեք. «Եվ... րոպայում իր հեգե... մոնիան ստեղծելու»։

— Ի՞նչը ստեղծելո՞ւ,—ընդմիջում է Տոլստոյի դեմքով ծերունին։

— Մինաս, Մինաս, քե մատաղ,— վիզը ծռելով ասում է չոր-չոր դեմքով պառավը խանութպանին,— մի տես՝ ներսեսիս մասին բան կա՞ գրած...

— Սպասիր,— ասում է Մինասը և դառնում ծերունուն.— ուրեմն չիմացա՞ր ինչը... Որ էդպես է՝ կաց, նորից կարդամ։

Նույն բանը Մինասը կարդում է նորից։

Ծերունին և մի քանի հասակավոր գյուղացի տարակուսանքով նայում են իրար։

— Բան չհասկացա,— ասում է ծերունին,— ո՞վ գիտի՝ վատ ես կարդում։

— Վա՜տ,—խնդում է Մինասը,— կարդում եմ է՛ն, ինչ գրած է, իսկ դուք, որ չեք հասկանում, ես մեղավոր չեմ... «Վա՜տ ես կարդում»... Վեց տարի է գազեթ եմ ստանում, հիմի վատ եմ կարդո՞ւմ...

— Լավ, լա՛վ,— ասում է ծերունին ներողություն խնդրելու եղանակով,— կարդա, տեսնենք, էլ ինչ կա։

Մինասը շարունակում է լրագրի ընթերցումը առաջվա եղանակով.

— «Գերմանական զորքը տեղափոխվեց Արևելյան Պրուսիա»... Դե թո՛ղ գնան. դրանց հերն անիծա՛ծ... Գիտե՞ք ի՛նչ է ասում։ Ասում է՝ նեմեցների զորքը փախչում է պրուսացիների երկիրը։ Ոնց որ էրևում է, ռուսներից շատ են վախենում։

— Լա՛վ, Մինաս,— ասում է պայտար Պողոսը, կողքը քորելով,— էդ նեմեցները նեմեցներ են, բա էդ պրուսացիներն ովքե՞ր են։

— Պրուսացինե՛րը,— երկարացնում է Մինասը,— դրանք էլ ուրիշ ազգ են։

— Հաա՜,— բացականչում է անտառապահ Վանոն։

— Իհարկե։ Դե, լա՜վ, լսեցե՛ք, կարդում եմ։

Բոլորը լռում են։

Մինասը շարունակում է.

— «Պետրո... գրադ։ Գերմանացիները հեռացան Լոձից»... Տեսնո՞ւմ եք. գերմանացիներն իրենց քաղաքները թողած՝ փախչում են։

— Կարծեմ՝ էդ քաղաքը ռուսներինը պետք ա լինի,—նկատում է դարբին Թորոսն անվստահ.— Ոսկանի սալդաթ տղեն էդ քաղաքումն է ծառայում։

Մինասը խեթ-խեթ նայում է դարբնի դեմքին։

— Ո՞վ է ասում,— առարկում է նա,— ժամիցը ես եմ գալի, «ողորմի աստվածը» դու ես տալի՞ս։ Գազեթը ես եմ ստանում, հիմի...

— Լա՛վ, լա՛վ, կարդա՛, տեսնենք էլ ի՛նչ կա,— ասում է ծերունին հաշտարար եղանակով։

Մինասը կարդում է.

— «Պարիզ.— Բրիտանական ականակիրը Օստենդեի մոտ խարիսխ ձգեց»... Ա՛յ տուր. էդպես էլ հարկավոր է...

— Ի՞նչ է ասում,— հարցնում է պայտարը, գլուխը քորելով։

— Ասում է՝ ռուսները բոմբ քցեցին նեմեցների քաղաքի վրա։

— Պա՛հ,— բացականչում է անտառապահը։

— Հապա՛. մերը չմեռնի ռուսների, սրանց ո՞վ կարա հաղթի։ Ես ասել եմ՝ նեմեցները էնպես մի տուր պետք է ուտեն, որ էլ օխտը տարի մտքերիցը չընկնի... Նրանց տեղն է։

— Էդ լավ ա,— ասում են գյուղացիները և գոհունակությամբ նայում իրար,— դենը կարդա, տեսնենք էլ ի՛նչ կա։

— Մինաս, թե արևդ սիրես,— նորից ասում է պառավը ձեռները կրծքին խաչած,— մի տե՛ս Ներսեսիս մասին բան կա՞...

— Մի քիչ սպասի,— ասում է Մինասը և թերթը շուռ է տալիս մյուս երեսի վրա։

Պառավը լռում է և շարունակում անմիտ աչքերով սրանց նայել։

— Լսեցե՛ք,— կարդում է Մինասը։—«Լոնդոն։ Ճապոնիան զորքեր է ուղարկում Ռուսաստան... եռ... յակ համա... ձայնու ... թյանը օգնելու»... դա՛ էր պակաս։ Գիտե՞ք ինչ է ասում։ Ասում է՝ ճապոնացիք գալիս են Ռուսաստան կռվելու։ Հըը՞մ... ի՞նչ կարան անեն։ Ճապոնացիք չէ, թեկուզ նրանց պապի պապն էլ գա, ռուսին բան չեն կարող անել։ Էն վաղ էր, որ էշը կաղ էր... էն ժամանակ ոսի զորքի մեջ հայեր չկային, հիմի ինչքա՞ն ուզես...

— Դրուստ է, հիմի շատ կան,— ասում են մի քանի գյուղացի միասին հառաչելով և հոգնությունից հենվում են մյուս ոտքի վրա։

— Էն ժամանակ իմ Ներսեսին էլ չտարան,— ասում է պառավն ինքն իրեն։

— Իսկ դուք տեսե՞լ եք էդ ճապոնացիներին,— հարցնում է Մինասն իր ունկնդիրներին։

— Հա՛,— ասում է պայտարը վիզը քորելով,— մեր րեխի գրքումը կա։

— Դու դեռ պատկերն ես տեսել,— ասում է Մինասը խընդալով և դառնում գյուղացիներին.— էդ ճապոնացիներին որ տեսնեք, ծիծաղներդ կգա. անճոռնի զատեր են՝ քիզ ու կես, որ գլխներին խփես՝ կհանգչեն, որ փեշդ քափ տաս՝ սիրտնեերը կճաքի... Դրանք ի՞նչ են, որ ռուսներին հաղթեն։

Գյուղացիները խորին հետաքրքրությամբ հետևում են Մինասի պատմությանը. նրանցից շատերի դեմքին զարմանք է նկատվում։

— Իսկ էդ ինգլիզները հայ-քրիստոնյա են, չէ՞,—հետաքրքրվում է Տոլստոյի նման ծերունին։

— Իհարկե,— պատասխանում է Մինասը,— նրանք էլ, ֆրանցուզներն էլ...

— Իսկ էդ նեմեցները ի՞նչ ազգ են,— նորից հարցնում է ծերունին։

— Նեմեցնե՛րը,— մտածում է Մինասը,— լավ միտս չի. նրանք կամ ֆրանգ պետք է լինեն, կամ... Ինչ որ է։ Լսեցե՛ք. «Պետրոգրադ։ Ռուսները գրոհ տվին Յարոսլավի վրա. Բշնամու աջ թևը նահանջեց դեպի հարավ-արևելք, ձախ թևը և կենտրոնը մնում են իրենց դիրքերում և թույլ ընդ... դիմադրություն են ցույց տալիս»...

— Իսկ կովի մասին բան չկա՞— ընդմիջում են մի քանի գյուղացի միասին, դրանց հետ և Տոլստոյի նման ծերունին։— Կովի մասին կարդա...

— Դեռ չէ. էդտեղ էլ կհասնենք,— ասում է Մինասը և թերթը նորից շուռ տալիս մյուս երեսի վրա։— Տնաշենե՛ր, գազեթ կարդալու ժամանակ էդքան չեն խոսի. ինչ-որ կարդում եմ, լսեցե՛ք. չեք հասկանո՞ւմ— կրացատրեմ...



Գյուղացիները մեղավորի պես իրար են նայում, ասես կամենում են մեղքը միմյանց վրա գցել, և ոչինչ չեն խոսում։ Իսկ Մինասը, թերթը շուռ տալով, նայում է վերևից ներքև և մեջտեղից կարդում.

— «Ֆրանսիական զորաճակատում թշնամին ընդհարվեց ֆրանսիական կավալերիայի հետ։ Կավալերիան գրոհ տվեց և ստիպեց թշնամուն նահանջել։ Թշնամին անկարգ նահանջում է»։

— Էդ հե՛չ, Մինաս,— ասում են գյուղացիները,— դու կռվի մասին կարդա, տեսնենք ի՞նչ կա։

— Ո՛նց թե՝ հեչ,— ասում է Մինասը,— գազեթում ինչ-որ գրում են՝ պետք է կարդալ... Կռվի մասին եք ուզում, կըռվի մասին էլ կկարդանք...

Գյուղացիներն ուրախացած բացականչում են.

— Հա՛, հա՛, կռվի մասին կարդա...

— Մինաս,— ասում է վերստին պառավը,— բա Ներսեսի մասին չես կարդո՞ւմ։

Մինասը չի լսում պառավի խոսքը. նա ուշադրությամբ ուրոնում է պատերազմի լուրերը։ Ել երկար որոնելուց հետո, վերջապես, կարդում է.

— «Իտալական ժողովուրդը հուզված է։ Իտալիան Ավստրիայից պահանջեց Տրիեստն ու Տրիենտը, հակառակ դեպքում զենքի է դիմելու»։

— Ինչ է ասո՞ւմ,— հարցնում է դարբին Թորոսը,— լավ չհասկացա։

Մինասն ակնոցի վերից խեթ-խեթ նայում է նրան և գլուխըն օրորում։

— Էստեղ ի՞նչ կա չհասկանալու որ,— ասում է նա,— պարզ հայերեն գրած է. ասում է՝ Իտալիան Ավստրիայից պահանջել է...— նայում է լրագրին,— Տրիեստն ու Տրիենտը... Հիմի հասկացա՞ր։

— Չէ՛,— գլուխը շարժում է դարբինը,— դրուստն ասած՝ խելքս չի կտրում թե էդ ի՛նչ է պահանջում։

— Հա՛, դրուստ, ի՛նչ է պահանջո՞ւմ,— ասում են մի քանի գյուղացի միասին։

Մինասը նորից նայում է լրագրին։

— Տրիեստն ու Տրիենտը,— պատասխանում է նա։

— Իսկ ի՞նչ բաներ են դրանք,— հարցնում է դարբինը նորից։

— Պա՛հ, քո տունը չքանդվի,— զարմացած ասում է Մինասը,— դու բոլորովին սարի անասուն ես եղել... էստեղ պարզ ասում է, թե Իտալիան Ավստրիայից պահանջում է է՛ս ու է՛ն. ասում է, թե էդ բաները չտաս, սուրը վեր կառնեմ ու ամենքիդ սրի բերանը կքաշեմ։

— Պա՛հ,— բացականչում է անտառապահը։

— Հապա՛,— ասում է Մինասը,— հանաք բան գիտե՞ք։ Նրան Իտալիա կասեն։ Շա՛տ զորեղ տերությին է...

— Էդ լա՛վ, Մինաս,— ասում է դարբինը ու նորից համառությամբ կրկնում իր հարցը.— ամոթ չըլի ասելը, ես էլի չըհասկացա, թե էդ ինչ բաներ են, որ պահանջում է-էդ... ո՞նց է։

— Իտալիան,— վրա են գցում այս ու այն կողմից։

— Հա՛, Իտալիան,— կրկնում է դարբինը։

Մինասը մի րանի վայրկյան ակնոցի վերևից անթարթ նայում է դարբնի չեչոտ դեմքին և բացականչում զարմացած.

— Վա՛հ, քու տունը չքանդվի, էդքան էլ անհասկացող մա՞րդ կլինի, որ դու ես։ Էս ահագին խալխը (ցույց է տալիս իր ունկնդիրներին) հասկանում է, դու չես հասկանո՞ւմ... Քեզ պարզ բացատրում եմ, որ Իտալիան Ավստրիայից պահանջում է,— նայում է լրագրին,— Տրիեստն ու Տրիենտը. ասում է՝ եթե չտաք, բոլորիդ սրի բերանը կքաշեմ, ձեր հերը կանիծեմ... էլ ի՞նչ կա էստեղ չհասկանալու...

— Թրուստն ասած,— ասում է դարբինը,— չեմ հասկանում, մեղքս ի՛նչ թաքցնեմ։

Մինասն ակնոցի վերևից. անթարթ հայացքով նորից նայում է նրան և գլուխը շարժելով՝ զարմանում դարբնի այդքան տգիտության վրա։

— Լա՛վ, լա՛վ,— ասում է Տոլստոյի դեմքով ծերունին,— կարդա, տեսնենք էլ ի՛նչ կա։

— Ներսեսի մասին բան չկարդացիր, Մինաս,— ասում է պառավը վիզը ծռելով։

Եվ լրագրի ընթերցումը շարունակվում է նորից։

ԽՆՁՈՐԻ ԱՅԳԻՆ

I

Մեծ և հարուստ է Օրան ավանը. ունի լավ տներ, շատ խանութներ, որ եռուն առևտուր են անում շրջանի գյուղերի հետ. ունի հին, ընդարձակ մի եկեղեցի և երեք տերտեր, որ միշտ կուվում են ծխերի համար, իսկ ժամերգության միջոցին աշխատում են շփոթել կամ սխալեցնել իրար։ Իբրև շրջանի կենտրոն՝ Օրանն ունի և դպրոցներ, և հիվանդանոց, և բանտ։ Բայց դրսից եկած մարդու համար ամենից հետաքրքրականը այն խնձորի այգին է, որ ընկած է Օրանի արևելյան կողմը։ Ասենք տեղացիներն էլ պակաս չեն հետաքրքրվում այդ այգով և տեղն եկած ժամանակ նույնիսկ պարծենում են նրանով։ Երբ ուղևորն արևելյան կողմից գալիս է Օրան՝ ամենից առաջ նրան հանդիպում է այդ ցածրապարիսպ այգին. մի իսկական այգի, որի ծառերը կանոնավոր շարքեր կազմած, հավասար հեռավորության վրա, գրեթե հավասար բարձրությամբ կանգնած են ինչպես պարի պատրաստ, ձեռք-ձեռքի տված՝ գարնանը կրով ճերմակած բներով, ամառը՝ ժպտուն ու լուրջ խնձորներով բեռնված, իսկ աշնանը՝ տերևաթափ ու հոգնած, քաղից ասես վիրավոր։ Այգու մի ծայրին էլ երևում է փոքրիկ սպիտակ մի տուն՝ կղմինդրե տանիքով, նույնպես ծառերով շրջապատված։

Դա Օրանում և շրջանում հայտնի Մարտին ապոր այգին էր։ Մերունի Մարտինն ինքն էր տնկել այդ այգին երիտասարդ ժամանակ և ինքն էլ պահում, խնամում էր այն ու դրանով ապրում։ Ամբողջ շրջանը համարյա նրանից էր խնձոր գնում. մինչև իսկ մոտիկ քաղաքից գալիս էին արկղերով խնձոր տանելու, մանավանդ «ձմեռվա խնձոր», որոնց տեղացիք «անպորտ» և «անտոնկա» էին անվանում։ Իսկ շրջանի գյուղացիները խնձոր գնում էին ոչ թե փողով, այլ ցորեն, ձավար, պանիր կամ յուղ էին բերում փոխանակելու... Ու Մարտին ապերը խնձորի եկամուտով ոչ միայն ապրում, այլև պահակ էր պահում, խնձոր հավաքողներ էր վարձում, որ միշտ կանայք էին լինում,— կանայք այդ աշխատանքն ավելի լավ են անում, քան տղամարդիկ։ Խնձորի եկամուտով նա շինեց և իր ճերմակ տունը, գնեց մի երկու փեթակ մեղու, որ մի քանի տարվա մեջ այնքան բազմացան, որ նա արկղեր չէր հասցնում, և պատահում էր մեղուների պարսը թռչում-գնում էր անտառ և ապաստանում այնտեղ։ Բայց Մարտին ապոր հոգան ավելի այգին էր, և նա զարմանալի հասկանում էր ծառերի լեզուն. մասամբ փորձից, մասամբ ծանոթ գյուղատնտեսից նա բավականաչափ գիտելիքներ ուներ. գարնանը միշտ կրով ճերմակացնում էր ծառերի բները, որ, ինչպես ինքն էր ասում, «լապաստրակներն» անտառից չգան-կրծեն և, մյուս կողմից՝ որդերը չբարձրանան վերև։ Երբ ծառերի նոր կոկոնած կամ ծաղկած ժամանակը պարզկա-ստոր գիշերներ էին լինում և ցրտահարության վտանգ, նա այգու զանազան կողմերում սիթար ու անցյալ տարվա խոնավ տերևների կույտեր էր վառում և այգին լցնում թանձր ծխի մլարով...ու այդպես քանի անգամ ծառերը փրկել էր ցրտահար լինելուց։ Հետո, գարունը բացվելուն պես, նա ուշադիր դիտում էր ամեն մի ծառ և որոշում թե ո՛ր ճյուղն է հիվանդ, ո՛րն ավելորդ երկարած, ո՛րը պիտի կտրել բոլորովին, որպեսզի ծառն առողջ մնա։ Այդ ժամանակ նա ահագին մկրատը ձեռքին շրջում էր ծառերի արանքում, ինչպես ոչխար խուզողը հոտի մեջ։ Մարտին ապերը լավ գիտեր նաև թե ե՛րբ ու ի՛նչպես պետք է ջրել ծառերը, որ «ծաղիկները չթափվեն», և դա կոչվում էր «ծաղկաջուր»։ Նա, կարելի է ասել, մասնագետի հեղինակություն

ուներ. գյուղացիները նրան համարում էին «ծառի բժիշկ». և գյուղում ո՛ւմ ծառը վատ էր լինում, խորհուրդ էին տալիս դիմել Մարտին ապորը.

— Մարտին ապորը կանչիր՝ տես ի՛նչ է ասում։

Առաջ նա այգին ու տունը կառավարում էր կնոջ՝ Սաբեթ նանի հետ, սակայն մի տարի առաջ, քաղից հետո, պառավը մեռավ, թողնելով Մարտին ապորը մեն-մենակ։ Ճիշտ է, նրա պահակը՝ Սահակը, ինչպես տիրուհու կենդանության օրով, այնպես էլ հիմա թե՛ տան բան էր անում և թե՛ գնումներ էր կատարում, կամ աղչիկներն էին շուտ-շուտ գալիս տունը կարգի բերում, բայց Մարտին ապորը թվում էր միշտ, թե բանն առաջ չէր գնում այնպես, ինչպես պառավի օրով։ Ձմեռն ու գարունն անցան մի կերպ, բայց հիմա, երբ խընձորները հասել էին, հարկավոր էր ժամանակին քաղել, հավաքել, ծախել... Ճիշտ է, առաջվա պես խնձոր հավաքողներ ուներ, բայց մնացած գործը ինքն ու Սահակը չէին հասցնի։ Աղչիկներին էլ ծերունին համարում էր հյուրեր և ոչ օգնող։ Ինչ վերաբերում է փեսաներին՝ նրանք էլ իրենց գործն ունեին. մեկը դերձակ էր գյուղում, մյուսը՝ ավագ փեսան, գյուղի կենտրոնում մեծ խանութ ուներ, շատերի ասելով՝ «ամենալավ» խանութը, ուր գաստրոնոմիչեսկի ապրանքի հետ ծախում էր գինիներ և ուրիշ խմիչքներ։ Դերձակ Վանեսն անընդոջ այցելում էր միայն կիրակի օրերը, իսկ խանութպանը՝ Արտուշը գալիս էր մեկ-մեկ. նա ազատ ժամ քիչ էր ունենում, իսկ կիրակի օրերն ավելի քիչ, այդ պատճառով կառքով գալիս էր, կառքով վերադառնում, բայց ամեն գալիս՝ հետը բերում էր խանութից մի-երկու շիշ գինի կամ օղի։

— Հը, պապաշա, ի՞նչպես ես,— ասում էր նա ձեռքը աներոջ ուսին կամ մեջքին խփելով։

Ապա հետաքրքրվում էր, թե ի՛նչ կարիքներ ունի աներ, ի՛նչ ցանկություններ, որ ինքը պատրաստ է կատարել. և որովհետև «պապաշան» ոչ մի ցանկությա՞ն կարիքի մասին չէր խոսում, նա շարունակում էր խնամատարի հոգածությամբ.

— Մի՛ քաշվի, պապաշա, եթե մի բան կա՝ ասա՛։ Ես կանեմ, կաջողեցնեմ։ Ինքը պրիստավը, գիտես, ինձանից է

առուտուր անում։ Տանուտեր, բան — բոլորը... Եթե մի բան լինի՝ ասա, եթե խնձոր մնա՝ իմացրու. իսկույն մուշտարի գտնեմ...

Ու դարձյալ խոսում էր իր կապերի, իր ծանոթությունների ու ազդեցության մասին, ապա՝ հրաժեշտի պահին՝ գինու կամ օղու շշերի փաթեթները բաց էր անում և շշերը հանդիսավոր ձևով, ինչպես թանկարժեք նվերը կմատուցեն, դնում էր աներոջ առաջ.

— Առավոտ, ճաշի խմի՛ր, պապաշա։ Լավ, իսկական նատուրալնիյ գինի է, պապաշա։ Պրիստավն էլ սրանից է տանում։ Եթե հավանեցիր՝ էլի կբերեմ...

Մարտին ապերը հավանում էր. թե չէր հավանում՝ խանութպանը շարունակում էր բերել իր սովորական նվերը—գինի կամ օղի. նրան մանավանդ ուրախացնում էր այն, որ տեսնում էր նախորդ բերածները չկան. «ուրեմն հալիվորը խմում է», մտածում էր նա.— Սա լավ նշան է... Բայց նա չէր իմանում, որ Մարտին ապերն ինքը չի խմում, այլ դրանցով հյուրասիրում է ծանոթ-բարեկամի, ինչպես օրինակ, ջրբաշխ Մեսրոպին և իր քավոր Ամբակումին (որին տեղացիք կրճատ՝ Անբակ էին ասում), որ մեկ-մեկ, իբրև հին ծանոթներ, գալիս էին այգին՝ զրուցելու։ Խանութպանը, իբրև ավագ փեսա, իրեն համարում էր ծերունու առաջին ժառանգը և, ինչպես ինքն էր ասում, աշխատում էր նրա «աչքը մտնել», որ մյուս փեսան՝ դերձակ Վանեսը, ախոյան չդառնա։ Բայց ծերունի Մարտինը, փեսացի նվերն անխոս ընդունելով, նրան լսում էր անտարբեր, ինչ-որ մտքերով տարված, այգու ծառերով կամ պտուղներով զբաղված, և երբ փեսան գնում էր, իր սուր աչքերի հայացքով մի վայրկյան նայում էր նրա ետևից և գլուխը տարուբերում ծանրորեն.

— Ջաշանա՛կ։ Ինձ հիվանդի՞ տեղ է դնում թե հալիվորի...

Իսկ փեսան մտածում էր, որ ինքը շատ լավ, շատ խելոք բան է անում. մտածում էր, որ ծերունին մի երկու տարի հարկիվ ապրի, այգին թողնելու է իրեն. ուրեմն մի քանի շիշ գինին կորած բան չէ... Եվ նա ուրախ էր, որ քենակալը՝ դերձակ Վանեսը երևի չի էլ հասկանում, թե պետք է ծերունու սիրտը

շահել։ Եվ որովհետև խանութի առևտուրը նրան հնարավորություն չէր տալիս երկար բացակայելու, շուտով վերադառնում էր կառքով, և որովհետև հաճախ էլ այցելել չէր կարող, ուղարկում էր կնոջը՝ Նոյեմին.

— Գնա, շուտ-շուտ երևացիր. բան կըլնի՝ արա՛. գլուխը լվա՛, շորերը լվա՛։

Ամուսնու այդ սրտացավությունը դեպի իր հայրը նոր էր և ուրախացնում էր Նոյեմին, բայց նա չէր հասկանում, թե ինչո՛ւ է մարդն շտապեցնում, հորդորում ամեն օր գնալ տեսնել նրան։

— Ի՞նչ կա, ա՛յ մարդ, ամեն օր։ Անգինը գնում է, հերիք է. նա ավելի թեթև է երեխից,— նկատեց Նոյեմը մի օր։

Անգինը Նոյեմի փոքր քույրն էր— դերձակ Վանեսի կինը։

Կնոջ պատասխանը դուր չեկավ խանութպանին. նա գլուխն օրորեց զարմացած.— «Ուզո՞ւմ ես ուրեմն դերձակ Վանեսը դառնա հորդ ժառանգը»։ Կինը լավ չըմբռնեց մարդու ասածը. և ամուսինը քմծիծաղ տվեց.

— Կերթա հորդ աչքը կմտնի, ու մի օր էլ տեսար հերդ բաղը գրել է գլխին։

Այդ օրվանից Նոյեմն օր ու մեջ գնում էր այգի՝ հոր մոտ, մանկահասակ երեխաներին տանը մենակ թողնելով։ Գնում անում էր ամեն բան, ինչ անհրաժեշտ էր լինում տանը և հորը։ Բայց երբեմն գնում-տեսնում էր քույրը՝ Անգինը ամեն ինչ արել է. տունը մաքրել, հոր հագուստները լվացել. նույնիսկ պատահում էր, եփած ճաշ էր բերած լինում հոր համար կամ ճաշ էր եփում։ Այդ ժամանակ Նոյեմը, քրոջից ետ չմնալու համար, ասելու որևէ բան էր գտնում.

— Էս դռներն ի՞նչ կեղտոտ են։ Ով գիտե նամից հետո չեն լվացվել,— ասում էր նա հոր ու քրոջ ներկայությամբ, և անմիջապես ձեռները քշտում էր ու սկսում սենյակի դռները սրբել կամ լվալ։— Ուրիշ էլ ի՞նչ ունես անելու, հայրիկ,— հարցնում էր նա նորից քրոջ ներկայությամբ, ձեռի գործը վերջացնելուց հետո։

— Էլ ի՛նչ պիտի ըլի,— ասում էր հայրը, չիբուխը կպցնելով։— Անգինն ապրի, արել է արդեն։

Հոր պատասխանը վշտացնում էր Նոյեմին. նրան դուր չէր

գալիս, որ քույրն իրենից առաջ է գալիս հոր տուն, ամեն բան անում և արժանացել է արդեն հոր լավ վերաբերմունքին։ Ու աշխատում էր ետ չմնալ քրոջից. ինքը նույնպես եփած ճաշ էր տանում հորը, առաջարկում էր գլուխը լվանալ կամ որևէ ուրիշ բան, բայց Անգինն արդեն արած էր լինում։ Դարձյալ այդ Անգի՜նը... Նոյեմին թվում էր, թե քույրն արդեն շահել է հոր համակրանքը, ու ինքը, նույնպես նրա համակրանքը գրավելու համար, նորից որևէ կարևոր բան էր գտնում անելու, սրտացավ խորհուրդներ էր տալիս հորը կամ մեկ-մեկ երեխաներին տանում էր պապին, որ հայրը կապվի նրանց. սովորեցնում էր, որ պապին բարևեին՝ ձեռը համբուրեն, կամ՝ ասել էր տալիս. «կուզե՞ս, պապի, մնամ քեզ մոտ, մենակ ես»։ «Չէ, բալիկս,— ասում էր պապը։— Մենակ կտխրես. խաղի ընկեր չկա էստեղ»։

Մյուս փետրվարի՝ դերձակ Վանոն անհոգն այցելում էր միայն կիրակի օրերը։ Ածիլվում էր, մաքուր հագնվում, բեղերը սրում այտերի վրա, միակ փոքրիկ աղջկան գրկում և կնոջ հետ ճանապարհ ընկնում «բաղը», ամեն անգամ հետները ոչխարի թարմ միս տանելով։ Կինը՝ Անգինն զբաղվում էր հոր տունը կարգի բերելով—անկողինները հանում էր՝ «գցում արևը», թափ տալիս, սենյակները մաքրում, ապա սկսում ճաշ եփել։ Իսկ դերձակը երեխայի հետ մանր էր գալիս ծառերի տակ կամ անհոգն օգնում որևէ բանում։ Դերձակը լուսկյաց մարդ էր, նա գինեվաճառի պես ո՛չ մխիթարանքի խոսքեր էր ասում ամերոջը, ո՛չ պատրաստակամություն էր հայտնում այս կամ այն բանն անելու, ո՛չ էլ խորհուրդներ էր տալիս, լավ իմանալով, որ ծերունին ինքը գիտի իր անելիքը։ Եթե մի բան անում էր դերձակը՝ անում էր անխոս, և այդ դուր էր գալիս Մարտին ապորը։ Տեսնելով անհոգ շալվարը մաշված-պատռված՝ դերձակը հենց հագին կարկատեց այն և հետևյալ կիրակի բերեց մի նոր շալվար, ոչ ինքն էր կարել. «քեզ համար է, հայրիկ»։ Ու էլ ոչ մի խոսք։ Ամերունին գոհ էր նրա վարմունքից, գոհ մնաց և այդ ուշադրությունից, ու իր գոհունակությունը չթաքցրեց նաև մեծ աղջկանից։

— Վանեսն ապրի. շալվարս մաշվել էր, մի նոր շալվար բերեց։

Նոյեմն իրեն վատ զգաց, ոչինչ չասավ հոր մոտ, բայց երեկոյան ամուսնուն հայտնեց, թե որքան հայրը գոհ էր մնացել Վանեսից։

— Տեսնո՞ւմ ես, քոսոտ դերձակն ուզում է հորդ աչքը մտնի,— գլուխը տարուբերեց գինեվաճառը ու միառժամ գնաց-եկավ սենյակում, ապա մեկեն կանգ առավ կնոջ առաջ։— Մենք ի՞նչ կարող ենք առնել...

Եվ ամուսիններն սկսեցին խորհրդակցել, թե ի՛նչ հարմար բան կարելի է գնել ծերունու համար, բայց մինչ կգլուխնեին առնելիք նվերը, Նոյեմը բացատրեց, որ բացի շալվարը, հոր համակրանքի պատճառը կարող է լինել և այն, որ դերձակն ամեն կիրակի կնոջ, երեխայի հետ գնում է այգի և ամբողջ օրը մնում այնտեղ, օգնում նրան։

— Ախր, իմ լավ առուտուրն էլ քարսի պես կիրակի օրն է,— մտահոգվեց խանութպանը։— Դու շուտ-շուտ գնա, բաղը ձեռքից չընկնի,— շարունակեց նա, բայց իսկույն կանգ առավ։— Ասենք կիրակի օրերը ես էլ կգամ մի երկու ժամով, առավոտները. բայց հետո՝ չեմ կարող։

— Թեկուզ էդպես,— ուրախացավ կինը։— էդ ավելի լավ։

Եվ նրանք էլ սկսեցին կիրակի օրերը գնալ միասին հոր մոտ։ Գնում էին միշտ վաղ. երբ տեսնում էին դերձակը չի Նկել՝ ուրախանում էին, սկսում էին հետաքրքրվել այգու աշխատանքով, հոր վիճակով, առողջությամբ, պատմում Լին գյուղի նորություններից, իսկ երբ դերձակը գալիս էր ընտանիքով կիրակնօրյա հագուստներով, սովորականի պես, մաքուր ածիլված, սև քամվ բեղերը ակաների վրա ոլորած— գինեվաճառի ու Նոյեմի դեմքերով տխրություն ամպ էր անցնում. Թվում էր նա Թույլ չի տալու ուրախանան, ինչպես իրենք են ուզում։ Բայց դերձակը ոչնչով չէր խանգարում նրանց. սովորական հարց ու բարևից հետո՝ երեխայի հետ անցնում էր ծառերի տակ, աղջկանը պտուղներ ու ծաղիկներ տալու, զբոսնելու։ Այնպես հանդարտ, ինքնամփոփ ու լռակյաց բնավորություն ուներ այդ դերձակը։

— Տե՛ս ինչպես էլ անմեղ է ձևանում,— արմունկով հր-

Հայկական ՍՍՀ

րում էր կնոջը խանութպանը։— Տեսնում ե՞ս էստեղ ենք՝ չի մոտենում։

Մի կամ երկու ժամ մնալուց հետո նա շտապում էր խանութ։— «Դե, Նոյեմ, ես գնացի, ուշդ վրադ պահիր»...

Դա նշանակում էր հետևիր դերձակին, որ նա աներոջ «աչքը չմտնի»։

Հետո մոտենում էր Մարտին ապորը և ձեռը խփում նրա մեջքին կամ թիկունքին։

— Դե, պապաշա, ղոչաղ կաց. ես էլի կգամ։ Էն օրվա գինուց բերել եմ։ Խմի՛ր, դարդ մի՛ անիր։ Բան հարկավոր լինի՝ ասա՛։ Դու գիտես որ...

Մարտին ապերը միշտ աշխատանքով զբաղված, առանց գլուխը բարձրացնելու, քաղաքավարության համար մի «լավ» էր ասում կամ՝ ոչինչ, ու շարունակում գործը, մտքում կամ կիսաձայն կրկնելով.

— Ջալանա՜կ։ Էնպես էլ բարձր է խուսում, կարծես խուլ եմ։

Իսկ դերձակը մինչ այդ, երեխայի հետ պտտելուց հետո, օգնում էր ծերունուն ծառերի ճղները կտրելու կամ պահակ Սահակի հետ կտրած ճղները քաշում էր մի կողմ դասելու՝ իբրև ձմեռվա վառելիք, կամ՝ պտուղներից կռացած ճղները բարձրացնում էր, որ աները նեցուկներ դնի նրանց տակ, մինչև որ կանայք, սեղան պատրաստելով, կանչում էին ճաշի։ Ճաշը, ըստ սովորության, ուտում էին շատ քիչ խոսքեր փոխանակելով։ Նոյեմը փեսայի ու քրոջ լռության մեջ տեսնում էր ծածկամտություն.— «Մտքներում ինչ-ո՞ր բան կա, չեն ասում»... Եվ մռայլվում էր, երբ հայրը դերձակից մի խորհուրդ էր հարցնում կամ թութուն էր խնդրում։ Նոյեմն իսկույն միջամտում էր խոսակցությանը.

— Թութո՞ւն։ Ես Արտուշին կասեմ քեզ համար լավ թութուն բերի, հայրիկ։

— Ոչինչ, նրան նեղություն մի՛ տա, վանեսը կբերի,— վրա էր բերում հայրը։

Բայց Նոյեմը հոր պատասխանի մեջ նկատում էր ուրիշ բան և շարունակում էր.

— Վանեսը, հայրիկ, եկող կիրակի՛ պիտի գա, գուցե՞ քեզ ավելի շուտ է հարկավոր...

— Չէ, մինչև կիրակի ունեմ,— քիսան հանելով՝ չիբուխը լցնել էր սկսում Մարտին ապերը։

Ճաշից հետո ծերունին պառկում էր կամ, ինչպես ինքն էր ասում, «թեք» էր ընկնում պատշգամի թախտին՝ գորգի վրա և ծխում մտախոհ։ Իսկ աղջիկները, երբ սեղանը հավաքում էին, ամանները լվանում ու պատրաստվում գնալ, հայտարարում էին ամեն անգամ, ինչպես հիվանդին սիրտ տան.

— Մենք էլի կգանք, հայրիկ։

Մարտին ապերն անխոս գլխով էր անում,— լավ։ Ամեն անգամ, երբ փեսաները գալիս էին ու գնում, նրանց թվում էր, թե փրենց այցելությամբ իսկ մխիթարում են մենակ ծերունուն, կատարում են իրենց պարտքը, և նա պետք է գոհ լինի իրենցից այդ ուշադրության համար. այնինչ Մարտին ապերը, նրանց մխիթարանքի ճիգը տեսնելով, հիշում էր իր պառավին և ավելի տխրում. դրանց շրջապատում նա ավելի խորն էր զգում իր մենակությունը, անգամ ունենում էր ըզգացումներ, որ նման էին նախանձի. նախանձում էր, ինչպես շատ տղամարդկանց, այնպես էլ փեսաներին, որ նրանք մենակ չեն իր նման, որ սրտակից ունեն, տեսակցությունը վարող ու հսկող, իսկ ինքը՝ ոչ... Հիշելով քառասուն տարիների իր կենակցին՝ հանգուցյալ պառավին, երբեմն նրա սիրտը փուլ էր գալիս և Մարտին ապորը համակում էր մի խորը թախիծ, որ ստիպում էր նրան դնդնալ անխոս...

Ինչպես ամեն տարի, այդ ամառ էլ Մարտին ապերը երկու-երեք կին էր վարձել, որ մորգերը քաղհանեն, թափված խնձորը հավաքեն, քաղեն, տեսակավորեն... Երկուսը գյուղի չքավոր կանայք էին՝ տարեց ու խեղճ և այնքան իրար նման, ասես քույրեր լինեին. երրորդը՝ գաղթական կին էր՝ անունը Նունուֆար։ Նա համեմատաբար շատ չահել էր և գործի մեջ ավելի ժիր, քան մյուս երկուսը, սակայն խնձորի գործը լավ չէր իմանում. մյուսները վարժ էին. գիտեին ի՛նչպես պետք է ծառը թափ տալ, ո՛ր խնձորը քաղել, ի՛նչպես տեսակավորել

ու դարսել կողովներում։ Նունուֆարն այդ ամենը չգիտեր, և Մարտին ապերը մի քանի անգամ հասկացրեց նրան, թե ի՛նչպես պիտի անել. ու մի քանի անգամ «վրա գցելուց» հետո — Մարտին ապոր համար էլ անսպասելի— Նունուֆարը շուտով ցույց տվեց զարմանալի շնորհք ու ճարպկություն։ Այնպես արագ ու խնամքով էր անում ամեն բան, որ կյանքը կարծես խնձորի այգումն էր անցրել. հետո այնպես շուտ սովորեց տեսակների գները ու կշռոքի «լեզուն», որ Մարտին ապերը շուտով կշռելը հանձնեց նրան, որովհետև պահակ Սահակը, շատ զբաղված, հաճախ շփոթում էր կշռաքարերը, երկու ֆունտանոցի փոխարեն երեք ֆունտանոց էր դնում, կամ ընդհակառակը։ Հաշվելու մեջ էլ Նունուֆարի միտքն արագ էր գործում. մինչ Մարտին ապերը ծառի տակ, նստարանին նստած, համրիչի հատիկները կշրխկացներ, Նունուֆարն ասում էր ո՛րքան է։

— Ապրե՛ս, Նունուֆար. դու ինձանից շուտ հաշվեցիր։

Եվ այնուհետև, երբ խնձորը կշռում էին՝ նա հաճախ Նունուֆարին էր հարցնում, թե ո՛րքան է անում. և Նունուֆարի ասածները միշտ անսխալ էին լինում։ Մյուս կողմից, տեսնելով նաև մաքուր աշխատանք է անում, Մարտին ապերն սկսեց մեկ-մեկ էլ տան գործեր հանձնել նրան, երբ աղջիկները չէին լինում. չէ՞ որ Մարտին ապորն ամեն օր ճաշ էր հարկավոր։ Ճիշտ է, խնձոր հավաքող կանայք իրենց հացով էին աշխատում, բայց Մարտին ապերն ու պահակ Սահակը պիտի լավ ճաշեին, որ կարողանային գիշեր ու ցերեկ հսկել այգին։ Սահակին խղճալով՝ ծերունին գիշերվա մի պահը նրան ուղարկում էր քնելու-հանգստանալու, և այգու պահպանությունը կատարում էր ինքը։ Չնայած այգու չորս անկյուններում էլ մի-մի շուն կար կապված, որ գող մոտենալիս՝ կիմացնեին, բայց և այնպես Մարտին ապերը՝ իր բարձր հասակով, զգույշ, հաճախ կռանալով, անցնում էր ծառերի տակով, մոտենում պարիսպներին կամ կանգնում՝ ականջ դնում գիշերվա ձայներին, որ գալիս էին դյուղից ու անտառից. մերթ կովի մի բառաչ, մերթ ուշացած սայլի ճռինչ կամ սուր մի ծվոց անտառում։ Ցերեկն էլ արդեն հանգիստ չկար— պետք էր մեղուներին նայել, շներին ու հավերին կերակրել, գնորդ-

ներին ճանապարհ դնել, դարձյալ հսկել, որ գող չմտնի որևէ կողմից. որովհետև երբ իրենք զբաղվում էին խնձորի հավաքումով կամ վաճառքով՝ կալվոր կամ տավարած տղաները հաճախ բարձրանում էին պարիսպները և ոչ այնքան քաղում, որքան չարդում-կոտրտում էին ծառերի ճղները։ Այսքան աշխատանքից հետո նրանք կարիք էին զգում լավ ճաշելու։ Ջմեռն ու գարնանը ինքն ու Սահակը մի կերպ ճաշ էին եփում, բայց հիմա, երբ, ինչպես Մարտին ապերն ինքն էր ասում, «գլուխ քորելու ժամանակ չկար, տանը պետք էր մի անող ձեռք». և ծերունին մի օր էլ, տնային մի քանի աշխատանքներում փորձելուց հետո, Նունուֆարին առաջարկեց ճաշ եփել... Եվ, անսպասելի, այդ գաղթական կնոջ պատրաստած ճաշը դուր Նկավ Մարտին ապորը։ Ի՞նքն էր շատ քաղցած թե՞ համեմունքն էր տեղը՝ նա ախորժակով կերավ այդ օրվա կերակուրը և գովեց եփողին.

— Ապրե՛ս, Նունուֆար. լա՛վ ճաշ ես եփել...

Նունուֆարը շիկնեց և, ուրախ թոթվելով, նայեց հատակին։

— Ճաշ եփելը ո՞րտեղ ես սովորել, Նունուֆար,— հարցրեց Մարտին ապերը։

Նունուֆարը, գլուխը բարձրացնելով, հոնքերի տակից նայեց ապորը.

— Երկիր։

— Իսկ դու ո՞րտեղացի ես, Նունուֆար։

— Էրզրումի Թարաֆեն, հայրիկ։

— Էրզրումի Թարաֆե՞ն։ Ըհը՛... Անունդ էլ լավ անուն է— Նունուֆա՞ր... Ապրես, Նունուֆար, էգուց էլ կեփես։

Նունուֆարը նորից գլուխը կախեց։

— Թեև լավ այանք ըլլա նե, հայրիկ, ես ավելի լավ կերակուրներ կրնամ եփել։

— Շատ լավ։ Էգուց էլ եփի։

Եվ Մարտին ապերը հենց այդտեղ՝ ճաշի վրա պահակ Սահակին պատվիրեց՝ վաղը ոչխարի միս առնել կերակուրի համար։ Սահակն ուրախացավ, որ վաղը նորից ոչխարի միս է ուտելու և ճաշն ինքը չի եփելու, որի համար անհանգստանում էր այնքան և Մարտին ապորն էլ չէր գոհացնում։

— Շատ լավ,— սրտանց պատրաստակամություն հայտնեց նա,— էնպես միս բերեմ որ...

Եվ Նունուֆարն, այգու աշխատանքի հետ միասին, սկսեց նաև ճաշ եփել. ու պահակ Սահակը ամեն անգամ, նրա պատրաստած ճաշն ուտելիս, հանգուցյալ պառավի ճաշերի համն էր առնում։ Իսկ Մարտին ապերը, սեղանից ետ նստելով ու բեղերը սրբելով, ասում էր միևնույն գովասանքը.

— Ապրե՛ս Նունուֆար, էսօր էլ լավ էր։

Պակաս գոհ չէին և Մարտին ապոր աղչիկները՝ Նոյեմն ու Անգինը, որ հոր համար ճաշ պատրաստող է գտնվել. դա իրենց ազատում էր ծանր հոգսից։ Ու առաջին օրերը փորձեցին Նունուֆարին սովորեցնել ի՛նչ ճաշեր եփի և ի՛նչպես։ Սակայն Նունուֆարը, ճիշտն ասած, նրանցից սովորելու բան չուներ. նա ավելի բազմատեսակ կերակուրներ գիտեր եփել, քան քույրերը։ Թերևս մասամբ այդ էր պատճառը, որ քույրերն այնուհետև սկսեցին ուշ-ուշ երևալ, շաբաթը մի-երկու անգամ, առանձնապես կիրակի օրերը։ Նրանք հորն զգուշացնում էին, թե գաղթական կին է, կարող է հանկարծ մի օր էլ բան գողանալ ու չքանալ։ Պետք է զգույշ լինել... Բայց Մարտին ապերն առայժմ վատ բան չէր նկատում Նունուֆարի վարքի մեջ. նա տեսնում էր, որ Նունուֆարը տան բանն այնպես արագ ու թեթև է անում, որ խնձոր հավաքելը, կշռելը չէր խանգարվում բնավ. նա մենակ, տան գործերի հետ, նույնքան բան էր անում, որքան պառավ ընկերուհիները։ Պառավներին, սակայն, բոլորովին դուր չէր գալիս Նունուֆարի հաջողությունը, ամեն բանի «մեջ ընկնելը»։ Եվ երբ նա մատերի վրա հաշվում էր ծախված խնձորի արժեքը կամ փեշը գոտին խրած վազում էր կերակուրին նայելու— պառավները գլուխները մոտեցնում էին իրար.

— Աներես կնիկ ա։ Ուզում ա ցույց տա, որ ամեն բան ձեռիցը գալիս ա... Հողեմ գաղթական գլուխդ։

Նունուֆարը հաճախ զգում էր նրանց սառը, երբեմն թշնամական վերաբերմունքը, զգում էր, որ քիթ-քթի փսփսում են իր մասին, բայց կարևորություն չէր տալիս և երկուսին էլ սիրով «մայրիկ» էր ասում, երկուսին էլ օգնում էր լիքը կո-

ղովները, սալակները տեղափոխելու, և ամեն օր, իրիկնամուքին, աշխատանքից հետո, նրանց հետ ճանապարհ էր ընկնում դեպի գյուղ, նախապես Մարտին ապորը հարցնելով.

— Հայրիկ, դահա բան չկա՞ անելու։

Եվ ամեն օր Մարտին ապոր պատասխանը լինում էր նույնը.

— Ջէ, Նունուֆար, գնա՛։

Պառավները նայում էին միմյանց և գլուխները մոտեցնում իրար.

— Էլի՛։ Ի՞նչ աներես ա... Հո՛ղս գաղթական գլխուդ...

Բայց ահա մի օր էլ, երբ Նունուֆարը գնալու ժամանակ տվեց այդ սովորական հարցը՝ «հայրիկ, դահա բան չկա՞»— Մարտին ապերը կանգնեցրեց նրան.

— Հա, Նունուֆար։ Թող դրանք գնան, դու արի։ Գործ կա,— և Մարտին ապերն առաջ ընկավ, գնաց դեպի տուն։

Նունուֆարը բաժանվեց պառավներից և, գլխաշորն ուղղելով, հետևեց այգետիրոջը, որ գնում էր, ինչպես միշտ, հանդարտ քայլերով, բարձր հասակը երբեմն կռացնելով՝ ծառերի ճղներին չդիպչելու համար։

Երբ հասան տուն՝ ծերունին կանգ առավ բանալին գրպանից հանելու։

— Վաղուց է գլուխս չեմ լվացել, Նունուֆար. ասում եմ՝ լվանաս,— խոսեց Մարտին ապերը դուռը բանալով և մի ձայնով, որի մեջ և՛ մտերմություն կար, և՛ կարծես խընդրանք։— Կարո՞ղ ես։

— Կրնամ։ Ինչո՞ւ չեմ կրնա,— եղավ Նունուֆարի համաստ, բայց ինքնավստահ պատասխանը։

Ու մի քանի րոպե անց՝ նա արդեն փեշերը գոտին խրած, թևերը քշտած՝ կաթսայով ջուր էր եռացնում կրակի վրա և տաշտ ու ցամքիշներ պատրաստում, իսկ երբ ջուրը տաքացավ՝ նա ձեռքն առավ ծերունու կիսից ավելի ճերմակած կարճ մազերով գլուխը. մերթ կորցնում էր այն սապնաջրի փրփուրի մեջ ու տրորում թափով, կարծես իր հաստ բազուկներով ուզում էր խեղդել նրան, մերթ զգուշությամբ ջուր լցնելով՝ լիքը ձեռով շփում էր նրա գլուխն ու երեսը. թվում էր՝ շոյում էր և ներողություն խնդրում կոպիտ վարվելու համար։ Մինչ-

դեռ Մարտին ապերը ոչ թե նեղվում, այլ հաճույք էր զգում, և կրկնում էր մեկ-մեկ. «էլի՛, էլի՛»... երբ Նունուֆարը վերջացրեց՝ Մարտին ապերը շատ գոհ մնաց.

— Ապրե՛ս, Նունուֆար, ապրե՛ս...

Նունուֆարը շիկնեց գովասանքից, գլխի յազման ուղղեց թաց մատներով և ապա, սապնաջրով լիքը տաշտը վերցնելիս, հարցրեց, թե «լաթեր չկա՞ն լվանալու»... Ու մինչ մի քանի լաթեր ու գուլպաներ կլվար, կփռեր պատշգամի սյուներին կապած պարանին՝ մութն ընկավ։

— Ես գնամ, հայրիկ,— մոտեցավ Նունուֆարը սենյակի դռան, ուր ծերունին բարձերին թիկնած չիբուխ էր ծխում, ծուխն օղակ-օղակ դեպ առաստաղը թողնելով, հանգստության մի հաճույք, որ վայելում է մարդ բաղնիսից կամ ծանր աշխատանքից հետո։

Նունուֆարի ձայնի վրա՝ Մարտին ապերը երեսը դարձրեց նրան.

— Մութն է, Նունուֆար, ավելի լավ է մնաս,— ասավ նա մի ձայնով, որը Նունուֆարին շատ հյուրընկալ ու սիրալիր թվաց, ինչ-որ սակայն նա վերագրեց գլուխ լվալու երախտագիտության։

— Չէ, շնորհակալ եմ, հայրիկ, տանը կսպասեն,— հրաժարվեց Նունուֆարը։

— Տանը՞... ո՞վ ունես տանդ։

— Հեչ մեկը. մինակս եմ։ Կապրեմ Իրիցանց օդեն։

Մարտին ապերը չիբուխը հանեց բերանից։

— Որ էդպես է՝ մնա, մութն է։ Ճանապարհին ո՛վ գիտի ի՛նչ կպատահի։ Գնա էն օդեն քնի։ Առավոտը մեկ էլ չես քաշ գա էնտեղից-էստեղ...

Նունուֆարը ուսը ցնցեց։

— Կվախենամ, հայրիկ։

— Ինչի՞ց կվախենաս։

— Սա տեղ մնալ։ Ուրիշ տեղ մնալ սովոր չիմ։ Գնա՛մ...

— Սարսա՛ղ,— ժպտաց Մարտին ապերը։— Սովո՞ր չիմ... — Մարտին ապերը մտերմորեն ծաղրեց նրա խոսելու ձևը ու ոտերն իջեցրեց թախտից։— Լա՛վ, սպասի՛ր,— և նա, չուստերը հագնելով ու քստացնելով, գնաց դեպի հնաձև կամո-

դը, որը տարիներ առաջ գնել էր քաղաքում։— Որ չես ուզում մնալ՝ սպասի՛ր։

Նունուֆարն, աչքը ծերունուն, սպասեց շեմքին, ամաչելով առաջ գնալ։ Մինչ այդ Մարտին ապերը կամոդից վերցրեց ծալած մի բան՝ մոռագույն մի շալ գլխաշոր և տվեց Նունուֆարին։

— Քու յազման մաշվել է, սա կգցես գլխիդ,— ասավ նա հոգածու ձայնով և կանչեց պահակ Սահակին, որ Նունուֆարին ուղեկցի մինչև գյուղի ծայրը կամ մինչև իրենց տուն։— Մութն է, Նունուֆարը վախենում է...

Մյուս օրը, երբ խնձոր հավաքող պառավներն եկան՝ զարմացան, երբ Նունուֆարի գլխին հին յազմայի փոխարեն նոր գլխաշոր տեսան, իսկ պահակ Սահակը, որ, դուրը բանալով, առաջնորդում էր նրանց, աչքով արավ ինքն իրեն, Նունուֆարին նայելով։ Նոր շալ գլխաշորը բոլորովին թարմացրել և կարծես փոխել էր Նունուֆարի դեմքը։ Պառավները ճանաչեցին Մարտին ապեր կնոջ՝ հանգուցյալ Սաքեթ նանի «շալովնին» և գլուխներին մոտեցրին իրար։

— Ջլինի՞ գողացել է էդ գլխամեռը,— կասկած հայտնեց մեկը։

— Գողանար՝ չէր գցի,— նկատեց մյուսը։ — Ուրիշ բան կըլնի...

Փոքր անց նրանց կասկածը փարատեց պահակ Սահակը, որին պառավները հարցրին, թե «գաղթականի» գլխինը Սաքեթ նանի «շալովնի»-ն չի՞ արդյոք։ Պահակ Սահակը նորից աչքով արավ ինքն իրեն, Նունուֆարին նայելով։

— Ներեն ու Ծրեկ ապերը տվեց՝ գլուխը լվանալու համար։

Պառավները գլուխները մոտեցրին իրար։

— Աներե՛ս,— ասին նրանք միասին։

II

Նունուֆարն իսկապես մենակ կին էր. նա ոչ մի հարազատ չուներ Օրանում, գուցե և ամբողջ աշխարհում. վաղուց՝ արհավիրքի օրերին կորցրել էր ամուսնուն ու երեխաներին և,

զանազան տեղեր դեզերելուց հետո, երկու տարի առաջ եկել ապաստանել էր Օրանում, ուր նրա մասին խոսելիս՝ ասում էին «անտեր կնիկ». նա ապրում էր հարուստ օրանցիների տանը բան անելով. քաղհան, լվացք, բուրդ գզել— ամեն բան գալիս էր ձեռից։ Զրկանքներ տեսած և նեղություններ կրած՝ ի՛նչ վերցնում՝ անում էր խնամքով ու լավ։ Չնայած երեսունն անց կին էր, բայց նորահարսի ամաչկոտություն ուներ, և գործի մեջ էլ նորահարսի պես ուշիմ էր ու ժիր. կուրծքն այնպես լիքն էր և դեմքն այնպես թարմ. երբ, լարված աշխատանքից հետո, կռացած մեջքն ուղղում էր՝ շունչ առնելու— կուրծքը բարձրանում-իջնում էր, երեսը կարմրում էր ավելի խունացած յազմայի մեջ։ Բայց հիմա, երբ կապել էր Մարտին ապոր նվիրած շալ գլխաշորը՝ նա շատ էր փոխվել. դեմքն ավելի փայլ էր առացել այդ մուգ շալի պատճառով և դարձել ավելի վայելչատես։

Առաջինն այդ նկատեց պահակ Սահակը։

— Օհո՜, փոխվել ես, Նունուֆար. քիչ մնաց չճանաչեի՛,— ասավ նա այգու փակ դուռն առավոտյան բանալով ամենից շուտ եկող Նունուֆարի առաջ։

Նույնը նկատեցին և խնձոր հավաքող պառավները, և Մարտին ապերն ինքը, որ գոհ մնաց արած նվերից և մի երկու անգամ ուշադիր նայեց Նունուֆարին, կարծես զարմանալով, որ գլխաշորն այդպես փոխել էր նրան։ Իսկ երբ այդ օրը եկած Նոյեմը՝ Մարտին ապոր մեծ աղջիկը, Նունուֆարին տեսավ այդ գլխաշորով, նա մի վայրկյան զարմացած կանգ առավ, ապա աչքերը խոթեց նրա վրա, փնչացրեց ու հուզված գնաց հորը գտնելու։ Մերունին այգու մի կողմը, ծանրությունից կռացած-ջարդվող մի խնձորենու ճղների տակ նեցուկներ էր դնում կենտրոնացած, հոգածու եռանդով։ Երբ աղջիկը փութկոտ քայլվածքով ու հուզված մոտեցավ, նա ինչ-որ բան ենթադրելով, հարցրեց հեգնանքով.

— Հը, ի՞նչ կա։

— Մայրիկի շալովինին ո՞րտեղից է վերցրել էն գաղթականը...

Նրա ձայնը բեկբեկվում էր հուզումից։

— Ես եմ տվել,— ասավ հայրը հանդարտ և հանդարտ ու անտարբեր շարունակեց իր գործը։

Հոր պատասխանը և անտարբեր տոնը զինաթափ արին Նոյեմին։

— Իսկ ես կարծեցի գողացել է,— ասավ նա, շուրջը նայելով։

— Ինչո՞ւ պիտի գողանա,— առանց տոնը փոխելու շարունակեց հայրը, միշտ ուշն իր աշխատանքի վրա։

— Ինչո՞ւ չէ. անտեր, գաղթական կնիկ է։

— Բայց նա մաքուր կնիկ է երևում։

— Մաքո՞ւր։— Նոյեմի կանաչ աչքերը խաղացին քներում և նրա նիհար դեմքը կարծես ծամածռվեց հոր կողմից մեղմ արտասանված այդ խոսքից։— Ո՞րտեղից գիտես մաքուր է. հրե՛ Պետրենց տան ծառայողը պանիր է գողացել, դուրս են արել։

— Ամենքը մեկ չեն,— նույն անտարբերությամբ շարունակեց հայրը և թիկունքը դարձրեց նեցուկն ամրացնելու. և Նոյեմն այդ շարժումից զգաց, որ հայրն այլևս տրամադիր չէ խոսելու, ու էլ ոչինչ չասավ. նույն հուզված, փութկոտ քայլերով գնաց դեպի տուն, ուր պահակ Սահակից իմացավ, թե ինչո՛ւ համար է «գաղթականը» նվեր ստացել մոր գլխաշորը։ Լվացել է հոր գլուխը ու մի երկու շոր... Նոյեմը սկսեց մտովի հանդիմանել իրեն ու քրոջը, որ մի շաբաթ է չեն եկել և հայրը, երևի, ստիպված նրան է դիմել և, արածը մի բանով վարձատրելու համար, մոր շալովնին նվիրել է նրան։ Մոր շալովնի՞ն... Մի տարի չկա մայրը մեռել է՝ հայրը հեշտությամբ նրա գլխաշորը նվիրում է... մի գաղթականի՞։

Այս միտքը վրդովում էր Նոյեմին. նրան հուզում էր և այն, որ հայրը դրա համար իր կամ քրոջ կարծիքը չի հարցրել։ Նոյեմին թվում էր, որ հայրը բանի տեղ չի դնում իրենց, ու վրդովվում էր։ Սակայն, երբ երեկոյան այդ ամենը հուզված պատմեց ամուսնուն, գինեվաճառը ձեռը թափ տվեց.

— Մի շալովնի է, մեծ բան չի։ Դու բաղի մասին մտածի։

— Բայց վախենում եմ մի օր էլ էդ գաղթականը մորս

շորերը, զուքսը բանը գողանա ու փախչի։ Անտեր կնիկ, արի՛ ու գտի։

— Դու էլ շուտ-շուտ գնա,— խորհուրդ տվեց խանութպանը։— Թող իմանան տեր կա։ Մեր մարդ է, ամեն բան չի կարող պահել, փակել։

Բայց մի օր էլ — մի շաբաթ անց — երբ Նոյեմը եկավ, այս անգամ տեսավ Նունուֆարը հագել է մոր մուգ կապույտ շրջազգեստը և անկրունկ կիսակոշիկները, ու այդպես հագնված՝ պատշգամում բարձեր է թափ տալիս ձեռները քշտած... Նոյեմը զարմանքից կարմրեց, ապա գունատվեց և մի այնպիսի հայացք նետեց Նունուֆարի վրա, որով ուզում էր կաբծես շորերը հանել նրա հագից։ Նունուֆարն քնկճվեց այդ տիրական ու ազդու նայվածքից, բայց իրեն բոլորովին չկորցրեց. նա շարունակեց բարձերը թափ տալ նախկին եռանդով ու հոգածոտիությամբ։

Նրա՝ չանասիրությունը սակայն չմեղմեց կարծես Նոյեմի հայացքի խստությունը։ Նայեց Նոյեմը նրան վրդով, զարմացած, հետո մեկեն պոկվեց տեղից ու բունկված ետ դարձավ, գնաց այգի։ «Էս ի՜նչ է անում իր հերը,— ասում էր նա մըտքում։— Էսպե՜ս է հարգում մորս հիշատակը։ Ի՜նչ կասեն հիմա հարևան, ճանաչ մարդիկ»... Նոյեմը հոր այդ վարմունքից այնքան վիրավորված զգաց իրեն, որ աչքերն արցունք եկան, և այդպես արտասվակալած աչքերով գնաց հորը գտավ մեղուների մոտ ու, առանց բարևի, հարձակվեց գրեթե.

— Էդ նանի շորերը դո՞ւ ես տվել գաղթականին...

Մարտին ապերը զգուշությամբ նայում էր փեթակներից մեկին, թե ի՛նչպես են նրա արկանոցով ել ու մուտ անում մեղուները։ Նա, նախքան պատասխանելը, կես զարմացած նայեց աղջկան,— Նոյեմի ձայնն այնպես անսովոր թվաց նրան։

— Ե՛ս։ Ի՞նչ է որ...

— Դո՞՛ւ,— տաքացավ Նոյեմը։— Բա իմ խանում-խաթուն մերն էնքան պատիվ չունի, որ դեռ տարին չթամամած՝ շորերը գաղթականը հագնի՛։ Բա էդպես բան կլինի՞, ա՛ հեր։

— Ի՞նչ կա որ։ Մինը սլըտի հագնի, հո չե՞ն մնալու...

Հոր անտարբեր ձայնն այնպես ազդեց Նոյեմին, որ նրա աչքերը նորից արտասվակալեցին։

— Ախր հարևաններն ի՞նչ կասեն։ Մի տարվա մեռած՝ շորերը սրան-նրան տա՞լ...

— Որ մնացին՝ ի՞նչ պիտի անենք,— ասավ հայրը զարմանալի հանդարտ ու անտարբեր։— Տան կնիկ է, բան է անում, թող հագնի։

Տան կնի՞կ... Նոյեմը խոսք չգտավ անմիջապես. սակայն կարմրեց, գունատվեց։ Տան կնի՞կ... մի երկու օր է՝ տան բան է անում պատահաբար— տան կնիկ դառավ «սևամեռը»։ Քո՞ւյր է, մա՞յր է, աղջի՞կ է, որ հայրը նրան տան կնիկ է համարում։ Չէ՛, հայրը բոլորովին կորցրել է իրեն։ Գոնե իրեն հարցներ, քրոջը՝ Անգինին հարցներ...

Նոյեմն այնքան հուզված էր, որ չէր կարողանում խոսել և չգիտեր էլ ի՛նչ ասի. հոր արածը սարսափելի, աններելի մի սրբապղծություն էր թվում նրան, բայց չէր ուզում հորը հանդիմանել. գիտեր, լավ գիտեր հոր բնավորությունը, որ եթե հիմա իր այդ հուզված վիճակում խոսեր— կարող էր ավելորդ բաներ ասել, հորը վրդովել։ Այդ պատճառով նա իրեն զրսպեց և հեռացավ վիրավորված։

Ճանապարհին՝ այգու ծայրում պահակ Սահակը պատահեց և, մեծ բերանը բանալով, ժպտաց։

— Նունուֆարին տեսա՞ր. նանի շորերը հագել է,— և նա աչքով արավ, չգիտես ո՛ւմ։

Նոյեմը նրան էլ չպատասխանեց— ա՛յնքան հուզված էր, բայց մտածեց, որ Սահակն էլ ահա իր պահակ տեղով հասկանում է այդ անհարմարությունը, հայրը չի հասկանում։ Ու այդ միտքն ավելի հուզեց նրան. նրա քայլվածքը գարձավ ավելի փութկոտ ու նյարդային։ Եվ այդպես վրդով նա գնաց ոչ թե իր տուն, այլ քրոջ՝ Անգինի մոտ, տեսածը նրան հայտնելու, նրա կարծիքն իմանալու և, թերևս, միասին մտածելն, թե ի՛նչ անեն, որ հայրն առանց իրենց խորհրդի՝ բան չանի։ Թե չէ այսպես նա կարող է ունեցած-չունեցածը նվիրել սրանն-նրան, առաջին պատահածին։ Այսօր մոր հագուստներն է նվիրում գաղթական կնկան, վաղը ուրիշ բաներ կարող է նվիրել ուրիշների, հենց խնձոր հավաքող պառավներին կամ

հենց պահակ Սահակին։ Եվ հոր այդ վարմունքը Նոյեմը բացատրում էր նրա խորը վշտով։ Երևի, նանի մահից հետո էլ ոչ մի բան աչքին չի գալիս։ Ներացել է, վիշտը, երևի, խախտել է հավասարակշռությունը. պետք է հետևել նրան և ձեռքի մեջ պահել,— մտածում էր Նոյեմը տխրությամբ։ Եվ երբ, բրոջ տուն հասնելով, այդ ամենը նա հայտնեց նրան՝ Անգինը լաց եղավ։

— Իհարկե, մենք ենք մեղավոր, որ նա էդպես է անում։ Ջենք հետևում, առաջվա պես շուտ-շուտ չենք գնում. դե, նա էլ մարդ է, տանը բան անող չկա. անողին պետք է մի բան տա, չէ՞...

— Դրուստ է, մենք ենք մեղավոր,— համաձայնեց Նոյեմը,— պետք է շուտ-շուտ գնանք, թե չէ էսօր շորեր տվեց, էգուց կարող է ուրիշ բան էլ տալ։

Քրոջ տանը Նոյեմը փոքր ինչ հանգստացավ, իսկ երեկոյան, երբ մարդու առաջ նկարագրեց հոր արածը, գինեվաճառն իր ենթադրություններով նորից հուզեց նրան։

— Չլնի՞ հալիվորը սիրահարվել է էդ գաղթականի վրա,— ծիծաղեց նա։

Ամուսնու ծիծաղը դուր չեկավ Նոյեմին։

— Է՛դ էր պակաս,— խեթեց նա մարդու վրա։— Խայտառակվե՞նք։

— Բայց քո ասածից էդպես է երևում,— շարունակեց գինեվաճառը լրջացած։— Ասում ես՝ օրը մի բան է նվիրում. դա ի՞նչ է նշանակում. աշխատանքի համար կարող է խնձոր տալ, փող տալ, ինչպես տալիս է խնձոր հավաքողներին, քաղհանողներին. բայց որ նռանի շորերն է տալի, դա...— և գինեվաճառը գլուխն օրորեց։— Չէ՛, սիրահարվե՞լ է,— կրկնեց նա։— Աստված վկա սիրահարվել է...

Նոյեմի սիրտը կասկած ընկավ։ Ամուսնու կատակը նա լուրջ ընդունեց։

— Ինչե՞ր ես ասում։ Կարո՞ղ է էդպես բան պատահել։

— Ինչո՞ւ չէ։ Պապաննց հալիվորը եոթանասուն տարեկան չէ՞ր, որ նոր կնիկ բերեց։ Պատահում է։

— Իմ հերն էդպես բան չի անի,— կտրեց Նոյեմը։— Իմ հերը...

— Ջո հերն ի՞նչ է. վարդապե՞տ է, եպիսկոպո՞ս. Եպիսկոպոսները սիրահարվում են, նա չի սիրահարվի՞,— շարունակում էր կատակել գինեվաճառը։ Այդ օրը նրա առևտուրը լավ էր եղել, պրիստավն ինքը եկել գոհունակություն էր հայտնել Արտաշատի գինու համար և խնդրել նորից ուղարկել։

— Սիրահարվե՛լ. էն էլ էդ տարիքին,— զարմանում էր կինը։

— Տարիքը ի՞նչ է— շատ-շատ վաթսուն-վաթսուն երկու։ Մեծ բան չի...— Եվ նա սկսեց գնալ-գալ սենյակում, ապա, նկատելով կնոջ հուսահատությունը մի այդպիսի հնարավորությունից, կանգ առավ կնոջ առաջ և ասաց, կարծես նրան մխիթարելու համար։ — Ես մի էգուց գնամ տեսնեմ դա ի՛նչ կնիկ է, էնտեղ կպարզվի...

Նույն այդ երեկո լույս խաղաղություն էր տիրում խնձորի այգում. այդ գույն երանից էր, որ լիալուսինը փայլում էր պարզ երկնքում և կաթնագույն լույս էր թափում դաշտի, գյուղի և այգու վրա. դրանից էր գուցե, որ գորտերը մոտիկ ճահճում ու գետափին կռկռում էին խմբով իրենց թախծալի երգը, շները չէին հաչում, խնձորենիները կանգնել էին անշարժ, ասես լուսնով հմայված, իսկ առուն կարծես նրագում ծիծաղում էր խոտերի մեջ և մեկ-մեկ ժպտում լուսնին։ Պահակ Սահակը, որ ուրիշ ժամանակ քայլելիս էլ ուզում էր երնջել, այսօր պառկած էլ քունը չէր տանում. ձեռնափայտը ձեռին անցավ այգու պատերի մոտով, տեսնելու՝ նրանց վրա գողեր չե՞ն բարձրացել, ինչպես անում էին կալերից ու սավարից եկած տղաները. բայց ոչ մի շուն չնկատեց։ Այդպես էր լինում լուսնյակ գիշերները։ Սովորական շրջանը կատարելուց հետո՝ Սահակը նորից եկավ իր տեղը— տան հակառակ կողմը՝ այգու մեջտեղը իր թախտի վրա քնելու։ Նա սովորաբար իրիկնուց քնում էր մի փոքր, որ գիշերը լավ հսկի։ Բայց քունը դարձյալ չտարավ։ Ավելի շուտ լուսինը չթողեց. ծառերի արանքից նա նայում էր Սահակին և կարծես աչքով անում. թաքնվում էր հանկարծ և նորից աչքով անում Սահակին։ Նա կրկին վեր կացավ և այս անգամ գնաց

գեպի տուն՝ տեսնելու Նունուֆարը տոպրակները կարկատո՞ւմ է դեռ, թե վերջացրել է արդեն։ Այդ երեկո ապերը Նունուֆարին պահեց՝ ցորենի պարկերը կարկատելու, որ առավոտը պատրաստ լինեն։ Կարելի էր և առավոտը կարկատել, բայց ապերը չէր սիրում անելիքը հետաձգել. չէր սիրում անհանգիստ ու մի կերպ արած գործ. ինչ-որ պետք էր անել՝ անել էր տալիս վաղօրոք։ Կնոջ կենդանության օրով նա այդ պարկերը կարկատել էր տալիս դեռ ամառվա սկզբին, խընձորները չհասած ժամանակ, այնինչ վաղը ցորեն էին սպասում, որ գյուղերից պիտի բերեին խնձորի հետ փոխանակելու։

Երբ Սահակը դանդաղ քայլերով մոտեցավ տանը՝ զգուշությամբ մտավ պատշգամ և լուսամուտից նայեց ներսը։— Նունուֆարը նանի շորերը հագած նստել էր հատակին փռած կաթսաների և դեռ շարունակում էր պարկերը տնտղել, լույսի դեմ բռնել, տեսնելու ի՛նչ տեղեր են ծակված, ու ապա կարում-կարկատում էր ծնկանը դրած։ Մարտին ապերը կողքի թախտին նստած, գլխաբաց չիբուխ էր քաշում ու ինչ-որ բան էր ասում Նունուֆարին՝ ժպտալով, գլուխը պատելով։ Վաղուց, նանի մահից հետո, Սահակն այդպես ժպիտ չէր տեսել Մարտին ապոր դեմքին, և դա ա՛յնքան տարօրինակ էր, որ Սահակը կուզեր իմանալ, թե ի՛նչ է ասում։ Նունուֆարը, ամաչելուց, ապերը չէր նայում, բայց գլխով «այո» կամ «ոչ» էր ասում։ Սահակը ոչինչ չէր լսում, բայց նրանց խոսելու ձևը, մանավանդ այն, որ ապերը ժպտում էր,— հետաքրքրեց Սահակին, և նա, չնկատվելու համար, բնաղդաբար կուացավ լուսամուտի առաջ, աչքը սակայն չհեռացնելով նրանցից։ Ուզում էր իմանալ ի՛նչ են խոսում, բայց սկզբում ոչինչ չէր լսվում, չնայած շուրջը խաղաղ էր, կատարյալ լուռություն։ Երևի կամաց են խոսում,— եզրակացրեց Սահակը, թե չէ՝ կարող էր լավել։ Առաջ, երբ ապերը ներսը խոսում էր նանի հետ, նրանց ձայնը միշտ լսվում էր պատշգամում. քանի՛ անգամ, ականջ դնելով, լսել էր, թե ի՛նչ են ասում իր մասին ապերն ու նանը։ Բայց այս անգամ ապոր ձայնը լավ չէր լսվում։ Այս հանդամանքն ավելի հետաքրքրեց Սահակին. մերթ կռանում էր մինչև լուսամուտի գոգը, աչքը ծերպ անում, մերթ կանգ-

նում էր ոտի ծայրերի վրա՝ ականջը դեմ անում լուսամուտի եզրին։— Միևնույն է՝ խոսոցը պարզ չէր լսվում։

Մինչ այդ Նունուֆարն աշխատանքն ավարտեց, պարկերը ծալեց դրեց մի կողմ ու վեր կացավ, և այդ ժամանակ միայն — զարմանալի բան— Սահակը լսեց Նունուֆարի ձայնը.

— Ես պրծա, հայրիկ։

— Լավ,— ասավ Մարտին ապերը լսելի ձայնով, ու ինչ-որ բան ասավ դարձյալ, որ Սահակը չլսեց, բայց Նունուֆարը խպնեց ու գլուխն իջեցրեց։

— Ինչի՞ ես ամաչում,— լսվեց նորից ապոր ձայնը։— Հետո, ես քեզ ի՞նչ «հայրիկ» եմ, աղչի, որ շարունակ «հայրիկ» ես ասում։ Արի նստի էստեղ,— և ապերը ցույց տվեց թախտը, ուր նստած էր ինքը։

Բայց Նունուֆարը չմոտեցավ. նա ամաչում էր. աջ ուսը բոթվեց ու մնաց տեղը կանգնած։ Ապերը նորից ինչ-որ բան ասավ կամաց ու ձեռը նորից դրեց թախտին. ըստ երևույթին՝ Նունուֆարին դարձյալ հրավիրում էր նստել։ Բայց տեսնելով Նունուֆարը քաշվում է— ապերն ինքը առաջ թեքվեց մի փոքըր և նրա փեշը քաշեց դեպ իրեն։ Եվ Նունուֆարն, ամաչելով, ակամա նստեց։ Բայց հազիվ նստել էր՝ ապերը հանկարծ, ջահել մարդու թեթևությամբ, որ Սահակին շատ զարմացրեց, վեր կացավ տեղից ու նստեց Նունուֆարի կողքին։ Նունուֆարն, ամաչելուց թե ինչից, թեքվեց մի կողմ, բայց Մարտին ապերը նորից մի զարմանալի թեթևությամբ ձեռը գցեց Նունուֆարի վզով, նրա գլուխը մոտեցրեց իրեն և...

Սահակի համար կարծես կայծակ տրաքեց. նախ վեր թռավ, հետո հանկարծ կուչ եկավ, ինքն իր ձեռը կծեց ու, աստղերին թե լուսնին աչքով տնելով՝ փախավ դեպ իր քնելու տեղը։ Բայց մեկ էլ, երբ ուզեց ճանապարհի կեսից ետ դառնալ— տան լույսը հանգած էր արդեն։

Առավոտը Նունուֆարը, տան գործով զբաղված, չկավ պառավների մոտ՝ խնձոր հավաքելու։ Եվ պառավները, այդ նկատելով, գլուխները մոտեցրին իրար.

— Էսօր աներեսը խանումությո՞ւն է անում։

— Խանումի շորերը հագել է, որ խանումություն անի. բա՛ ի՞նչ...

Հետո, երբ գյուղացիներ եկան՝ ցորենով խնձոր առնելու, Նունուֆարն զբաղվեց նրանցով. Մարտին ապոր հետ կշռում էր երեկվա հավաքած խնձորը՝ լցնում գյուղացիների տոպրակները. կշռում էր նրանց բերած ցորենը՝ լցնում իրենց մեշոկները կամ մատերով հաշվում, թե ո՛ր տեսակից ինչքան կշռեց և ի՛նչ արժե՝ ֆունտն այսքանով հաշված։ Մինչև Մարտին ապերը համրիչի հատիկները տանում էր բերում—Նունուֆարն արդեն հաշված էր լինում։

«Կրակ է, կրակ», ասում էր Մարտին ապերը մտքում, երբ նա հաշիվն իրենից շուտ էր տեսնում։

Գյուղացիներից հետո եկան տեղացիներ, խանութպաններ, և բոլորի համար էլ Նունուֆարը կշռեց, բոլորին հավաքարեց, միշտ արագ, թափով ու թևքերը քշտած, մատերի վրա հաշիվ տեսնելով։

Այդ օրը շատ գործ եղավ և շատ էլ անհանգիստ անցավ. շները շարունակ հաչում էին իրենց անկյուններում — մի կուշմից այգին մտնող անծանոթների վրա, մյուս կողմից, երևի, գողերի։ Լավ առևտրի օրը շատ էլ գող էր գալիս այգու վրա. գյուղի տղաները, կալերից ու տավարից տեսնելով խնձոր առնողը շատ է, մտածում էին, երևի, որ տերերն զբաղված են ներքև— իրենք այգու վերին մասում բարձրանում էին պատերը, երբեմն շներին հացի կտորներ գցելով, որ չհաչեն, ու պատամոտ ճղները քաշում կամ հեռու ճղները կեռ փայտով կոտրտում էին դեպ իրենց՝ խնձորները քաղում։ Պահակ Սահակը այդ ամբողջ օրը մի տեսակ էր, կարծես վեր քաշված. նա մի քանի անգամ, գործը թողած, վրա հասավ ու քշեց գող տղաներին. խնձորով մեկի ճակատին խփելով՝ փախցրեց պատից, մյուսը փախավ գլխարկը թողնելով։ Հետո բարկացավ վերևի ծայրում կապած շան վրա, որ չէր հաչում։ Եվ ի՛նչ էլ անում էր Սահակն այդ օրը՝ հանկարծ հիշում էր իրիկվա դեպքը և աչքով անում ծառերին կամ ինքն իրեն։

Այդ օրը, կարելի է ասել, բոլորը հոգնեցին, որովհետև գնացող-եկող շատ եղան։ Եվ այն է՝ պատրաստվում էին իրիկնահաց ուտել ու հանգստանալ, երբ երեկոյան դեմ կառքով այգի եկավ Մարտին ապոր մեծ փեսան՝ գինեվաճառ Արտուշը։ Իր որոշման համաձայն՝ նա եկել էր գաղթական

կնոջը տեսնելու և իր ենթադրություններն անելու։ Բացի դրանից՝ երկու շաբաթ էր աներոջը չէր այցելել. այդ պատճառով, թերևս, մեղքը քավելու համար, հետը երկու շշի փոխարեն բերել էր չորս շիշ՝ երկու գինի, երկու օղի և Տրապիզոնի թութուն։ Ինչպես երևում է՝ Նոյեմը չէր մոռացել ամուսնուն հիշեցնել այդ մասին։

— Տանն ո՞վ կա, Սահակ,— հարցրեց նա այգու դուռը բացող պահակին։

— Ապերը, մեկ էլ... — Սահակը աչքով արավ։— Նունուֆարը։

Կիսամութի պատճառով գինեվաճառը չնկատեց Սահակի աչքով անելը, բայց մտքում «Նունուֆար, Նունուֆար» կրկնելով մոտեցավ տանը։ Աները ոտերը հանած, միայն գուլպայով, թեյ էր խմում պատշգամում, թախտին նստած, իսկ վառ աչքերով մի կին լաթի կտորով եռանդով սրբում էր սեղանի ծայրին եռացող samovarը։ Հանութպանը հասկացավ, որ Նունուֆարը դա պիտի լիներ, և առանձին ուշադրությամբ զննեց նրան. նրա սպիտակ ու կարմիր դեմքը՝ կրակոտ աչքերով, և լիքը կուրծքն ու գիրկ թևերը— դուր եկան գինեվաճառին և նա մտածեց, որ եթե աները հավանել է դրան և հաղորդ է նվիրել— վատ բան չի արել։ Հանութպանը հիշում էր, որ առաջ էլ տեսած պիտի լինի այդ կնոջը այգում, բայց ուշ չի դարձրել, կամ լավ չի նայել... Այդպես Նունուֆարին նայելով՝ նա ձեռի շշերը հանդիսավորապես դրեց սեղանին և մոտեցավ աներոջը։

— Հը՛, պապաշա, ո՞նց ես,— և ըստ սովորության՝ ձեռը մոտեմոտիկ թափեց աներոջ մեջքին։— Լա՛վ կաց, լա՛վ... էս քույրիկս ո՞վ է, պապաշա, որ էսպես շահով քան է անում,— հանութպանը նստեց, երկարաճիտ փայլուն կոշիկներով ոտները դրեց իրար վրա և, պատասխանի չսպասելով, շարունակեց։— Լա՛վ է, պապաշա, լա՛վ է. գործի ժամանակ մեկը պետք է լինի տանը. քաղ է, քաղհան է, բան... Լա՛վ է։ Ա-նունդ ի՞նչ է, քույրիկ ջան... Նունուֆա՞ր։ Լա՛վ անուն է...

Նա խոսում էր ու հետն էլ զննող աչքերով զարձյալ նայում Նունուֆարին, բայց հանկարծ նկատեց, որ իր նայ-

վածքներն ու խոսքերը Նունուֆարի նկատմամբ դուր չեն գալիս ծերունուն։ Եվ խանութպանը խոսքը փոխեց.

— Վաղուց, երկու շաբաթ կլնի չեմ եկել. ասի՝ պապաշան կնեղանա, գնամ տեսնեմ ի՛նչպես է, ինչի՛ կարիք ունի։ Է, խնճորը լավ ծախվո՞ւմ է, պապաշա։ Թեե չի ծախվում՝ մուշտարի ղրկեմ։

Նա խոսում էր հարազատի սրտացավությամբ, բարակ բեղերը շուտ-շուտ ոլորելով կամ ժամացույցի շղթան խաղացնելով։ Կես ժամում նա ահագին նորություններ պատմեց. չմոռացավ խոսել և իր առևտրի, իր կապերի մասին, որ ուներ գյուղի մեծամեծների հետ, և երբ վեր կացավ գնալու՝ նրից սիրտ տվեց անհոգը.

— Էհ, ղռչաղ կաց, պապաշա։ Ես գնամ, տղան մենակ է խանութում. էլի կգամ, Նոյեմին կղրկեմ։ Դու ղռչաղ կաց։ Գինի խմի, չտխրես։

Իսկ Նունուֆարի կողքով անցնելիս՝ գլուխը կռացրեց դեպի նա.

— Է՛, Նունուֆար քույրիկ, տանը բանին լավ կնայես։ Հայրիկին՝ պապաշային լավ մտիկ արա...— Եվ նորից «Նունուֆար, Նունուֆար» կրկնելով ու բեղերը սրելով իրեն կարք գցեց ու սլացավ դեպի գյուղ. բայց այս անգամ ոչ թե խանութ գնաց, ինչպես մտադիր էր գալու միջոցին, այլ կարքը քշեց ուղիղ առաջ՝ հնոց մոտ։

— Նայեմ, քառից եմ գալիս,— հայտարարեց նա տուն մտնելով,— բանը բանից անցած է երևում։

— Այսի՞նքն,— և Նոյեմը գունատվեց,— ի՞նչ ես ուզում ասել։

— Այն, որ վարդապետն էլ է սիրահարվում։ Հիմա պետք է էնպես անեք, որ հալիվորը հանկարծ չվերցնի ու ամուսնանա էդ Նունուֆարի վրա։ Թե չէ՝ խայտառակություն է, կսկիծեն բամբասել և, վերջն էլ, ով գիտի...

Մարդու հայտնությունը կարծես կայծակի հարված եղավ Նոյեմի համար։ Սկզբում նա շշմեց, աչքերը լայն բանալով, հետո մեկեն վեր թռավ տեղից. «Ես էդ գաղթականի մազերը կպոկե՞մ», բացականչեց նա։ Բայց գինեվաճառը հասկացրեց,

որ աղմուկ հանելն ավելորդ է, հարևանները կիմանան։ Նոյեմը ձայնն իջեցրեց.

— Որ էդպես է, ես նրան՝ էդ գաղթականին էնպե՞ս կանեմ, որ ոտը կտրի էդ տանից։ Բոլորը նա՛ է մեղավոր. թե չէ իմ հերը, իմ նամուսով հերը նրան հագուստ-կապուստ չէր տա։ Ո՞վ գիտի ինչ անառակի մեկն է։ Նրան կհետացնեմ, հորը համար մի ուրիշ գործ անող կգտնեմ...

Գինեվաճառը հավանություն տվեց կնոջ ասածին։

— Նոյեմ, դու երբեք էդքան խելոք չէիր եղել։ Էդ լավ ասիր,— և գինեվաճառն սկսեց մտախոհ գնալ-գալ սենյակում։ — Բայց վախենում եմ բանը-բանից անցած ըլնի։

— Ես էդ գաղթականին բա՛ն ցույց կտամ...

Նա նիհար բռունցքը թափ տվեց Նունուֆարի հասցեին և անմիջապես վեր կացավ ու, առանց հագնվելու, գնաց քրոջ հետ խորհրդակցելու։

Քույրերն իրար տուն չէին գնում քանի տարի էր։ Խռով չէին, բայց իրար չէին այցելում, որովհետև ամուսինները չէին սիրում միմյանց։ Գինեվաճառը տանել չէր կարողանում դերձակի լռակյաց, ինքնամփոփ բնավորությունը. դերձակին դուր չէր գալիս գինեվաճառի պարծենկոտությունը և գինով փող աշխատելու միջոցները. նա այն կարծիքի էր, որ ամեն մի առևտուր խաբեբայություն է, իսկ գինու և օղու առևտուրը կրկնակի խաբեբայություն։ Հետո դերձակ Վանեսը չէր սիրում, որ գինեվաճառը ինքն էլ երբեմն կեր ու խում է սարքում, երկարաճիտ կոշիկներ է հագնում։ Այդ կոշիկնե՛ր... գերձակը տանել չէր կարող նրանց ճոճոցը։ Նա չէր սիրում և ֆենակալի խոսելու ձևը։ Իսկ գինեվաճառը, նրա մասին խոսելիս, դեմքը ծամածռում էր.

— Ի՜... Նա էլ մա՞րդ է։ Փորի հետ խոսողներին չեմ սիրում։

Եվ ամուսինների սառնությունը որոշ սառնություն էր ստեղծել նաև քույրերի միջև։ Բայց Նոյեմը, ինչպես մի քանի օր առաջ, այնպես էլ այս անգամ չէր կարող քրոջ մոտ չգնալ. խնդիրը վերաբերում էր իրենց երկուսի անվան ու պատվին. հոր խայտառակությունն իրենցն էր. անհրաժեշտ էր՝ լրջորեն, կարգին խոսել հոր հետ. հարկավ, մենակ, ինքն էլ

կարող էր խոսել, բայց ավելի ազդեցիկ կլիներ երկուսի խոսքը. մենակ, գուցե, ամաչեր և այնպես համարձակ չլիներ, սակայն քրոջ ներկայությունը ուժ կտար նրան և համարձակություն։ Հետո՝ Անգինն էլ կխոսեր, որ այդ «գաղթականին» պահելը լավ չէ։ Եվ վերջապես, հայրը մեկից այնպես չէր ամաչի, ինչպես երկուսից։

Այս խոհերով Նոյեմը հասավ քրոջ տուն և, ներս մտնելով, քրոջը տեսնելուն պես՝ բացականչեց.

— Բա տեսնում ես մեր հերն ինչե՞ր է անում...

Անգինը հարցում անելու փոխարեն տարակուսած նայեց քրոջ հուզումից աղավաղված դեմքին։ Նոյեմը շարունակեց արագ-արագ.

— Խայտառակությո՛ւն։ Ինչպես երևում է՝ էդ մարդն իրա հետ մեզ էլ խայտառակելու է...

— Ի՞նչ. էլի շորեր բան է տվել էն Նունուֆարին։

— Որանի՞ չէր շոր տալով պրծնեինք։

Եվ Նոյեմը, ձայնն իջեցնելով, կարծես պատերը կարող չին լսել, հայտնեց ա՛յն, ինչ լսել էր ամուսնուց։ Անգինը զարմացավ.

— Ի՞՞նչ ես ասում... Ջէ, սխալ կլինես... էդպես բան ոնց կլնի...

Նոյեմը բացատրեց, որ, այո, եղել է և ինքը հենց դրա համար է եկել. պետք է գնալ հոր հետ կարգին խոսել, հասկացնել, որ ամոթ-խայտառակություն է այդ գաղթականին պահելը. թող նրան հեռացնի, իրենք մի լավ գործ անող կլբերեն։

— Էլ չուշացնենք. հենց վաղը գնանք,— ավելացրեց նա։ — Ես մենակ էլ կերթայի, բայց երկուսով որ լինենք՝ կլսի...

Անգինը չգիտեր ի՛նչ պատասխանի. նա զարմացած էր և մտածում էր, որ եթե քրոջ՝ Նոյեմի ասածները ճիշտ լինեն կամ ճշտվեն— դա, իհարկե, վատ է իրենց տան, անվան համար, իրենց հոր համար, բայց ի՞նչպես գնա հորն այդպիսի բան առաջարկի։ Սակայն Նոյեմը նրան համոզեց, որ դա անհրաժեշտ է, թե չէ հոր հետ կխայտառակվեն իրենք էլ։

— Եթե այդ բանը թողնենք, չխոսենք, խալխը մեզ ամոթանք կտան, որ մեր հորն անտեր ենք թողել։ Հասկանո՞ւմ ես...

Վերջին պատճառաբանությունը համոզեց Անգինին, և նա համաձայնություն տվեց՝ միասին գնան հոր հետ խոսեն։

Ու քիչ հետո նրանք բաժանվեցին, պայմանավորվելով՝ վաղը գնալ այնպիսի ժամի, երբ այգում խնձոր գնողներ չեն լինում։ Եվ գիտեն, որ ամենահարմար ժամանակն առավոտն է։

Երբ իրիկունը դերձակը տուն եկավ և հետաքրքրվեց, թե կինը ինչո՞ւ է այլայլված՝ Անգինն ամոթից ամեն բան չհայտնեց, բայց ասավ, թե վաղը պետք է գնան հոր մոտ նրան հասկացնելու, որ մոր շորերը չտա գաղթականին, և այդուց հետացնի։ Ու լավ կլնի, եթե Վանեսն ինքն էլ խոսի հոր հետ։

— Ամեն մարդ իր գլխի տերն է,— ասավ դերձակը։— Ես ուրիշի գործերին չեմ խառնվի։ Դուք գիտեք ձեր հերը։

Անգինը լռեց, և այնուհետև՝ մինչև ուշ գիշեր նրա քունը չէր տանում. ամոթից նրա դեմքը տաքանում էր, երբ մտածում էր քրոջ ստածների մասին։ Նրա տագնապն ավելացրեց վանավանդ գիշերվա խեթին հանգստած քամին, որ սուլում ու շշուկ էր գյուղի գլխին և ստանձնատներ իրենց տանիքում։

III

Օգոստոսի առավոտը նոր-նոր էր բացվում, երբ Մարտին ապերը վեր կացավ անկողնից, լվացվեց և իր փոքրիկ կռռովը ձեռին մտավ այգի՝ տեսնելու, թե գիշերվա քամին որքան խնձոր է թափել ծառերից և ամեովա խնձորներին չի՞ վնասել արդյոք։ Նրա հաշվով քամին մեծ ավերածություն պիտի արած լիներ, որովհետև գրպատմ էր շարունակ և տանիքը ծեծում.. Հիմա, սակայն, այնպես խաղաղ էր, որ մարդ չէր հավատում, թե գիշերը փոթորիկ է եղել։ Ուրեք դեռ ուշ պիտի ծագեր, բայց նրա ելքն ավետող հրակարմիր ցոլքերն արդեն բռնել էին երկինքը, և գյուղում ու դաշտերում իջել էր մի անդորր, որ սոսկալի է միայն կիրակի օրերը, երբ կալ ու դաշտային աշխատանք չի կատարվում և գյուղացին ուզում է մի երկու ժամ ավելի հանգստանալ շաբաթվա լարված աշխատանքից հետո։ Դրանից էր, գուցե, որ արտուտներն ուրախ երգով ճախրում էին ցած, իսկ ծիծեռնակները սլաքի պես

կտրում էին օդը սուր ծվոցով և անհայտանում չգիտես ո՛ւր։ Անտառը դեռ քնաթաթախ էր, այգու վրա՝ թե ծառերին և թե գետնի կանաչին զով ցող էր իջել. անգամ ընկած խնձորները շաղոտ էին...

Մի փոքր տարածություն անցնելուց հետո՝ Մարտին ապերը տեսավ, որ իր ենթադրությունը սխալ էր.— քամին շատ խրնձոր չէր թափել... Նա հանգստացավ, մանավանդ, երբ նկատեց, որ ամեովա խնձորները չէին վնասվել. յուրաքանչյուր ծառի տակ ընկել էին ընդամենը մի քանի հատ... Քամին, ինչպես երևում է, վերևից էր անցել։

Մարտին ապերը գոհ մնաց, և հանգիստ սրտով գնաց մինչև այնտեղ, ուր Սահակը քնում էր մեծ ծառի տակ։ Սահակը քնի մեջ քրքրում էր, իսկ մի քիչ այն կողմ կապած շունը՝ Ասլանը, տիրոջը տեսնելով, սկսեց պոչը շարժել և կապը ձիգ տալ.— ուրա՞խ էր արդյոք տիրոջը տեսնելու համար, իր հավատարմությո՞ւնն էր հայտնում նրան, թե՞ կեր էր ուզում— դժվար էր ասել։ Բայց Մարտին ապերն այնպես հասկացավ, թե շունն ուզում է, որ ինքը՝ տերը մոտենա նրան։ Եվ ծերունին մոտեցավ ու, փաղաքշական խոսքեր ասելով, մի քանի անգամ շփեց շան գլուխը։ Ասլանը հրճվանքից ճռկռտաց, ատամները կափկափեց ու նստեց՝ կերի սպասելով, որ նրան ու ընկերներին տալիս էր միշտ Սահակը։ Բայց Մարտին ապերը չուզեց նրան աբթնացնել.— մեղք է, քաղ քնի, մտածեց և այն է՝ ուզում էր վերադառնալ, երբ նկատեց մոռի քիփերը, որոնց ճղները կարմրել էին պտուղներով։ «Մի քիչ քաղեմ տանեմ Նունուֆարին», ասավ նա մտքում ու, կողովի հատակին շերեփուկի մաքուր տերևներ փռելով՝ սկսեց մոռի հասած կարմիր հատիկները խնամքով, զգուշությամբ վերցնել իրենց սպիտակ կաղապարներից։ Երբ մի երկու-երեք բուռը քաղել էր արդեն՝ նա նորից վերադարձավ տուն։

— Նունուֆար, ա՛ռ, մոռ եմ բերել քեզ համար,— կողովը տվեց նա ինքնաեռը ջուր լցնող Նունուֆարին, ապա նորից ձեռները լվաց, հագավ կիրակնօրյա զգեստները, այսինքն՝ միայն բարակ շալ արխալուղը, որ Վանենն էր կարել մի քանի տարի առաջ և, տերողորմյան վերցնելով, հանդարտ քայլերով գնաց դեպի փեթակները, մինչև քեյը պատրաստ կլիներ,

որից հետո խնձոր առնողները պիտի գային։ Մարտին ապերն իրեն լավ էր զգում այսօր, այնպես լավ, որ վաղուց չէր զգացել։ Երբ մի տարի առաջ կինը՝ Սաբեթ նանը մեռավ՝ նրան թվաց, թե ամեն ինչ տակնուվրա եղավ. կյանքում էլ շահ, նպատակ, համ չէր տեսնում. ամեն ինչ ընկել էր աչքից։ Բայց հիմա, երբ Նունուֆարը տանն էր, նրան թվում էր, թե կոտրված մի բան նորոգվեց ու ամեն ինչ կարգի ընկավ. էլ առաջվա պես անհանգիստ չէր. խաղաղություն կար սրտում, և նա կուզեր, որ այսօր այդ հանգիստն ու խաղաղությունը չխանգարվեր գնողների գալով, կշեռքով ու հաշվով։ Այսօր գոնե հանգիստ թողնեին, ինչպես բոլորն են հանգստանում կիրակի օրերը։ «Կալի եզն անդամ հանգստանում է կիրակի օրը,— մտածեց նա,— իսկ մենք՝ հա՛յ քաղի, հավաքի, կշռի հաշվի»...

Մարտին ապերն, իսկապես, արդար լինելով, շահով, առևտրով քիչ էր հետաքրքրվում. նրան շահագրգռում, ապրեցնում էր միայն իր այգու կյանքը, նրա բազմազան կյանքը՝ վաղ գարնանից մինչև ուշ աշուն։ Մարտին ապորը հետաքրքրում ու ապրեցնում էր յուրաքանչյուր ծառ ու թուփ. նրանց բողբոջումն ու ծաղկումը. ապա առաջին պտղավորումը— քորոցի գլխի չափ պտուղները, որ կամաց-կամաց դառնում էին բրոնզագույն չափ։ Նա գիտեր այգու յուրաքանչյուր ծառի կենսագրությունը, ինչպես հայրն իր զավակների, նրանց պատահած դժբախտությունը. ծառի առաջին ծաղկումը նրան պատճառում էր զսպմանալի հրճվանք, ինչպես զավակի հարսանիքը ծնողներին. նրանց հիվանդությունը նրան տխրեցնում էր և ստիպում իր հոգածությունը կենտրոնացնել հիվանդ ծառի վրա. կոտրված ճյուղը, կարկտահար ծառը նրա սիրտը լցնում էին դառն վշտով, իսկ նոր պատրուսների առաջին կանաչն ու ընձյուղումը՝ անասելի բավականությամբ ու հրճվանքով, մի այնպիսի հրճվանքով, որ նա չէր կարողանում իրեն զսպել մինչև իր ուրախությանը մասնակից չաներ և մի ուրիշին։— «Սահակ, Սահակ. արի մի տե՛ս՝ պատրուսները ո՞նց են կանաչել»... Ու նրա դեմքը փայլում էր հրճվալից ժպիտով։ Իսկ եթե Սահակը չէր լինում, կինն էր աչքովն ընկնում՝ կանչում էր զվարթ ձայնով. «Սաբեթ, աղչի Սաբեթ, մի տես ո՞նց են կանաչել»... Նրան մանավանդ մեծ, անասելի մեծ

հրճվանք պատճառեց իր մի փորձը, որն այնքան հաջող արդյունք տվեց, որ ամբողջ գյուղն սկսեց խոսել.— Տարիքով մի խնձորենու ստորին ճյուղերի վրա նա չորս տեսակ պատվաստ արավ, և չորսն էլ կանաչեցին, ծաղկեցին ու չորս տեսակ պտուղներ տվին։ Դա նրա համար ուրախություն էր, հաղթանակ, գյուղացիների համար հրաշք.— նրանք խմբերով գալիս էին հրաշք ծառը տեսնելու, և Մարտին ապոր համարումը մեծանում էր նրանց աչքում, դառնում հեղինակություն... Այնպես որ Մարտին ապերը սոսկ այգետեր չէր, որ ծառը պահում է բերք ու շահ ստանալու համար,— նա այդ անում էր գործը սիրելով, նրա հաճույքը վայելելու։ Ոչ միայն ծառերին, թփերին էլ այդպիսի խնամքով էր վերաբերվում Մարտին ապերը.— այգու պատերի տակ և ազատ մասերում նա ռեհկել էր հազարջի, մոռ ու փշախաղողի թփեր, իսկ տան շուրջը, գետ ջահել ծամանակ, վայրի ու քնտանի վարդենիներ, որոնց վրա նույնքան խնամք էր թափում հիմա, որքան երիտասարդ օրերին... Ու միշտ քամիները, ցրտերը ահաբեկում էին նրան.— Մտերին մի բան չպատահի՞...

Այդ մտահոգությամբ անցրեց նա և այս փոթորկալի գիշերը, բայց հիմա հավաստիանալով, որ առանձին մի վնաս չի եղել— ծառ, ճյուղ չի կոտրվել,— նա ոչ միայն հանգստացավ, այլև համեցի մի անդորր իջավ նրա սրտին և նա ցանկություն ունեցավ կիրակին հանգիստ անցնել իր տանը, առանց մարդկանց հետ առնչվելու, հոգվի գործ ունենալու։

Այդտեղ մեծ ծառը շրջելուց հետո, այն է՝ ուզում էր վերադառնալ տուն, Քեչել, երբ այգու դուռը ծեծեցին։ Մարտին ապերը կանգ առավ. ո՞վ պիտի լիներ այսպես վաղ։ Ուզեց ձայն տալ Սահակին, որ գնա դուռը բանա, բայց հիշելով՝ նա քնած է, գնաց ինքը, տերողորմյան հանգիստ գցելով։

Երբ դուռը բաց արավ՝ նրա առաջ կանգնեցին իր երկու աղջիկը— Նոյեմն ու Անգինը՝ մեկը մյուսից լուրջ ու հուզված դեմքով։

Մարտին ապոր համար դա մի արտակարգ այցելություն էր այդպես վաղ. արտակարգ թվաց նրան և աղջիկների հուզված արտահայտությունը. ի՞նչ պիտի լիներ... Եվ աղջիկնե-

րը, իրենց հերթին, երևի, հոր դեմքին զարմանք նկատելով էր, որ ասին.

— Շուտ եկանք, որ մարդ չլնի։ Քեզ ասելու բան ունենք, հայրիկ,— խոսեց առաջինը Նոյեմը։— Գնանք էս կուռքս,— ցույց տվեց նա տան հակառակ կողմը, այգու խորքը։

— Ի՞նչ կա, ի՞նչ է պատահել,— չհամբերեց ծերունին, ենթադրելով, թե փեսաներից մեկին մի աղետ է պատահել։

— Հեչ, մեզ բան չի պատահել,— շարունակեց Նոյեմը նույն լուրջ, հուզված ու վիրավոր տեսքով։— Մենք եկել ենք էդ գաղթականի համար...

Բայց հայրը թույլ չտվեց շարունակի. նա ուղղվեց կանգնած տեղը և նրա թավ հոնքերն ամպեցին.

— Ի՞նչ... — խուլ հնչեց նրա փոխված ձայնը։

Ով երա այդ հարցի մեջ կար ոչ թե հետաքրքրություն, այլ մի զուսպ վրդովմունք։

Նոյեմն իր հերթին նույնպես ուղղվեց, գլվեց ու շրթերը սեղմեց. երևում էր, որ նա հար հարազատ տղրիկն էր։

— Դու դեռ բանը լսած՝ մի՛ բարկանա, հայրիկ։ Թող հլա ասենք՝ հետո։

— Ասա՛։

— Մենք քու աղջիկները, քու հարազատներն ենք։ Էնպես չի՞։ Քու պատիվը, քու անունը մերն է։ Էնպես չի՞։

— Ասելի՛ք ասա,— կտրեց հայրը։

— Ասեմ,— և Նոյեմը շունչ առավ կուրծքը բարձրացնելով ու, քրոջ՝ Անգինի վրա մի հայացք նետելով, որով նրան կարծես հրավիրում էր օգնության, շարունակեց ձեռը մեջքին կանթելով.

— Էդ գաղթական կնկանն ինչո՞ւ ես բերել քու տունը։

Հայրը միայն խեթեց Նոյեմի վրա, որ չգիտես արհամարհո՞ւմ էր աղջկան, թե զարմանում նրա համարձակության վրա։

Բայց Նոյեմը դրանից չշփոթվեց.

— Ասելիք հազար բան են ասում. դու հետու ես՝ չես լսում... էնպես բաներ, որ մարդ ամաչում է...

— Է՛նպես բաներ,— չհամբերեց հայրը և տնազեց աղ-

չըկան։— Ի՞նչ բաներ։— Ու Նոյեմի փոխարեն նա դարձավ Անգինին։— Դու ասա տեսնեմ՝ «ի՞նչ բաներ»...

Անգինը կարմրեց։

— Եսիմ։ Թող Նոյեմն ասի։

Եվ Նոյեմն սկսեց նրանից, թե հոր անվան ու պատվի համար լավ չէ, որ նա պահում է այդ գաղթական կնոջը, որ Նուռնուֆարը հայտնի գող է. կարող է հոր ունեցածն այնպես կրել, որ հայրը չիմանա, և մի օր էլ կտեսնի՝ տանը բան չի մնացել։

— Նրա մասին դեռ ավելի վատ բաներ են խոսում,— շարունակեց Նոյեմը։— Կարող է անառակի մեկն է։ Էնպես չի՞, Անգին։

Անգինը նորից կարմրեց և գլուխն իջեցրեց։ Նա ամաչում էր հոր երեսին նայել։

Մարտին ապերն սկզբում լռում էր ականջ, մի ականջն աղջիկներին դարձրած, հետո սկսեց երբեմն խեթել, իսկ Նոյեմի վերջին խոսքերից հետո՝ էլ չհամբերեց ու հարցրեց տաքացած.

— Է՞դ էր ձեր ասելիքը։

Եվ հոր ձայնի մեջ աղջիկներն զգացին զսպված բարկություն։

— Ամենավատը է՛ն է, է՛ն է,— տաքացավ Նոյեմը, կարծես հորից վարակվելով,— է՛ն է, որ էդ կնիկը անառակ է. ա՛մի տունն ասես՝ գնում է, ա՛մի հետ ասես՝ քնկնում է։ Ի՞նչ [illegible]...

— Մարդի՛կ,— ապտիկ խոսքը կտրեց Մարտին ապերը։— Ի՞նչ գործ ունեն էտպես մարդիկ։

— Ո՛նց թե, ախր մեզ համար էլ վատ է. մենք էլ գեղի մեջ ենք ապրում։ Էդ որ մորս շորերը տալիս ես նրան, հագցընում՝ տեսնողն ի՞նչ կասի մեզ։

— Դուք ուրեմն ձեր մասի՞ն եք մտածում։ Դա ա՛յ ձեր, ա՛յ խալխի բանն է։ Կին է՝ ինձ օգնում է, իմ շորերը լվանում, ճաշ է եփում, տան բան է անում՝ ում ի՞նչ,— հոնքերը վրա տվեց ծերունին։— Կուզենամ հլա հետը կպսակվեմ— ձեզ ի՞նչ...

Նոյեմն ու Անգինն իրար նայեցին, գունատվեցին։ Իսկ Նոյեմի վերին շուրթը դողաց։

— Ո՞նց թե,— ձեռներն իրար զարկեց Նոյեմը։— Իմ ազնիվ մոր տեղը գաղթական կնիկ բերե՞ս։ Էդ ինչե՞ր ես մտածում, ա՛յ հեր։ Ուզում ես քու անունը, մորս հիշատակը հլե գետնովը տաս։ Թե էդպես բան անես՝ մեր ոտն էլ էստեղ չես տեսնի...

Հայրը փնչացրեց ու երեսը թեքեց։

— Իմ գլխի տերը ե՛ս եմ, ոչ թե դու։ Ի՞նչ ուզեմ՝ է՛ն էլ կանեմ։

— Բայց պսակվե՞լ գաղթականի հետ...

— Ես ձեր տան գործերին չեմ խառնվում։

Մարտին ապերն այնպես արհամարհանքով ասավ այդ և այնպես խստությամբ երեսը դարձրեց աղջիկներից, որ Նոյեմը գոգնոցի փեշը տարավ աչքերին, լաց եղավ։ Նրան հետևեց և Անգինը։ Բայց հայրն ուշ չդարձրեց նրանց արտասուքներին. նա, տերողորմյան ձեռի մեջ ճմրթելով, հեռացավ բարկացած, բարձրահասակ ու փոքր ինչ կորացած։ Նրա բեղերը շարունակ դողում էին։ Նա գնաց դեպի փեթակներն ու մինչև ճաշ համարյա մնաց այնտեղ։ Ինքն իրեն խոսելով, փեթակների առաջի թփերը կարգի բերելով։

Պահակ Սահակը, որ մինչ այդ, հուզված խոսակցության ձայներ լսելով, արագ հագնվելով՝ վազել էր դեպի ձայները— նկատեց, որ ապոր աղջիկները լաց լինելով վերադառնում են, իսկ ապերը հուզված գնում է դեպի փեթակները. թե ի՛նչ էր պատահել՝ նա չկարողացավ հասկանալ, բայց երևույթն այնքան արտասովոր էր, որ նա վազեց Նունուֆարի մոտ, գոնե նրանից բան իմանալու։ Նունուֆարն ինքն էլ անհանգիստ էր, նա էլ լսել էր խոսակցության ձայները, տեսել էր ապոր աղջիկների գնալը, բայց թե ինչ էր պատահել— ոչինչ չէր կարող ասել, որովհետև կարգին բան չէր լսել։ Իսկ Մարտին ապորից դժվար էր հարցնել— երկուսն էլ անհարմար էին համարում։ Սակայն, աղջիկների գնալուց հետո, երբ արևը բավական բարձրացավ— խնձոր գնողներ եկան։ Ապերը կանչեց Սահակին և պատվիրեց ասել, որ էգուց գան, այսօր խնձոր չեն կարող քաղել։ Այդ տարօրինակ կարգադրությունը պահա-

կին թե զարմանք, թե տարակուսանք պատճառեց, բայց և այնպես նա, առանց պատճառը հարցնելու, ճշտությամբ կատարում էր տիրոջ պատվերը. ով դուրը ծեծում էր՝ նա, առանց բանալու, հայտարարում էր.

— Էսօր խնձոր չենք քաղել, էգուց եկեք։

Մարտին ապերը հեռվից լսում էր այդ խոսքերը և կա՛մ մաքրում էր փեթակների առաջ սատկած-ընկած մեղուները, կա՛մ ուղղում էր պառկած թեքված ծաղիկներն ու թփերը։ Նա ինքն էլ չգիտեր ինչո՛ւ է անում այդ աշխատանքը, բայց չէր ուզում, որ Սահակն ու Նունուֆարը տեսնեն իր հուզումը։ Նա բարկացած էր աղջիկների վրա, և քանի գնում՝ այդ բարկությունն աճում էր, որ նրանք խանգարեցին իր լավ սկսած, խաղաղ օրը։ Եվ ի՞նչ են ուզում իրենից։ Չե՞ն ուզում, որ ինքը ապրի։ Մոր հագուստները՞... կարծես իրենք են առել այդ հագուստները...

Նա մտածում, խոսում էր ինքն իրեն և, սկսած աշխատանքը թողնելով, երբեմն գնում-գալիս ծառերի տակ—բարձրահասակ ու փոքր ինչ կորացած։

Քիչ հետո Սահակը նորից եկավ։

— Էլի խնձոր առնողներ են եկել, ապեր։ Չեն գնում։ Ասում են՝ ապորը կանչի...

Ապերը ձեռը թափ տվեց։

— Գնա՛ ծախի, թե կարող ես։

Սահակը չհասկանալով ապոր-վատ տրամադրությունը, բայց նկատելով, որ դրա պատճառը, երևի, աղջիկներն էին իրենց անժամանակ ժպտելությամբ, գնաց «մուշտարիներին» բավարարելու։ Տեսնելով Սահակը մենակ է—Նունուֆարն անմիջապես օգնության հասավ նրան, ձեռն առնելով կշեռքը։ Սահակին մնում էր միայն խնձոր հասցնել այն տեսակներից, ինչ գնողներն էին ուզում և ինչ պառավները հավաքել էին երկար առանձին սալակների մեջ։ Ինչպես ամեն կիրակի, այդ օրն էլ բավական գնողներ եկան՝ ո՛րը փողով, ո՛րը ցորենով։ Երբ ճաշի մոտ նրանք գնացին— Նունուֆարն ուրախ-ուրախ տուն եկավ։

— Տասվերկու փութ ծախինք,— ասավ նա Մարտին ապո-

րը, որ, փեթակների մոտ շրջելուց ու աշխատելուց հոգնած, եկել մտախոհ նստել էր պատշգամում։

Մերունին ոչինչ չպատասխանեց. նա կարծես չլսեց, այլ միայն շուրթերը վրա բերեց իրար և տերողորմյան խփեց ծրնկանը։

Պատասխան չստանալով, բայց նկատելով ապոր վատ տրամադրությունը և, Սահակի նման ենթադրելով, որ այդ վատ տրամադրությունը կապ ունի աղջիկների այցելության հետ, Նունուֆարը նորից անհամարձակ մոտեցավ ապորը։

— Ես քու մեծ աղջկանից կվախենամ,— ասավ նա դողդողող ձայնով, կարծես օգնություն խնդրելու համար։— Ասօր անպես չար աչքերով նայավ ինձի... անպես...

— Նայա՞վ... — չարախնդաց ապերը, առանց Նունուֆարին նայելու։— Իսկ դու վախեցա՞ր... Ի՛նչքան կուզի թող նայի,— հանկարծ ձեռը ծնկանը խփեց ծերունին ու ելավ տեղից։— Նայա՞վ... Նա ո՞վ է էստեղ։ Իր մարդու փնիքը, ոչ թե իմ տան տերը։ Նա էստեղ գործ չունի։ Նայա՞վ...

Մարտին ապերը խոսեց այնպես հուզված ու բռնկված, որ Նունուֆարը վախեցած հետացավ-մտավ սենյակ, զղջալով, որ առիթ տվեց նրան բարկանալու։ Իսկ ծերունին, հիշելով աղջիկների հետ ունեցած խոսակցությունը, շարունակում էր զարմանալ նրանց համարձակության վրա, և նրան թվում էր, որ աղջիկներն իրեն չեն սիրում. ուզում են, որ ինքը մենակ մնա, իրենց ձեռքին նայի։ Նրան վրդովում էր մանավանդ այն, որ իրեն երեխայի տեղ են դնում— խորհուրդներ են տալիս, թե ի՛նչ պիտի անի... Հիշում էր, թե ինչպես աղջիկները ուրախ էին, որ Նունուֆարը կատոզանում է տան բան անել, կերակուր եփել, և սովորեցնում էին թե ի՛նչը. ի՛նչպես պիտի եփել, ցույց էին տալիս ամեն բանի տեղ, որ կարող էին հարկավոր գալ նրան... Հիմա ի՞նչ էր պատահել... Մոր հագուստներից տվել է— դրա համար են կատաղել և «անառակ» ասում... Ասում են՝ «դող է, անառակ է... է՛ս կանի, է՛ն»... Կարծես ես մարդ չեմ ճանաչում... Դողը, անառակը— աչքերից կերևա... Հեռվ կնիկ են գտել՝ ամեն բան ասում են։ Դաղ-ֆակա՞ն է... կարծես գաղթականը մարդ չի... «Մեր ոտն էլ էստեղ չես տեսնի՛»։

Եվ Մարտին ապերը չէր կարողանում բացատրել, թե աղջիկները որտեղի՞ց համարձակություն ստացան իրեն հետ այդպես, այդ լեզվով խոսելու։ Ի՞նչն է նրանց անհանգստացնում, ինչո՞ւ են իրար գլխով դիպել...

«Մեր ոտն էլ էստեղ չես տեսնի՛»... Ավելի՛ լավ։ Դրանց տեսնեք... Առանց ձեզ ապրել եմ, էլի կապրեմ... Կարող եք սկի չգալ...

Բայց հենց երեկոյան, երբ լամպը նոր վառել էին, մեծ փեսան՝ գինեվաճառը եկավ. կառքը դռռալով կանգնեց այգու պատի տակ և նա, դեռ դռնից անհոգ մի եղանակ սուլելով, մոտեցավ իր երկարաճիտ կոշիկներով։

— Բարրիկո՛ւն, պապաշա, բարև՛, Նունուֆար քույրիկ,— ասավ նա պատշգամում սեղանի մոտ նստած Մարտին ապորը և գլուխ տվեց խըլխըլփացող ինքնաեռից թեյ լցնող Նունուֆարին։— Ի՞նչպես ես, պապաշա,— շարունակեց նա բարձրաձայն, կարծես խուլի հետ էր խոսում, մի բան, որ ծերունուն դուր չէր գալիս։— Էսօր աղջիկներդ, իմացա, քեզ հիմար բաներ են ասել՝ նեղացրել։ Որ իմացա՝ շատ բարկացա։ Դու նրանց ասածը բանի տեղ մի դնի, պապաշա. կնկա մազը երկար է, խելքը կարճ։ Նրանք ի՛նչ իրավունք ունեն խառնըվեն քո գործին։ Երբ իմացա՝ շատ բարկացա, շա՛տ։ Ասի՝ գնամ պապաշայի մոտ, հանգստացնեմ, եթե նեղացել է։ Է, պապաշա, եթե ամեն մարդ իր գործին կենա— աշխարհի բանը միշտ լավ կընթա։ Եթե՞ ես, ասենք, խառնվեմ պրեստավի կամ տանուտերի գործին, նրանք՝ իմ գործին— ամեն ինչ կխառնվի իրար։ Էնպե՞ս չի, պապաշա։ Էդպես է։ Շատ մարդ էլ քաղաքավարություն, մարդավարություն ասած բանը չգիտի. ի՛նչ խելքին փչում է՝ ասում է կամ անում է։ Ես ասում եմ՝ մեր պապաշան ի՛նչ ուզի— պիտի կատարենք։ Մենք էսօր որ կանք՝ նրա որդիներն ենք, ասում եմ, հարազատ որդիները։ Դուք, ասում եմ Նոյեմին, աղջիկներ եք, մենք էլ, քանի որ տղա չունի, տղաներն ենք։ Էնպես չի՞, պապաշա։

«Պապաշան», հայացքը դեպի այգին, լսում էր նրան և անխոս թեյ խմում, բերանի անկյունները սեղմելով։

— Էդպես, պապաշա. հիմարներից չե՛ն նեղանա։ Դու

խելոք մարդ ես, պապաշա,— ձեռը մտերմաբար աներոջ ծընկանը խփեց նա, հետո մեկեն թեքվեց ու բերանը մոտեցրեց ծերունու ականջին։

Նունուֆարը նրբանկատ կին էր. տեսավ գինեվաճառը ծածուկ բան ունի ասելու, պատշգամից հեռացավ, մտավ սենյակը և աներևույթացավ։

— Էդպես, պապաշա,—Նունուֆարի հեռանալը նկատելով՝ ձայնը նորից բարձրացրեց գինեվաճառը։— Գեղացիք մի բան որ տեսնում են՝ բան են շինում։ Ձեզ ի՛նչ մարդու տանը կին է աշխատում։ Բա մեկը պիտի աշխատի չէ՞։ Աղչիկները չեն հասցնում՝ թող ուրիշն աշխատի։ Ձեր ի՞նչ բանն է։ Էնպես չի՞, պապաշա։ Էդպես է։ Իսկ ես՝ ա՛յ ինչ եմ մտածել, պապաշա,— ձեռը նորից մտերմաբար աներոջ ծնկանը խփեց նա։— Ես քեզ շատ եմ հարգում, պապաշա։ Այդ դու լավ գիտես։ Ով խղճում եմ շատ, որ մենակ ես մնացել, պապաշա, ու դրա համար մտածում եմ ա՛յ ինչ...

Մարտին ապերը թավ հոնքերի տակից մի նուք, բայց հետաքրքիր հայացք նետեց փեսայի ածիլած երեսը, ուր խաղում էին նրա փոքրիկ աչքերը։

— Մտածում եմ՝ դու մենակ ես, և էդպես շատ տխուր կլինի քեզ համար։ Ասում եմ՝ մեր պապաշային մենակ չթողնենք...

Մարտին ապերը կրկին իր սուր, փորձող նայվածքը գցեց գինեվաճառի երեսը, այդ վայրկյանին նրա հոնքերը ետ գնացին, և ծերունու դեմքը պարզվեց։

— Հը՞,— ասավ նա սպասողական։

— Ասում եմ, ուրեմն, պապաշա, քեզ մենակ չթողնենք, մեղք ես... Ասում եմ՝ երեխաներին, նույնիսկ վերցնենք գանք էստեղ միասին ապրենք։ Մենակ լավ չի քեզ համար։ Խալխը ի՞նչ կասեն մեզ, էլ որ օրվա հարազատն ենք...

Մարտին ապոր հոնքերը նորից վրա եկան, բերանի անկյունները սեղմվեցին։

— Նունուֆա՛ր,— կանչեց նա մի ձայնով, որից երևում էր, թե կարծես դժգոհ է, որ նա հեռացել էր առանց իր թույլտվության։ Իսկ երբ Նունուֆարը գլուխը հանեց սենյակի դռնից, Մարտին ապերը լփռտեց.— Արի՛, չայ ածա...

Գինեվաճառն զգաց նրա դժգոհությունը, զգաց, որ աննրոջը հաճելի չեղավ իր առաջարկը, բայց չնկատելու տվեց ու շարունակեց նույն մտերիմ ձայնով.

— Նունուֆար քույրիկն էլ, իհարկե, կմնա կաշխատի: Ճիշտ է, ինձ համար դժվար է, խանութից հեռու կլինի. բայց ոչինչ, պապաշա: Դու գիտես, որ քեզ համար ամե՛ն ինչ կանեմ: Եթե հրամայես՝ էս րոպեին Տրապիզոն կերթամ...

Խանութպանը շարունակում էր, իսկ Մարտին ապերը տաք թեյը խմում էր և առաջվա պես մռայլ նայում այգու կողմը: Նա այլևս փեսային չէր լսում: Երբ թեյը վերջացրեց ու բաժակը դրեց ցած՝ նա հանկարծ ոտի կանգնեց.

— Սահակ, Սահակ... արի՛ էստեղ... Շնեբին քուռ տվե՞լ ես,— հարցրեց նա, երբ Սահակը մթան մեջ երևաց ծառերի տակից:— Եթե չես տվել, գնա տուր...

Տեսնելով, վերջապես, աները տրամադիր չէ իրեն լսելու՝ գինեվաճառը, ըստ սովորության, ձեռն աներոջ մեջքին խփելով, հրաժեշտ տվեց:

— Էդպես, պապաշա, ղոչաղ կաց. մի բան կանենք:

Ու գնաց, բայց մինչև այգու դուռը հասնելը՝ սրտացավ տիրոջ հոգածությամբ զգուշացրեց պահակին.

— Ծառերին, բանին լավ մտիկ արա, Սահակ, քե չէ...

Ու ձեռը մտերմաբար խփեց Սահակի մեջքին, որից պահակը իրեն շոյված զգաց և ուղեկցեց նրան մինչև կառքը:

Քիչ հետո, երբ Մարտին ապերը լսեց կառքի գոռոցը և մինչև տանտերտիկը փակում տալլուղու վրա, նա էլ չկարողացավ իրեն զսպել.

— Չաչանա՜կ. դու էիր պակաս...

Նունուֆարը դիտող և ուշիմ կին էր. նա զգում էր, որ փեսայի գաղտնի խոսակցությունը Մարտին ապոր հետ՝ պիտի վերաբերեր իրեն. զգում էր նաև, որ աղջիկները դեմ պիտի լինեին հոր քայլին՝ իրեն տանը պահելու. մեծ աղջիկը՝ Նոյեմն արդեն աչքերը ոլորել էր իր վրա և բռունցք էր թափ տվել. և հետո՝ երկրորդ անգամն էր քույրերը, մանավանդ Նոյեմը, գալիս էին այգի, բայց տուն չէին մտնում: Նունուֆարն զգում էր, որ դրա պատճառն ինքն է ու վախենում էր քույրերից, մանավանդ մեծից՝ Նոյեմից, որ այնպես սուր, շանթող

աչքերով էր նայում իրեն, կարծես մեխում էր կամ ուզում էր վառել։ Ի՞նչ է ուզում այդ կինն իրենից. ու չէր հասկանում, թե ինչպես անի, որ Նոյեմին չհանդիպի։

Բայց ինչ էլ մարդ մտադրում է— կյանքը կարգադրում է իրենը. հաճախ չուզած մարդուն ավելի ես հանդիպում։ Քույրերի՝ այգի գալուց մի քանի օր հետո, երբ Նունուֆարը գնացել էր գյուղի խանութներից թեյ ու շաքար գնելու (Մարտին տպերը, տեսնելով նրա աչքաբացությունը, Սահակի փոխարեն նրան թողեց գնումների գործը), մի խանութում անսպասելի հանդիպեց Նոյեմին. նա կանաչ աչքերի անթարթ հայացքով իրեն այնպես նայեց, որ Նունուֆարը վախից կարմրեց և աչքերն ակամա գետին խոնարհեց։

— Լսի՛ր, աղջի,— մոտեցավ Նոյեմը, խոսելով անսպասելի մեղմ ձայնով, որ Նունուֆարը չէր սպասում։— Արի էստեղ՝ բան եմ ասում։

Երանք գուրս եկան խանութից և, Նոյեմն առաջ ընկավ։ Նունուֆարն անխոս, սրտի դողով հետևում էր նրան աստիճանավոր և մտածում, թե այդ կինն արդյոք ո՞ւր է տանում իրեն։ Երբ խանութի փողոցից թեքվեցին մի խուլ փողոց՝ Նոյեմը կանգ առավ և կանաչ աչքերը հառեց Նունուֆարի երեսը։

— Լսի՛ր, աղջի,— սկսեց նա ցածր ձայնով։— Ես քու թշնամին չեմ, քու վատն էլ չեմ ուզում։ Հերս էդ շորերը՝ մորս շորերը տվել է քեզ, հագել ես— ոչինչ. աղքատ կնիկ ես, վարձք է արել։ Բայց հիմի քեզ մի բան եմ ասում՝ պիտի լսես. թե չէ՝ ինձ Նոյեմ կասեն, շա՜տ կբարկանամ։

— Ըսե,— դողաց Նունուֆարի ձայնը։

— Հորս տանից գնաս։ Գործ չունես, ես քեզ համար գործ կգտնեմ,— հասկանո՞ւմ ես։ Էգուց էլ էնտեղ չլնես,— ավելացրեց Նոյեմը կտրուկ։

— Ես չէի ուզեր,— փորձեց արդարանալ Նունուֆարը,— հայրիկը կըսե՝ «արի»։ Կսեմ՝ «երթամ».— Չէ, կսե, մնա։

Նոյեմի աչքերը վառվեցին։

— Դու որ չմնաս,— տաքացավ նա,— հայրիկը քեզ զորով չի պահի։ Ինչե՛ր ես խոսում։ Այ, ես քեզ բան եմ ասում. եթե էգուց չգնացիր,— կգամ տունը գլխիդ փուլ կածեմ։ Ան-

տե՛ր գաղթական,— ձայնը բարձրացրեց Նոյեմը։— Ես քրեհով ապրեմ, դու գաս հորս տանը նստե՞ս... Դե, գնա՛։

Նրանք բաժանվեցին. Նունուֆարը, ծանր փորձանքից ազատվածի պես, դուրս եկավ խուլ փողոցից և շտապեց այգի։ Նոյեմի առաջարկությունը և՛ անսպասելի էր և՛ զարմանալի, բայց Նունուֆարը գոհ էր, որ խայտառակություն չեղավ փողոցում, որ Նոյեմը ձայնը չբարձրացրեց և ավելորդ խոսքեր չասավ, որ մարդ չտեսավ իրենց։ Նրան թվում էր, որ Նոյեմը կարող էր աղմուկ բարձրացնել, մարդիկ հավաքել իր գըլխին և նույնիսկ ծեծել իրեն։

Հասնելով տուն՝ նա Մարտին ապորը ոչինչ չասավ, թե հանդիպել է Նոյեմին և թե նա ինչեր է ասել, ի՞նչ առաջարկ է արել իրեն։ Ժամանակին ճաշ տվեց ծերունուն, պահակ Մահակին, ապա ամաններըը հավաքեց՝ լվաց, հետո, երբ Մարտին ապերն ըստ սովորության «թեք» էր ընկել պատշգամի թախտին, Նունուֆարն ւսնցավ սենյակները, հանեց Մարտին ապորից նվեր ստացած հագուստներն ու ոտնամանները, վերցրեց շալ գլխաշորը, հագավ իր հները, ու կես ժամ հետո նա, բոլորովին զգեստափոխված, մոտեցավ Մարտին ապորը, որ այդ ժամանակ գուլպանց հանգստանում էր թախտի վրա։

— Էհ, հայրիկ, ես կերթամ,— ասավ Նունուֆարը մեղավոր ձայնով։

— Ո՞ւր,— և ծերունին զարմացած նայեց Նունուֆարի փոխված հագուստներին.— Ո՞ւր կերթաս։

— Իմ տեղ։

— Ինչո՞ւ։ Ի՞նչ է պատահել։— Եվ Մարտին ապերը նըստնց՝ ոտները թախտից կախելով։ — Ինձանից նեղացե՞լ ես, ինչ է։

— Ջէ, ես քենե շնորհակալ եմ...— Նունուֆարը աչքերը խոնարհեց գետին։— Քու աղչիկ Նոյեմ կսե՝ «հորս տանեն հեռացի, չէ նե...»։

Մարտին ապերը թույլ չտվեց նրան շարունակի։

— Նոյե՞մը... Ուրեմն նա՞ է կարգադրել, որ իմ տված շորերը, ոտնամանները հանե՞ս... — Եվ ծերունին վայրացած փութկոտությամբ հագավ չուստերն ու ոտի կանգնեց։—

Ո՞վ է Նոյեմը. ի՞նչ իրավունք ունի նա իմ տան վրա։ Շո-
րե՞ր... այդ շորերը նա չի առել, այլ ե՛ս, ե՛ս...

Նա խոսեց զայրույթից կարմրած, մի երկու անգամ գնաց-
եկավ պատշգամում, հետո հանկարծ մոտեցավ Նունուֆարին,
ձեռքը բռնեց ու քաշեց դեպի սենյակը։

— Արի՛ էստեղ...

Նունուֆարը, հնազանդ երեխայի պես, հետևեց նրան։

— Շորե՛ր,— ասավ Մարտին ապերը, հանգուցյալ կնոջ
սնդուկը բանալով, ավելի շուտ հարձակվելով այդ սնդուկի
վրա, և կնոջ հագուստները հանելով այնտեղից, խումբ-
խումբ դրեց զարմացած Նունուֆարի առաջ։ Ապա կամոդից
հանեց ամեն տեսակ իրեր՝ կոշիկներ, սպիտակեղեն, գուլ-
պաներ և նույնպես թափեց հատակին՝ Նունուֆարի առաջ։—
Էս բոլորը դո՛ւ պիտի հագնես, դո՛ւ, հասկանո՞ւմ ես։ Էս բո-
լորը ե՛ս եմ առել, ոչ թե նրանք, հասկանո՞ւմ ես։ Էս բոլորը
քունն է, հասկանո՞ւմ ես։ Բե, էս բոպիկին շորերդ փոխի։
Ինչպես հանել ես, էնպես էլ հագի...

Նունուֆարը ապշած, զարմացած կանգնել էր հագուստ-
ների կույտի առաջ և չգիտեր ինչ անել...

IV

Աշնանը, երբ օրանցիները կալերը վերջացրել էին արդեն
և բանջարանոցները քաղել, Օրանում լուր տարածվեց, թե
Մարտին ապերն ամուսնացել է գաղթական Նունուֆարի հետ,
և պսակը կատարվել է ոչ թե եկեղեցում, այլ իր խնձորի այ-
գում։ Գանչել է, ասում էին, միայն իր ծխատեր քահանային,
մի քանի տարեկիցների, դրանց թվում և իր քավոր Ամբա-
կումին, որին գյուղում Անբակ էին ասում։ Ծղել են, իհարկե,
և հրավիրվածների կանայք՝ մի երկու-երեք պառավ ու— էլ
ոչ ոք։ Ներկանները պատմել են, որ ճոխ սեղան է եղել՝ գի-
նիներ, մի քանի տեսակ կերակուրներ... և ամեն բան այն
կարգով, ինչպես լինում է այրիների պսակին. այսինքն՝ չի
եղել, ո՛չ նվագ, ո՛չ պար։ Նունուֆարը նոր հագուստներով է
եղել, բոլորովին նոր կարած։ Անգամ պահակ Սահակը հա-

գած է եղել նոր և Նունուֆարի հետ սպասավորել է Հյուրևրին։

Իմանալով այդ մասին ճանաչողներն ասում էին.

— Տեսա՜ր Մարտին ապորը. խնձորի պես կնիկ է առել։

Բայց ոմանք զարմանում էին նրա ընտրության վրա, որ Օրանի անվանի այրիներին թողած՝ գերադասել է Նունուֆարին, մի կին, որը ոչ «ազգ ունի, ոչ ցեղ»։ Ոմանք այդ բացատրում էին նրանով, թե գուցե «սիրահարվել է», և ծիծաղում էին այդ բառի վրա, իսկ ոմանք պարզապես գտնում էին, որ Մարտին ապերն այնպես... «տախտակները խախտվել» են։

Այս կարծիքի էին մանավանդ Մարտին ապորաքեռները— Նոյեմն ու Անգինը։

— Ջէ, հերս խելքը միանգամից ետ է տվել,— ձեռը ծընկանը խփեց Նոյեմը, երբ իմացավ իր համար այդ տխուր, չափազանց տխուր լուրը։— Ով գիտի էդ գաղթականը գի՞ր արավ, կախարդե՞ց նրան։

Ապա սկսեց հայհոյել հոր ծխատեր քահանային, որ համաձայնել էր հորը պսակել «էդ անառակի» հետ. հայհոյեց քավոր Անբակին, որ խելքը կորցրած հորը ետ չէր պահել այդ բանից։ Նրան ավելի վրդովում էր այն, որ հայրը ոչ միայն պսակվել, այլև իրենց «ոչ մի բանի տեղ» չէր դրել.— դա նշանակում էր արդեն իրենց չի էլ ուզում ճանաչել։ Այնուհետև նա սկսեց հանդիմանել ամուսնուն, որ չէր կարողացել հորն իր ազդեցության տակ պահել։

— Պարծենո՜ւմ էիր, թե «պապաշան հիմա իմ բուռն մեջ է»։ Բա էս ո՞նց էլավ։

Գինեվաճառը, որ նույնպես հանկարծակիի էր եկել աներոջ քայլից, ամեն բան տակավին կորած չէր համարում։

— Դու կարծում ես, որ ամուսնացավ՝ կնիկը ժառանգ կդառնա՞։ Իսկի՛։ Ժառանգն էլի դո՛ւ ես, քո՛ւյրդ է։ Խնձորի բաղը ձեզ պիտի մնա, ոչ թե գաղթականի կնկանը։ Ճիշտ է, խայտառակություն է. երևում է՝ մեզ չի ուզում ճանաչել, հարազատի տեղ չի դնում, բայց բանը դրանով չի վերջանում։

— Ի՞նչ գիտես։

— «Ի՞նչ գիտես»... Քնած հո չեմ. ամեն բան հարցրել-ի-

մացել եմ։ Դու պիսըր Պետրոսից օրենքը լավ չես իմանում։ Ասում է՝ թեկուզ տասը կնիկ առնի...քանի երեխա չունի՝ ժառանգը աղչիկներն են։ Իսկ եթե, ասում է, երեխա ունենա— էն ժամանակ բանը կդժվարանա...

— Էդ էր պակաս, որ երեխա էլ ունենա էդ գաղթականից։

— Հենց լավն էլ էդ է, որ ծեր մարդ է— չի ունենա,— հույս էր տալիս գինեվաճառը։— Դու իսկի մի՛ վախ. ետառաջ բաղը մերն է։

Բայց Նոյեմը չէր հանգստանում. նա չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ, նրա համար շշմեցնող հարված էր թվում այն, որ հայրն ամուսնացել էր «գաղթական կնկա» վրա, որ հայրն ա՛յնքան «կորցրել է իրեն», որ իր տանը, մոր սարքած տանը պիտի նստի մի «գաղթական», մոր նվիրական իրերը պիտի բանեցնի, նրա թանկագին հագուստները պիտի հագնի մի կին, որ «քոծ» է եղել սրա-նրա դռանը, որ անտուն է եղել, անտեր ու տվածք։

— Նա իմ մոր տեղը նստի՞, ու էն բաղնի տեր-զառնա՞...

Պակաս վշտացած չէր և Անգինը. բայց նրա վիշտն այլ էր. ամենից առաջ նա մեղադրում էր իրեն, որ հորը մենակ էր թողել, շուտ-շուտ չէր գնացել նրա տուն՝ տնտեսությանը նայելու, և նա, գուցե ստիպված, այդպիսի բան էր արել...

Եվ Անգինը մեղադրում էր ամուսնուն, որ չէր թողնում իրեն ամեն օր գնալ հոր մոտ, որ ինքը՝ դերձակ Վանեսը քիչ էր խոսում հոր հետ, չէր հարցնում նրա «սրտի խորհուրդը», և ահա հայրը, մենակ մնալով, արեց այդ բանը։

— Էլ հիմա խոսելն ավելորդ է,— ասում էր դերձակը։— Երբ մարդը հավանել-առել է՝ մենք ի՛նչ կարող ենք ասել։ Մենք նրա գլխին խելք չենք դնելու։ Ամեն մարդ իր գլխի տերն է. ի՛նչ կուզի— էն էլ կանի։ Թեև նա գաղթական կընկանը հավանել է, ուրեմն՝ բախտն էդ է. մեր խոսելն ավելորդ է։

Անգինը համաձայն էր նրա հետ, բայց անունի, պատվի հարց էր. մարդիկ կմեղադրեն իրենց, որ տիրություն չեն արել իրենց հորը։

Չնայած տարբեր էր քույրերի վիշտը, այնուամենայնիվ նրանք հաճախ այցելում էին իրար՝ կարծես միմյանց մխի-

թարեկու։ Բայց իրար մոտ գալով՝ ավելի էին մեծացնում ու բորբոքում իրենց վիշտը, մանավանդ Նոյեմը։

— Հիմի էլ ո՞նց երևանք մարդամիջի,— հուզվում էր Նոյեմը։— Մենք էսպես նեղ ապրենք, նա իմ հոր տանն ու բաղումը պոլթա տա՜... Համ վնաս, համ տնազ։

Ու քույրերը՝ երկուսն էլ տխրում էին, կարծես հուսահատվում, բայց Անգինը շուտով սթափվում էր և աշխատում մխիթարել մեծ քրոջը, թե ինչ եղել է՝ եղել վերջացել է արդեն։ Էլ խոսելն ավելորդ է։ Հայրիկն այդ բանը չպիտի աներ, բայց որ արել է, ի՞նչ արած... Մարդ է, ինքը գիտի...

— Երանի Նանի փոխարեն գա մեռած լիներ,— ասավ Նոյեմը մի օր հուզված պահին,— էլ էս խայտառակությանը մեր գլուխը չէր գա։ Մի մատը մեղր դառնա գեղում՝ նալխը հիմա ծքծազում է մեզ վրա։ Մեր խանըմ-խաթուն մոր տեղակ— զաղթակա՞ն... Որ մտածում եմ՝ խելքս գլխիցս թրռչում է...

Ամուսնության առաջին օրերը, նույնիսկ առաջին ամիսները Նունուֆարը գյուղում չէր երևում. առաջ հաճախ գալիս էր խանութներից բան գնելու, գալիս էր մեկ-մեկ աղբյուրը ջրի, բայց հիմա— բոլորովին. նրա փոխարեն դարձյալ պահակ Սահակն էր գնումներ կատարում, աղբյուրից ջուր բերում։ Երբ գյուղացիները հանաքով թե լուրջ հարցնում էին— ինչո՞ւ «աղան» չի երևում կամ ինչո՞ւ «ձեր խանըմը» դուրս չի գալիս— Սահակն աչքով էր անում՝ պարզուկ-խորամանկ ժպիտը դեմքին և անխոս հեռանում։

— Մեղրամիսը դեռ չի՞ վերջացել, ադա։

Սահակը չէր պատասխանում այդ հարցասերներին. նա հարգում էր Մարտին ապորը և չէր ուզում նրա տան «բաները» հայտնել որևէ մեկին։ Ինչ վերաբերում է Նունուֆարին— ուրիշ ժամանակ գուցե նրա մասին բաներ աներ-խոսեր, բայց քանի որ նա Մարտին ապոր կինն էր արդեն՝ չէր ուզի հիմա բան ասել կամ վատ բան լսել նրա մասին։ Սակայն մի բան հիմա շփոթում և մտահոգում էր Սահակին. չգիտեր այժմ ինչպես վարվի Նունուֆարի հետ. առաջ նրան պարզ «Նունուֆար» էր ասում կամ «աղչի», բայց հիմա, երբ նա

Մարտին ապոր կինն էր— այդպես չէ՛ր կարելի, ու չգիտեր ի՛նչ անի. «Նանի» չէր սազում, որովհետև դեռ պառավ չէր, «մայրիկ» նույնպես, որովհետև դեռ ջահել էր. և նա առայժմ «դու» էր ասում։ Նունուֆարն էլ այդ կողմից պահանջկոտ չէր. երբ մեկը նրան «քույրիկ» էր ասում— ամաչում էր, կարմրում, որովհետև վաղուց ընտելացել էր, որ իրեն «Նունուֆար» ասեն։ Իսկ երբ Մարտին ապերը նրան «Նունուֆար ջան» էր ասում— նա քիչ էր մնում փղձկար. վաղուց, շատ վաղուց ոչ ոք նրան «ջան» չէր ասած. այդպիսի դեպքերում նրա սիրտը փուլ էր գալիս և նա երբեմն արտասվում էր ծածուկ տեղեր, ըզգիտես ուրախությունից, թե հին-հին հիշողություններից։ Ու այդ պատճառով կարծես նա Մարտին ապորն ավելի էր հարգում.— ամեն շաբաթ լվանում էր նրա գլուխը, անկողինը պատրաստում էր միշտ մի առանձին խնամքով, թեյի մեջ շաքար էր գցում, մսի լավ կտորները դնում էր նրա առաջ, հատկապես երբում էր եռանդով, կարծես նրան իր երախտագիտությունը հայտնելու։ Բայց Մարտին ապերը չէր թողնում նրան շատ աշխատել։

— Հերիք է, Նունուֆար ջան, հերիք է, կհոգնես,— ասում էր նա ամեն անգամ, երբ տեսնում էր Նունուֆարը փեշերն ու թևքերը քշտած տունը հավաքում է կամ տան փրփվածքները եռանդով թափ տալիս։

Նունուֆարի գալուց առաջ՝ Մարտին ապորը թվում էր, թե բոլոր իրերը տան մեջ, պառավի մահից հետո, անշարժացել էին, խունացել կամ նույնպես մեռել, բայց Նունուֆարը հանկարծ տանը կենդանություն տվեց դրանց. ամանները զնգացին ու փայլեցին, ծածկոցներ երևացին այս կամ այն բանի վրա և տունը կարծես լուսավորվեց. չգիտես նրանից էր, որ լուսամուտի ապակիները սրբվեցին, թե նրանից, որ սեղանի ճերմակ սփռոցը ձյունի պես մաքուր էր... Պահած տեղերից Նունուֆարը կտորներ հանեց թե՛ առավ նոր— լուսամուտների համար վարագույրներ կարեց-կախեց, ամանեղենի պահարանը զարդարեց նախշաձև կտրտած թղթերով։ Ով առհասարակ Նունուֆարն աշխատում էր տունը միշտ կարգին ու մաքուր պահել. ամեն բան անել լավ, ժամանակին... Առավոտները, երբ Մարտին ապերը դուրս էր գալիս ծառերին ու

մեղուներին նայելու (այգում հիմա մնացել էին միայն ձմեռվա խնձորները՝ «անպորտն» ու «անտովկա»-ն), Նունուֆարը ինքնաեռը դնում էր պատշգամի ծայրին և, մինչև թեյը կեփեր, տունը հավաքում էր, մաքրում, այնպես որ, երբ ապեր վերադառնում էր— ամեն բան փայլում էր։

— Ապրե՛ս, Նունուֆար,— ասում էր Մարտին ապերը, ձեռով Նունուֆարի ուսը շոյելով։ Նրան այնպես էր թվում, թե ձյանքը փոխվել է, թե ինքն ընդարմացած, թմրած էր, հիմա կենդանացել է։— Բայց դու շատ մի աշխատի, Նունուֆար, կհոգնես...

Եվ Նունուֆարն, իսկապես, մի օր կարծես հոգնեց.— հատակը սրբելիս հանկարծ նրան թվաց աչքերը մթնեցին և նա, ավելը ձեռին նստեց՝ պատին հենվելով. ապա ձեռը տարավ դեպի ճակատն ու վեր կացավ երերալով, տնքոցը հազիվ զըսպած։ Մարտին ապոր հարցին, թե ի՞նչ պատահեց՝ Նունուֆարը գլուխը թեքեց և ուսի մեկը վեր քաշեց, որ նշանակում էր՝ չի իմանում։

Նունուֆարն ինքը, իհարկե, գիտեր, բայց ամաչում էր ասել, որ այդպիսի բան իրեն պատահել է տարիներ առաջ, երբ «երեխով» էր լինում, և նա հիմա ամեն կերպ աշխատում էր ապորից թաքցնել այդ հանգամանքի նշանները... Բայց Մարտին ապերը հասկացավ ամեն ինչ։

— Դե ուրեմն դու քեզ լավ պահի. շատ մի աշխատի. ծաները բաներ մի վերցնի...

Նունուֆարը կուզեր մի կին լիներ մոտը, որ պատմեր նրան իր ապրումները, իր ուրախությունը, որ նորից երեխա պիտի ունենա այնքան տարիներ հետո, իր երեխաները կորցնելուց հետո։ Նա, որ մի հարազատ չուներ ոչ մի տեղ— հիմա նրան թվում էր, թե իր իսկական հարազատը պիտի գա, ու այդ հարազատից նա պիտի առներ կարոտը այն բոլորի, որ կորել կամ մեռել էին վաղուց. զգում էր նաև, որ այդ եկողը պիտի լիներ իր նեցուկն ու ապավենը և իր իսկական ուրախությունը կյանքում։

Ու գործի միջոցին թե պարապ ժամանակ Նունուֆարի միտքը շարունակ զբաղվում էր նրանով, որ պիտի գար։ Մտածում էր հագուստներ կարել նրա համար, բարձ ու անկողին պատ-

րաստել, բայց, մատներով հաշիվ տեսնելով, գտնում էր, որ դեռ ժամանակ կար... Նա այդ ամենի մասին մտածում էր մի ուրախությամբ, որ զգացել էր միայն առաջին երեխայի ժամանակ... Հիշելով, որ այն օրերին կեսուրն ամեն կիրակի իրեն տանում էր եկեղեցի— սկսեց ձմռան առաջին օրերը, երբ ազատ էր, գնալ եկեղեցի, հատկապես տոն և կիրակի օրերը, երբ պատարագ էր լինում: Հագնում էր նա հանգուցյալ պառավի թուխ վերարկուն ու կարճակրունկ կոշիկները, շալը գցում էր կամ թևին, եթե ցուրտ չէր լինում, կամ ուսերին, երբ քամիներ էին փչում: Այգուց մինչև գյուղ նա գնում էր, իհարկե, մենակ, իսկ գյուղում նրան՝ եկեղեցու ճանապարհին ընկերանում էր երբեմն ծանոթ մի կին, և նրանք զրուցելով շարունակում էին ճանապարհը: Եկեղեցում Նունուֆարը կանգնում էր կանանց դասի ետին մասում ու ջերմեռանգորեն լսում քահանաների արագ-արագ երգած, անհասկանալի բառերը, ուրացյալների ընթերցումը, որ նրան թվում էր շարունակում են մի հին ու նենգ անըմբռնելի բանի մասին, իսկ երբ քահանան երբեմն բեմից ետ էր դառնում՝ մատները բարձրացրած, Նունուֆարին թվում էր՝ կարգի է հրավիրում նրանց:

Նունուֆարն անշարժ լսում էր նրանց և ինքն իր մեջ աղոթում. իսկ երբ մեկ-մեկ սրտի տակ խլրտում էր զգում— այդ նրան հանկարծակի հուզմունք, խռովք ու հաճույք էր պատճառում, և նա աղոթում էր ավելի եռանդով: Այդ րոպեներին մի քաղցր արբեցում, երբեմն նվաղումի պես մի բան էր պատահում նրան, ճիշտ այնպես, ինչպես այն ժամանակ, երբ Մարտին ապերը հարցրեց պատճառը և չուր տվեց նրան:

— Քեզ լավ պահի,— խորհուրդ տվեց նա մի ուրիշ անգամ, և ինքն ապերը ուրախության պես մի բան զգաց. քաշկինակը հանեց և գոհությամբ սրբեց բեղերը:— Ուրեմն՝ նոր երեխա պիտի ունենանք:— Ավելացրեց նա ու ժպտաց մի խաղաղ ժպիտով, որը նրա բեղերը բարձրացրեց բերանից, երեվան հանելով նրա իրարից հեռացած, բայց տակավին պինդ ատամները: Նունուֆարն զգաց ծերունու լավ տրամադրությունը և սրտապնդեց: Եվ այնուհետև Մարտին ապերը չէր թողնում նրան ծանր բաներ վերցնի, դժվար գործ անի, վա-

ուրանը վառում էր ինքը. ինքնաեռը ներս բերելու կամ կարպետ ու գորգ թափ տալու համար կանչում էր Սահակին։ Եկեղեցի գնալու համար նույնպես զգուշացնում էր Մարտին ապերը, թե կարող է մրսել, սառուց կպատահի,— կընկնի, շուն կհալի — կվախենա։ Երբեմն էլ ուղղակի արգելում էր գնալ։

— Աղոթքը մեր տանից էլ աստծուն կհասնի։

Նունուֆարը սակայն այդ կարծիքի չէր.— եթե այդպես լիներ՝ եկեղեցին ինչո՞ւ համար է հապա։ Երկրի նախկին սովորությո՞ւնն էր, թե՞ Նունուֆարն ինքն էր զգում գրա անհրաժեշտությունը, գուցե «երեխով» կինը դառնում է ավելի հավատացյալ—նա ամեն շաբաթ երեկո խունկ էր ծխում տանը, և այդ բանը դուր էր գալիս Մարտին ապորը. նա հիշում էր, որ հանգուցյալ Սաթենն էլ այդպես էր անում... Իսկ կիրակի քրեքը Նունուֆարը կանոնավոր գնում էր եկեղեցի։ Կանանց դասում կանգնած՝ ականջ էր դնում ժամերգության և միաժամանակ լսում, թե ինչպես է նա «խաղում» սրտի տակ։ Այդ վայրկյաններին Նունուֆարն սկսում էր ավելի ջերմեռանդ աղոթել ու խաչակնքել երեսը։ Իսկ նրա աղոթքը միշտ նույնն էր ու մի քանի բառ, որ սովորել էր մանկությունից.

— Մեռնիմ քո սուրբ զորության, տեր...

Եվ ուրիշ ոչինչ։ Նա այնպես ահով էր նայում շուրջը կանգնած կանանց. վախենում էր հանկարծ ծաղրեն իրեն, ծիծաղեն իր ձևերի վրա, իր վերարկուի վրա, որ շատերը, երևի, գիտեին ո՛ւմն է։ Նունուֆարը համոզված էր, որ ամբողջ ավանն արդեն գիտե, թե ինքն ո՛ւմ հետ է ամուսնացել և ո՛ւմ հագուստներն է հագնում հիմա։ Այդ բանից նա շատ էր ամաչում և վախենում. վախենում գլխավորաբար ծերունու աղջիկներից, մանավանդ Նոյեմից, որ մի երկու անգամ խոսել էր մոր շորերը հագնելու մասին... Եկեղեցում էլ Նունուֆարն աշխատում էր խուսափել նրանից. նրա գլուխը տեսնելուն պես՝ քաշվում էր կանանց դասի ետին շարքերը՝ աչքից անտես մի անկյուն։ Մի անգամ սակայն նա հանկարծ իրեն տեսավ Նոյեմի կողքին կանգնած։ Թե այդ ի՛նչպես էր պատահել— չիմացավ. բայց սարսափած ետ քաշվեց, գրեթե փախավ, որ Նոյեմն իրեն չտեսնի։

— Մեռնիմ քու զորության, տեր,— շշնջաց նա վախ-

վորած սրտով, հիշելով Նոյեմի սպառնալիքը փողոցում, նրա կանաչ աչքերի չար փայլը։— Մեռնիմ քու զորության... Մեռնիմ քու զորության...

Բայց մի օր, եկեղեցուց դուրս գալիս, Նունուֆարը դեմ առ դեմ հանդիպեց Նոյեմին. ավելի շուտ Նունուֆարը տեսավ նրա կանաչ աչքերի հայացքը, որ զննում էին իրեն ոտից-գլուխ։ Նունուֆարն աչքերը խոնարհեց և, խմբված կանանց մեջ արանք բանալով, ինքն էլ չիմացավ ինչպես հեռացավ նրանից, և ետևից միայն լսեց. «տե՛ս լրբին»... Դա Նոյեմի ձայնն էր։ Նունուֆարն անմիջապես դուրս եկավ եկեղեցուց և շունչը մեկ էլ այգու դռանն առավ։ Երկար ժամանակ նրան թվում էր, թե Նոյեմը կրնկակոխ գալիս է ետևից, որ իրեն բռնի, հանդիմանի, թե ինչո՛ւ չէր կատարել ասածը, կամ հանկարծ մոր հագուստները պահանջի ու հանել տա փողոցում... Ու այս մտքից սարսափած՝ Նունուֆարը գրեթե վազում էր հեվալով և նա ետ նայեց միայն այն ժամանակ, երբ գյուղից դուրս էր եկել արդեն։ Տեսնելով հետապնդող չկա՝ նա գնաց մի քիչ էլ, ապա նստեց այգու մոտ ընկած քարերից մեկին և, վերջապես, շունչ առավ լիքը կրծքով։ Սիրտը կարծես թընդում էր կրծքի տակ, ականջներում զգում էր նրա զարկերը։ Մի քանի անգամ նա ձեռը կրծքին դրեց՝ հանգստանալու, բայց սիրտը շարունակում էր բաբախել։ Երբ քիչ հետո Մարտին ապերն այգում տեսավ նրա հուզված քայլվածքը և կարմրած դեմքը— զարմացավ։

— Ի՞նչ է եղել, ինչո՞ւ ես վազել...

— Հնչ,— թաքցրեց հուզմունքի պատճառը Նունուֆարը,— շուն տեսա՝ վախեցա։

Նա չէր ուզում ծերունուն հայտնել աղջիկ վերաբերմունքը. չէր ուզում, որ հայրն իր պատճառով կռվի աղջկա հետ... Նա առհասարակ աշխատում էր Մարտին ապոր մոտ ոչինչ չխոսել նրա աղջիկների մասին, չգրգռել նրա բարկությունը, որ աղջիկներն իր դեմ ավելի չլարվեն։ Մանավանդ, երբ զգում էր «խաղը»— նրա սիրտը լցվում էր խանդաղատանքով. նեռում էր մարդկանց իրենց արարքները, անտարբեր էր դառնում դեպ ամենքը ու նրա միտքն ամբողջ կլանվում էր նոյ ապագայով։

Այնինչ Նոյեմը, երբ Նունուֆարին տեսավ եկեղեցում, անչափ զարմացավ։ Վաղուց, դեռ աշնանը՝ փողոցում հանդիպելուց հետո՝ նա Նունուֆարին չէր տեսել։ Հիմա Նոյեմին թվաց, թե նրա դեմքը և՛ փոխված էր և՛ բավականություն էր արտահայտում, և նա ընդհանրապես տարօրինակ էր մոր վերարկուի մեջ։ Ու զարմանքի հետ միասին Նոյեմին համակեց մի անզուսպ բարկություն, և նա չկարողացավ իրեն պահել, որ չնետի հեռացող Նունուֆարի ետևից. «Տե՛ս լրբին» բառերը, որոնք այնպես ահաբեկեցին խեղճ Նունուֆարին... Ու Նոյեմն այդ օրն ա՛յնքան հուզված էր նրան տեսնելուց, այնպիսի մի կասկած ընկավ նրա սիրտը, որ նա եկեղեցուց ոչ թե տուն գնաց, այլ շտապեց քրոջ՝ Անգինի մոտ։

— Ժամումն էի,— սկսեց Նոյեմը ներս մտնելուն պես.— էն գլխաման էլ էնտեղ էր... Նայեմ՝ ի՞նչ տեսնեմ, որ լավ ըլնի։ Ճեսնեմ էդ լրբի փեշը կարճացել է... Երևում է՝ երկուհոգիս է...

Ու նա ձեռը խփեց ծնկանը։

— Սխա՞լ կլնես, Նոյեմ,— ասավ Անգինը։

— Ի՛նչ սխալ, աղչի. գլուխս որ տեսավ՝ ամոթից փախավ։

— Էդ էլ նոր բան,— ասավ Անգինը կասկածով։— Բայց հավատս չի գալիս։ Մեր հերն էդ հասակում՝ երեխա՞... Ջե՛մ հավատում։

Նոյեմն ինքը չպնդեց, բայց քրոջն առաջարկեց եկող կիրակի միասին գնալ պատարագին՝ ստուգել իր կասկածը։ Նա գիտե, որ իր աչքերն այդպիսի բաներում չեն սխալվում, բայց քրոջը և իրեն համոզելու համար— որոշեց նորից տեսնել «գաղթականին»։ Իսկ մինչ այդ, երբ ամուսնուն հայտնեց իր կասկածը, գինեվաճառը գլուխը տարուբերեց ծանրորեն.

— Ա՛յ էդ վա՞տ է։ Եթե ժառանգ ունեցավ, էն էլ տղա— պրծա՛վ։ Նա կտիրանա հորդ ունեցածին։ Իսկ դուք՝ հարազատ աղչիկներդ հե՛չ...

Նա խոսում, խորհրդածում էր ու գնում-գալիս երկարաճիտ կոշիկները հագած։ Նա ինքն, իհարկե, որպես փեսա, իրավունք չունի. իրավունքը հարազատ աղչիկներինն է։ Բայց քույրերը կարող են խոսել հոր հետ և պահանջել, որ հայրը

հարգի իրենց իրավունքը։ Ժառա՜նգ... շատ զարմանալի է։ Ի՛նչ իմանաս դա ձեր հոր ժառանգն է, թե պահակ Սահակի...

— Դրուստ, կարող է պատահել է՜...— վեր թռավ Նոյեմը։— Ի՜նչ իմանաս հիմի...

Անգինը նույնպես կասկածի մեջ էր։ Նա էլ կրկնում էր, թե հայրն այն տարիքում չէ, որ երեխա ունենա։ Ո՞վ է տեսել այդ հասակի մարդը երեխա ունենա. այստեղ մի բան չկա՞ արդյոք... Ու մի քանի օր Նոյեմը վրդովված այցելում էր քրոջը, թե ի՛նչ անեն այդ նոր խայտառակության համար։ Եթե ճիշտ լիներ, որ «գաղթականը» հղի է, ապա դա մեծ ամոթ էր լինելու իրենց համար, երկրորդ— ավելի մեծ ամոթ, եթե պարզվեր, որ դա պահակ Սահակից է և ոչ թե հորից։

— Դե, էն ժամանակ արի ու դիմացի,— գլուխն օրորում էր Նոյեմը և երբեմն բռունցք թափ տալիս, չգիտես իրենց հոր, Նունուֆարի թե ուրիշ մեկի հասցեին։— Ա՛խ, երանի՜ սուտ ըլներ...

Քույրերի վշտին երբեմն մասնակցում էր և պրեսվաճառը, ինքն էլ ենթադրություններ ու կասկածներ հայտնելով, երբեմն և քույրերին խորհուրդներ տալով։ Իսկ երբ մենակ էր մնում կնոջ հետ՝ տնքում էր գլուխը տարուբերելով.

— Եթե տղա եղավ, Նոյեմ, բաղը գնալու է մեր ձեռից...

Ինչ վերաբերում է դերձակ Վանեսին— նա շատ անտարբեր էր. նա ոչ մի ձևով չէր ուզում մասնակցել քույրերի վշտին։ Ընդհակառակը, երբ տեսնում էր նրանք խոսում են աներոջ, նրա նոր կնոջ մասին՝ թողնում-հեռանում էր կամ զբաղվում որևէ բանով։ Իսկ երբ կնոջ՝ Անգինի հետ մենակ էր մնում, կնոջ անհանգստությանը, հարցումներին ու կասկածներին պատասխանում էր միշտ միևնույնը։

— Չե՛ս քաշի... Ի՛նչ գործ ունես խառնվում ես ուրիշի բաներին։ Քու հերն էնքան խելք ունի, որ իր գործը կարող է տեսնել։

— Դրուստ է, իմ հերը խելոք մարդ է, բայց նա չի մտածել, թե ի՛նչ կասեն մարդիկ... Չի մտածել իր անունի մասին...

— Ավելորդ է, Անգին։ Բանը բանից անցել է արդեն...

Բայց Անգինը չէր հանգստանում. նա թեև մտածում էր,

որ և ավելորդ է և ուշ, բայց հետաքրքրությամբ սպասում էր կիրակի օրվան՝ Նոյեմի ասածը եկեղեցում ստուգելու։

Ով էլ չուշացավ։

Երբ քույրերը մտան եկեղեցի— պատարագն արդեն կանգնած էր, պատարագիչն զգեստավորված՝ բեմի վրա էր, տիրացուները նրա երկու կողմը բուրվառներ էին գցում և քշոցներ շխշխացնում։ Ծրտի պատճառով թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք կանգնել էին իրենց տեղերում՝ վերարկուներ հագած. կանանց դասում շատերը բրդե շալով ծածկված՝ շուտ-շուտ խաչակնքում էին երեսները, իսկ ոմանք՝ ավելի պառավները ծնրադրում էին յուրաքանչյուրն իր նեղ-անհարմար տեղում, հարևանուհու փեշերին քսվելով ու նրան տհաճություն պատճառելով։ Նոյեմն ու Անգինը, մտնելով կանանց դասը, անհանգիստ աչքերով որոնում էին Նունուֆարին։ Բայց որովհետև կանայք շատ էին, խիտ շարքերով համարյա իրար կպած՝ նրանք իրենց խորթ մորը չէին տեսնում այդ բազմության մեջ. գուցե և չէր եկել,— մտածում էին նրանք, ու աշխատում էին ստուգել, իսկապես այդտե՞ղ է, թե ոչ։ Մի քանի րոպե այս ու այն կողմը նայելով՝ դարձյալ չգտան։ Մինչդեռ Նունուֆարը հեռու մի անկյունում, կանանց ետին շարքում կանգնած, աղոթում էր լուռ և միաժամանակ նկատում, որ քույրերը՝ Նոյեմն ու Անգինը աչքերով որոնում են մեկին. նա մտածում էր— չլինի՞ այդ իրեն են որոնում, և երբ նրանց անհանգիստ, թափառուն հայացքը գառնում էր իր կողմը՝ նա մի առանձին արտգողով գլուխը թաքցնում էր առջևը կանգնած կնոջ գլխի ետև, և սկսում եռանդով կրկնել իր աղոթքի համառոտ խոսքերը, աշխատելով չնայել նրանց. բայց երբեմն ակամա նայում էր՝ ստուգելու, թե իրե՞ն չեն փընտրում արդյոք։ Շուտով, սակայն, նա թողեց այդ և, ինչպես հաճախ պատահում էր վերջերս, տարվեց իր մտածումներով, որոնք նրան փոխադրում էին մի ուրիշ աշխարհ, ուր Նունուֆարն զգում էր անձնական մի երանություն, որի մեջ նա մոռանում էր իրեն և պատկերացնում մի էակի, մի մաքուր, լուսե էակի, որ լցնում էր նրա էությունն ու շրջապատը, իշխում էր նրա մտքերին ու սրտին։ Ու այդ վերացած դրության մեջ Նունուֆարը հաճախ չէր նկատում, թե ինչպես ե

սկսվում, շարունակվում ու վերջանում ժամերգությունը, ինչպես են ձայնարկում տիրացուները, որովհետև այդ բոլորը խառնվում էին քշոցների շխշխկոցին, բուրվառների ծխին, մոմերի ճրթճրթոցին և ձուլվում-միանում զանգերի ղողանջին և ավելի ուժեղացնում երանության այն զգացումը, որ ապրում էր Նունուֆարը: Իսկ նա ապրում էր խաղաղ ու անդորր մի վիճակ, լսում էր անդորր ու խոր մի երգ, որ հոսում, տարածվում էր շուրջն ու գլխավերևը... Նրան թվում էր, որ վաղուց կորցրած մի բան պիտի գտնի... Նույնն զգում էր նա և տանը, բայց եկեղեցում ավելի, որովհետև այստեղ թերևս մթնոլորտն ավելի էր նպաստում այդ զգացումին: — Երբեմն Նունուֆարն այնքան էր ընկնում ինքնամոռացության մեջ, որ հաճախ չէր նկատում, թե ինչպես են ժամավորները դուրս գնում եկեղեցուց: Բայց երբ նկատում էր — ցնցվելով սթափվում էր իր ցրվածությունից և աշխատում էր ետ չմնալ դուրս եկողներից: Ու ճամփա էր ընկնում կամ մենակ, կամ որևէ խեղճ կնոջ հետ ընկերացած, որովհետև ուներներն իրենց հետու էին պահում նրանից:

Այսօր էլ պատահեց նույնը. իր աշխարհը վերացած՝ Նունուֆարը սառած դռան ճոռոցից սթափվեց հանկարծ ու նկատեց, որ կանայք իրար ետևից գնում են դուրս: Ինքն էլ շարժվեց դանդաղ քայլերով, վերջին անգամ երեսը խաչակնքելով:

— Մեռնիմ քու զորության, տեր...

Բայց հազիվ դուրս էր եկել բակը, երբ նկատեց Նոյեմին ու Անգինին, որ կանգնած՝ նայում էին իր կողմը: Նունուֆարն ակամա կանգ առավ և մտածեց, որ քույրերը երևի մոր վերարկուին են նայում, որ ամեուվա սկզբից հագնում էր ինքը, և բրդե կապույտ շալին, որ թևին էր գցում ժամ գալիս: Ու հազիվ մի քանի քայլ էր արել բակում, Նոյեմն առաջ եկավ:

— Աղչի, հլա մի կանգնի,— լսեց նա Նոյեմի խիստ ձայնը և նրա կանաչ աչքերի հայացքն զգաց իր վրա:— Աղչի՛, ես քեզ չասի՞ հեռացի իմ հոր տնից, հը՞...

Նունուֆարը կանգ առավ սրտի դողով. վախից նա չկարողացավ անմիջապես պատասխանել, բայց երբ ուզեց խոսել—



ցգաց, որ շուրթերը չեն հնազանդում իրեն։ Եվ նա քայլ առավ, որ գնա, բայց Նոյեմը նորից կտրեց առաջը.

— Ես քեզ բան եմ ասում, դու՝ հեչ, բանի տեղ չե՞ս դնում... Դու էդ ի՞նչ է, աղչի, մորս շորերը հագել ես, շալը գցել, եկել ժամ, որ մեր սիրտը ճաքացնե՞ս,— լսում էր Նունուֆարը և չէր կարողանում ո՛չ հեռանալ, ո՛չ պատասխանել։ Մեկ էլ այն զգաց, որ Նոյեմը հրեց իրեն.

— Հլա սրա ֆասոնին։

Լսելով այդ խոսքերը՝ Նունուֆարը դարձյալ չկարողացավ պատասխանել և միայն ինքն էլ, իր հերթին— «Թող» ասելով՝ հրեց Նոյեմին և ուզեց առաջ գնալ։

Ու այդ տեսավ։

— Դու ինձ խփե՞ս,— լսվեց Նոյեմի ձայնը և հանկարծ Նունուֆարը մի ուժգին հարված զգաց աջ ոտին. նրա ծունկը ծալվեց. մինչև կուղղվեր՝ մի ուրիշ հարված-աքացի զգաց փորին և Նունուֆարը փռվեց գետին։ Ու այնուհետև չիմացավ ի՞նչ կատարվեց հետը։ Իսկ երբ աչքը բացեց՝ տեսավ երկու կին սառը ջուր են քսում երեսը, և ուրիշ ժամավորներ կանգնած նայում են իրեն։ Եվ Նունուֆարն ամոթից երեսը ծածկեց ձեռներով։

V

Մարտին ապերն անհամբեր սպասում էր Նունուֆարին. ժամից ավելի սենյակում, լուսամուտի առջև կանգնած, նա ծառերի արանքով նայում էր այգու դռան կողմը և զարմանում, որ Նունուֆարն ուշանում է այսքան։ Օրը սառն էր, պարզկաւ Մի քանի օր էր այգու ծառերը ծածկված էին եղյամի թելերով ու բյուրեղներով, որ ներսից նայելիս՝ ծառերը Քվում էին ծաղկած, մանավանդ արև ժամանակ, երբ ձյունն ու եղյամը ճղների վրա կապտին ու ճերմակին էին տալիս խնձորենու ծաղիկների նման։ Ցրտի պատճառով Մարտին ապերը Նունուֆարին խորհուրդ տվեց չգնալ ժամ, վախենալով, Քե՝ կմրսի։ Այժմ սակայն, ցրտի հետ միասին՝ նրան մտահոգում էր նրա ուշանալը։ Նունուֆարը սովորաբար ճկեղեցուց գալիս էր, երբ արևը սենյակից ընկնում էր պատշգամը. բայց

չգիտես ինչո՛ւ ուշանում էր այսօր, և այդ հանգամանքը նրան անհանգստացնում էր։ Մի երկու անգամ նա Սահակին ուղարկեց տեսնելու, թե չի երևում արդյոք։ Պահակը գնաց-եկավ, թե մարդ չկա։ Ու փոքր անց, երբ նա շալն ուսերին անհանգիստ գնում-գալիս էր սենյակում, դուռը թափով բանալով՝ նորից ներս մտավ Սահակը և հևալով ու վախեցած հայտնեց, թե Նունուֆարին բերում են... ու ինքը դուրս վազեց, չբացատրելով իր խոսքերի նշանակությունը։

«Նունուֆարին բերո՞ւմ են...»։ Այս խոսքերից ավելի արտահայտիչ էին Սահակի թափով մտնելն ու վախեցած դուրս վազելը։ Եվ Մարտին ապերը չիմացավ ինչպես դուրս եկավ սենյակից, ինչպես հասավ այգու դուռը։ Այստեղ նրա զարմանքը և անհանգստությունը կրկնապատկվեց, երբ նկատեց, որ երկու կին՝ Նունուֆարի թևերը բռնած բերում են։ Երկու սևազգեստ պառավ, որոնց կերպարանքն ավելի սևին էր տալիս ճյուների վրա։

Մարտին ապերը տագնապած առաջ գնաց.— Նունուֆարի երեսին գույն չկար. նրա հայացքը և՛ ցավագին էր և՛ անտարբեր։

— Ի՞նչ է պատահել,— և Մարտին ապոր ներքին ծնոտը դողաց։

— Հեչ,— իրեն զսպեց Նունուֆարը։

— Ինչպես թե «հեչ». երեսիդ գույն չկա,— հոնքերը կիտեց Մարտին ապերը։— Թե բան չկա, էս կնանիք ինչո՞ւ են թևերդ բռնել։

— Էնպես,— ասավ պառավներից մեկը,— լավ չէր՝ հետը եկանք...

Նունուֆարը պառավներին խնդրել էր՝ մարդուն բան չասեն... «կբարկանա Նոյեմի վրա, և Նոյեմն ավելի կթշնամանա» մտածում էր նա, և չէր ուզում, որ ամուսինն իմանա պատահածը։ Այդ էր պատճառը, որ պառավներից մեկը բացատրեց իրենց գալու առիթը նրանով, թե լավ չէր՝ հետը եկան։

Երբ Նունուֆարին տարան տուն՝ նա նստել չկարողացավ. անմիջապես պառկեց թախտի վրա ու երեսը ծածկեց ձեռներով, չգիտես ամոթի՞ց թե ցավից. և որքան էլ Մարտին ապերը հետաքրքրվեց, թե ի՛նչ էր պատահել— Նունուֆարը

չհայտնեց իսկական պատճառը. նա մի բան էր միայն ասում, թե ուրը սահել է սառույցի վրա, ընկել է։

— Բա ես քեզ չէի ասում՝ էդ դրության ժամ չեն գնա,— գլուխն օրորում էր Մարտին ապերը։

— Հեչ բան չէ. կանցնի, կանցնի,— հանգստացնում էր Նունուֆարն ամուսնուն, բայց ինքը տնքում էր զսպված կամ կծկվում ու ձգվում, գլուխը բարձի մեջ խրելով, կամ երկու ձեռով երեսը ծածկում էր ու ատամները սեղմում։

Մարտին ապորը թվում էր, թե նա տենդ ուներ, և այդ տենդի ցավը գնալով սաստկանում էր, բայց Նունուֆարը երբեք իրեն չէր կորցնում և անհանգիստ Մարտին ապորը (որ մերթ ծածկում էր նրան վերմակով, մերթ թեյ էր առաջարկում ու շարունակ հարցումներ անում) հանգստացնում էր կրկնելով.

— Հեչ բան չէ. կանցնի, հիմա կանցնի...

_Սակայն երեկոյան նա մեռած երեխա ծնեց։ Մարտին ապերը նրա անկողնի մոտից չէր հեռանում, նա իրեն զգում էր խորտակվածի պես. նրան թվում էր, որ տունը խանգարվեց նորից, կրկին փլվեց մի բան, որ այնպես բարձրացրել էր իրեն և ուրախացրել. և նա այլևս ոչնչի մասին չէր մտածում, այլ միայն այն մասին, թե ի՛նչպես անի, որ Նունուֆարը ոտի կանգնի... Թեկուզ ոչինչ էլ չաներ, միայն թե երևար իր տանն ու այգում— բավական էր։

— Նունուֆար, որտե՞ղդ է ցավում,— շուռ-շուռ հարցնում էր նա, թեքվելով դեպի Նունուֆարի երեսը։— Նունուֆար, սիրտդ ի՞նչ է ուզում։

Նունուֆարը կամ պատասխանում էր դարձյալ նույնը, թե «հեչ, բան չէ»; կամ չէր պատասխանում ու ջուռ տնքում էր. նա իրեն մեղավոր էր զգում ծերունու առաջ, որ նրա խոսքը չէր կատարել և սաուին ու ցրտին գնացել էր ժամ։ «Թեթե չերթայի,— երբեմն անցնում էր նրա մտքով,— այս բանը չէր էղնի...»։ Ու շարունակ ամաչում էր ծերունուց թե՛ դրա համար, թե՛ այն բանի համար, որ նա իր գործը, հանգիստը թողած՝ շարունակ նստում էր մոտը և թավ հոնքերի տակից չերմ ու տխուր նայում էր իրեն կամ խոսում մեկ-մեկ, հարցումներ անում։ Նունուֆարը խղճում էր, որ ինքը ծերունուն

վիշտ է պատճառել և անհանգստություն. ամաչում էր, որ տանը բան անող չկա, որ տղամարդիկ են թեյ պատրաստում, հաց տալիս իրեն... Ճիշտ է, Սահակը ինքնաեռը դնում էր, թեյը եփում, բայց մնացած բանը Մարտին ապերն էր անում. նա էր թեյ տալիս հիվանդին, նա էր սեղանը հավաքում, անկողին գցում, դասավորում։ Նունուֆարն ամաչում էր և Սահակից, որ նա թեյ պատրաստելուց բացի, տունը սրբում էր կամ դուրսը հավերին «ծիկ-ծիկ» անելով, կուտ տալիս։ Ու ամոթը կարծես կրկնապատկում էր նրա ցավը. նա երեսն ավելի հաճախ էր ծածկում գլխաշորով կամ ձեռքով, ու ավելի էր զսպում տնքոցը իր ցավի, որ քանի գնում՝ սաստկանում էր կարծես։

Նունուֆարի ցավը տեսնելով՝ Մարտին ապորից պակաս անհանգիստ չէր և պահակ Սահակը։ Ինչ պիտի եղած լինի, որ Նունուֆարը մեռած երեխա բերեր,— մտածում էր նա և խղճում Նունուֆարին, որ այդպես առողջ կինը մնացել է պառկած։ Խղճում էր և Մարտին ապորն այդ դժբախտության համար, ու աշխատում էր այնպես անել տան բանն ու գործը, որ նա ոչ մի բանի պակաս չզգա, չնեղվի։ Ժամանակին տունը սրբում էր, շներին կեր տալիս, գնում էր աղբյուրը ջրի։ Մի օր էլ աղբյուրում կանայք հետաքրքրված հարցրին նրանից, թե ի՞նչպես է Մարտին ապոր «նոր կինը». ճի՞շտ է, որ մեռած երեխա է բերել։ Սահակը պատասխանեց ինչ գիտեր։

Կանայք զարմացան և գլուխները օրորեցին։

— Բա էնպես անաստված կխփեն, որ երեխան մեռնի՛,— ասավ կանանցից մեկը։

— Ո՞վ է խփել որ,— զարմացավ Սահակը և իր պարզամտությամբ ենթադրելով, թե տիրոջն են մեղադրում, հերքեց զայրացած.— Մարտին ապերն էդպես բան չի՛ արել։

— Ով տվեց, ադա, Մարտինի անունը,— դժգոհեց կինը։— Իմ աչքի առաջ նոյեմը վրա պրծավ նրան ու քացով խփեց... Ջիմացա, աղջի— դարձավ նա ջրվոր կանանց,— ի՛նչ ասին իրար, ի՛նչ չասին, մեկել էն տեհա, որ նոյեմը գցեց նրան ու քացով խփեց։ Խեղճն ընկավ ձյունի-սառույցի վրա, ուշքը գնաց...

Սահակը, լսածից շշմած, կուժը չլցրած վազեց տուն։ Հազիվ տուն էր հասել ու կուժը տեղը դրել՝ նա Մարտին ապորը դուրս կանչեց հիվանդի մոտից ու լսածը պատմեց նրան։

Մարտին ապերը մինչև վերջ լսեց անխոս, և երբ Սահակը վերջացրեց, նրա երեսը բեղերի հետ դողաց մի վայրկյան։

— Ինչո՞ւ ես, Նունուֆար, թաքցնում,— վերադառնալով ու կնոջ անկողնու մոտ նստելով՝ սկսեց Մարտին ապերը։— Նոյեմը քեզ խփե՞լ է ժամի դռանը. հը՞... Ինչո՞ւ ես թաքցնում...

Նունուֆարը չէր պատասխանում. իսկ Մարտին ապերն ուզում էր անպատճառ իմանալ ինչպես է եղել բանը. ինչո՞ւ համար են խոսել և ինչո՞ւ է խփել Նունուֆարը տակավին տրնքոցն ու ցավը զսպելով՝ նայում էր նստած ամուսնու ծնկներին և լռում։ Բայց երբ Մարտին ապերը հայտնեց, թե ինքն ամեն բան գիտի արդեն, էլ թաքցնելու կարիք չկա— այդ ժամանակ Նունուֆարը խոստովանեց, որ՝ այո, Նոյեմը հրել էր իրեն և ինքն ընկել էր սառույցի վրա։

— Բայց ես էլ անոր հրեցի,— ավելացրեց Նունուֆարը, հանցանքի մի մասն իր վրա առնելով։— Ես չհրեի նե՝ նա զիս չէր դիպնա...

Երկու թե երեք օր անց՝ խանութպան Արտուշն եկավ կառքով և, Սահակի հետ խոսակցելով, գրեթե աղմուկով մտավ ներս։

— Ո՞ւր է պապաշան,— ներս մտավ նա ձմեռվա կիսամուշտակ հագած, բուխարի փափախը գլխին, երկարաճիտ կոշիկները հագին ու բեղերը սրած։— Հա, էստե՞ղ ես, պապաշա։ Թարև՛։ Հենց էսօր իմացա՝ Նունուֆար քույրիկը հիվանդ է. խանութից եկա տեսնեմ՝ ի՛նչ է պատահել...

Նա խոսում էր ու նայում մերթ աներոջը, մերթ պառկած Նունուֆարին (որ ամաչելուց երեսը պատին էր արել և գլուխը վերմակով ծածկել), մերթ պահակ Սահակին։ Բայց երեքից ոչ մեկը նրան չէր պատասխանում, և նա շարունակում էր.

— Սա ի՛նչ անբախտություն է. ո՞նց է եղել, չեմ հասկանում... Առողջ կնիկ՝ հանկարծ էսպես... Ասի՝ գնամ մի տեսնեմ, պապաշան. մենակ մարդ է...— Նա փափախը վերցրեց ու դրեց հացի սեղանին։— Հը՛, պապաշա, ի՞նչ անենք՝ բժիշկ կանչենք, հեքիմ կանչենք...

Սահակը նայում էր խանութպանին զարմացած աչքերով։ «Ա՛յ,— մտածում էր նա,— կինը քացով խփել է, բայց ինքը, ա՛խս, ցավում է»։ Եվ զարմանում էր, որ Մարտին ապերը նրան չէր պատասխանում։ Նունուֆարը— հասկանալի է. նա թե հիվանդ է, թե ամաչում է, բայց որ Մարտին ապերը չէր խոսում— այդ Սահակին շատ տարօրինակ էր թվում։ Սակայն նա ավելի զարմացավ, երբ Մարտին ապերը փեսայի խոսքի կեսին՝ խեթեց նրա վրա ու հանկարծ, փնչալով ելավ տեղից, և անսպասելի ոտը զարկեց հատակին.

— Դո՛ւրս էստեղից, չաչանակ։ Դո՛ւրս, անամոթ։ Կնիկդ քացով տվել է գցել, դու եկել գլխիս ավետարան ես էարդում...

Սերունին առաջ գնաց ու նորից ոտն այնպես զարկեց հատակին, որ Նունուֆարը տեղից վեր թռավ ու նայեց, թե ինչ պատահեց արդյոք։

Բայց գինեվաճառը զարմացած ու որդիական ներողամիտ սիրով էր նայում աներոջը և, տեսնելով նրա առաջացումը դեպ իրեն, ետ-ետ էր գնում, ասելով.

— Հանգստացի՛ր, պապաշա, հանգստացի՛ր։ Թող, քույրիկը կնեղանա։ Հիվանդի մոտ էդպես լավ չի, պապաշա։ Նունուֆար քույրիկ, դու հանգիստ կաց... ես պապաշայի հետ կխոսեմ... Չէ, պապաշա, դու մի բարկանա... Նայեմն էդպե՞ս բան... Չեմ կարող հավատալ, պապաշա։ Բշնամու խոսք է, բշնամու խոսք...

Նա թեև շարունակեր խոսել այդպես երկար, բայց Մարտին ապոր կզակը նորից դողաց և նա այս անգամ ոտն այնպես զարկեց հատակին և բռունցքն այնպես՝ հարվածելու ձեվով թափ տվեց օդում, որ գինեվաճառը, գլուխն օրորելով, գնաց դեպի դուռը, բուխարի փափախը հազիվ գլխին դնելով։

— Լա՛վ, պապաշա, լա՛վ, հանգստացիր...

Բայց դռանը չհասած՝ նա նորից կանգ առավ ու ետ նայեց։

— Առողջությո՛ւն, Նունուֆար քույրիկ։ Առողջությո՛ւն։

Ու դուրս գնաց՝ դուռը կամացուկ դնելով։ Սահակը հետևեց նրան, որ դրսի դուռը բանա և փակի նրա գնալուց հետո։ Երբ նա, առաջ ընկնելով, վերցնում էր դռան նիգը՝ գինեվաճառը,

ձեռը գլխի մոտ շարժելով, ուզեց պահակին հասկացնել, թե ինչպես երևում է «պապաշայի խելքը շարժվել է»։

— Բայց դու տանը, ծառերին լավ նայիր, Սահակ։ Էթե մի բան պատահի՝ ինձ իմացրու։

Սահակը դուրը բաց պահեց մինչև նա կառք նստեց և կառքը գոռալով գնաց սառած ճանապարհով։ Պարզկա, ցուրտ գիշեր էր։ Սահակը մի երկու րոպե կանգնեց, նայեց մութ-կապույտ ու բարձր երկնքում հրագ-հրագող աստղերին, ձյունով ծածկված, կարծես ձյունե ծածկոց առած ծառերին, որ միտտաի հսկաների պես կանգնել էին ձյունների մեջ շարք կազմած։ Մոտիկ կապած շունը, Սահակի հոտն առնելով, բնից դուրս գալով կլանչեց քծնական կլանչով։ Սահակը մոտեցավ նրան, ու փաղաքշանքով «գնա բունդ, սարսաղ, ցուրտ է, գնա՛»,— ասավ նա և ձեռները մրսած ականջներին դնելով՝ ինքը գնաց դեպի տուն։

Հեռվից գեռ լսվում էր սառած գետնի վրա գլորվող կառքի ձայնը։

Սահակը ներս մտավ, երբ կառքի ձայնը բոլորովին կտրվեց։ Իսկ երբ ներս մտավ՝ Մարտին ապերը զայրացած գնում-գալիս էր սենյակում և միայն մի-երկու բառ էր կրկնում.

— Անամո՛թ... Ավազա՛կ...

Սահակը երբեք Մարտին ապորն այդպես զայրացած չէր տեսել. նրա ոչ միայն ծնոտը, նրա բեղերն ու ամբողջ գլուխը դողում-ցնցվում էին, և նա գնում-գալիս էր հուզված-անհաստատ քայլերով ու, չկարողանալով կարծես խոսել, տրնքում էր միայն, փնչացնում։ Իսկ Նունուֆարը, թվում էր, ավելի էր վհատեցել. նա կուչ էր եկել ու, չգիտես լաց էր լինում թե մրսում. նրա մարմինը ցնցվում էր վերմակի տակ։

Սահակը խղճում էր նրան և չէր իմանում ի՛նչով կարող է օգնել. նրան թվում էր, որ պետք էր պառավներ կանչել, որ նրա ցավը իմանան, նրա հետ խոսեն. գուցե մի բան ունի՝ տղամարդկանց չի ասում,— մտածում էր Սահակը, բայց չէր համարձակվում այդ մասին խոսել Մարտին ապոր հետ։

Մի օր հետո Նունուֆարը մեռավ այնպես, որ ոչ-ոք չտեսավ նրա մեռնելը. նա մեռավ վերմակը գլխին քաշած և

միայն ուշ, երբ Մարտին ապերն ուզեց նրան ճաշ տալ՝ տեսավ նրան անշարժ, անշարժ մեկնվածք։

Նա մեռավ այնպես անխոս ու խաղաղ, ինչպես ապրել էր։

Թաղեցին նրան կիրակի օր, մի ցուրտ արևոտ օր։ Նրա թաղմանն եկել էին այն բոլոր մարդիկ, որ եղել էին ամուսնությանը ամիսներ առաջ. կային և ծանոթ կանայք, մուրացկաններ, որ հետո եկան հոգեհաց ուտելու։ Թաղմանը եկել էր և գինեվաճառ Արտուշը. նա, առանց մեկի հետ խոսելու-խորհրդակցելու, կարգադրություններ էր անում տերտերին, գերեզմանափորներին, հուղարկավորներին, չնայած Մարտին ապերը չէր ուզում նրա երեսին նայել.— բայց նա իր պարտքըն էր համարում այդ գործերն ինքը կարգադրել, որովհետև, իր ասելով, «պապաշան ուրիշ հարազատ» չուներ, թեև այդտեղ էր գերեզմանի վանեսը Անգինի հետ... Նրանք տունը հավաքելու և եկողներին ընդունելու հոգսը վերցրել էին իրենց վրա, ու ամեն ինչ անում էին զգուշությամբ և անխոս... Չէր եկել միայն Նոյեմը, ամուսնու ասելով, հիվանդության պատճառով...

Երբ գերեզմանատանը բոլորը, Մարտին ապոր ձեռը բռնելով, ըստ ավանդական սովորության, սկսեցին մխիթարանքի խոսքեր ասել, գինեվաճառն էլ մոտեցավ աներոջը և սիրտ տվեց.

— Մի՛ վախի, պապաշա։ Ղոչա՛ղ կաց։ Քեզ լա՛վ պահի...

Մարտին ապերը նրան չպատասխանեց և միայն տնքաց։ Նա ոչինչ հարկավոր չէր նրան կամ խիստ խոսքեր ասել, բայց հարմար չհամարեց,— տեղը չէր և ժամանակը չէր։

Մարտին ապերն այդ օրը չխոսեց ոչ մեկի հետ, բացի Սահակից, որին անում էր իր կարճ կարգադրությունները.

— Սահակ, էս արա... Սահակ, էն արա...

Իսկ Նունուֆարի թաղումից երկու օր հետո՝ Մարտին ապերը հանկարծ լռեց և դարձավ ինքնամփոփ, անտարբեր. շաբաթներով նա տնից չէր հեռանում,— գյուղ չէր գնում։ Սահակը հասկանում էր, որ դրա պատճառը ձմեռը չէր. ամառները չէ, բայց ձմեռը նա համարյա ամեն օր գնում էր գյուղ՝ գնումների, ծանոթների մոտ. իսկ հիմա ոտը բոլորովին կրտրեց գյուղից. մենակ նստում էր տանը, իսկ արև օրերը շալկ

ուսերին գնում-գալիս էր պատշգամում և մտածո՞ւմ, մտածո՞ւմ... Ի՞նչ էր մտածում այդքան՝ Սահակը չէր հասկանում։ Նա միայն զարմանում էր այդ փոփոխության վրա, ավելի էր խղճում «տապորը» և նրան, մխիթարելու թե զբաղեցնելու կամ նրա հետ խոսելու համար, Սահակը պարզամտությամբ պատմում էր այն բաներից, ինչ լսել էր գյուղում, աղբյուրի մոտ, չմտածելով, որ իր պատմությունները կարող են հուզել ծերունուն։ Իվ նրա բոլոր պատումները վերաբերում էին Նունուֆարին, թե ինչպես աղչիկները՝ Նոյեմն ու Անգինը կտրել են նրա առաջը եկեղեցու բակում, ի՛նչ խոսքեր են ասել, ի՛նչպես են կռվել։ Սահակին թվում էր, որ այդ բոլորը կարող են հետաքրքրական լինել Մարտին ապոր համար, ու պատմում էր մի տրտում հանգով։

— Ասում են՝ Նոյեմը մոտեցել-ասել է, թե՝ «դու ո՛վ ես, որ տեր դառնաս իմ հոր տանը, բաղին, իմ մոր շորերին»... էդ բոլորը մեծամ խմն է,— բացատրում էր Սահակն իր կողմից։— Ասում է ու խփում. որ խփում է՝ խեղճն ընկնում է...

Մարտին ապերը լսում էր նրան ու տնքում կամ փնչացնում, տերողորմյայի հատիկները գցելով կամ չիբուխը խառնելով— ծծելով։ Իսկ պահակ Սահակը նոր մանրամասնություններով շարունակում էր իր պատմությունը Նունուֆարի մասին, միշտ իր համակրանքը հայտնելով հանգուցյալին, որ երբեք վատ խոսք չէր ասել իրեն ու միշտ խղճով էր վերաբերվել։ Երբեմն, զրույցի նյութը փոխելով, Սահակը խոսում էր իրենց անելիքների մասին, այն մասին, թե շուտով գարունը բացվելու է կամ բացվում է արդեն, որտեղի՞ց պիտի սկսեն արդյոք աշխատանքները. պատե՞րը պետք է կարգի բերեն առաջ, թե՞ չորացած ճղները կտրեն։

Մարտին ապերը նրա այդ հարցերին չէր պատասխանում, այլ երբեմն, Սահակին ընդհատելով, հարցնում էր, թե հավերին կուտ, շներին լափ տվե՞լ է արդյոք։ Էլ ուրիշ բաների մասին չէր հարցնում, որովհետև, առանց նրա ասելու էլ, Սահակն անում էր բոլորը, ինչ հարկավոր էր։

Սահակին սակայն անհանգստացնում էր Մարտին ապոր անտարբերությունը դեպ այգու աշխատանքները։ Օղանակն օրըստօրե տաքանում էր արդեն, այգու ճյուները հալվել չքա-

ցնլ էին, նրանց տեղը հողը փափկել և գոլորշի էր արձակում արևին. տեղ-տեղ՝ ծառերի ու արեգունի թփերի տակ մանուշակի ու կովածաղկի թերթերը բարձրացրել էին իրենց գլուխները, այգու միջով վաղուց առվի ափերին կանաչն աճել էր մի երկու մատնաչափ, իսկ ծառերի ճղները կարմրել, հյութավորվել և բողբոջել էին. մանավանդ տանձենիները, որ ամենից շուտ էին ծաղկում այգում... ժամանակն էր, իսկական ժամանակը՝ պատերը կարգի բերել, այսինքն՝ թափված քարերը դնել-դարսել պատի վրա, ծառերի չորացած ճղները կտրտել, անցած տարվա տերևն ու խոտը հավաքել-այրել, ծառերի տակը փորել-փափկացնել և շարքերի առուները մաքրել՝ ժամանակին ծառերին ծաղկաջուր տալու համար... Բայց Մարտին ապերը, չգիտես ինչո՛ւ, դեռ կարգադրություն չէր անում այդ աշխատանքների համար: Այնինչ՝ առաջներում, դեռ ձյունը չհալված, շարունակ դրանց մասին էր խոսում ու ծրագրեր կազմում:

Այդ էր պատճառը, երևի, որ Սահակը ինքն էր անհանգստանում հիմա: Եվ օրը մի ձևով հիշեցնում էր, թե այգու աշխատանքի ժամանակն է:

— Ի՞նչ պըտի անենք, ապեր: Ծառերի կոկոնները հրեն մեծանում են:

— Սպասի, տեսնենք հլա,— պատասխանում էր երբեմն ապերը:— Դեռ ժամանակ կա:

Եվ նորից տարվում էր իր մտքերով, տերողորմյայի հաճախնները ծանր ու զանգաղ հաշվելով: Սահակն ուզում էր գարձյալ բան ասել, բայց չէր համարձակվում կտրել Մարտին ապոր մտքերի թելը: Նա միայն անհանգստանում էր, որ հետո բոլոր աշխատանքները կխառնվեն իրար և չեն հասցնի ամեն բան ժամանակին անել:

«Սպասի... դեռ ժամանակ կա»,— կրկնում էր Սահակը մտքում:— «Լավ, սպասենք»...

Բայց մի առավոտ հանկարծ Սահակը զարթնեց թխկոցի ձայնից. հագնվեց արագ ու վազեց դեպի թխկոցը, որը շարունակվում էր այգու ներքին մասում: Թխկոցը— կացնի էր: Ո՞վ պիտի լիներ այսպես վաղ այգին մտած, ո՞վ էր թխկոցը գցել այդպես... Մի փոքր առաջ վազելուց, բայց դեռ բավա-

կան հեռվից Սահակը նկատեց Մարտին ապորը... դա փոքր ինչ հանգստացրեց նրան. հանգստացավ նախ, որ կողմնակի մարդ չէր, գող չէր և երկրորդ՝ ապերն սկսել էր աշխատել... Ու շտապեց դեպի Մարտին ապերը։

Իսկ երբ մոտեցավ՝ Սահակը զարմանքից քարացավ մի պահ, հետո սթափվելով՝ դարձյալ առաջ գնաց, բայց այժմ բոլորովին ապշած ու մոլոր։


— Էդ ի՞նչ ես անում,— ապեր,— հարցրեց նա մի խուլ, զարմանքից դողացող ձայնով։

Ապերը չպատասխանեց. գուցե և չլսեց Սահակի հարցը։ Նա արխալուղի թևքերը քշտած, փեշերը գոտին խրած, ինչպես անում են փայտահատները, կացնով կտրում էր խնձորի մի ծառ, որ բողբոջից առաջ կոկոններ էր արձակել արդեն։ Իսկ դրա կողքին կտրել-գցել էր երկու-երեք խնձորենի էլ։ Ահա ինչու Սահակը զարմացած կանգ առավ, ապա տագնապած մոտեցավ նրան։

— Ապեր, էս ինչո՞ւ ես կտրել. պտղնք չէր չեն,— խոսում էր Սահակը հևալով, կարծես ահագին տարածություն էր վազել։— Ախր, ապեր, ափսոս են, ինչո՞ւ համար...

Եվ նա խոսելով՝ պտտվում էր կտրած ծառերի շուրջը, տարբեր կողմերից նայում նրանց ափսոսանքով ու զարմանքով, բայց ապերը դարձյալ նրան չէր պատասխանում,— նա բերանը բեղերի տակ սեղմած, մի տարօրինակ եռանդով, կացինը վրա էր բերում ջահել ծառի բնին, որի դալար կեղևից ամիշ էր կաթում և դեղնավուն խոնավ տաշեղները թռչում էին ամեն կողմ։ Սահակը շշմած՝ նայում էր մերթ ընկած ծառերին, մերթ կտրվող ծառին ու կացնավոր Մարտին ապորը, և նրա սիրտը մղկտում էր այդ երիտասարդ դալար ծառերի համար, որ այնքան լավ, համեղ խնձորներ էին տալիս։ Սահակի տխրությունն ու տագնապն ավելանում էր մանավանդ այն պատճառով, որ Մարտին ապերը մոայլ լռություն էր պահպանում. չէր ասում, թե ինչո՞ւ համար, ի՛նչն է ստիպել նրան կտրել այդ ծառերը, որոնք հենց անցյալ տարի բոնել էին ամենից լավ և ինքը, Մարտին ապերը, դրանց ավելի էր սիրում, քան մյուս ծառերին։

Սահակը մի երկու անգամ էլ փորձեց իմանալ կտրելու



պատճառը, բայց պատասխան չստանալով և մանավանդ տեսնելով, որ Մարտին ապերը, այդ ծառը կտրելուց հետո, կացինը ձեռին գնաց դեպի հարևան ծառը,— նա էլ չկարողացավ իրեն պահել. նետվեց դեպի Մարտին ապերը և բռնեց նրա թևը։

— Ապեր, ախր ափսո՛ս է...

Նրա ձայնի մեջ արցունքներ կային։

Ապերն այդ զգաց և նայեց Սահակին։

— Բա ինչնեմ, որ շան ու գելի փայ դառնա՞,— գրեթե մռնչաց նա, թափով աշխատելուց հևասպառ։— Թո՛ղ,— ու, կացինը թափ տալով, թևը խլեց Սահակի ձեռից։

Եվ նորից սկսեց ծառերը կտրտել։ Որքան էլ Սահակն աղաչում, խնդրում էր՝ չանել— Մարտին ապերը ոչ լսում էր, ոչ պատասխանում։ Այդ ժամանակ Սահակը մտածեց, թե ինչ անի, որ տիրոջը ետ պահի այդ գործից։ Նա տեսնում էր, որ ապերն այդ անում էր զայրացած, բարկությունից. ուրեմն հարկավոր էր մեկը՝ մի մարդ, որ համոզեր նրան և չթողներ։ Սահակի կարծիքով այդպիսի մարդ էր Մարտին ապոր քաւորը՝ Ամբակումը։ Դրա հետ միասին Սահակը հիշեց և Մարտին ապոր մեծ փեսային՝ գինեվաճառ Արտուշին, որ միշտ ասում էր. «Ծառերը լավ պահի, Սահակ, եթե մի բան պատահի— պատասխանատու եմ»։ Գինեվաճառին հիշելով՝ Սահակը մտածեց, որ եթե նրան ասեր՝ նա կառքով կգար և շուտ կհասներ։ Ու, առանց երկար մտածելու, այլ միայն ծառերը փրկելու մտահոգությամբ տարված, Սահակը մի շնչով վազեց գյուղ՝ Արտուշ փեսայի մոտ և դողացող, գրեթե հեկեկանք ձայնով հայտնեց նրան, թե ինչ է կատարվում այգում։

— Ապերը հրե կացինն առել, կոկոնած ծառերը կտրում է։

— Ինչո՞ւ

— Ըսի՛մ։ Ասում եմ՝ «Ապեր, ափսոս են, մի կտրի»։ Չի լսում։ «Թողնեմ, ասում է, շան ու գելի փայ ըլնի»...

Ինչ-որ վատ բան կռահելով՝ գինեվաճառը մթնեց, ապա անմիջապես կառք կանչելով՝ նետվեց մեջը, Սահակին էլ նրբանցքից կողքին ու— դեպի այգի։

— Գժվե՛լ է էդ մարդը, ի՞նչ է,— կրկնում էր նա ճանապարհին։— Ինչո՞ւ է էդպես անում որ...

Հասնելով այգի՝ նա, կառքից իջնելով, գնաց այն կողմը, որտեղից կացնի թխկոց էր գալիս։

Սահակի հաղորդածը, որի ճշմարտությանը նա կասկածում էր, ճիշտ էր. արդեն մոտ տասը ծառ ընկած էին գետին, և այդ իսկ րոպեին Մարտին ապերը կտրում էր մի ուրիշ կոկոնած խնձորենի։

— Պապաշա՛,— առաջ վազեց գինեվաճառը։— Էդ ի՞նչ ես անում, պապաշա...

«Պապաշանն» ոչ միայն խոսքով, հայացքով անգամ չպատասխանեց փեսայի կանչին։

Այդ ժամանակ գինեվաճառը ավելի մոտեցավ։

— Պապաշա՛,— մեծարժեքար բռնեց նա անձրաչ թևը։— Էդ ախր ո՞նց կըլնի։

«Պապաշանն» այս անգամ, գլուխը բարձրացնելով, հոնքերի տակից մի ակնթարթ նայեց փեսային, հետո թափ տվեց իրեն, թևն ազատեց նրա ձեռից և... թե փեսայի, թե Սահակի համար անսպասելի— հանկարծ կացինը վրա բերեց փեսային։

— Հետո՛ւ, ավազակ... հետո՛ւ, ոտդ չեռնանամ էստեղ...

Գինեվաճառը ետ ոստնեց մի երկու քայլ։

— Պապաշա՛...

«Պապաշանն» այս անգամ էլ կացինը ձեռին գնաց դեպի նա... բայց գինեվաճառը ետ-ետ գնալով՝ հեռացավ-գնաց դեպ այգու դուռը և, այլևս առանց մի խոսք ասելու, նետվեց կառքի մեջ ու սլացավ դեպի գյուղ՝ գործարար մարդու փութկոտությամբ։

Իսկ Մարտին ապերը, նրա հեռանալուց հետո, նորից շարունակեց կտրել ծառերը...

— Սրա՛նց համար են նրանք իմ տունը քանդել. մի ծառ չեմ թողնի նրանց...

Սահակը լսում էր այս խոսքերը և էլ չէր համարձակվում մոտենալ նրան...Տեսնելով ապուր համառ վճռակամությունը— Սահակին թվում էր, թե նա կտրելու է ամբողջ այգին... Բայց շատ չանցած՝ նա նստեց հոգնած, իսկ մի երկու ժամ հետո «սլրիստավի մարդին եկան», ինչպես հետո պատմում էր Սահակը, «բռնեցին ապերը, կառք դրին ու տարան»։

Այդ Սահակին ավելի անհանգստացրեց ու վախեցրեց, և նա, տան ու այգու դռները փակելով, վազեց կառքի նեւից...

Շուտով Օրանում լուր տարածվեց, թե Մարտին ապերը խելագարվել է, և դրա համար բռնել-փակել են առանձին տեղ։ Ոմանք էլ պատմում էին, որ Մարտին ապերը պնդում է, թե իր խելքը գլխին է, երբեք էլ ցնորված չէ, թե ինքն իր ծառերը կտրել է գիտակցաբար և պետք է կտրի, որպեսզի մահից հետո այգին փեսային ու աղջիկներին չմնա... Այնուամենայնիվ նրան չէին հավատում, քմծիծաղ էին տալիս նրա խոսքերի վրա, լուսամուտից հաց ու ջուր էին տալիս և աշխատում հեռու մնալ, որ չվնասի հանկարծ։

Իսկ մի քանի օր հետո՝ գինեվաճառն ամբողջ ընտանիքով տեղափոխվեց այգի՝ աներոջ տունը, որ այգու հետ միասին մնացել էր անտեր, միայն պահակ Սահակի հույսով։

Առանձնացվելու-բանտարկվելու առաջին իսկ ամսին Մարտին ապերը մեռավ, շարունակ կրկնելով մահից առաջ, որ ինքը գիտակցաբար է կտրել իր այգին և չի ցնորվել... Բայց նրան չէին հավատում.— նա այնպես սիրում էր իր այգին, իր ծառերը— ի՞նչպես կարող էր գիտակցաբար կտրել դրանք,— մտածում էին մարդիկ։

* *
*

Եվ այժմ, տարիներ անց, գինեվաճառն իր ընտանիքով շարունակում է ապրել այգու տանը, որպես ժառանգ։ Նա ընդարձակել է խանութը և առավոտից մինչև կեսգիշեր լինում է խանութում։ Իսկ կինը՝ Նոյեմը զբաղվում է այգով— ամբողջ ամառը խնձոր է ծախում գյուղացիներին և ամեն բան անել է տալիս պահակ Սահակին։ Ավանում երբեմն խոսք է լինում, թե Անգինը զուր չի պահանջում իր ժառանգական բաժինը քրոջից, բայց և ասում են, թե մի կողմից դերձակ Վանեսը չի ցանկանում «ուրիշի ապրանքին տեր դառնալ», մյուս կողմից Նոյեմը հայտարարում է, թե մեծ քույրն ինքն է, հետևաբար՝ հոր ժառանգն էլ ինքն է։ Այս բանը նա ասում է

կողմնակի մարդկանց, որ լուրը տանեն քրոջը, և միշտ ավելացնում է, թե մարդը տնեղկացել է օրենք իմացող մարդկանցից՝ «պրիստավից, դատավորից, պիսըրից», որ հոր ժառանգությունը հասնում է այն աղջկան, որը տղա զավակ ունի, իսկ Անգինը միայն մի աղջիկ ունի...

Սահակն առաջվա պես պահակություն է անում այգում, ջուր է բերում, այգու ցանկապատերն է ուղղում, խնձոր է քաղում, ջրում է այգին ու բանջարեղենի մարգերը և երբեմն, շներին ջուր կամ լափ տալիս, զրուցում նրանց հետ Մարտին ապոր մասին.

— Այ գիտի Մարտին ապեր հա՞...

Առաջվա պես Սահակն էլ հաճախ չի ժպտում և աչքով անում ինքն իրեն, ծառերին ու աստղերին: Նա հիմա դարձել է լուրջ ու մտածկոտ... Կտրած ծառերի տեղը նա նոր պատրուսներ տնկեց, որոնք մեծացան և սկսեցին պտուղներ տալ: Բայց Սահակն էլ չի ոգևորվում ծառերով ու նրանց պտուղներով, ինչպես առաջ...

1917 թ. Թիֆլիս

ՋՐՀՈՐԻ ՄՈՏ

... Էհ, ինչ որ պատմում եմ, Ավստրաւ կողմն էր։ Շաբթից ավելի՝ առավոտ, իրիկուն կուվում էինք։ Ծերնիկը հանգըստանում էինք շոգի պատճառով — առավոտ, իրիկուն կրակում... Մին ավստրացիք էին առաջ գալի, մին մենք էինք վրա տալի, բայց միշտ էնպես էր ըլում, որ մնում էինք էլի մեր տեղերում, մեր հին դիրքում։ Բա՛յց, դուրան տեղ էր. հերիք էր գլուխներս բարձրացնեինք— իրար տեսնում էինք, իսկ դուրբինով հո ոնց որ առաջիդ։

Մեր ու ավստրացոց արանքին մի տուն կար միայն, մի մեծ տուն, երկու հարկանի, կտուրը երկաթած։ «Կալվածատիրոջ տունն է», ասում էին. նրա դաշան էր, ինչ... Առաջին էլ պատեղ կար, սիրուն ճաղավոր պարիսպով։ Էնքան մոտիկ էր, որ— բոլորը տեսնում էինք։ Դրա մոտ էլ մի չրհոր կար՝ երկար փետով (էն որ ռուսները ժուրավլ են ասում)։ Ի՞նչքան էինք ծիծաղում էդ փետի վրա... Էդտեղ՝ կուվից ամեն բան՝ տունը, ծառերը, ախպեր, կուչ են եկել, կարծես, ուզում են թաքնվել, բայց էդ փետը — էդ ժուրավլը՝ մեն-մենակ տընկվել է դաշտի մեջ ու դունչը մեկնել երկինք։ «Աղոթում է».— ասում էին տղերքը։ «Չէ, մեզանից խռովել է, գանգատ է անում աստծուն»։ Մի քանիսն էլ թե՝ «Մեզ բանի տեղ չի դնում. ինչքան ուզում եք կրակեցեք, ինձ քյան չեք անի, ասում

է»։ Ու մենք կրակում ենք, մին-մին էլ հանաքով նշան էինք բռնում դրան, բայց նրա համար— հե՛չ...

Ու էսպես շաբաթից ավելի... Կրակում ենք, կրակում, բայց արևը բարձրանում էր թե չէ— կրակոցը երկու կողմից էլ դադարում էր։

Կռիվը՝ կռիվ, էդ արևն էլ մի կողմից էր նեղում մեզ։ Բայ ւշաշտ, ամառվա շոգ օր— ջուր էլ չկա։ Մի բոչկա ջուրը, խնայելով, խմում ենք երկու օր. օրական մի բակլաշկա— ոնց որ ուղտին գդալով ջրես...։

Մի օր էլ, ըհը՛, ջուր չկա... բոչկեն էլ է հատել, բակլաշկաներն էլ... Մարավից տղերանց բերանը բաց է մնացել հավի պես... Լեզուները կպել, չորացել է... Գիտեք էլի, երբ մարդ ծարավ է, ոնց է ըլնում...

«Ա՛յ, մի քիչ ջուր հա՛» ասում ենք իրար։

Բայց ո՞րտեղից... Բոչկեն գնացել էր ու մի օր էր չկար։ Բռնվե՞լ էր, ձի՞ն էր ընկել, ի՞նչ էր պատահել— չկա՛ր... Մեր բախտից ավստրացիք էլ չեն շարժվում, թե չէ մի հա՛յ անեին՝ իրենց գերի էինք—էնպես էինք թուլացել։ Մենակ մենք չենք էդպես, մեր վաշտապետն էլ պակաս չի մեզնից։ Տեսնում ենք շուտ-շուտ ավստրացոց կողմն է նայում, պռոշները չպպացնում ու՝ «չորտ վազմի,— ասում է,—հ՛րը պիտի ջուրը բերեն»։

Դա բեղերը նոր ծլած տղա էր, ուսս ասուչենտ, բերել էին աֆիցեր։ Լավ տղա էր, հասկացող, հմտաքյի. իրան էլ վասիլիյ Վլասիչ էին ասում։ Դա նայեց, նայենց ավստրացոց կողմը, մին էլ թե «չորտ վազմի, գանձ էս ջրհորը մոտիկ ըլեր»...։ Մենք էլ նայում ենք ջրհորին ու զարմանում, որ ջուրն էսքան մոտիկ է ու անկարելի հետու։ Մարավ մարդիկ ու ջրհո՛ր... Նայում ենք ոնց որ սուվածը հացին։

— Բա ջուրն էսքան մոտիկ ըլի ու մենք էսպես ծարավ,— ասում է տղաներից մինը։

— Էդ ասի է՛,— տնքում են տղերքը։

Իսկ մեր վաշտապետը պռոշները չպպացնում է ու չարունակ՝

«Չորտ վազմի, չորտ վազմի»...

Տեսնում ենք,— խեղճը ինքն էլ է տանջվում ծարավից։ Խոսում ենք, մին էլ տղաներից մինը թե՝

— Այ, մեկը ըլներ էդ ջրհորից ջուր բերեր հա՜...

Էդքանը հերիք էր արդեն։ Ամեն կողմից վրա տվին.

— Տղերք, ո՞վ կարա իսկապես...

Ասում են ու իրար նայում։ Ասում են ու վաշտապետին նայում։

— Գնգնք մեզանից մինը թող գնա։

— Գժվե՛լ եք, ինչ է, նրանք էնտեղ նստած (այսինքն ավստրացիք), ասում են, ճանճ էլ ժաժ գա՝ կտեսնեն։

Մինն էլ թե՝

— Գնգնք փորձենք։

— Այ տղեք, ձեռ վեր կալեք, ասում են, շանսատակ կանեն։

Մի քանիսը թե՝ փորձենք, մի քանիսը՝ թարկը տվեք։

Վերջը թե՝ անպատճառ, ինչ էլ ուզում է ըլի— պետք է գընանք։

— Բա ո՞վ գնա, ո՞վ չգնա,—թե՝ եկեք վիճակ գցենք։ Երեսուն-քառասան թուղթ փաթաթեցին ու լցրին մի փոփոխ։

— Դե՛հ, հանեցե՛ք...

Հանեց սա, հանեց նա — մի ութը, ինը մարդ, վրա տասը, տերդ խնդա, Բաղդասար, վիճակն ընկավ ինձ։

«Դե, գնա հիմի, ասում եմ ինքս ինձ, ա՛յ քեզ օյին, երկու տարի ազատվեցիր կրակից, հիմի արի ջրի ճամփին մեռի... էսպես էլ սարսաղություն...»։

Բայց ընկերական բան է, ինչ պիտի անես. ընկել ես—պտի կատարես։

— Գնա, արի՛ գնա, արի գնա,— ասում են։

Իակ ես ժաժ չեմ գալի, գնա կարծում եմ հանեք է։ Թուղթը ձեռիս շուռ եմ տալիս դես ու դեն։ Ձեռքըն էլ կարծում են վախենում եմ։

— Չլի՞ վախենում ես...

Նամուս չվերցրեց։

— Կատոլին թել կապեցեք գնամ, ասում եմ։

Էստեղ թե՝ Վասիլ Վլասիչին ասենք— նոր։ (Այսինքն վաշտապետին)։ Վասիլ Վլասիչը ակոպի մի ծերում նստած՝ պապիրոս էր շինում։ Երկու տղա մոտեցան թե՝



— «Թույլ տվեք, վաշե բլագարոդիյե, գնանք ջրհորից ջուր բերենք»...

— Ո՞ր ջրհորից, ասում է։

Տղերքը ցույց տվին մեր առաջի ջրհորը։

Վաշտապետը բարկացավ։

— Դժվե՞լ եք, ի՞նչ է,— ասում է,— ինչպես կարելի է, չէ՞ որ իսկույն կսպանեն։ Նիկակ նիլզյա՛...

Տղերքը թե՝

— Վաշե բլագարոդիյե, դուք թողեք միայն, ոչինչ էլ չի լինի։ Էնպես կանենք, որ— չըտեսնեն։

— Բայց ո՞վ է գնում, ասում է։

Թե՝ Բաղդասարը։ Այսինքն— ես։

Վաշտապետը մի քիչ չեմ ու չում արավ։ «Ափսոս է տղեն» ասում է։ Բայց վերջը տեսավ շատ են խնդրվում, ծարավից մեռնում են, ճար չկա, ինքն էլ է ծարավ—թողեց։ Կանչեց ինձ իրա մոտ ու խրատեց.

— Բայց էնպես գնա, ասում է, որ չտեսնեն հա՛... Կաո՞ղ ես...

— Կաշխատեմ, ասում եմ։

Տղերքն ուրախացան։ Կատոլը բերին, կտոր-կտոր թելեր իրար արին՝ ունկը կապեցին ու տվին ինձ։

— Դե՛, քեզ տեսնենք։

— Բարի՛ ճանապարհ,

— Հաջողությո՛ւն...

Թելը դրի կատոլի մեջ, կատոլը ձեռս առա, սողալով անցա ոկոպի քունքը ու՝ չոքե-չոք, չոքե-չո՛ք... Գնում եմ փորս գետնին քաշելով, գնում եմ ծիտ տեսած կատվի պես։ Փորսող եմ տալիս խոտերի միջով, ու կատոլը միշտ աջ ձեռքս, գլխից առաջ բռնած, որ եթե կրակեն էլ կատոլին դիպչի...

Միամի՞տ մարդ. կարծում էի կատոլից հետո ինձ չի դիպչի, կամ հենց եկած գնդակը կատոլի վրա է գալու... Էդպես է. վախից խոտի շվաքումն էլ կպահվես... Գնում եմ— ու մի կողմից վախում եմ, մի կողմից էլ ուզում եմ անպատճառ գնալ, գնալ ի՛նչ էլ լինի։— Անունի, պատվի խնդիր է։

«Եթե ճակատիս գրած է, որ մեռնելու եմ էսպես տեղ, էսպես բանի համար, թող մեռնեմ, ասում եմ, ոչինչ»...

Մտածում եմ ու գնում, գնում եմ ու մտածում։ Լավ է՝ կանաչ է. գնալու ժամանակ էնքան էլ չեմ երևում։ Կանաչը էապես մի թզից ավելի է։ Էս կանաչները տափակացնելով ստլում եմ... Արևն էլ վերևից էնպես է վառում, որ, տերդ խընդա... էնքան շոգից չեմ նեղվում, ինչքան քրտինքից... Քրտինքը ծլլում է երեսիցս, թափվել է ականջներիս ետևը... ուզում եմ սրբեմ՝ ձեռ կբարձրանա՜... Սիրտս խնոցու պես քցում է փորումս։ Բայց գնում եմ էլի, գնո՜ւմ.— ավստրացիք դէռ չեն տեսնում... Շուտով հոգնեցի, փռվեցի կանաչների վրա. . Հանգստացա ու նորից... Գնում եմ— էլի չեն տեսնում... Մի երկու անգամ նայեցի մերոնց կողմը, տեսնեմ՝ ետևիցս ծիկրակում են թաքուն, իսկ ավստրացիք — հե՛չ... ժամ չեն պալիս, չեն տեսնում...

Էապես, ախպերս որ դուք եք, չոքե-չոք սողալով հասա ջրհորին։ Հասա ու մնացի քարի շվաքում։ Բերանս էնպես է չորացել, որ թվում է՝ լեզուս կապ է ընկել... Առաջ հլա, էս քարի շվաքում մի լավ շունչ քաշեցի, հանգստացա... Նայեցի— ավստրացիք էլի չեն տեսնում։ Լավ... հիմի ի՞նչ անեմ... Տեսնում եմ, որ դժարը գալը չէր, դժարն էն է, թե ո՜նց ջուր հանեմ... Ջրհորի բերանը բարձր է։ Մի արշինի չափ։ Բարձրանամ թե չէ— տեսնելու են, ու տեսնեն թե չէ— կրակելու են։

Տերդ խնդա՜ Բաղդասար...

Փորձեցի պառկած կատոլը կոխել ջրհորը— չեզավ։

Ճար չկար— պտի քարթքանայի... Մտածում եմ, մտածում ու չեմ իմանում ի՛նչ անեմ։ Վերջը, կեցցե՛ս Բաղդասար. մի բան միտս ընկավ, աղլուխս։ Լավ է՝ մոտս էր. հանեցի ու կանգնեցի։ Կանգնեցի ու թափ տվի դեպի ավստրացիք։ Ավստրացիք իրարով անցան, գլուխները հանեցին ակոպից ու նայում են ինձ։ Ես էլ սպիտակ աղլուխս թափ եմ տալիս, որ չկրակեն... Մի կողմից թափ եմ տալիս, մի կողմից էլ կատոլը կախում եմ հորը։ Էդ որ տեսան — ավստրացիքս հրացանները բռնեցին։ Ես աղլուխս թափ տալով մի քանի անգամ ձեռս բերանս տարա... Ուզում եմ հասկացնել, որ ջուր եմ տանում, ծարավ ենք...

Հասկացա՞ն, ի՛նչ էր— էլ չկրակեցին...

Աչքերս նրանց կողմը— կատոլը կախ արի... Հիմի էլ, արի

տես, թոկը կարճ է, ջրին չի հասնում... Ի՞նչ անեմ։ Վերցրի գոտիկս, կապեցի թոկի ծերը. հասավ։

Ջուրը հանեցի. հանեցի ու նորից աղլուխս նրանց կողմը թափ տալով, կատուն առած վազում եմ։ Ո՞նց եմ վազում— ձի քցես՝ չես հասնի։ Ես վազում եմ, իսկ ավստրացիք ետևիցս ծիծաղում են։ Էդ ես հետո իմացա. տղերքը դուրբինով նայել էին— պատմեցին։

Դեռ կես ճամփին եմ— մերոնք «ուռա» կանչեցին։

— Մալադե՛ց Բաղդասար, մալադե՛ց Բաղդասար։

Էլ Բաղդասարին հալ է մնացել։

Հասա ու տղերանց հետ, ինքս էլ ծիծաղում եմ իմ արածի վրա...

Բայց էդ ոչինչ։ Դու էս ասա, թե մի կատու ջուրը քանի՞ մարդու ծարավ կկոտրի։ Մի քանիսը խմեցին — հատավ։ Մնացածներն էլի մնացին ծարավ։ Դե, գիտեք. ծարավ մարդու մոտ որ ջուր են խմում— ավելի է ծարավում։ Ջուրը ամենից առաջ տվինք, իհարկե, մեր վշտատարներին։ Հետո ո՛վ ավելի ծարավ էր։

Մի հինգ-վեց հոգի խմեց— հատա՛վ։

Տղերքը թե՝ արի՛, Բաղդասար, մեկ էլ գնա...

Խնդրում են, աղաչում։

Մտածում եմ— գնա՞մ, չգնա՞մ։ Ամեն անգամ պապը գաթա չի ուտիլ։ Ավստրացիք են, քեռուս տղերքը չեն. մի անգամ թողին— լա՛վ, երկրորդ անգա՞մ... Մտածեցի—ասի՝ մեկ էլ գնամ, ինչ կլի՝ կլի՛... Էդպես ժամանակ մարդ հարբածի պես է լլում։ Շաշի պես հավեսի էի ընկել...

Էս անգամ վերցրի երկու կատու։ Էլ ոչ թե սողում եմ առաջվա պես, կամ չոքե-չոք եմ գնում, այլ կանգնած։ Աղլուխս թափ եմ տալիս ու առաջ գնում։ Ավստրացիքս էլ նայում են։ Կարծես սպասում են, թե մի բան պըտի ասեմ։

Հասնում եմ ջրհորին, նորից մի քանի անգամ ձեռս բերանիս եմ տանում, աղլուխս շարժում եմ ու կատուը կախում։ Ավստրացիքս էլի նայում են։ Առաջվա պես էլի—ոչի՛նչ... Բան չեն ասում...

Կատուները լցրի ու ետ՝ աղլուխս թափ տալով բերի։

Նոր տեղ էի հասել, մին էլ տղերքը թե՝

— Հրե՝ մի ավստրացի է գալիս։

Ետ դառնամ տեսնեմ— դրո՛ւստ։ Մի սպիտակ շոր թափ տալով՝ գալիս է։ Եկավ, եկավ ու— ըհը՛— տեսնենք մի ման էլ ձեռին։

Մերոնք թե՝

— Ջրի է գալիս...

Դրուստ որ։ Եկավ ջրհորի մոտ կանգնեց ու ձեռի շորը թափ տվեց մեր կողմը։

Մերոնք թե՝

— Այ տղա, նրանք էլ են ծնարավ էլել...

Ու թե դուք ժաժ եք եկել էնտեղ, մերոնք էլ էնպես։ Բան չսրին։

Ավստրացիս կուացավ, ջուր հանեց ու տարավ։

Էդ որ մերոնք տեսան, սիրտ առան։ Թե՝ տղերք, եկեք մեկ-մեկ գնանք ջուր բերենք։ Բաղդասարը հո փողրաթ չի արել...

Ինչպես ասի— տղերանց մեծ մասը ծարավ էր դեռ։ Էդ խոսքի վրա բոլորը՝ թե՝

— Գնա՛նք։

Վաշտապետին ասին։ Էլի մի քիչ չեմ ու չում արավ, բայց թողեց։

Տղերքը գնացին։

Առաջ մեկ-մեկ, հետո՝ երկու-երկու...

Էդ որ ավստրացիք տեսան— իրանք էլ եկան։

Մենք գնացինք, նրանք եկան, մենք գնացինք, նրանք եկան, ու մին էլ տեսանք մեր զինվորների հետը հրես ջրհորի գլխին։ Մենք ու ավստրացիք խառնվել ենք իրար։ Խոսում ենք, բայց իրար չենք հասկանում։ Հասկացնում ենք նշաններով։ Մենք ասում ենք՝ «Վադա խորոշ», նրանք էլ՝ «գո՛ւթ, գո՛ւթ»... էդպես խոսում ենք, ջուր ենք հանում, խմում, իրար հյուրասիրում ու ծիծաղում... ես մինչև հիմի էլ չեմ հասկանում, թե ինչի՞ էինք ծիծաղում... էնքանը գիտեմ, որ ուրախ էինք, շա՛տ էինք ուրախ... մինչև անգամ, երբ ջրից կշտացանք— սկսեցինք երես, ձեռներ լվանալ։ Հետո ջրհորի էդ ժուռավլը կուացրինք, բարձրացրինք, կուացրինք, բարձրացրինք... Ինչպես երևում էր՝ երկար ժամանակ չէր բանել— ճռում էր, ճռճռում ու էնպես ձեներ էր հանում, ոնց որ հարյուր տարվա

Հիվանդ։ Դրա ճոճոցի վրա ծիծաղում ենք, հանաքներ անում... Ավստրացիք էլի ինչ-որ բան են հարցնում— չենք հասկանում։ Նրանք «գո՛ւթ-գո՛ւթ», մենք՝ «խարաշո՛, խարաշո՛»։ Նրանք մեզ հացի կտորներ են տալիս, մենք նրանց պապիրոս։ Ու էլի իրար ենք նայում ու ժպտում։

Չգիտեմ, ինչքան ժամանակ էր անցել— մի րոպե թե մի ժամ— մին էլ տեսնենք մեր դիրքերից ձեն են տալի.

— Ռեբյատա՜...

Ոնց ենք վազում— էլ դու պրծար։

Ետ եկանք։ Վաշտապետը ծիծաղում է։

— Հը՞, կշտացա՞ք, ասում է։

Մենք գլխով ենք անում։

-- Դե՛, վաշե բլագարոդիյե։

— Իսկ ավստրացոց հետ ի՞նչ էիք անում, հարցնում է։

— Ոչինչ, ասում ենք, նրանց լեզուն չենք հասկանում։ Նա գլուխն օրորում է ու բեղի տակ ծիծաղում։

Հետո թե՝

— Լավ չի՞, ասում է, երբ մարդիկ էսպես մոտիկ բարեկամ են իրար։

Նրա էս խոսքերի միտքը էդ ժամանակ լավ չհասկացա, բայց տղերանց հետ էլի գլխով արի.

— Իհարկե, վաշե բլագարոդիյե...

Էլ չխոսեց։ Մենք էլ ծարավներս կոտրած, հանգստացանք։ Նստել ու խոսում ենք, թե՝ ո՛նց պատահեց էս բանը. ո՛նց էլավ, որ ավստրացիք մեզ մոտ թողին ջրհորին։ Մի քանիսը թե՝ «էիրենք էլ ծարավ էին՝ գրա համար»...

Խոսում ենք մեզ համար մին էլ՝ իրիկնապահին մի հրաման, թե պետք է առաջ գնանք, պետք է կրակել։ Կրակե՞լ... Արի տես, որ տղերանցից ոչ մինը սիրտ չի անում կրակելու։ Ձեռներս չի բռնում, հասկանո՞ւմ եք։ Քիչ առաջ իրար հետ ասում, ծիծաղում էինք — հիմի.... չի ըլնում։ Վերջը, վերջը մեզ զոռ արինք. կրակում ենք, բայց վա՛յ էն կրակելուն... Մարդուն որ չես տեսել՝ ուրիշ բան է. կըկրակես, կքշես՝ գնա. բայց որ տեսել ես, հետը խոսել, էն էլ մի երկու ժամ առաջ — ուրի՛շ է։ Ձի ըլնում... Կրակում ենք, բայց էնպես։ Քցում ենք օդի մեջ։ գնում է...

Կրակեցինք, կրակեցինք, բայց էլի էն, էլի էն։ Առավոտը մենք մեր գիրքերում էինք, ավստրացիք իրենց։

Բայց արի տես թե բանից ի՛նչ դուրս եկավ։ Մի օր անց՝ մեր վաշտապետին կանչեցին տարան։ Նրանից ետը մեր կապիտանը, նրա հետ էլ մի ուրիշ պարուչիկ եկան մեզ մոտ— խոսեցին։ Կապիտանը չոր, երկար մարդ էր՝ սարթ բնավորության տեր։ Զինվոր տեսներ թե չէ՝ նկատողություն. «ինչո՞ւ է գլխարկդ ծուռը», «ինչո՞ւ լավ չբարևեցիր», «ինչո՞ւ շորերդ, չինելդ լավ չես կոճկել», ու էսպես բաներ։ Եկավ սա ու սկսեց, թե՛ դուք, ասում է, եկել եք թշնամու դեմ կռվելու, պետք է կռվեք, ասում է, ինչպես կարգն է։ Մի հավատաք, ասում է, էն մարդկանց, որ ձեզ կասեն, թե ավստրացիք մեր բարեկամն են։ Սո՛ւտ է, ասում է. էդ բոլոր մարդիկ ստախոս են. դրանք հայրենիքի դավաճաններ են...

Խոսեց, խոսեց ու վերջն էլ թե՝

«Ձեր վաշտապետը սրանից եղը սա կլինի»։

Այսինքն հետը եկած պարուչիկը։

Խոսեց ու գնաց։

Իսկ մեր վաշտապե՞տը— Վասիլի Վլասի՞չը։ Ո՞ւր տարան, ի՞նչ եղավ... Հարց ու փորձ, հարց ու փորձ— վերջը իմացանք, որ սպանել են... Մնացինք զարմացած, թե ինչո՞ւ։ Նրանից էլ լավ մա՛րդ... Բոլորիս դրությանը մեջ մտնում էր, երբ մի բան էինք խնդրում— «չէ» չկար։ Հիվանդ ժամանակներս գալիս էր մեզ տես, վիրավորված զինվորներին տանելու ժամանակ համբուրում էր, հետո նամակներ էր գրում, սիրտ տալի. (էդպես մի նամակ էլ ես եմ ստացել)։ Իսկ մնացածի հետ՝ ոնց որ ախպեր. կըգար ձեռը մեջքներիս կխփեր, կհարցներ՝ ո՞նց ենք, ի՞նչ ենք... Ու էս բաների համար սիրում էինք նրան... Բայց, արի տես, որ «վատ մարդ» է եղել, ասում է։ «Վատը» ո՞րն է, ի՞նչ է արել։ Էլի հարց ու փորձ, հարց ու փորձ— վերջը, իմացանք՝ մեղքն ի՛ն է, որ թուլլ է տվել, ասում է, իրա զինվորներին թշնամու զինվորների հետ խոսելու և չի թողել թշնամու վրա կրակեն... էդ որ իմացանք— կատաղեցինք։ Էդքան էլ սո՛ւտ... Չէ՞ որ մարդը, ասում ենք, էդ բոլորն արավ, որ ծարավ չմեռնենք։ Էլ ինչո՞ւ է էդ սուտը։

Խոսում ենք, բայց սիրտներս էրվում է։ Մտածում ենք, որ

մարդը մեր պատճառով սպանվեց։ Մտածում ենք, բայց ամեն մեկիս սրտին կարծես մի քար է ընկել... Մի օր էլ—հինգ վեց հոգի խոսում ենք էսպես, զարմանում, զայրանում, թե էդպես էլ բա՛ն... Տղաներիս մինը վեր կալավ թե՝ «էդ բոլորը մեր կապիտանի գործն է»։ Մթամ սպանելու պատճառը նա է եղել։ Մտածում ենք— դրուստ որ—բոլորը նրա գործն է։ Կարող էր, չէ՞, ձեն չհանել. իմացածը ուրիշների—մեծերի—ականջը չքցել, եթե դրուստ էլ ըլներ էն, ինչ ասում էին։ Ուր մնաց որ— սուտ... Մեր մեջ կային ռուս, խախոլ, հայ, վրացի, լատիշ։ Բոլորն էլ հավասար ցավում են. «խեղճ մարդ»... «խեղճ Վասիլ Վլասիչ»... Ցավում ենք ու չենք իմանում ի՛նչ անենք...Մի օր էլ էսպես հինգ-վեց հոգով խոսում ենք, մեր ռուսը— Պավլուշա էինք ասում—վեր կալավ թե՝ «դրան էլ, ասում է, նրա օրը պըտի քցել»։ Վրացի Դաթիկոն էլ է՛ն կողմից։ «Ուղիղ է, ասում է, պե՛տք է»...

Անցավ մի շաբաթ, ավստրացիք առաջ եկան, նորից ետ գնացին, ու էս անգամ, երբ ետ գնացին՝ մենք մեր գիրքերը հասցրինք ջրհորին։ Ու հենց էդտեղ մի գիշեր, երբ կապիտանը, ամեն անգամվա պես, եկել էր պրավերկի— մեր տղերքը, կրակոցի ժամանակ, և–ևս արին դրան... Ու երբ առավոտը դրա մարմինը գտան ջրհորի մոտ, բոլորն էլ կարծեցին, որ անցնելու ժամանակ ավստրացիք են խփել։

Էդպես էլ գրեցին գազեթներում...

1920

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՂՋԻԿԸ

(ՄԻ ԿՆՈՋ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ)

I

Մեծ չի մեր քաղաքը, բայց սիրուն է. մի կողմը անտառ է, մյուս կողմը՝ սարեր, հետևը՝ սարեր, առաջը՝ սարեր, ու էդ սարերի, ու անտառի արանքում— մեր քաղաքը։ Երեք կողմից էլ ջրեր են գնում խշշալով. երբ գիշերը, քաղաքի քնած ժամանակ, դուրս ես գալիս դուռը— ամեն կողմից ջրի խշշոց է լսվում— խը՛շշ, խը՛շշ, խը՛շշ... Ականջներդ թշշում են։ Միայն էն ժամանակ, երբ գնացքը գոռալով գալիս է ու շվացնում՝ ո՛ւո՛ւ— սար ու ձոր դմդմբում են. էդ ժամանակ էլ ջրի խշշոց չես լսում։ Միայն էդ ժամանակ։

Լա՛վ քաղաք է մեր քաղաքը. ամեն տան առաջ ծառ ու բաղչա, ամեն բակում՝ մի ջրհոր... Կաթը՝ առատ, ձուն՝ էժան. գեղերից բերում են ու թափում։ Ձմեռը ցուրտ է մի քիչ, բայց ամառը՝ հո՛վ. ամբողջ օրը քամին սլսլում է։ Դրուստ է, անձրև էլ շատ է գալիս, բայց երբ արևը դիպչում է— արքայություն է դառնում։ Մի խոսքով՝ էնպես չի, ինչպես Երևանում։

Հիմի կասեք, եթե էնտեղ լավ էր, հապա ինչո՞ւ ես եկել Երևան։ Եթե ինձ մնար, իհարկե, չէի գա։ Բայց աղջիկս ինքը եկավ էստեղ ու պատճառ եղավ, որ ես էլ գամ։ Ինչքան ասի՝ տեղահան չըլնեմ՝ չեղավ։

— Չէ, մայրիկ, ասում է, անպատճառ պիտի գաս...

Դե, ես էլ ունեմ-չունեմ էս մի աղջիկն է։ Մտածեցի՝ լավ

չի ապրենք իրարից հեռու, ջոկ-ջոկ. լվացքով պահել, մեծացրել եմ, ուսում տվել— հիմի թողնեմ մենա՞կ։ Լավ չի, ասի, ու եկա։ Եթե տղաս՝ Երվանդս կենդանի ըլներ— էլի ոչինչ— կարող էի մնալ մեր քաղաքում։ Բայց երեխաս գնաց, կորավ անհետ։ Ոչ բարով կովի առաջին տարին ազատվեց որպես միևուճար, բայց մեր տանտեր-խալփա Միխակը ու տերտերի ադվակատ տղեն՝ Վաղարշակը, կանչեցին ԹԷ՝

— Արի, կամավոր գրվի։ Մեր ազգը, ասում է, պետք է ազատենք։

Տղաս ԹԷ՝

— Ինձ ազատել են, ասում է, որ ես մորս ու քվորս պահեմ։ Եթե կամավոր գրվեմ, հետո նրանց ո՞վ կպահի։

Նրանք ԹԷ՝

— Մերդ, փառք աստծու, դեռ աշխատում է, լվացք է անում, իրան էլ կըպահի, քվորդ էլ։ Իսկ եթե մերդ կարիք ունենա, ասում են, մենք կըպահենք։

Ու սկսեցին ամաչացնել երեխեքս— Միխակը ջոկ, տերտերի ադվակատ տղեն՝ Վաղարշակը ջոկ.

«Բա ամոթ չի քեզ պես երիտասարդին, ասում են, էսպես ժամանակ տանը նստես։ Աշխարհի ամեն ծերից, ասում են, հայ տղերքը կամավոր են գրվում— գալիս մեր հայ ազգը ազատելու— դու էստեղ՝ չես ուզում գրվե՞լ»։

Էնքա՜ն ասին, էնքա՜ն գլուխը տարան՝ գրվեց։

Գրվեց ու գնաց կորա՜վ...

Է՜հ, լավ է էդ բաները չհիշեմ, թե չէ ցավս կնորոգվի նորից։

Փուք հարցնում եք աղչկանս մասին։

Էդպես ուրեմն— որդուցս հետո մնացինք ես ու աղչիկս։ Ապրում էինք, էդ որ խալփա[1] Միխակ եմ ասում— նրա տանը։ Դա ինքը հարուստ վաճառական էր. Թիֆլիզից միշտ վագոնով ճոթ-կտոր էր բերում ծախում։ Մեծամեծ մարդկանց հետ նստում էր, վեր կենում։ Լա՜վ էլ հագնվում էր— կրախմալ, շլապա, շորերը միշտ շոտկած ու ոնց որ ասեղի տակից նոր դուրս քաշած։ Մի խոսքով՝ մեր քաղաքի առաջավոր մարդ-

[1] Խալփա — պարոն։

կանցից մինն էր։ Կռվի ժամանակ էլ կոմիտեի մեջ գործ ուներ— կամավոր էր գրում, փող էին հավաքում... Ինքը Միխակը— իրա ընտանիքով— կնիկը՝ Լիզինկեն ու երկու աղջիկը — Անիշկեն, Սոնիշկեն, ապրում էին վերև, ես ներքև՝ պադվալում։ Էդ պադվալի երեք աչքը նրանց ձեռին էր— փետ էին դարսում, ձմեռվա պաշար էին պահում՝ կախաններով տանձ, խաղող, և ուրիշ-ուրիշ բաներ. մի աչքն էլ իմ ձեռին էր. փոքրիկ, ցած օթախ էր՝ պատերը սվաղած, հատակը քարփիչից. երկու էլ նեղ լուսամուտ ուներ. էնքան ցածր էին, որ դուրսը մարդկանց ոտներն ու ծնկներն էին երևում մենակ։ Երկու մանեթ քրեհ[1] էի տալի, շաբաթը մի անգամ էլ՝ լվացքները առնում քրեհի տեղ։

Էսպես ապրում էինք — ես լվացք էի առնում սրա-նրա համար, Վիկտորս գպրոց էր գնում։ Ինքս բան չեմ հասկանում, բայց բոլորն էլ ասում էին, որ լավ է սովորում, առաջադեմ է։ Կայեն մարդիկ էլ, օրինակ, Միխակն ու կնիկը՝ Լիզինկեն— ասում էին.

— Հանի աղչկանդ գպրոցից, թող մի տեղ ծառայի, քեզ օգնի. ինչ սում[2] տեր ես, որ աղչկադ ուսում ես տալիս։

Ես—չէ՛։ Ասում եմ՝ իմ հերը մի լավ բան չի արել, որ ինձ ուսումի չի տվել, թող մի քիչ էլ նեղ ապրեմ— մի աղչիկ է՝ բան սովորի... էն ժամանակ, երբ Երվանդս սպանվեց, Վիկտորս ավարտելու վրա էր։ Վեց-ութ տարի սավրեց, էդ տարին նոր ավարտեց։ Երբ ավարտեց— սրան նրան խնդրեցինք— գրադարանումը պաշտոն տվին։ Բնթնե, մաքուր գործ էր. գիրք էր տալիս-վերցնելու, գրում էր ո՛ւմ գիրք տվեց, ո՛ւմից ստացավ. պատռած գրքերը կտրում էր, կպցնում։ Ու ինքն էլ՝ կարդում էր, կարդում, ինչպես գպրոց գնալու ժամանակ։ Էլ գիրք չէր մնում գրադարանում— բերում-կարդում էր։ Ցերեկը մինչև իրիկուն, իրիկվանից մինչև կեսգիշեր։

— Աղչի՛, Վիկտոր, հաց կեր։

— Մայրիկ ջան, էսքանն էլ պրծնեմ հետո, էսքանն էլ կարդամ—նոր...

---

[1] Քրեհ – վարձ։

[2] Սում (сумма)—գումարի (խոսքը փողի գումարի մասին է)։

Ու կարդում էր տերտերի պես... Մեկ-մեկ էլ կնստեր կարդացածից կպատմեր— էս բանն էսպես եղավ, էն բանը—էնպես։ Պատմում էր էդ գրքերը գրողների մասին. էս գիրքը գրողը, ասում է, էսպես հասարակ մարդու որդի է եղել, բայց տե՛ս ինչպես բաներ է գրել... Կարդում էր հայերեն, ռուսերեն։ Կարդում էր ու պատմում ի՛նչպես են ապրում ուրիշ երկրներում, ինչպես են մարդիկ հարստանում, ինչպես են աղքատանում... Կպատմեր էսպես, կպատմեր մեծ քաղաքների մասին, կպատմեր ինչ պտի լինի հետո, մեզանից էսքան տարի... Ես էլ, շատ բան չէի հասկանում, կլսեի—ու կասեի.

— է՛հ, էդ բոլորը որ մենք չենք տեսնո՞ւմ, Վիկտոր ջան...

— Կտեսնենք, մայրիկ, ասում է, կտեսնե՞նք մի օր...

Էդ ժամանակներն էր, որ խաբար եկավ, թե թագավորին գցել են թախտից։ Ի՞նչ ուրախություն էր... Ամեն տեղ կարմիր դրոշակ կախեցին, ու սկսեցին ճառեր ասել։ Ժողովուրդը մի քանի օր փողոցներից տուն չէր գնում. ճառեր են ասում, ուրախանում, ծափ են տալի. «Կենցցի՛ հեղափոխությունը, կեցցե՛ հեղափոխությունը»։

Ես չէի հասկանում ինչ բան է էդ «հեղափոխությունը», բայց մտածում էի, որ սրա վերջը վատ պիտի լինի. անթագավոր երկիր չի լինի։ Մի քանի օր հետո էլ Հայկ Ազատյանը եկավ Թիֆլիզից ու ճառ ասավ։ Խոսեց, աման, խոսեց, խոսեց, հալեց՝ գլուխները լցրեց։ Թե էլ՝ հին գլավա, հին նաչալնիկ, հին չինովնիկ չպիտի լինի. Թե՝ դրանք բոլորը թագավորի մարդիկն են, բոլորին պիտի քշել... Դրանից հետո էր, որ պրիստավին բռնեցին, նաչալնիկին բռնեցին, միրավոյ սուդը[1] փախավ, լեռնիչը փախավ, ստրաժնիկների[2] պագոնները պոկեցին, մի քանիսին ծեծեցին, մի քանիսը փախան։ Տղերքն ընկան փախչողների հետևից. վազում են ու ռուսերեն գոռում. «Դերժի՛ ևո, կալատի՛ ևո»[3]... Մին էլ գիտեմ ոչ ինչ ևո... էդպես գոռալով՝ ձի քշեցին ստրաժնիկների հետևից ու գնացին...

---

[1] Միրավոյ սուդ (սուդյա) հաշտարար դատավոր։

[2] Ստրաժնիկ—գյուղական կամ ավանային հեծվոր ոստիկան։

[3] «Դերժի՛ ևո, կալատի՛ ևո»—բռնիր նրան, ծեծիր նրան։

Նրանք գնում են— շները նրանց հետևից...

Ես բանը իմ աչքով տեսա արդեն։

— Ինչի՞ են էդպես անում, մտածում եմ, խեղճ ստրաժնիկները ինչո՞վ են մեղավոր. շատ էլ թագավորին գցեցին— ստրաժնիկներին ինչո՞ւ են ծեծում։

Վիկտորը թե՝

— Էդպես էլ հարկավոր է դրանց, քանի որ դրանք թագավորին ծախված մարդիկ են, ասում է։

Դրանից հետո սկսեցին հակալ-հակալ անել ուրիշ մարդկանց էլ. մի պիսըր[1] բռնեցին, թե մատնիչ է, մի ռուս վարժապետ էլ, թե (խոսքն էլ լավ չեմ կարում ասի) պրավակատել է[2]...

Ու հետո՝ ժողով, ժողո՜վ, ժողո՜վ... Ամե՜ն օր էդ օրվանից Վիկտորիս քունն էլ փախավ, հանգիստն էլ։ Ծերեկը՝ գրադարան, իրիկունները՝ ժողով, իսկ գիշերները՝ չի քնում։ Կարդում է հայերեն, ռուսերեն։ Գրքեր, լրագիրներ։

— Աղջի,բոլ է. էդքան կարդալ չի լինի, ասում եմ,— ինչքան կարդացել ես՝ հերիք է։ Մի բան որ ավարտել ես. էլ կարդալը ինչի՞դ է պետք։

— Է՛հ, մայրիկ, ասում է,— դու չես հասկանում. դեռ ինձ հարկավոր է շատ բան կարդալ։ Ուրիշները բարձր ուսում են առնում, Պետերբուրխ, Մոսկով են գնում— ես էլ, ասում է, գոնե տանը կարդամ։

— Աղջի, ասում եմ, ախր աչքիդ լույսն էլ կերթա, գլխիդ էլ խելք չի մնա...

Ո՛ւմ ես ասում։ Շորերը հագին կարդում է, կարդում լամպի առաջ, հետո շորերը հանում՝ մտնում տեղը, լամպը դրսնում է կողքին՝ սեղանի վրա, ու էլի կարդո՜ւմ։ Քնում եմ, գիշերվա կեսին զարթնում— տեսնեմ՝ կարդում է էլի. հիմի էլ գիրքը բարձին է դրել, երեսի վրա ընկել ու կարդում է։

Էսպես— իրան տվել էր գրքին. ի՞նչ անում էի, պոկ չէր գալի։ Տեսնում էի ճար չկա—մեկ-մեկ էլ բարկանում էի.

---

[1] Պիսըր—գրագիր։

[2] Պրավակատել—ռուսերեն պրովոկատոր բառի աղավաղված ձևն է, որ նշանակում է սուտ լուր տարածող։

— Աղջի՛, աչքերդ չես խնայում, գոնե նավթը խնայի. կրակի գին է դառել. լվացք անելով, ասում եմ, քո նավթի հախից էլ չեմ գա, էդ ինչ դու ես նավթ փչացնում։

Նա թե.

— Մայրիկ ջան, մի խանգարի. ես նավթը կառնեմ. էգուց բան պըտի խոսեմ ժողովում, թող նուբ[1] քաղեմ։

— Աղջի, բալ է, ասում եմ, դու ի՛նչ գործ ունես ժողովներում. ի՛նչ քու բանն է դա։ Հրե, ասում եմ, Միխակի աղջկերքն էլ աղջկերք են— ինչի՞ ժողով չեն գնում, եթե ժողովը լավ բան է. չէ՞ որ նրանք քեզանից ավելի ուսում ունեն։

— Նրանք հեչ, ասում է, ինձ նրանց թալը մի անի. նրանք չեն էլ ծառայում. նրանցը էն է՝ պատրաստ ուտեն ու պուդրի քսեն՝ ման գան։

Էդ մեկը ճիշտ էր ասում։ Տնաշենի աղջկերքը ամեն օր առանց-առանջ պուդրի էին քսում ու էս ինչ է՝ թատրո՛ն, էս ինչ է— կլո՛ւբ, կայարան, ամբողջ օրը զանգիկ բռնած՝ ման էին գալի, բայց ժողով սկի։

— Պուդրի են քսում, բայց քեզ պես մազերը չեն կըտրում, ասում եմ, ու ժողով վազում։

— Մազերն ինչի՞ս են պետք, մայրիկ, ասում է։— Ես հո նրանց պես փեսի չեմ ման գալի։

— Բա ինչ, ասում եմ, աղջկանն էլ փեսա է պետք։ Էն տղերքը հապա, ասում եմ, որ քեզ հետ ման են գալի՝ ի՞նչ լնես։

Էս ասում եմ հանաքով։

Նա թե.

— Ընկերներ են։

— Աղջի, ասում եմ, աղջկա ընկերը աղջիկ կլինի...

— Է՛հ, մայրիկ, ասում է, դու բան չես հասկանում։

Ճիշտ որ բան չէի հասկանում։

Էսպես օրերը գնում են — դա՝ ժողով, գրադարան, կարդալ։ Մեկ-մեկ էլ թաղի կնանիքը խաբար են բերում, թե վիկտորդ էս ինչ տեղը խոսեց, էն ինչ տեղը ճառ ասավ։ Մնաբել եմ շվարած։ Էս աղջիկը գժվել է, ասում եմ. սրա կապը պտի քաշել։

---

[1] Նուբ—խոսքը նյութի մասին է։

Մի օր էլ մեր տանտեր Միխակն է գանգատվում։

— Աղչիկդ կոտը գլխել է[1]։

— Ինչո՞ւ, ասում եմ, խալփա, ի՞նչ է արել։

— Շատ է երես առել, ասում է. ամեն բանի մեջ է ընկնում, վիճում։

— Ինչ կա որ, խալփա, ասում եմ. ջահել աղչիկ է, հավեսի է ընկնում, խոսում է. ուրիշների նման հո քեֆեր չի անում գիշերները...

— Չէ մի՛, էդ էր պակաս, ասում է։— Դու աղքատ կնիկ ես, քու աղչիկը պետք է համեստ լինի։

Տեսա շատ է բարկացած—էլ բան չխոսեցի. էլ չհարցրի, թե պատճառն ի՞նչ է, որ բարկացել է։ Նոր իրիկունը միայն իմացա, որ Վիկտորս դրան ժողովի մեջ «բուրժվազ[2]» է ասել։ Էդ էլ ինքը Վիկտորն ասավ։

— Վա՛յ, քառանամ ես, աղչի, ասում եմ։— Դու նրա դեմ լեզու ես բանեցնո՞ւմ. դու ո՞վ ես որ, ի՞նչ հոր որդի ես, ասում եմ։— Ուզո՞ւմ ես մեզ տանից դուրս անի։

— Գլուխը քարով կըտա, ասում է։— Թող դուրս անի։ Սրա պես տուն շատ կա։

Ու բարձր էլ խոսում է։

— Ձենդ կտրի, ասում եմ. վերևը կիմանան, կխայտառակվենք։

— Նա ինքն, ասում է, խայտառակությունից ազատվե՞լ է, որ մեզ էլ խայտառակի։

— Ի՞նչ է արել, նրանից էլ կարգին մարդ։

— Լա՞վ կարգին մարդ ես գտել, ասում է։— Խանութը մերկու աշակերտ է պահում— մի կոպեկ չի տալիս։ Ոչ բարով հոգաբարձու է, բայց վարժապետների երեք-չորս ամսվա ռոճիկը ուշացնում է, որ էգ փողովն առուտուր անի, օգտվի։

— Ի՞նչ անենք, ասում եմ,— մարդ է, փողի պակասություն է ունեցել... Վարժապետների ռոճիկը հո՞ չի կերել։

— Է՛հ, մայրիկ, ասում է,— դու բան չես հասկանում. ավելի լավ է չխոսենք։

---

[1] Շատ հանդուգն բաներ է անում։

[2] «Բուրժվազ»—բուրժուազիա։

Ու իրան նորից տալիս է կարդալուն։

Ի՜նչ պիտի լինի էս աղջկա վերջը, մտածում եմ,— ո՞նց անեմ, որ սրան ճամփի բերեմ ու էդ բաներից հետու պահեմ։ Բայց ի՜նչ. ես լվացքի, նա իրա գրադարանում— ի՞նչասես անում է, ո՛ւմ հետ ասես խոսում է։

Գործս պրծնելիս՝ մեկ-մեկ գալիս էի գրադարան՝ էս կամ էն բանը ասելու— տեսնեմ դա գիրք է տալիս սրան-նրան— տղի, աղջկա, մարդու. կամ՝ գրքերը նշաններ է անում, շկաֆներում դարսում։ Մեկ-մեկ էլ գնում էի-տեսնում—տղա, աղջիկ գլխին հավաքած՝ բան է բացատրում— «էսպես գիրք է, էսպես կկարդաք». ամեն մեկին ջոկ, ամեն մեկին առանձին... Մեկ-մեկ էլ վիճում էր հասակն առած մարդկանց հետ, վարժապետների հետ։ Նա իր կարդացած գրքերից, նրանք՝ իրենց։ Շատ ժամանակ էլ էնպես բաներ էին խոսում, որ ես, անգետ կնիկ, բան չէի հասկանում, բայց տեսնում էի, որ Վիկտորը բոլորին լեզվակոխ է անում։

«Էս ի՞նչ բան է էս աղջիկը, մտածում եմ, չի էլ քաշվում իրա վարժապետներից»։

Ես նրա տեղն ամաչում եմ, բայց նա—հեչ։

— Ջալըմ աղջիկ ունես, ասավ մի օր վարժապետներից մինը, երբ էդպես էլի գրադարան էի գնացել, լսում էի նրանց զրիցը։— Հախիցը կարըմ չենք գալ, ասում է։— Մնում է, որ սրան Լենինի մոտ ղրկենք։

— Լենինն ո՞վ է, քա...

Թե՝

— Բալշևիկների մեծը։

Էս խոսքը մի քանի անգամ ականջովս էր ընկել, բան չ՚ի հասկանում. էս անգամ ասի՝ մի հարցնեմ.

— Բալշևիկն ի՞նչ է, ասում եմ. դա ո՞վ է։

Թե՝

— Քու աղջիկը...

Էլի բան չհասկացա, բայց ամոթից չխոսեցի։

Էդ ժամանակներն էր, որ եկան Թե՝ թագավորի տեղ ժողով ենք ընտրելու։ Մի քանիսից էլ լսել եի, որ նոր թագավոր են ընտրելու, բայց Վիկտորը Թե.

— Ոչ մի թագավոր էլ չենք ընտրելու, ոչ հին, ոչ նոր։

Թագավորի փոխարեն, ասում է, մի ժողով է լինելու (անունն էլ գիտեմ ոչ ինչ), որ պետք է կառավարի երկիրը։

Էսպես բաներ։ Մի քանի օր հետո էլ թե՝ ընտրում ենք։ Բերին մեր քաղաքի պատերին նոմերներ կպցրին— ամեն մեկը մի գազ, ու ժողովրդին իմացրին, որ էս ինչ օրը գաք՝ նոմեր գցեք։ Էդ բանում Վիկտորն էլ աշխատում էր. նա էլ թուղթ էր տանում՝ սրան-նրան տալի, ժողով էր գնում, մի խոսքով ամբողջ օրը հոլի պես պտտվում էր։ Էդ ժամանակ, մի օր մեր տանտեր Միխակի կնիկը— Լիզինկեն հարցնում է ինձ.

— Աննա, ի՞նչ նոմեր պիտի գցես։

— Ես ինչ գիտեմ, ասում եմ. առանց իմ գցելու էլ յոլա կերթան։

— Չէ՛, ասում է, ինչո՞ւ Անպատճառ պետք է գցել։ Բայց ո՞ր նոմերը կուզես գցել,— հարցնում է էլի։

— Չգիտեմ, ասում եմ. Վիկտորս ասում է հինգ նոմերը գցի։

— Չէ, ասում է.— հինգ նոմերը չարժե, չորս նոմերը գցի. իսկականը դա է. մնացածներն, ասում է, մեր ազգի հետ կապ չունեն, ղալը[1] են։

Վիկտորը տուն եկավ— խոսքի մեջ պատմեցի, թե Լիզինկեն՝ էսպե՛ս-էնպե՞ս։ Դա քարկացավ, կամներն առավ՝ քարերն ընկավ։

— Գլուխը քարովն է տալի, ասում է, ղալըը ինքն է ու իր մարդը, ղալըը իրենց նոմերն է...

Խոսեց էսպես, խոսենք, խոսեց, վերջը՝

— Դու կերթաս, ասում է, քեզ ի՛նչ ասել եմ— էն էլ կը գցես...

Նոմերը գցելու օրը գնացի ուսումնարան. էնտեղ էին գրցում։ Մի չորս-հինգ յաշիկ դրված, էն կողքին էլ հինգ վեց մարդ էր նստած։ Էնքան էլ ժողովուրդ կար որ... Անհաշիվ։ Մեր տանտերը— խալիփա Միխակն էլ էդտեղ էր։ Ինձ որ տեսավ՝

— Դո՛ւ էլ ես եկել, Աննա. ի՞նչ նոմեր ես գցելու։

---

[1] Ղալը—կեղծ։

Ես ձեռիս նոմերը ցույց տվի։

— Դա հեչ, ասում է. առ սա գցի...

Ու տվեց մի ուրիշ թուղթ։ Էնքան մարդ կար, որ ամոթից էլ չուզեցի ասեմ, թե Վիկտորս էապես է ասել։ Գլուխը քարը, մտածեցի, իմ գցելովը կամ չգցելովը ինչ պիտի ըլի, գցեմ՝ կորչի, ես գնամ իմ բանին։ Էապես մտածելով՝ առա ու գցեցի...

Հետո որ էս բոլորը Վիկտորն իմացավ— ինձ վրա շա՛տ բարկացավ։ Շա՛տ։

— Դու, ասում է, անհասկացող կնիկ ես։ Քու լավն ու վատը չես հասկանում, գնացել ես քու թշնամիներին ձեն տվել։

— Խի՞, ի՞նչ թշնամի, ասում եմ,— ինձ համար մին է. մի տեղ նոմեր պըտի գցեմ— գցեցի։

— Սկի էլ մին չի, ասում է.— հենց բանն էլ էն է, որ մին չի. դու պետք է, ասում է, ձենդ տաս նրան, ո՛վ քու մասին մտածում է, ո՛վ քեզ կարող է պաշտպանել։

— Էհ, ասում եմ,— ասածած իմ պաշտպանը խլեց էն օրից, երբ Երվանդս ապանվեց, էլ ո՛ւմ դարդն է կրել, ասում եմ, ինձ պաշտպանի. էսպես եկել եմ, էսպես էլ կերթամ։

Նա թե՝

— Չէ, սխալվում ես. նոմեր հինգը է՛ն է, որ քեզպեսանեռին պաշտպանի։

— Ես բան չեմ հասկանում, ասում եմ։

— Դե որ չես հասկանում, հասկացողին լսի։

Ու բարկացավ, ոտները խփեց գետնին. խռովեց ինձանից։ Խռովեց. ո՛չ թե էնպես, որ չէր խոսում. նեղացավ, թե ինչո՛ւ իրան չեմ լսել։

Էդ ժողովն էլ, որ վերջացավ— դա սկսեց մի ուրիշ բան։ Հերիք չէր մինչև կեսգիշեր կարդում էր — հիմի էլ առավոտները վաղ վեր էր կենում՝ վազում կայարան, գալիս էր զոռով մի բաժակ թեյ խմում ու՝ գրադարան...

— Էդ կայարան ինչի՞ ես գնում, աղջի, հարցնում եմ։

— Գրադարանի համար գիրք, կազեթ ստանալու...

— Հապա դու ասում էիր փոշտով ե՞ք ստանում։



— Հիմի մի մասն էլ գնացքով է գալիս,— ասում է։

Բայց տեսնում եմ, էդ բերած թղթերը. գնում է տանն ու էնպես գնում գրադարան։

Մեկ-երկու, մի օր էլ հարցրի.

— Բա ինչո՞ւ էս թղթերը հետդ չես տանում։

— Թող մնա, ասում է, հետո կտանեմ։

Էդպես էլ գնում էր իրիկվա գնացքին։ Մեկ-մեկ էլ տեսար, բերեց հրես մի կամ երկու տղա, կամ աղջիկ՝ իրա նման մաղ-ները կտրած։

— Մայրիկ, ծանոթացիր, իմ ընկեր էս ինչը։

Հետո էլ թե՝

— Ընկերը քնելու տեղ չունի, մեր տանը պիտի քնի։

Ի՛նչ ասեմ. տեսնում եմ անտուն տղերք են, տեղ եմ գցում. մաքուր սավան եմ փռում, իրա՝ Վիկտորի բաժինքի բարձը դնում եմ գրանց գլխատակը։ Թող փափուկ լինի, ասում եմ, սրանք էլ մի մոր որդի են, փափուկ բարձի տվող, ինչ անենք, որ էսօր օտարություն են դուրս եկել...

Մի գիշեր քնում են դրանք, առավոտը գնում։

— Ո՛ւր գնացին, աղջի, հարցնում եմ Վիկտորին։

— Ոչի՛նչ, մոտիկ գեղը գնացին, ասում է։

Մի քանի օր հետո էդ տղեն, էդ աղջիկը նորից են գալիս։ Կապոցով թղթեր են բերում, ինչ որ բան են փսփսում։ Կամ թե Վիկտորը կայարանից բերած թղթերը տալիս է դրանց— գնում են։ Մի քանի օր, մի շաբաթ, ավելի աներևույթ են լի-նում—մեկ էլ հանկարծ լուս ընկնում։

— Ջէ՛, տեսնում եմ դրանց արածը ուրիշ բան է. ինչ-որ փսփսում, քչփչում են թաքուն։ Տեսնում եմ, որ մեր տունն եկողները մթնով գալիս են, առավոտը վաղ գնում, էնպես որ բակում դեռ մարդ զարթնած չի լինում։ Գնալիս էլ միշտ խլշկոտում են, իրանց չորս կոզմը նայում, թե մարդ հո չի՞ տեսնում իրանց։

«Ջէ, մտածում եմ, սրա վերջը վատ բան է լինելու։ Էս աղ-ջիկն իմ գլուխը փորձանք է բերելու»։

Էդպես էլ եղավ։

Ա

Ինչ որ պատմում եմ— մայիսին էր, հենց մայիսի առաջին օրը՝ մայիսի մեկին։ Մինչև էդ՝ ես, մեղքս ինչ թաքցնեմ, չէի իմանում, որ մայիսի մեկը տոն է, բայց բանից դուրս եկավ, որ էդպես է — տոն է։

Ինչե՞ր պատահեցին էդ օրը, ամա՜ն... Երբ հիշում եմ՝ վրաս սարսուռ է գալիս ու զարմանում եմ, թե ինչպես Վիկտորս ազատվեց էդ մեծ փորձանքից...

Ամենից առաջ էդ մայիսի մեկի առավոտը երկու տղա եկան՝ Վիկտորին կանչեցին։ Վիկտորը դրանց հրավիրեց ներս։ Եկան դրանք, երկուսն էլ բլուզ հագած ջահել տղերք։ Եկան թե «ընկեր Վիկտոր, դրոշակը տո՛ւր...»։

Մոռացա ասեմ, որ մի քանի օր առաջ Վիկտորը մի կարմիր կտոր էր բերել ու երկու օր վրան չարչարվել, տառեր էր գրել, թե «Կեցցե հեղափոխությունը», մին էլ, գիտեմ ոչ ինչ «Կեցցե»։ Սպիտակ կտորից տառեր էր կտրել ու կարմիրի վրա կպցրել։ Էնպես պարզ էր եղել որ— էլ պրծար։

Տղաները շատ հավանեցին։ Իրան Վիկտորին էլ մի քանի անգամ՝ «կեցցե, ասին, ընկեր Վիկտոր. շատ լավ է դուրս եկել...»։ Վիկտորն էդպես բաների մեջ ամաչկոտ էր. երբ իրեն գովեին՝ կկարմրեր... էնպես էլ էս անգամ— կարմրեց պուտի պես ու տղերքը թե՝

— Շատ խոսելու ժամանակը չի. ծալած տարեք, ես էլ հիմի կգամ։

Տղաներից մինը նայեց էդ կարմիր կտորին, նայեց, հետո դրեց կոնատակը, ու գնացին։

— Էդ ո՞ւր են տանում, Վիկտոր,— հարցրի աղջկաս, երբ տղաները գնացին։

Նա թե՝

— Էսօրվա տոնի համար պետք է։

Ես առաջի օրը կարելիս բան չհարցրի, կարծում էի գրադարանի համար է, որովհետև մի երկու անգամ էլ, թագավորին գցելուց հետո, նա էդպես բան կարեց գրադարանի համար։ Բայց էս անգամ, երբ տեսա թաքուն տարան, ուզեցի իմանալ ինչ կա։

— Ի՞նչ տոն է, ասում եմ, Վիկտոր ջան։

Նա թե՝

— Էսօր մայիսի մեկն է։

— Մայիսի մե՛կը... Դա ի՛նչ տոն է, ասում եմ։— Ես գիտեմ Աստվածածնա տոն, Լուսավորչի տոն, Քառասուն մանկանց տոն, բայց էդ մայիսի մեկը ի՞նչ բան ա...

— Մայիսի մեկը, ասում է, բոլոր աշխատող մարդկանց տոնն է։ Աշխարհի բոլոր բանվոր, աշխատող մարդիկ էսօր էս տոնը կատարում են։ Հիմի բոլոր քաղաքներում, ասում է, Եվրոպի կողմերը, Ամերիկայում[1] էս տոնը տոնում են էսօր։

— Է՛հ, մեր էջմիածնի օրացույցում, ասում եմ, էդ տոնը կա՞ գրած։

— Էջմիածնի օրացույցում ի՛նչու պիտի լրի, ասում է։ Վարդապետները իրանք ուրիշի աշխատանքը ուտող մարդիկ են, ինչո՞ւ պիտի էս տոնը գրեն։ Նրանք, ասում է, իրենց չեզած, ուտո սրբերի տոնը կգրեն, որ ժողովրդին խաբեն, խավար պահեն։

— Սո՛ւս, աղջի, ասում եմ,— ջահել հոգուդ մեղք մի՛ անի. «սուտ սուրբը» ո՞րն է վարդապետները, ուրեմն, էնքան անխելք մարդիկ են, որ սուտ սրբերի անունը գրո՞ւմ են օրացույցում։

— Չէ, ասում է, անխելք չեն— կեզծավոր են. գրում են, որ քեզ նմաններին խավար պահեն, որ եկեղեցի գնաք, մոմ վառեք, աշահամբույր տաք, իրենց էլ սրբի տեղ դնեք։ Թե չէ, ասում է, ոչ մի սուրբ չկա. բոլորն էլ սուտ է, վարդապետների հնարածք։

— Բա ուրեմն, ասում եմ, աղջի, Հիսուսը, Մայրամ Աստվածածինը, Լուսավորիչը ո՞ւտո են։

— Հա, ասում է,— բոլորն էլ։

Ես շշմեցի։

— Ձե՛նդ կտրի, աղջի, երկնքից քարե կարկուտ կթափի մեր գլխին։ Մեղա՛, մեղա՛, տեր...

Ես վախեցած, սարսափած խաչակնքում եմ երեսս, նա ծիծաղում է։

— Եհղճ մայրիկ ջան, ասում է, զուր մի չարչարվի, զուր

[1] Ամերիկայում—Ամերիկայում։

ձեռներդ մի հոգնեցնի՝ խաչակնքելով։ Վերև, ասում է, ոչ աստված կա, ոչ սուրբ։ Մեր վերևը՝ մենակ Միխակն է իր անամոթ կնկա ու լիրբ աղչկերանց հետ։ Էնտեղ՝ վերև էլ բան չկա։

— Աղչի, ձե՛նդ, ասում եմ,— կիմանան, տանից դուրս կանեն։

— Թո՛ղ համարձակվեն, ասում է։— Շուտով ցույց կտանք դրանց, թե ո՛վ ում դուրս կանի։ Ուրիշի աշխատանքով շինած տանը նստել են...

Խոսեց էսպես, շորերը հագավ ու գնաց։ Բայց նրա ասածները սրտիս կպան, թե վերևը ոչինչ չկա, աստված չկա, սուրբ չկա. վարդապետները կեղծավոր են, էջմիածնի օրացույցը սուտ է գրել։ Առաջ էլ, մեկ-մեկ, էդպես բաներ էր խոսում— բանի տեղ չէի դնում։ «Ջահել է, ասում եմ, խելքին զոռ է տալիս»։ Բայց էս անգամ էնպես բաներ ասավ որ— ինձ դիպավ— բոլոր սրբերը սուտ են, Գրիգոր Լուսավորիչը սուտ է... Իմ հերը ասում էր, որ Գրիգոր Լուսավորիչը բոլոր սրբերի մեծն է, Քրիստոսից հետո, իսկ էջմիածնի ոսկե տաուերով օրացույցը, ասում էր, Աստվածաշնչի միջից են հանում. հիմի— սո՞ւտ է... Մեղա՛ քեզ, աստված, մեղա՛, ասում եմ.— չահել է, խելքից թեթև... կանգնեցի, մի քիչ աղոթեցի։ Հետո ուզեցի մոմ առնեմ, գնամ ժամ՝ վառեմ— փոշմանեցի։

«Էնքան վառեցի, մտածում եմ, որ երվանդիս հարեհաս[1] լինի իր գժվար տեղում— ի՞նչ աթավ, որ հիմի էլ վառեմ։ Ձիշտ է ասում Վիկտորս, մտածում եմ— եթե նրանք՝ էդ սրբերը մի զորություն ունեին— երվանդս անտեր չէր կորչի օտար հողի մեջ»...

Երվանդիս որ հիշեցի՝ սիրտս փուլ եկավ։ Նստեցի մի քիչ լաց եղա, հետո վեր կացա, ասի՝ մի գնամ տեսնեմ ի՛նչ բան է էս մայիսի տոնը, որ Վիկտորը, նրա ծանոթ տղերքը էսպես թաքուն պատրաստվում էին, չէին ուզում ուրիշները տեսնեն իրենց արածը, իսկ հիմի ուզում են դուրս գան փողոցում կատարեն։ Կամ ի՞նչ տոն է, ասում եմ, որ եկեղեցում, դպրոցում չեն կատարում, ուզում են հենց անպատճառ փողոցում։

Մտածեցի ու գնացի։

---

[1] Հարեհաս—օգնություն հասնող։

Գնացի՝ տեսա — մեծ փողոցը լի՛ քը ժողովուրդ. մեր, մանուկ էստեղ են։ Ասեղ գցես՝ գետին չի ընկնի։ Դեռ մի կողմից էլ գալիս են, գալիս են... Օրն էլ լա՛վ օր է. անուշ պայծառ— ձվածեղ։ Մարդու սիրտն իրան-իրան բացվում է— էնքան լավ է օրը։ Մի կողմն էլ մուզիկն է ածում, երեխեքը խաղ են անում, երգ են ասում, ու էդպես ժողովրդի մեծ մասը կիրակի օրվա շորեր հագած սպասում էր։ Ես էլ դրանց հետ։ Քիչ հետո տեսնենք հրես ուսումնարանի աշակերտները եկան իրանց մուզիկով։ Չորս-չորս կանգնած՝ եկան, անց կացան. նրանցից եղը մի ուրիշ խումբ. էլի՛, էլի՛, ինչքան աշակերտ կար՝ եկավ-անցավ— ամեն մի խումբը իր դրոշակով, իր երգով... Աշակերտներից հետո եկան ծառայողները իրանց խաչփառի նման դրոշակներով, հետո զորքը՝ կանաչ, կարմիր նարնջի գույնի մեծ-մեծ դրոշակներով, մուզիկով։ Սրանք եկան անցան, նոր, դրանցից հետո երևաց մի ֆուրգոն դարբնի՝ փուքսն ու զնգանը վրան. երկու մարդ էլ, դարբնի պես հագած, երկաթ են ծեծում— Դրա՛խկ հա թրախկ, դրա՛խկ հա թրախկ։ Մթամ բան ենք շինում։ Էնպես էլ խփում են որ— տաք երկաթից կրակի պեծեր են թռչում...

Դրանք էլ անցան։ Դրանցից հետո մի ֆայտոն եկավ— մի աղջիկ միջին կանգնած. սպիտակ շորով, մազերն ուսերին թափած՝ ծաղիկ ու կանաչ է շաղ տալի չորս կողմը։ Դա էլ, ասին, մթամ մայիսն է, ծաղկի ու կանաչի ամիսը... Ինչե՛ր չեն հնարում մարդիկ։ Հա՛, էդ էլ որ անցավ— եկավ մի ուրիշ խումբ, էլի մի ուրիշը, վերջն էլ մի խումբ՝ հենց էն դրոշակով, որ երեկ Վիկտորը կարել էր... Տատերից ճանաչեցի— սպիտակը կարմրի վրա։ Դրոշակը կարել էին մի փետի ու բարձր բռնել, էնպես որ քամին ֆռֆռացնում, բացում էր, ու ամեն բան պա՛րզ երևում էր։ Կողքիս կանգնած մի քանի մարդիկ կարդացին դրա վրան գրածները ու՝

— Ը՛հը. է՛ս էլ բալշևիկները,— ասին։

Դրանք մի մեծ խումբ էին. բոլորն էլ մի-մի կարմիր լենթ գոշներին[1] կպցրած։ Մինչև էդ Վիկտորիս չէի նկատել. դա էլ, տեսնեմ, դրանց մեջ. հենց դրոշակը տանողի կողքին։ Գլխին

[1] Դոշ—կուրծք։

մի կարմիր շոր է կապել, մազերը տակից կախել։ Խմբի մեծ մասը ջահել տղերք են, քիչ մասը՝ մազով միրուքով մարդիկ. դրանց մեջ ճանաչեցի վարժապետին, մեկ էլ քաղաքի ֆանատ վառողին։ Բոլորը տղամարդ, երեք աղջիկ։ Էն երկու աղջիկն էլ, Վիկտորի պես գլուխները կարմիր են կապել։ Վիկտորին դրանց մեջ տեսնելով՝ բարկացա ինձ ու ինձ. «Դու ի՞նչ ունես դրանց մեջ, այ աղջի...»։

Դրանց տեսնելով խալխն էլ սկսեց խոսել։

Մեկը թե՝ լավ դրոշակ են սարքել, մյուսը թե՝

— Շոր չեն գտել, կարմիր են կապել։

— Մա՛րդ են զարմացնում։

Էսպես բաներ։ Մի քանիսը շվացնում են. հուշտ են անում[1], մի քանիսը սաստում են էդպես անողներին ու ինչ-որ խոսքեր են ասում— չեմ հասկանում։ Բայց նրանք— հե՛չ։ Բանի տեղ չեն դնում։ Եկան-եկան ու մին էլ՝ բոլորը միասին սկսեցին երգել։

— Պահ, պահ, տեսեք, տեսեք Ինտերնացիոնալ[2] են երգում,— ասում են խալխը[3] մի քանիսը զարմացած, մի քանիսը բարկացած։

Իսկ նրանք— հե՛չ. վեջները չի. երգո՛ւմ են։ Հետո իմացա, որ էդ Ինտերնացիոնալը հենց իրենց բալշևիկների երգն է եղել։

Սրանք որ երգն սկսեցին ու անցան, նրանց ետևից եկողները վեր կալան մի ուրիշ երգ։ Էդ որ երգեցին, խալխը թե՝

— Փոփոխենքը վեր կալեք։ «Մեր հայրենիքն» է։

Մյուսին փոփոխենքը վեր կալան ու երգողների հետ գնացին կայարան, քանի որ եկողը էնտեղ էր գնում։

Խալխը պոկ եկավ գնաց, ես էլ դրանց հետ։

— Ճառ են խոսելու, ասում էին։

Ասի՝ քանի որ տանից դուրս եմ եկել, անելու էլ բան չունեմ, գնամ տեսնեմ ի՛նչ են ասելու։ Կարելի է մի սրտաշահ բան են ասում— լսեմ։

Գնացի։

---

[1] Հուշտ են անում—խրտնեցնում են։

[2] Ինտերնացիոնալ—ինտերնացիոնալ բառն աղավաղված ձևով։

[3] Խալխ—ժողովուրդ։

Կայարանի մոտ, բաց դաշտում, էնքան ժողովուրդ էր հավաքվել— էլ պրծար։ Ես ասեմ՝ հազա՛ր, դու ասա՝ տասը, քսան հազար։ Ավելի շատ, քանց Թագավորին գցելու օրը։ Միխակը, կնիկը աղչկերանց հետ էդտեղ են։ Ջուգված, զարդարվա՛ծ։ Աղչկերքը զոճաիկով, կնիկը շլապով։ Ինձ որ տեսան՝ զարմացան.

— Աննա՛, դու էլ ես եկե՞լ։ Բա որ տունը թալանե՞ն։

— Բան չի լինի, ասում եմ,—հլա տեսնենք ինչ բան է սա։

Դրանք գնացին առաջ, ես մնացի։ Կանգնած թամաշ եմ անում, թե ի՛նչ է լինելու։

Էսպես— ժողովուրդը եկել-կիտվել է ու մուշիկը ածում է մեջտեղը։ Ածեցին էնքան, մինչև որ բոլոր ժողովուրդը հավաքվեց, նոր մինը— մի կռախմալով մարդ, շլապեն ձեռին բարձրացավ ժողովրդի միջից։

Իսկույն ճանաչեցի. տերտերի աղվակատ տղան էր—Վաղարշակը, էն որ մի քանի տարի առաջ իմ տանեցք Միխակի հետ Երվանդիս կամավոր գրեց։ Վեր կացավ գա— էս կողմը նայեց, էն կողմը նայեց, հազաց ու սկսեց.

— Ընկերնե՛ր, ասում է, էսօր ամբողջ աշխարհը էս տոնը տոնում է։ Էս տոնը, ասում է, էն տոներից է, որ բոլորը տոնում են։ Սա, ասում է, աշխատող մարդկանց տոնն է...։

Ու խոսեց, խոսե՛ց։ Բայց էնպես գրափառ էր խոսում, որ խոսածի կիսից ավելին չէի հասկանում։

Վերջն էլ շլապեն բարձրացրեց ու՝

— Կեցցե՛, ասում է, մայիսի մեկը։

Մուշիկն սկսեց ածել, մարդիկ փափախները վերցրին։

Դրանից հետո խոսեց մի ուրիշը— մի վարժապետ։ Դա էլ էնպես բաներ ասավ, ինչ որ տերտերի աղվակատ տղան— Վաղարշակը, ու նրա պես էլ վերջացրեց.— «Կեցցե՛ մայիսի մեկը»։ Վարժապետից հետո խոսեցին ուրիշ մարդիկ. ո՛րը հանդարտ, ո՛րը ձեռներն ու գլուխը թափ տալով, բայց բոլորն էլ վերջացնում էին իրար նման.— «Կեցցե՛ մայիսի մեկը»։ Բոլորի ճառից հետո էլ մուշիկը ածում էր, մարդիկ փափախները վերցնում էին, ծափ տալի կամ ուտա կանչում։ Խոսեցին էսպես մի հինգ-վեց հոգի, մին էլ— ըհը— ժողովրդի միջից խոսողների տեղը բարձրացավ... Վիկտորը՝ կարմիր շո-

րը գլուխը կապած, կտրած մազերը ուսերին կախած, իրա կարած դրոշակը ձեռին...

Դրան որ տեսա էդպես— սիրտս տեղահան եղավ։

«Վա՛յ, մազդ կտրի, աղջիկ, մտածում եմ.— էս ինչ խայտառակ բան է։ Դրա համար ես տղաների հետ ընկե՞լ...»։

Մտածում եմ ու ամոթից ուզում եմ գետինը մտնեմ. աչքս չեմ կարում վեր բարձրացնեմ։

Մարդիկ հարցնում են իրար.

— Էս ո՞վ է, էս ի՞նչ աղջիկ է...

Մինը թե՝

— Դրադարանի աղջիկն է...

Դրանք խոսում են, ես ինձ ուտում եմ— «Գետինք մտնես, աղջի, աղջիկն էլ էդպես բան կանի՞...»։ Ճոներս տակիս դողում են, սիրտս խաղաղ է եղել։ Լեզուս բերանումս չորացավ։ Մեռած եմ ու թաղած չեմ։

«Որ Միխակը տեսնի— ի՞նչ կասի», մտածում եմ...

Վերջը, ի՛նչ երկարացնեմ, դա կանգնեց դրոշակը ձեռին, կարմիր շորը գլուխը կապած, կանգնեց ու՝

— Ընկերներ, ասում է (էնպես էլ համարձակ, որ քիչ է մնում գնամ մազերը պոկեմ). էն, ինչ որ էստեղ խոսեցին, ասում է,— էդ բոլորը կեղծ է, որովհետև, ասում է,— խոսքով ուրիշ բան են ասում էս պարոնները՝ (քանի գնում՝ էնպես համարձակ է դառնում, իսկ ես ճաքում եմ), գործով ուրիշ բան են անում... Սրանք ասում են թե՝ բոլոր աշխատողները, բանվորները պետք է միանան, բայց, ասում է, իրանք չեն ուզում միանան ռուս բանվորների, մի խոսքով ռուս խալխի հետ, որ կռվում են, ասում է, բոլոր մարդկանց բախտավորացնելու համար։ Սրանք, ասում է, ոչ միայն չեն ուզում միանան նրանց, այլ, մինչև անգամ, օգնում են նրանց ՔՂՀնամիներին։ Ու սրանք, ասում է, ինչ որ ասում են— սուտ են ասում։ Թող մեր ժողովուրդն էդ բանը լավ իմանա։ Սրանք մեր ժողովրդի ՔՂՀնամիներն են, ասում է։

Նա խոսում է՝ ես ամոթից գետինն եմ մտնում։ Նա խոսում է, ես ինձ ուտում եմ։

«Գետինը մտնես, աղջի. ինձ խաղք ու խայտառակ արիր, մտածում եմ.— Դու ի՞նչ հոր որդի ես, որ էդպես լեզու ես

բանեցնում. դու ինքդ աղջիկ՝ դուրս ես եկել տղամարդկանց դե՞մ։ Վա՛յ անամոթ. բա քու երեսի փարդեն պատռել է էդքա՞ն։ էլ ո՞նց երևամ, մտածում եմ, ես մարդամիջի...»։

Առաջի խոսողները բոլորը տոնի մասին էին խոսում, սա՝ ժողովրդի, կառավարության։

— Էս ի՛նչ կառավարություն է, ասում է,— շարունակ կռիվ է անում ու ժողովրդին ճնշում։ Էսպես կառավարությունը, ասում է, ավելի լավ է չլինի։

Ուրիշների ասածները պարզ չէի հասկանում, բայց սրա խոսքերը շատ լավ էի հասկանում. ամեն մի խոսքը ոնց որ գրվանքա քարի պես գլխովս տան... Մին ասի՝ թողնեմ-գնամ տուն, մին էլ թե՝ տեսնեմ հլա ի՞նչ պիտի լինի սրա վերջը։ Հանկարծ, մտածում եմ, չբռնեն ու ծեծեն սրան դերձակ Մակարի տղի պես, թե ինչի՞ ես մեր դեմը խոսում։

Նա խոսում է— ես հալվում եմ կանգնած տեղս։ Ինչքան խոսեց— չեմ կարա ասեմ, բայց որ վերջացրեց՝ սրտիցս ոնց որ մի քար գցես— թեթևացա։ Սրան ծափ տվին էստեղից, էնտեղից, բայց մուզիկն սկի ձեն չհանեց։ Հետո մարդիկ սկսեցին ղվվալ, գոռացին, ճչացին։ Տոնը կարծես խանգարվեց։ Երբ դա խոսեց, ցած եկավ, ասի՝ մի գնամ թուք ու մուր տամ, բայց չկարացի ճամփա գտնեմ։ Ամոթից՝ է՛լ չմնացի։ Ուղիղ եկա տուն։ Վա՛յ եմ տալի գլխիս ու մտածում, թե էս ինչ օրի հասա ես, էս ինչ խայտառակություն էր. մինչև էսօր նամուսով ապրել ենք, հիմի օր-ծերության մի մատը մեղր դառնա՞մ քաղքի միջին...

Էսպես, տան առաջ նստած, մտածում եմ ինձ ու ինձ, մին էլ տեսնեմ հրես Միխակն ու կնիկը՝ աղչկերանց հետ եկան։ Ջուգվա՛ծ, զարդարվա՛ծ։ Աղչկերքը զռնտիկով, կնիկը՝ շլապով։

Միխակը գլուխս տեսավ թե չէ՝

— Պարզերես կենաս, Աննա,— ասում է,— լա՛վ աղչիկ ես մնծացրել։

Էնտեղից կնիկը.

— Աղչիկ էլ ասում է՛... Նա աղչիկ չի։ Կապը կտրած ղարալչի ասա՛։

Ու հետո ինձ.

— Աղջի, ասում է, էդ ո՞նց եղավ, որ քեզանից էդ ազգի դավաճանը ծնվեց։

Հերը, մերը խոսում են— աղջկերքը ծիծաղում։

Ի՞նչ ասեմ։ Ամոթից էլի գետինն եմ մտնում։

Միխակը նորից.

— Էս օրվա օրը, ասում է, աղջիկդ փչացրեց։

Կնիկն էլ թե.

— Էդպես աղջիկը չլինի՝ ավելի լավ է. իրա անունն էլ խայտառակեց, քունն էլ...

Ամոթից էլի բան չեմ խոսում. ես էլ մտածում եմ, որ նրա արածը խայտառակություն էր։ Մտածում եմ ու սիրտս քիչ է մնում բերանովս դուրս գա։ Որ ձեռս ընկնի՝ բզիկ-բզիկ կանեմ, կծվատեմ։ Թող մի գա, ասում եմ, տե՛ս նրան ինչ եմ անելու. շան լափը կթափեմ գլխին. էնպես բան անեմ, որ շունը ձեռքիցը հաց չառնի։ Էրա համար է մազերը կտրել. դրա համար է ասում՝ աստված չկա, սրբերը սո՛ւտ են...

Մտածում եմ էսպես ու տրորվում մինչև իրիկուն։ Նոր իրիկունը միայն դա եկավ. գույնը թռած, հևալով տուն մտավ ու՝

— Մայրիկ, էս գիշեր ես տուն չեմ գալու. ինձ չսպասե՛ս։

Մտնելուն պես ուզում էի հարձակվեմ դրա վրա, մազերը պոկեմ— գա էդպես խոսքե՛ր։

[illegible]։

«Էս էլ մի նոր խայտառակություն», մտածում եմ։

— Խի՞, աղջի, ինչո՞ւ չպիտի գաս։

Թե՝ «Ինձ ուզում են բռնեն»։

— Ո՞վ։

— Կառավարությունը։

— Ինչո՞ւ։

Թե՝ «Էսօրվա ճառիս համար»։

— Ա՛յ, ասում եմ, աչքդ էլ են հանելո՞ւ։ Շատ էլ լավ կանեն։ Դու ո՞վ— ճառ ասելն ո՛վ. ի՞նչ հոր որդի ես, ի՞նչ պաշտոնի տեր ես, որ ճառ ես ասում։ Դրա համար ես, ասում եմ, մազերդ կտրել, չահել տղերանցը խառնվե՛լ...

Սկսեցի մի լվանամ դրան— դա, գույնը գցած, ձեռը թափ տվնց։

— Շատ մի՛ խոսի, մայրիկ, ասում է,— գլուխ չունեմ, դու բան չես հասկանում. ես գնում եմ։

— Ո՞ւր, աղջիկ։

Դա տեղը չի հայտնում։

— Մի տեղ, ասում է։

— Որտե՞ղ, ի՞նչ տեղ։

Չի ասում։

Լաց, աղաչանք։

— Խեղճ մորդ խնայիր, ասում եմ։— Բա որ ինձ էլ բան չասես, ո՞ւմ պիտի ասես...։

Շատ որ խնդրվեցի.

— Դե, լավ, ասում է կամաց,— մարդու բան չասես, ես գնում եմ հորքուրքի տուն՝ թաքնվելու։

Այսինքն՝ տալիս տուն։ Տալս էլ տպրում է քազաքի մի ծայրում, հեռու, կայարանի կողմը։

— Մինչև ե՞րբ, աղջիկ։

Թե՝ «Տեսնենք»։

Խոսում է ու հետն էլ թղթեր, նամակներ, գրքեր հավաքում։

Հավաքեց, հավաքեց, կապոց արավ, բարակ վերարկուն վերցրեց ու գնաց։ Էլ սիրտ չարի բան ասեմ։ Գույնն էնպես էր գցել, ինչպես պատի ծեփ։ Էդպես ժամանակ էլ ո՞վ կարա բան ասի. մեր չէ, թեկուզ օտար լինի։ Ուզեցի տանեմ մինչև տալիս տուն, ճամփու գցեմ— չթողեց։

— Հարկավոր չի, մայրիկ ջան, ասում է,— դու տանից սկի դուրս մի գալ. քեզ որ ինձ հետ տեսնեն— լա՛վ չի։

Ու գնաց։ Բայց սիրտս չհամբերեց։ Դուրս եկա դրա հետևից ու գնացի մինչև բակի դուռը։

Գիշերը մութ-մութն է. սիրտս էլ գիշերվա պես։ Մին բարկանում եմ դրա վրա, ուզում եմ հետևից անիծեմ, մին էլ խղճում եմ խեղճ աղջկան։

«Տեր աստված, ասում եմ, դու խնայիր իմ կարած, մոլորած զավակին...»։

III

Էսպե՜ս... Վիկտորի գնալուց հետո մի՞ ժամ էր անցել, երկո՞ւ, հի՞նգ— չեմ իմանում։ Միխակը, կնիկը վերև քնել էին արդեն, ես էլ տեղս մտած կուչ եմ եկել՝ աչքս անխուսափ, սիրտը անհանգիստ, մին էլ ըհը— ոտների ձեն։ Սանդուղով իջան իմ բալկոնը ու դուռս ծեծեցին։ Մին մտածեցի, թե գուցե Վիկտորն է, փոշմանել կամ իմացել է բան չկա, ընկերների հետ նստ է եկել։ Բայց տեսնում եմ— չէ՜։ Դուռն էնպես են ծեծում, որ սկի Վիկտորիս ծեծելուն նման չի։ Նա որ ծեծում էր՝ միշտ մատի ծերով էր ծեծում— մի, երկու անգամ, հետո էլ՝ «մայրիկ»։ Է՛, ես էլ էնքան խոր քնող չեմ, լսում էի խոպուչ։ Իսկ էս անգամ ոչ թե մատով ծեծեցին— ոտով, սապոգով, «բըր՛խկ, բըր՛խկ...»։ Սիրտս ահ ընկավ։ Ո՞վ պիտի ըլի, մտածում եմ, էսպես ուշ, գիշերվա կիսին։

— Ո՞վ եք, ի՞նչ եք ուզում։

— Բաց արա, ասում են։

Տղամարդու անծանոթ ձեն է։

Վեր կացա, շորերս հագա ու գնացի դեպի դուռը։

— Ո՞վ եք, ի՞նչ եք ուզում, ասում եմ։

— Մենք ենք. միլիցիան. բա՛ց արա։

Լսում եմ՝ խոսողը մինը չի. շատվոր են. դռան հետևը ղռվռում են։ Սիրտս ավելի ահ ընկավ։

Մին մտածեցի թե՝ Վիկտորի համար են եկել, մին էլ թե՝ ով է թշնամում, գնդի մարդիկ են գուցե, թալանի են եկել։ Էդ օրերին էլ էդպես բաներ շատ էին լինում... Էդպես խաբելով՝ շատ տներ էին կտրում։ Մարդիկ կային՝ հենց դրանով էին պարապում։ Քանի-քանի մարդ թալանեցին կայարանի ճամփին, քանիսին քաղաքում։

— Ի՞նչ եք ուզում, ասում եմ,— տանը մարդ չկա։

— Բաց արա, կիմանաս ի՛նչ ենք ուզում։

Ես կողքիս եմ ընկել, թե էս կես գիշերին չեմ կարող դուռ բաց անել։

— Չեմ կարա, ասում եմ,— մենակ, անտեր կնիկ եմ, ի՞նչ եք ուզում ինձանից։

Իսկ նրանք գոռում են.

— Հերի՛ք է, բաց արա, թե չէ՝ կը չարդենք։

Էդ ժամանակ լսեցի, թե ինչպես խալփա Միխակը զարթնեց վերև— հազաց ու սկսեց ման գալ։ Էդ ինձ սիրտ տվեց։ Նա զարթուն է, մտածում եմ, եթե եկողները գող լինեն, նա ձենս կիմանա։ Ու դուրը բաց արի։

Ներս թափվեցին հինգ-վեց մարդ՝ հրացանով բանով։

— Վիկտոր Դանելյանցն ո՞վ է։

— Իմ աղչիկն է, ասում եմ, բայց էստեղ չի։

— Ո՞ւր է հապա։

— Չգիտեմ, ասում եմ, իրիկունը գնացել է, դեռ տուն չի եկել։

— Ո՞ւր է գնացել։

— Չգիտեմ։

— Ո՞նց չգիտես, ասում է դրանց մեծը՝ աչքերը վրես չռելով.— Քու աղչիկն է, պարտավոր ես իմանալ ո՛ւր է գնում։ Ո՞ւր է, ասա՛։

Կպել են, թե աղչկանդ տեղն ասա, թե չէ բանը վատ կըլի։ Ես էլ՝ «Չգիտեմ, ասում եմ, ի՛նչ իմանամ ո՞ւր է գնացել»։ Նրանք թե՝ «Շատ լավ գիտես, բայց չես ասում»։ Երդվում եմ.— երկինք, գետինք, «առեք-կերեքը»[1] վկա, չգիտեմ։— Չեն հավատում։

— Անկարելի բան է, ասում են, դու քու աղչկա տեղը չիմանաս։

— Այ քեզ բան, ասում եմ։— Չգիտե՛մ։

Ասում եմ, բայց սիրտս դողում է։ Մենակ կնիկ՝ հինգ-վեց հոգու առաջ կանգնած. ինձ կորցրել եմ։

Էդ ժամանակ տեսնեմ— Միխակը՝ ամառվա վերարկուն շապկի վրա հագած, անգուլպա, չուստերով մտավ ներս։

— Ի՞նչ կա,— հարցրեց միլիցիային։

Նրանք թե՝

— Վիկտորիա Դանելյանցին ենք ուզում։

Որ Միխակը երևաց, սիրտս մի քիչ պնդեց։ Ասի՝ սրանից կքաշվեն, կամաչեն— կհեռանան։ Բայց— չէ՛։ Տեսան աղչկանս տեղը չեմ ասում, սկսեցին տունս խուզարկել։ Էլ ծակ

---

[1] «Առեք-կերեքը»—կրոնական աղոթքից։

ու ծուկ չթողեցին՝ ման եկան, էլ սնդուկ, քսուր-ծրուր[1] չթողին՝ քրքրեցին։ Մինչև անգամ մեկ-մեկ կռացան թախտերի տակը նայեցին։ Մի խոսքով՝ տունս աղեցին-մաղեցին— աղչիկ չգտան։ Վերջը տեսան բան չկա— Վիկտորի գրյանքը[2] հավաքեցին տարան։ Դրեցին մի թղթի վրա, թե տանում ենք տասնուհինգ հատ գիրք։ Թուղթն էլ ստորագրել տվին Միխակին ու տվին ինձ։

— Տեսա՛ր, Աննա, ասավ Միխակը նրանց գնալուց հետո։— Տեսա՛ր. որ ասում էի աղչկանդ չիլավը[3] քաշի՝ էսօրվա համար էի ասում։

— Դրուստ ես ասում, խալիֆա, շատ դրուստ ես ասում,— ասում եմ։— Բա հիմի ո՞նց անենք, որ երեխես չբռնեն, աղչիկ է, սիրտը բարակ, սրտաճաք կըլնի։

— Էլ հիմի ուշ է,—ասում է։—Էսօրվա ճառից հետո նրան չենք կարող օգնել։

Ասավ ու գնաց։

Մինչև առավոտ թե դուք իմ տանը աչք եք կպցրել— ես էլ էնպես։ Քանդած բաները սկսեցի տեղավորել ու, մինչև լուս, տունս զոռով կարգի բերի։

Առավոտը հարևաններս թափվեցին գլխիս։ Իմացել էին գիշերը տունս միլիցիա է եկել, իրար հետևից գալիս էին հարց ու փորձի— «Ի՞նչ արին, ի՞նչ չարին...»։ Դրանց հետ եկավ մի ծանոթ կնիկ, որ ապրում էր հարևանի բակում։ Դա մի կարճ, կապուտ աչքերով կնիկ էր— անունը Յուղաբեր։ Նրստում էր միշտ իրենց դարբասի դռանը— գուլպա էր գործում կամ սեմուշկա չրթում։ Քաղաքում չոփը չոփով դիպչեր՝ կիմանար։ Մեկ-մեկ էլ գալիս էր ինձ հետ զրից անում։ Դա որ իմացավ տունս խուզարկել են, Վիկտորին ման են գալի,— շատ ցավեց.— «Վո՛ւյ քոռանամ ես...»։ Հետո էլ պատմեց, որ քաղաքում մարդիկ են բռնում։ Բալշևիկություն սարքողներին։

— Վիկտորիդ, ասում է, լավ պահիր, թե չէ կբռնեն. աղ-

---

[1] Քսուր-ծրուր—մանրուքի կապոց։

[2] Գրյանքը—գրքերը։

[3] Չիլավ—սանձ։

չիկ է, ամո՛թ է բանտ տանեն։ Թե՛, ասում է, լավ տեղ չի, ես տեղ ունեմ՝ պահենք...

Էնպես մի լեզու բանեցրեց, որ ասի՝ սրտանից սրտացավ մարդ չկա։

— Չէ, ասում եմ, շնորհակալ եմ։ Վիկտորը լավ տեղ է։

— Որտե՞ղ է, ասում է, ապահո՞վ տեղ է։

Ես էլ, վա՛յ ինձ, միամիտ-կնիկ։

— Ոչինչ, ասում եմ, իրա հորքուրի մատ է։ Լավ տեղ է։ Կայսրանի կողմը։

— Հա՜, ասավ դա ու պռոշներին հուպ տվեց մի ուրիշ տեսակ։

Դա որ պռոշներին հուպ տվեց, ես ասածս փաշմանեցի, թե՝ ինչո՞ւ ասի ախր, մտածում եմ։— Սա էլ կերթա հանկարծ ուրիշի ականջը կգցի։ Բայց էլ ի՛նչ կարող էի անել։ Ասած խոսքն ու ծնված երեխան մեկ են— պիտի ճվան։

Էդպես էլ եղավ։

Երկու օր հետո Վիկտորին բանեցին հորքուրի տանը, բանեցին իրա թղթերը հետը։ Գլխիս վա՛յ տվի ու մտածում եմ, թե ո՞նց իմացան տեղը, ո՞նց իմացան։ Մտածում եմ ու գնում էդ կնկա մոտը։

— Աղջկանս բռնել են, ասում եմ,— քեզանից սավա՛յ մարդ չգիտեր նրա տեղը. չլի՞ւ ասում եմ, բերանիդ խոսք ես թոցրել։

Նա թե՝

— Չէ, ասում է, մարդու բան չեմ ասել...

Բայց տեսնում եմ կարմրում է ու աչքերը փախցնում ինձանից։ Հետո իմացա, որ դրա ախպերը քաոսի միլիցա է, դրան ղրկել են ինձանից բան դուրս քաշելու։ Իմացել է ու... Վա՛յ տվի գլխիս, ինքս ինձ նախատեցի, որ պատճառ եղա իմ աղջկա բռնվելուն։ Բայց էլ ի՛նչ կարող էի անել։ Բանը բանից անցել էր։ Հիմի մնում էր մի բան— մտածել, թե ո՞նց աննեմ, որ նրան ազատեն։

Գնացի, ամենից առաջ, բանտը, որ տեսնեմ ինչպե՞ս է։ ի՞նչ են արել։ Ասում էին, որ բռնվածներին ծեծում են։

«Աղջիկ է, ասում եմ, վախից սիրտը կպատռի, գնամ մի տեսնեմ»։

Բանտումն ասին, թե Վիկտորիա Դանելյանցը էստեղ չի. շատ կարելի է մյուս բռնավորների հետ հին դպրոցումն է։ Քանի որ բանտը լիքն էր բռնավորներով, նոր բռնվածներին տարել էին դպրոցը։

Գնացի դպրոց։

— Վիկտորիա Դանելյանցը էստե՞ղ է։

— Էստեղ է։

— Կարելի՞ է տեսնել։

— Չի՛ կարելի։

— Ես նրա մերն եմ, ասում եմ։

— Միևնույն է. թեկուզ աստված ըլես.— չի կարելի։ Պետք է էս իճչից թուղթ բերես, որ թողնենք։

Գնացի էդ ինչի մոտ։ Խնդրեցի, աղաչեցի— մի թուղթ տվեց, թե՝ Աննա Դանելյանցին թույլ տվեք իր աղջիկ Վիկտորիա Դանելյանցին տեսնի։ Թուղթը կարդացին՝ թողին։ Տարան կարիդորը, հետո Վիկտորին կանչեցին։ Բակավ դա՝ վերարկուն ուսերին գցած, կտրած մազերը թափ տալով. կարծես հե՛չ— իրան չեն բռնել, ինձ են բռնել։ Բակավ՝ պահակը հետը։ Հեռվից ինձ տեսավ թե չէ. «Մայրիկ, դո՛ւ ես», ասում է։ Էնպես է խոսում, կարծես իրենց տանն է։ Ուզեցի դրան մի լավ շշպրեմ,— պահակից քաշվեցի, բայց էլի չկարողացա ինձ պահեմ։

— Աղջի, ասում եմ,— քա էս բան է՞ր քու արածը։

— Մայրիկ, ասում է, ավել պակաս մի խոսի. ինչ որ ասելու ես, ասա առանց ավելորդ խոսքերի։

Էնպես էլ հանգիստ է խոսում որ— պատռում եմ։ Ասա՝ սկի վեչն[1] է գցում, թե բռնված եմ, վատ բան եմ արել, թե աղջիկ եմ, խայտառակվել եմ քաղաքում։ Ամենևի՛ն։

— Բա հիմի ի՞նչ անեմ, աղջի, որ քեզ ազատեն։ Ո՞ւմ խնդրեմ։

— Ոչ մի մարդու, ասում է։

---

[1] Վեչ— փուչը։

«Դժվել է էս աղջիկը, մտածում եմ,— խելքը.ե՞տ է տվել, ի՞նչ է»։

— Գնամ, ասում եմ, Միխակին խնդրեմ՝ թող մի բան անի։

— Չէ, ասում է, ոչ մի Միխակ։ Ավելի լավ է ես էստեղ մնամ տասը տարի, քան թե նրա խոսքով ազատվեմ։

— Ինչի՞, աղջի. Միխակը քեզ ի՞նչ է արել։

Թե՝ Միխակը մեր թշնամին է։ Էսպես, էսպես։ Տակից-գլխից խոսում է, պահակն էլ լսում է։ Աչքով-ունքով եմ անում, թե՝ աղջի, կապդ քաշի։ Հե՛չ։ Թե նրան ասած, թե էս պատին։ Վերջը՝

— Միևնույն է, ասում եմ, քեզ հո չեմ թողնի էստեղ մնաս. ուրիշ ծանոթ մարդ չունեմ էդ գործերի մեջ— Միխակն է, պետք է նրան խնդրվեմ։

— Չէ՛, ասում է, եթե նրա խոսքով ինձ ազատեն, ես էլի բանտը. կգամ...

Շատ էլ չէր ուզում, բայց ես բանտից դուրս եկա թե չէ՝ գնացի Միխակի մոտ։ Էսպես-էնպե՞ս։

— Վերև աստված, ներքև դու, խալիֆա. մի բան արա, աղջկանս ազատի՛ր։

Նա թե՝

— Դա իմ բանը չի. գնա կամիսարի մոտ։

Հասկացա, որ գլխիցը հեռացրեց։ Բայց ես կամիսարի մոտ չգնացի— ծանոթ չէր։ Առաջ հլա մի գնամ, ասի, էնպես մարդկանց մոտ, որ էդ գործերի՝ կոմիտեքի[1] մեջ են, կամիսարին ծանոթ են, աղջկանս էլ գիտեն։ Միխակից եղը գնացի Վիկտորի վարժապետի մոտ։ Էն, որ մեկ-մեկ պրոպագանում հետը վիճում էր։ Նա էլ թե՝

— Չեմ կարող, դա կամիսարի գործն է։

Մեկ էլ թե՝

— Քու աղջիկը էնպես բան է արել, ասում է, որ չեմ կարող միջնորդել։

— Ինչ անենք, ասում եմ, ջահելություն է, չի հասկացել։

— Չէ՛, ասում է, շատ լավ հասկանում է։ Քու աղջիկը ազ-

---

[1] կոմիտեքը — կոմիտեի

գի դավաճան է, ասում է։ Ուզում է՝ ռուս բալշևիկներին բե-րեն՝ մեր երկիրը քանդեն։

Տեսա դրանից էլ խեր չկա, գնացի տերտերի կուշտը։ Մեր թաղի կնանիքը խորհուրդ տվին, թե՝ գնա տեր-Բարսեղի մոտ։ Նա էլ էդ գործերի, կոմիտեքի մեջ էր մի ժամանակ։ Ինքն էլ մեր ծխատերն էր։ Գնացի։ Դա էլ էն պատասխանը տվեց, ինչ որ վարժապետը, թե աղչիկդ ազգի դավաճան է, ես բան չեմ կարող անել։

— Տերտեր, կարգիդ ղուրբան, տերտեր, կռանամ՝ ոտդ կհամբուրեմ, կբարձրանամ՝ ձեռդ, մի բան արա...

Դա ձեռները կապայի գրպանները դրած՝ գնում-գալիս է բալկոնում, ես նրա հետևից։ Ես խնդրում, աղաչում եմ— նա՝ չէ որ չէ...

— Գնա, ասում է, կամիսարի մոտ. թե կազատի, թող ազատի...

Փոր ու փոշման գնացի էդտեղից կամիսարի մոտ։ Մի քա-նի սենյակ անցա, նոր մտա էն մեծ դալը, ուր, տեսնեմ, կնիկ, մարդ հավաքված, աթոռներին նստած՝ սպասում են։ Ես էլ նստեցի մինչև իմ հերթը գա։ Նստեցի ու ականջս կախ՝ լսում եմ ինչ են խոսում։ Էդտեղ, նստածների մեջ կային էնպիսնե-րը, որի կա՛մ տղեն էր բռնված, կա՛մ աղչիկը, կա՛մ մարդը։ Պատմում էին, որ քաղաքում հիսուն-վաթսուն բալշևիկ են բռնել։ Որին էլ որ չեն կարացել բռնի— նրա հարը, մեխպորը կամ էնպես են բռնել։ Նրանց տներն էլ խուզարկել են իմ տան պես։ Ինչո՞ւ։ Թե մայիսի տոնի օրը նրանք իրանց վատ են պահել—հայհոյել են կառավարության մարդկանց, չեն հավանել նրանց ու նրանց գործերը։ Էսպես բանե՞ր...

Նստել եմ էդտեղ մենակ ու մտածում եմ։ Մին էլ՝ մի սև շորեր հագած կնիկ մոտենում է ինձ.

— Դո՞ւ ես Վիկտոր Դանելյանցի մերը, ասում է։

— Ես եմ։ Ի՞նչ կա։

Նայում եմ դրան— տեսնեմ լաց եղած է. աչքերը թաց են։

— Բա էսենց օղբաթ[1] կլինե՞ր, ասում է, որ քու աղչիկը բերեց իմ գլուխը։

---

[1] Օղբաթ—փորձանք։

Ու լաց է լինում։ Արցունքներն աչքերից թափվում են։ Ես բան չհասկացա։

— Ի՞նչ օղբաթ, ասում եմ։

— Աղջիկդ, ասում է, էնքան արգելված գիրք տվեց՝ Աշխենիս գլխահան արավ։ Հիմի բռնել են ու...

Ասում է ու էլի լաց լինում։ Ձեռի աղլուխով աչքերը սրբում է ու լաց լինում։

— Էդ մի աղջիկն ունեմ, ասում է,— էդ էլ էդպես։

— Այ քուր ջան, ասում եմ, ես ի՞նչ անեմ։ Ես կուզեի՞ որ էդպես լիներ։

Նա թե՝

— Չէ՛. քու աղջիկն է մեղավոր։ Իմ անմեղ երեխին գլխահան արավ, ասում է.— էնքա՛ն գիրք տվեց, ժողով կանչեց, որ փորձանքի մեջ գցեց...

Բարձր խոսում է ու լաց լինում էլի։

Էդ ժամանակ մի ուրիշ կնիկ է՛ն կողմից։

— Քու աղջիկն, ասում է, շա՛տ է մեղավոր։ Ես օձը ծակից կհաներ, էնպես լեզու ուներ։ Բոլորն էլ խարվում էին։ Գրադարանը բուն էր շինել ու սրան-նրան թալակ էր գցում։ Իմ տղան էլ նրա երեսից բռնվեց. քո աղջկա երեսից...

Դրանից հետո մոտեցավ մի կնիկ էլ, հետո մի ուրիշը։ Ջորս հինգ հոգի կանգնել են առաջիս ու բռունցքները թափ են տալիս վրաս.

— Էդ ի՛նչ մեր ես դու։

— Էդ ի՛նչ աղջիկ ես խրատել։

— Էդ ի՛նչ տեսիլք աղջիկ է։

— Հողեմ գլուխը. ջեհեմ գլուխը։

— Նրան կախելն էլ քիչ է։ Մեր երեխանցը գլխահան արավ։

Կանգնել են առաջիս, խոսում են, ձեռ են թափ տալի, հեկեկում են, լաց ըլնում։ Ես էլ առաջներին չորացել եմ, փետ դառել։ Բողում չեն մի խոսք ասեմ։ Իրանց սրտի կատաղությունը թափում են գլխիս ու թուք ու մուր տալի։

— Մենք հիմի, ասում է, կամխսարին էլ պիտի ասենք, որ քու աղջիկն է մեղավոր, որ մեր երեխանցը նա է ճամփից հանել։

էդ էլ որ ասին՝ չհամբերեցի։

— Ինչի՞, ասում եմ, ձեր երեխանց գլխին խելք չկա՞ր։ Շա՞շ են, որ նրան լսեցին, ճամփից դուրս եկան։

— Քու անզգամ աղչիկը գրավեց, ասում են,— գրավեց իրա լեզվով։

Ուզում էի պատասխանեմ, բայց մոտեցան ուրիշ կնանիք էլ և թևս բռնելով, քաշեցին մի կողմ։ Դրանք ոչ ինձ էին մեղադրում, ոչ Վիկտորիս. խղճում էին երկուսիս էլ, ու մտածում էին, թե ինչպես անեն, որ ազատեն իրենց երեխաներին էլ, Վիկտորիս էլ։

— Թող ինչ ուզում են ասեն, դու մի պատասխանի,—խրատեց դրանցից մինը։

Էսպես մի կողմից խոսում են, մի կողմից հերթով գնում են կամխարի մոտ։

Իմ հերթն էլ որ եկավ՝ մի տղա մոտեցավ թե՝

— Դու, մայրիկ, զուր մի գնա։ Քու խնդիրքը կամխարը չի լսի, միևնույն է։

— Ինչի՞, ասում եմ։

— Նրա համար որ, ասում է, քու աղչիկը հայտնի է։ Էն օրվա ճառը նրա տունը քանդեց։ Մոտը թղթեր են գտել. նա էլ չի կարող արդարանալ։

Ինչ կըլնի-կըլնի, մտածեցի, պետք է գնամ իմանամ պատճառն ի՞նչ է։ Կըխնդրվեմ, որ չարհելութիւն է արել, թող նեերի. կըխոստանամ, որ էլ էդպես բան չի անի. գուցե սիրտը գութ գա— երեխա ազատեմ։ Մտածեցի ու գնացի ներս մտա։ Սենեկի մոտ նստած էր մի չարհել տղա՝ բեղերը ոլորած, մազերը խուզած։ Առաջին՝ թանաքամաններ, թղթեր... Դա ինքը կամխարն էր. դրա կողքին էլ նստած է տերտերի աղվակատ տղան— Վաղարշակը, էն օրվա ճառ խոսողը, էլի իրա կրախմալով, բանով, ակնոցը աչքերին։ Մոտեցա դրանց ու գլուխ տվի։ Ծրկուսն էլ ոտից գլուխ նայեցին ինձ։

— Ի՞նչ կա, ասում է կամխարը։

— Ծկել եմ, պարոն կամխար, աղչկանս համար։

— Ի՞նչ աղչիկ, ո՞վ է քո աղչիկը։

— Ծրեկ բռնեցին, ասում եմ։— Տղիս կամավոր գրեցին՝

կովում մեռավ, էդ մի աղջիկն է մնացել, դրան էլ բռնեցիք, ես ի՞նչ անեմ։

— Ո՞վ է քու աղջիկը, հարցնում է։— Ազգանունն ասա։

— Գրադարանի աղջիկն է, ասում եմ,— Վիկտոր Դանելյանցը։

Դա տերտերի տղա ադվակատին նայեց. «հը՛մ» արավ ու քթի տակ ծիծաղեց։

— Նա քու աղջի՞կն է, ասում է։— Հիմի ի՞նչ ես ուզում որ,— հարցրեց փոխված ձայնով։

— Կխնդրեի, որ ազատեք։ Աղջիկ է, ասում եմ, մի բան կպատահի։ Ես եմ ու էդ աղջիկը։ Ջահել է, սխալվել է...

— Հը՛մ, ինչպես չէ, սխալվե՞լ է...

Ասում է ու ադվակատին նայում։

Ադվակատն էլ բեղի տակ ծիծաղում է իրան-իրան։

Դա որ շատ ծիծաղեց՝ ինձ չկարացի պահեմ։

— Դու խի՞ ես ծիծաղում, ասում եմ։— Միխակի հետ որդուս կամավոր գրեցիք— մեռավ, հիմի էլ սրան եք ուզում մեռցնե՞ք։

Ադվակատը գույնը գցեց, տաքացավ.

— Մեկը մյուսի հետ կապ չունի, ասում է ակնոցը քթին տմբտմբացնելով։

— Ո՞նց չունի, ասում եմ,— չէ՞ որ երկուսն էլ իմ երեխեքն են, երկուսն էլ ես եմ բերել-մեծացրել։

— Դա նշանակություն չունի, ասում է էլի ակնոցը տմբտմբացնելով։— Ոչ մի կապ չկա նրա համար, որովհետև մեկը՝ տղադ, հայրենիքը սիրում էր, գնաց նրա համար կռվելու, մյուսը, ասում է, աղջիկդ միացել է մեր հայրենիքի, Հայաստանի դավաճաններին։

Խոսեց էսպես գրափառ ու վեր կացավ։

Ես բարկացա.

— Իմ որդին, ասում եմ, առաջինը իրա կամքով չգնաց, դուք զոռով գրեցիք, ղրկեցիք։ Խոստացաք ինձ օգնել— ոչ մի կոպեկ էլ չտվիք։ Սա էլ, ասում եմ, ի՞նչ դավաճան. ջահելություն արավ՝ մի ճառ ասավ, դրա համար պետք է բռնե՞ք։

— Ի՞նչ ճառ, ասում է, մենակ ճառը չի։ Քու աղջիկը բալ-

շևիկների հետ կապ ունի, նրանցից գաղտնի փող ու թղթեր է ստացել, որ մեր տերութեանը վնասի։

— Վա՛յ քոռանամ ես,— ասում եմ,— էդպես բան չկա։ Ես նրա ձեռքին փող չեմ տեսել իրա ոռճիկից սավայիւ էն էլ ստացել՝ միշտ տվել է ինձ։ Իմ աղջիկն անմեղ է, ասում եմ, նրա վրա շատ են գցում։

Կամիսարն էնտեղից.

— Ի՞նչ շատ. բոլորն էլ քու աղջկանն են մեղադրում, որ իրենց ջահելներին գլխահան է արել։ Քու աղջիկը, ասում է, ոչ թե անմեղ է. քու աղջիկը... լի՛րբ է։

Լի՛րբ...։ Ոնց որ քարով գլխիս խփեն։ Շշմեցի։ Աչքերս շաղվեցին. գլուխս քիչ մնաց պտուտ գա։ Լի՛րբ... Իմ խեղճ աղջկան էդ էր պակաս։ Առանց երկար մտածելու, թե որտեղ եմ, ո՛ւմ հետ եմ խոսում,— տարա ու բերի.

— Լիրբը դո՛ւք եք,— ասում եմ,— ինչպե՞ս եք համարձակվում իմ անմեղ աղջկանը լիրբ ասել։

Ես որ ձենս բարձրացրի — կամիսարը զանգը տվեց։

Ներս մտավ մի գյադա։

— Դուրս տարեք սրան,— ասում է,— էստեղից։ Դուրս տարեք անզգամին...։

IV

Էդ օրվանից հանգիստ կորեցի ամեն կողմից. մնաց միայն աստվածը։ Դրա վրա էլ, որքան սպանվելուց հետո, հավատ չունեի. բայց էլի հույս էր։ Որդուս չողորմաց, մտածում եմ, իցե թե աղջկանս ողորմա։ Ամեն օր բանտ էի գնում, կերակուր էի տանում, մեկ-մեկ էլ Վիկտորիս համար փոխնորդ։ Ձեռս ու ոտս էլ բան չէր բռնում. գործից էլ զրկվեցի, գործատեղից էլ։ Ո՛վ սիրտ ուներ գնա սրա-նրա լվացքը անի։ Բայց երբ պատահում էր մեկ-մեկ գնում էի հարուստ տները լվացքի՝ ամեն տեղ հենց մի բան էին ասում, թե ի՞նչ աղջիկ ես մեծացրել, որ էդպես ազգի խայտառակիչ դուրս եկավ։ Թաքուն փողեր է ստացել, որ Հայաստանը քանդի. էլ ինչե՞ր, ինչե՞ր... Հոգի ունեմ տալու, կային հարևաններ էլ, որ խղճում էին ինձ. բայց չէին կարողանում ազատ խոսել հետս...

Քանի որ գործ չէի անում՝ ձեռիս փողը կամաց-կամաց հասնում էր։ Մի օր էլ հիշեցի, որ Վիկտորը գրադարանի ռոճիկը չի ստացել։ Ասի գնամ ստանամ. իրա համար գոնե ճաշի փող կլինի, որ մի քիչ կարգին հաց, բան տանեմ բանտ։ Մարդամեջ եմ տանում, մտածում եմ, ամոթ է։ Մտածեցի ու գնացի։

— Նա բան չունի ստանալու, ասում է կառավարիչը։

— Չէ՞ որ, ասում եմ, անցած ամսի ռոճիկը չի ստացել։ Մի՛նուչն է, ասում է, կարգադրված է չտա՛լ...

Ջուվին։ էլի սկսեցի թեթև բաներ տանել, մի օր կարտոլ, մի օր աղցան, լոբի, մի քանի անգամ էլ կաուլետ տարա։ Ինչ որ տանում էի, մեղքս ի՛նչ թաքցնեմ, կարծում էի Վիկտորի ձեռքը չի հասնում, հենց իրանք բանտի մարդիկ են ուտում։ Քանի որ աչքս չէր տեսնում— էդպես էի մտածում։ Բայց հետո իմացա, որ ինչ որ տարել եմ, տվել են իրան։

Մի օր էլ էդպես գնացի բանտ, տեսնեմ հրես մեծ բազմություն է հավաքվել բանտի առաջ։ Հավաքվել նայում են ներս, նայում են բանտի պատերին, իսկ էնտեղ փողոցում թափած են ամեն տեսակ բաներ— հաց, պանիր, կոտրած շաշկաներ, ամաններ, մսի կտորտանք։ Մի քանի զազրական կնիկ հավաքում են թափված բաները, գոգները լցնում, մնացած մարդիկ թամաշ են անում։ Ու բանտի պահակները ինչ-ինչան ասում են դրանց՝ «գնացեք, հեռացեք»— ժամ չեն գալիս։ Բանտի մեջ էլ ինչ-որ ղալմաղալ կա։ Դես նայեցի, դեն նայեցի՝ բան չհասկացա։ Նոր հարցնում եմ.

— Էս ի՞նչ բան է, ասում եմ, էս բաներն ո՞վ է թափել։

— Բանտարկյալ բալշևիկները, ասում են։

— Ինչո՞ւ են թափել։

Մինը թե՝

— Գժվել են, դրա համար։

Մի ուրիշն էլ թե՝

— Էսօր մեկին ծեծել են բանտում, դրա համար բերած ուտելիքը թափել են փողոց։ Չեն ուզում ուտել։

Ա՛յ թե ի՛նչ... Սիրտս թուլացավ հանկարծ։ Քիչ մնաց ղունչս կտրի։ Մուտքս էդ խոսողներից մեկին, մի շլապավոր մարդու։

— Դու կիմանաս, ասում եմ, պարոն.— Ո՞ւմ են ծեծել՝ բոնավորներից որի՞ն։

Հարցնում եմ, բայց սիրտս դողում է։

Շլապավորը թե՝

— Մի տղայի։

— Իսկ ես կարծում էի, ասում եմ, Վիկտորիս...

Էդ մարդը թե՝

— Աղչիկ ունես բոնվա՞ծ։

— Հա, ասում եմ, նրան էլ բոնել են բալշևիկության համար, բայց անմեղ է աստծու գառի պես։

— Ի՞նչ է աղչկադ անունը,— հարցնում է։

— Վիկտոր Դանելյանց, ասում եմ.— Գրադարանի աղջիկը։

Էդ մարդը երեսը շուռ տվեց հանկարծ։

— Նա՞ է անմեղ, ասում է.— Որ անմեղը նա՛ է, բա մեղավորն ո՞վ է։ Նրան ծեծը, ասում է, քիչ է։

Էստեղ ես էլ չհամբերեցի— մի ոտս ետ դրի, մինն առաջ։

— Դու ո՞վ ես, հողեմ գլուխդ, որ էդպես դուրս ես տալիս քեզ ու քեզ...

Որ չսկսեցի էսպես, էդ մարդը թողեց ու հայդա՛։ Ինքն էլ շլապով մարդ էր։

Քիչ հետո երբ հանգստացա, ճաշն ուզեցի տանեմ ներս։ Չընդունեցին։

— Ինչո՞ւ, ասում եմ պահակին, ինչո՞ւ չեք ընդունում։

— Կարգադրված է՝ չընդունել։

— Պատճա՞ռը։

— Էդ քու իմանալու բանը չի, պառավ, ասում է։

Էդ պահակների մեջ կար մի ղարսեցի տղա— մեծ-մեծ աչքերով, ճակատը ճղված ու կարված։ Ինձ հետ լավ էր. միշտ «մայրիկ» կասեր. խղճում էր. ինչ որ ասեի— կօգներ։ Բայց էդ րոպեին նա էդտեղ չէր։

Էդ ժամանակ երբ խոսում էի պահակի հետ, բոնավորներն սկսեցին երգել։ Ինչպես են երգում, որ բանտը թնդում է։ Երգում են բալշևիկների երգը, էն որ ամեն տեղ երգում են հիմի— «Ինտերնացիոլը»։ Ու ամենից բարձր լսվում է Վիկտորի ձենը՝ զի՛լ, զանգակի պես։ Երգում են բոլոր սենյակնե-

րում, երգում են ձենձենի տված։ Բանտի ծառայողները, պահակներն անհանգիստ գնում են գալիս, ուզում են մտնեն ներս, ուզում են արգելել երգելը, բայց նրանք՝ հե՞չ։ Վախից՝ սիրտս ջուր է դառել։ Ասում եմ՝ հրես բոլորին կկոտորեն, կսպանեն... Բայց նրանք՝ սկի՜։ Երգո՜ւմ են, ու բոլորից բարձր Վիկտորը։ Տեր աստված, սա տանը չէր երգում, մտածում եմ,— էստեղ սրան ի՞նչ է պատահել... Մին էլ, ասում եմ, գուցե նա չի՝, ուրիշ է։ Բայց չէ՜. տեսնում եմ, որ նա է։ Վերջապես ես իմ աղջկա ձենը ճանաչում եմ։ Երգում են էսպես բոլոր սենյակներում, երգում են իրար ուժ տված, ու ամենից բարձր էլի Վիկտորի ձենն է գալիս։

Մի քիչ որ լսեցի, արտասուքս եկավ, ինձ չկարացի պահեմ.

— Ջա՛ն, ջա՛ն, ասում եմ, Վիկտոր ջան։ Ես քո զանգակ ձենին մեռնեմ...

Բանտի պահակներից մեծը բարկացավ.

— Դու ո՞վ ես որ, ասում է, էդպես խոսում ես։

Ու կասկածով, զարմանքով նայում է ինձ։

— Ես, ասում եմ, Վիկտոր Դանելյանցի մերն եմ։ Էն որ երգում է՝ իմ աղջիկն է։

Ասում եմ, որ սիրտը գութ գցեմ։ Բայց նա, տեսնում եմ, չէ՜— դրանից ավելի բարկացավ.

— Դե՛, հեռացիր, ասում է, քե չէ...։

Էդ ժամանակ իմ ծանոթ ղարսեցի տղան եկավ։ Մոտեցավ ու կամաց.

— Մայրիկ, գնա՛, ասում է, անհարմար ժամանակ է։

Մեծի բարկությունը տեսնելով՝ գնացի։ Էդ ղարսեցի տղան ինձ ճամփու դրեց մինչև դուռը։

— Էգուց բեր, ասում է, էսօր խառնված օր է։

Իսկ ես դեռ չեմ հանգստանում։

— Վիկտորիս հո չե՞ն ծեծել, ասում եմ։

— Չէ, ասում է, հանգիստ կաց. օրիորդին ծեծելու իրավունք չկա։ Միայն քե հաց չեն ուզում ուտել։

— Ո՜նց քե. սոված պիտի մնա՞ն, ասում եմ։

Ասում եմ ու մտածում—գժվե՞լ են դրանք, ի՞նչ է. մարդ էլ տված հացը չուտի՞։

— Բա սոված պիտի մեռնե՞ն, հարցնում եմ։

— Չեն մեռնի, ասում է,— հանգիստ կաց։

— Թողեք, ասում եմ,— ես իմ աղչկանը համոզեմ, որ հաց ուտի. ջահել է, արածը չի հասկանում։

— Չէ, ասում է,— չես կարող համոզել. միևնույն է; նա առանց ընկերների չի ուտի։

— Գուցե ձեր հացը չեն ուզում, ասում եմ,— իմ հացը տվեք, իմ հացը կուտեն։

— Չէ՛, ասում է, միևնույն է, չեն ուտի։ Ձենք էլ կարող տալ, նրանք պետք է մեր հացը ուտեն...

Ու բացատրեց ինձ, որ նրանք ոչ թե չեն ուզում հաց ուտել, այլ դրանով, ասում է, բողոքո՛ւմ են։

Ես բան չհասկացա. ի՞նչպես թե հաց չեն ուզում ուտել. սոված մնում են, թե բողոքո՛ւմ ենք։ Ա՛յ քեզ անխելքներ...

«Բողոքո՛ւմ ենք»։ Խո՞սք են գտել...

Տուն եկա. ո՛չ հաց է կուլ գնում, ո՛չ ջուր։ Երեխաս էնտեղ սոված— ես հաց ուտե՞մ։ Որ մտածում եմ— գլխիս կրակ է մաղվում։ Ծունկս ծեծում եմ ու ինքս ինձ. «կուրանամ ես, կուրանամ»...

Ու էդ օրը՝ գիշերը մինչև լույս, թե դուք իմ տանը քնել եք, էնպես էլ ես... էդ օրն էլ Միխակի կնկա՝ Լիզինկի տոնն էր։ Սազանդարներ։ Հրավիրված մարդիկ։ Ուտում են, խմում, երգում։ Թախտիս վրա կուչ եկած՝ լսում եմ նրանց ձենը, թե ո՛նց են կենաց ասում։ Ամեն կենացից հետո սազանդարները ածում են ու երգում։ Էսպես մինչև գիշերվա կեսը... Իսկ գիշերվա կեսից հետո— աթոռները, սեղանները գոգոլով դես ու դեն քաշեցին ու սկսեցին պարե՛լ։ Ո՞նց են թխկթխկացնում հատակը, ո՞նց են պարում— քիչ է մնում օճորքը[1] փուլ գա... Լեկուրի՞[2] են պարում թե՞ լեզգինկա — չեմ իմանում։ Բայց էնպես են պարում, ոնց որ դիվահար...

Պարեցին մինչև լուս. ու լուսը բացվեց թե չէ— դուրս եկան բալկոնը։ Հիմի էլ էստեղ են ածո՛ւմ ու պարո՛ւմ... էն-

---

[1] Օճորք — առաստաղ։

[2] Լեկուրի — պարեղանակ։

պես որ՝ դարդը մի կողմից, էդ ղալմաղալը մի— չքողին աչքս կպչի։

Առավոտը բացվեց Թե չէ, նորից պատրաստություն տեսա Վիկտորին ճաշ տանելու։ Ասի՝ երեկվա եփածս հնացած է. նոր ձու եփեցի, կաթ տաքացրի ու տարա։

Էլի՝ չի կարելի։ Էլի՝ բռնավորները, ասում է, հաց չեն ուզում ուտել։ Ես էլ Թե՝ թողեք, ասում եմ, ախպեր, իմ աղջկանը համոզեմ— ուտի։

Չէ որ չէ...

Երեք օր էսպես հաց չընդունեցին։ Բայց երեք օրն էլ քանի գնում էի, լսում էի ոնց են երգում դրանք։ Երգում են ձևնձենի տված, երգում են բոլոր սենյակներում, երգում են էնպես, բանտը թնդում է։ Ու երգողների մեջ, ամենից զիլ լըսվում է էլի Վիկտորի ձենը, որ զնգում է զանդակի պես...

Ինչ երկարացնեմ— մի օր էլ, երբ հաց տարա բանտ, հայտնեցին Թե՝ էգուց էլ հաց, կերակուր չբերես։

— Ինչո՞ւ։

Թե՝ բռնավորներին տանում են Երևան։

— Ինչո՞ւ։

— Էդ քու իմանալու բանը չի, ասում է ծառայողը, էն ղարսեցի տղան։— Միայն էսքանն իմացի, որ էլ չբերես... Ես էլ որ ասում եմ՝ մեծ բան է։ Ուրիշներին, ասում է, ես էլ չեմ ասում։ Խեղճ կնիկ ես, դրա համար։

Ես մատս կծեցի։ Տեսա որ էստեղ մի բան կա։ Շատ էի լսել, որ բռնավորներին թաքուն տանում են սպանում, հետո կերակուրը ընդունում, մթամբ Թե՝ էստեղ է... էդ օրերին էլ ուենկին՝ Մոսկա էին ասում— էգպես տարա՞ն. նոր մի շաբաթ հետո իմացանք, որ սպանել են։— Ուզում էր փոխչի, դրա համար, ասում են։

Մի խոսքով՝ էդ որ լսեցի. սիրտս ահ ընկավ։ Բայց տեսա, որ էդ մարդը խղճում է ինձ։ Ու հարցրի, Թե ե՞րբ են տանելու։

— Էլ, ասում է, ավելի բան չեմ կարա ասի։ Էսքանն էլ որ ասի, շնորհակալ եղի՛ր։

— Շնորհակալ եմ, ասում եմ, բայց, Թե արևդ սիրես, ասա մի իմանամ։

— Չէ՞, ասում է, չե՛մ կարող։ Ուզում ես ինձ պաշտոնից դուրս անե՞ն, բանտարկե՞ն...

— Ոչի՛նչ էլ չեն անի, ասում եմ.— վերև աստված, ներքև՝ ես ու դու։ Մեր խոսածը մարդ չի իմանա։ Ասա՛— ի՞նչ ժամանակ են տանելու. ցերե՞կը, գիշե՞րը, ժամը քանիսի՞ն...

Շատ որ խնդրվեցի, աղաչեցի, խղճաց էդ ղարսեցի տղան (աստված երկար կյանք տա նրան և աջողություն. ինչ գործ էլ բռնի— բարին առաջի, չոր քարին էլ որ գնա— կանաչի)։ Տեսավ՝ արտասուքը աչքերիս լաց եմ ըլնում— խղճաց։

— Էս գիշեր, ասում է, ժամը 12-ին։ Բայց իմացած եղիր, ասում է, մարդու բան չասես, թե չէ վատ կլինի...

— Խելառակվել չեմ, ասում եմ։— Դու հանգիստ կաց։

Էդ օրը, մինչև մութ իրիկուն, ոնց որ ինձ կրակը դնես— էրվում եմ։ Սկսել եմ տուն ու Վիկտորի համար պաշար եմ պատրաստում։ Ճամփա է գնո՞ւմ, մտածում եմ, պետք է հետը մի բան դնել. գիտեմ, Վիկտորի բնավորությունը էնպես է, որ շատ պաշար չի սիրում, բայց, ասում եմ, ոչի՛նչ, ընկերների հետ կուտի։ Գուցե ճամփին մի քանի օր մնաց, ո՞վ նրան հաց կտա... Ջու եմ եփում, հավ եմ եփում. պանիր առա, լոշի մեջ դրի։

Եփեցի, հավաքեցի, դրանց հետ էլ մի քանի փոխնորդ, մի դերիա— կապոց արի ու դեռ ժամը ութը չեղած՝ գնացի կայարան։ Ասի՝ շուտ գնամ, ով է իմանում, մաքերը փոխեն գուցե և շուտ տանեն։ Տանը սպասելու փոխարեն, ավելի լավ է էնտեղ սպասեմ։ Տանը հո նստել չեմ կարում։ Թվում է՝ Վիկտորին տանում են, էլ չեմ տեսնելու— սիրտս անհանգիստ է էնպես, այ կրակվի իմ սիրտը։ Հարազատ աղջիկս են տանում, մտածում եմ, միակ աղջիկս են տանում օտար տղերանց հետ... Աղջիկ պահես-մեծացնես— էն էլ էսպե՞ս...

Որ մտածում եմ— ուղեղս ժաժ է ընկնում։ Մի շունչ էլ չկա մոտս, որ սիրտս տա, մխիթարի — հանգստանամ մի քիչ։ Էնպես եմ, որ սիրտս ուզում է բերանովս դուրս գա։

Կապոցը ձեռիս ճամփա եմ ընկել ու գնում եմ, ոտներս զոռով եմ փոխում— էնպես թույլ եմ։ Մութն է, ցեխ. աստղ

էլ չկա երկնքում։ Ցայտոնները[1] գնում են շփշփալով ու ցեխը թափում վրաս։ Տանից մինչև կայարան՝ աշխարքի տեղ է. մինչև հասա՝ իմն էլ ինձ հասավ։ Գնացի կապոցը ձեռիս նըստեցի ծառերի տակ։ Էդտեղ էլ՝ շատ ճամփորդներ՝ կնանիք, մարդիկ իրանց կապոցների վրա նստել՝ գնացքի են սպասում. դրանց հետ էլ երեխեք— մինը լաց է ըլում, մինը քնել է, մի ուրիշը բլբլում է մոր հետ։ Էստեղ-էնտեղ ուրախ խոսում-ծիծաղում են։ Սիրտս դանակ խրես՝ արին չի կաթի։ Նստել եմ մենակ ու մտքիս հետևից ընկած՝ սպասում եմ։ Մին էլ մի տղամարդ մոտեցավ ինձ՝

— Քույրիկ, ո՞ւր ես գնում։

— Տեղ չեմ գնում, ասում եմ։— Աղջկաս տանում են, ետևել եմ ճամփու դնեմ։

Նա ինձ՝ ո՞ւր են տանում, ո՞վ է տանում։

— Կառավարությունը, ասում եմ։— Բռնել է, տանում է Երևան։

— *Ինչի՞ համար է բռնել։*

— *Բալշևիկության համար։*

Էդ մարդը կանգնեց, «հը՛մ» արավ ու՝ «բա կիմողնե՞ն, ասում է, դու նրա հետ խոսե՞ս»։

— Ինչի՞ չեն թողնի, ասում եմ։— Նրա մերն եմ, հո օտար չեմ. միակ աղջիկս է, տանում են ու, էլ ով սաղ մնա, ով ապրի— չե՞ն թողնի իրար երես տեսնենք, վերջին անգամ երկու խոսք ասենք իրար։

Էդ մարդը շվարած գլուխը թափ տվեց ու գնաց։ Դա գնաց մին էլ, ըզը՛, զինվորները հավաքված ժողովրդին քշում են. «*Հեռո՛ւ, հեռո՛ւ*... *Ի՞նչ է։ Տեսնում հրես բռնավորներ են բերում. չորս կողմից զինվորներ՝ հրացաններով, բանով։*

Սիրտս կուչ եկավ. ծնկներս դողացին։— Ուրեմն Վիկտորիս տանում են, Վիկտորս սրանց մեջ է։ Շշմածի պես եմ, բրազի մեջ։ Զինվորները ժողովրդին հետու են քշում, ես մոտենում եմ տեսնեմ Վիկտորս դրանց մե՞ջ է, թե՞ չէ։ Մտիկ եմ անում, մտիկ եմ անում— բան չեմ տեսնում. զինվորներն էնպես են շրջապատել, որ դրանք չեն երևում։ Գիշերն էլ, ոնց

---

[1] Ցայտոն—ձյունաքար։

որ ասի՝ մութ է. աստղ չկա երկնքում. աչքերս էլ, արցունքից քաղված, լավ չեն ջոկում. տեսնում եմ գլուխներ, ուսեր. բայց Վիկտորին չեմ ջոկում։ Ջրլի՞, ասում եմ, նրան թողել են. խըղճացել են, որ աղջիկ է, տղերանց պես չի կարելի չարչարել, ու չեն բերել։

Դրանց տարան գնացքը կանգնելու տեղը։

Ես էլ, կապոցը ձեռիս, դրանց հետևից։ Ուզում էի մոտենամ, մին էլ տեսնեմ՝ դրանք մութի մեջ, զինվորներով շրջապատված, էդ կես գիշերին սկսեցին իրենց երգը— «Ինտերնացիոնալը»։

Սկսեցին ու ո՜նց են երգում, ամա՜ն, ո՜նց են երգում...

Ժողովուրդը հավաքվեց. դուրս թափվեցին մարդիկ զալերից, դուրս թափվեցին կայարանի տներից, բուտկաներից. հավաքվեցին ճաղերի մոտ, ծառերի տակ ու թամաշ են անում, թե էս ի՞նչ բան է էս կես գիշերին... Դրանք սկսեցին թե չէ— ես էլի Վիկտորիս ձենը ջոկեցի, որ բոլորի ձենից բարձր էր— զի՛լ, զանգակի պես... Հենց որ երեխիս ձենը լսեցի՝ էլի չկարացի ինձ պահեմ, ինչպես էն անգամ՝ բանտի բակում։

— Ջա՛ն, ջա՛ն, Վիկտոր ջան,— ասում եմ, ես քու ձենին մատաղ...

Ու ուզում եմ մոտենալ, բայց ո՞վ կըթողնի։

Երկու ոտ փոխեցի թե չէ, զինվորը՝

— Հետո՛ւ, հետո՛ւ, չի կարելի...

— Ա՛յ «չի կարելին» ընկնի փորդ, ասում եմ մտքումս ու հիմի էլ ուզում եմ մեկել կողմից առաջ գնալ։ Էստեղ էլ մի ուրիշը. «Չի կարելի»։ Ասում եմ՝ իմ աղջիկը դրանց մեջ է, բան եմ տալիս։

— Չի՛ կարելի, չի՛ կարելի...

Ու էնպես մի բոթեց, որ քիչ մնաց ընկնեի մեջքիս վրա։

Իսկ նրանք՝ բոնավորները երգում են իրանց երգը. երգում են գժվածի պես, երգում են ձեն-ձենի տված, երգում են կարծես զինվորների չգրու, երգում են բարձր։ Բոլորի մեջ էլի ջոկում եմ Վիկտորիս ձենը, բոլորի մեջ էլի նրա ձենն է էստեղ բարձր... Ուզեցի ձեն տամ, իմացնեմ, որ ես եկել եմ, էստեղ եմ, բայց, հակառակի պես, գնացքը հանկարծ շվացրեց մոտիկ ու եկավ շըխշըխկոցով։ Մարդիկ իրար գլխով դիպան.

բեռները, կապոցները հավաքում են, պատրաստ կենան, որ գնացքը կանգնի թե չէ — վագոնները մտնեն։ Մի կողմից վազում են, մի կողմից կանչում են իրար, բիլեթ են գոռում։ Իսկ նրանք՝ բռնավորները երգում են ձեն-ձենի տված։

Էլ էդտեղ, էդ ղալմաղալի մեջ, իմ ձենը կը լսվե՞ր որ...

Երբ գնացքը կանգնեց, դրանց բոլորին շրջապատած տարան պարավոզի կողքի վագոնը, էն որ լուսամուտները,— տեսած կլինեք,— երկաթած են բանտի պես։

Դրանց տարան, ես էլ կապոցը ձեռիս, նրանց հետևից։

Մարդիկ ղժվժում են, վագոններն են մտնում, դուրս էն գալիս։ Անցնել չի ըլնում։ Բոթում են դես, բոթում են դեն — չեն թողնում մի դրանց հասնեմ։ Վերջը, աչքս զինվորների խշտիկների[1] վրա, որ նրանց չկորցնեմ, գնացի մի կերպ, գընացի հասա էնտեղ, որ վերջին բռնավորներին վագոն են նստեցնում, նրա հետևից էլ զինվորները՝ հրացանները ձեռներին, հրացանների ծերքին խշտիկներ։

Էս որ տեսա՝ սիրտս մի ուրիշ տեռակ եղավ։

«Ո՛նց թե, ասում եմ, էնպես պիտի տանեն, որ վերջին անգամ իմ երեխին չտեսնե՞մ։ Չէ՛, ինչ էլ ըլի, ասում եմ, պետք է նրա հետ խոսեմ, թեկուզ, էդ խշտիկներից մինը սիրտս խրեն, թեկուզ, մինչև անգամ, գնացքի տակը գցեն»...

Մտածեցի էսպես ու, վագոնի դեմը կանգնած, ձեն տվի.

— Վիկտո՛ր, Վիկտո՛ր ջան...

Լավ էր զինվորները չհասկացան ո՛ւմ եմ գոռում — ձեռ չտվին։ Իսկ Վիկտորը, ի՛նչպես եղավ, չգիտեմ, ձենս լսեց, ու վագոնի լուսամուտից՝

— Մայրիկ, ասում է, դո՞ւ ես։ Մնաս բարով։

— Ես եմ, Վիկտոր ջան. քեզ համար պաշար ու փոխնորդ եմ բերել։

Ասում եմ ու ձեռիս կապոցը բարձրացնում։

Խոսքի կեսը դեռ բերանումս, բանտի մարդկանցից մինը մոտեցավ, թևս բռնեց ու բոթում է.

— Բռնավորի հետ խոսել չի կարելի,— ասում է։— Հեռացեք, հեռացեք...

Էն կողմից մյուսները ու նրանց մեծը.

---

[1] Խշտիկ — սվին։

— Հեռացրո՛ւ, հեռացրա՛ւ, ասում են։— Չի կարելի։

— Ինչո՞ւ չի կարելի, ասում եմ։— Իմ աղչկանը ո՞ւր եք տանում, անաստվածներ։ Իմ աղչիկը բալշևիկ չէ, իմ աղչիկը...

Ասում եմ, գոռում ու էլի առաջ եմ ուզում գնալ։

Չեն թողնում։

Իսկ Վիկտորը վագոնից.

— Մայրիկ, ասում է, հանգիստ կաց։ Էդ լրբերի հետ մի խոսի։ Ես բալշևիկ եմ, թող ինչ ուզում են անեն։

Էնտեղից մյուս տղերքը՝ Վիկտորի ընկերները.

— Մայրիկ, գնա տուն, մայրիկ, հանգիստ կաց...

Հեշտ է ասել՝ «հանգիստ կաց»։ Սիրտս կրակ է քնկել, նրանք—«հանգիստ կաց»։ Գոռում եմ ու ուզում եմ առաջ գնամ։ Ժողովուրդն էլ հավաքվել-կիտվել է ձենիս վրա։ Մարդիկ՝ գլուխները վագոններից հանել, մտիկ են անում, ու ով դիտե, մտածում են՝ «էս ինչ ղարաչի կնիկ է»։ Բայց ինձ համար հեչ։ Մահն աչքիս տակն եմ առել. էլ մարդ, մադաթ չեմ հարցնում— գոռում եմ, որ թողնեն...

Բայց ինչ արի— էլ չկարացի առաջ գնամ։ Վրա երեք զանգը տվին։ Մարդիկ էլի իրար գլխով դիպան։ Գնացքը շարժվեց։ Մին էլ Վիկտորը ձեն տվեց.

— Մնա՛ս բարով, մայրիկ։

Ու հենց գնացքը շարժվեց, նրանք՝ Վիկտորն ու ընկերները, երգեցին էլի իրանց երգը։

Էլ չկարացի համբերեմ, վազում եմ գնացքի հետևից ու ձեն տալի.

— Վիկտո՛ր, Վիկտո՛ր...

Գնացքը գնում է՝ ես վազում եմ, գնացքը գնում է՝ ես վազում եմ...

Էլ չիմացա ինչ պատահեց դրանից հետո։ Ուշքս զարթնեցի— կայարանումն եմ. բուֆետ պահոցի սենյակում։ Զարթնեցի ու ի՞նչ տեսնեմ— վրաս, գլուխս թաց։ Բուֆետի աղչիկը, սպիտակ ֆարտուկ[1] հագին, մի չրի աման ձեռին, կանգնել է կողքիս ու ձեռը մազերիս է քսում։

---

[1] Ֆարտուկ—գոգնոց։

— Ո՞նց ես հիմի, մորքուր, հարցնում է, լա՞վ ես։

Նոր իմանամ, որ գնացքի հետևից վազելիս՝ ուշս գնում է։ Մառայողները տեսնում են, վերցնում են, բերում բուֆետ պահողի սենյակը, կանչում են կայարանի բժշկին, ինձ ուշքի են բերում, դեղ են տալիս՝ քնում եմ։

Էս բոլորը էդ աղջիկը պատմեց։

Քիչ հետո ինձ բերող տղերքը եկան ինձ տեսնելու։ Կակարդով, բանով, երկաթուղու շորեր հագած տղեք էին։ Երկու հոգի։

— Ո՞նց ես, մայրիկ, ասում են։

Ու շատ զարմանում են, որ ես շարժվող գնացքի հետևից վազել եմ։

— Բա կնիկն էդպես սիրտ կունենա՞, ասում են։— Պոեզդի[1] հետևից ես ընկել ու «Վիկտոր» ես կանչում։ Վիկտորը քու ի՞նչն է, հարցնում են։

— Իմ աղջիկը։

— Մենք էդպես էլ գիտեինք, ասում են։ Մի՞այն մերը կարող է էդպես սիրտ ունենալ։

Հետո պարզվեց, որ դրանք իմ Վիկտորին ճանաչում են։

— Վիկտորը մեր ընկերն է, ասում են, մայրիկ։ Դու մի վախի, հանգիստ կաց։ Վերջը ամեն բան լավ կլինի...

Սիրտ տվին, արևներն ապրի, էդ տղերքը։ չայ բերին՝ գցովի, խմացրին, վերջն էլ՝ ֆայտոն նստեցրին, թե՝ «գնա»... էդտեղ ֆայտոն նստելու ժամանակ, դրանցից մինն ականջիս ընկավ, թե՝

— Մայրիկ, եթե բանի կարիք ունենաս, արի մեզ ասա, առանց քաշվելու։ Դու մեր մեջն ես, հնչ ամաչիլ միա։ Վիկտորը մեր ընկերը, մեր քույրն է... Կգաս, ասում է, կհարցնես ինձ։ Իմ անունն էլ, ասում է, Պետրե է...

Էդ խոսքերը սրտիս սին տվին։

«Փառք քեզ, աստված, ասում եմ, դեռ լավ մարդիկ կան աշխարհի երեսին»։

Էդ ժամանակ տեսա, որ պաշարի կապոցը չկա։ Կորել էր։

---

[1] Պոեզ—поезд-ի մասին է, որ նշանակում է՝ գնացք։

Հավը, ձուն, հացը— գլուխը քարը. Վիկտորիս շորերն էլ հետն էր կորել...

Ֆայտոնով որ ինձ տեսան հարևանները՝ կանգնել, զարմացած մտիկ են տալիս, թե էս լվացարար Աննեն ի՛նչ սումի տեր է, որ ֆայտոն է նստել։ Էս էլ պետք է ասեմ, որ կյանքումս, մինչև էդ, երկու անգամ էի ֆայտոն նստել։ Մի անգամ, երբ Միխակի կնիկը— Լիզենկեն հիվանդ է՛ր— ղրկեցին ֆայտոն բերեմ— է՛դ ժամանակ։ Էդ էլ ո՞նց ելավ։ Գնացի ֆայտոն կանչեցի. ֆայտոնչին ասում է՝ «Դե նստի, գնա՛նք»։ Մեկ է՛դ, մեկ էլ աղջիկ ժամանակս եմ նստե՛լ...

Էդպես՝ հարևանները զարմացան ինձ ֆայտոնի վրա տեսնելով, իսկ մեր տանտեր Միխակի կնիկը— Լիզենկեն, բալկոնում կանգնած՝ նայեց ինձ, նայեց ու քթի տակ ծիծաղեց.

— Էնքան զարգացել ես, ասում է, հիմի էլ ֆայտոնով ես մանե գալիս։

Ձեն չհանեցի։ Բայց նրա ծաղրը սրտիս դիպավ դանակի պես։ Իմ օրին, ասում եմ, սրա ծաղրին։ Ու բան չեմ խոսում։

— Քեզ հետ եմ, աղջի, Աննա, ասում է, դևսը մտիկ արա՛։

Գլուխս չբարձրացրի։ Սիրտ չունեմ։

Իսկ նա վերևից, նորից.

— Դևսը մտիկ արա, բան եմ ասում։

— Ի՞նչ վա, հարցնում եմ։

Թե՝ արի, ասում է, հատակները լվա։

— Է՛հ, ասում եմ, իմ սրտին, քո դարդին։ Հատակ լվանալու սիրտ չունեմ, ասում եմ։

— Հը, ի՞նչ է պատահել քու սրտին։

— Է՛հ, ասում եմ,— Վիկտորիս տարան Երևան։

Ի՞նչ ասի, որ լավ լինի.

— Շատ էլ լավ արին, ասում է, աչքն էլ հանեցին ազգի դավաճանի։ Դրա համար էլ, ասում է, դու տխրո՞ւմ ես։ Արի, արի՝ հատակները լվա...

Քիչ առաջ ծաղրեց՝ մի դանակ խրեց սիրտս։ Էս էլ՝ մի նոր դանակ։ Էնպես եղա որ— տաք ու սառը քրտինք տվի, էնպես եղա որ— ցավս մոռացա, կատաղեցի.

— Ինչի՞, ասում եմ.— ես մեր չե՞մ. ես սիրտ չունե՞մ, որ իմ զավակի համար ցավի՞։ Շունը որ շուն է, ասում եմ, նա

էլ է դարդ անում իր զավակի համար։ Հիմի դու ինձ շնից էլ վատ ես համարո՞ւմ... Չէ, ասում եմ, ես հատակ լվանալու սիրտ չունեմ...

Ասի ու մտա տուն։

Նա մնաց հետևիցս նայելով։

Ու էդ օրվանից խռովեց ինձանից։ Էլ բանի չէր կանչում։ Մի գաղթական կնիկ էր գտել, նրան էր բանեցնում։ Դա էլ լվացք աննել չգիտեր. շորերն էնպես էր մզում՝ պատռում էր, էնքան լեղակ էր գցում շորերին, ոնց որ կապուտ ներկես։

V

Երևան տանելուց հետո՝ երկու-երեք շաբաթ անցավ՝ վիկտորից նամակ չկար։ Ես էլ— անհանգիստ կնիկ— ինձ ուտում եմ. գիշերները չեմ կարում քնեմ։ Ամեն օր նամակ բերողին հարցնում եմ. «Աննա Դանելյանց, նամակ չկա՞»։ «Չէ՛»։ Ու խնդրում եմ, որ եթե նամակ լինի ու եթե տանը չլինեմ— լուսամուտի կոտրած տեղով գցի ներս։ Չէի ուզում իմ նամակը բանը Լիզինկի կամ նրա աղջկերանց ձեռն ընկներ։ Խռով էինք. նրանք ինձ հետ չէին խոսում, ես՝ նրանց։ Էսպես մի ամիս էլ անցավ՝ նամակ չեկավ։ Հազար ու մի բան եմ մտածում— տեսնես ի՞նչ պատահեց, տարան երեխիս գլուխը կերա՞ծ, ի՞նչ եղավ։ Մարդ էլ չկար սրտացավ, որ սիրտս բանամ, հետը խոսեմ։ Ում հետ էլ խոսում էի՝ իմ աղջկանն էր վատ դուրս բերում։ Մենակ Պետրեն էր, որ սիրտ էր տալիս ինձ։ «Նամակ չլինելը, ասում էր, ոչինչ. ես հաստատ գիտեմ, որ տեղ են հասել ու բոլորն էլ լավ են»։

Մի երկու անգամ գնացի նրա մոտ— միշտ էսպե՛ս խոսքեր։ Ու ամեն անգամ էլ քանի՛ գնում էի մոտը, կհարցներ.

— Մայրիկ, եթե կարիք ունես, մի քաշվիր, ասա. ես քո որդին, դու իմ մերը...

Ես ամաչում էի. շատ էլ կարիք ունեի, բայց քաշվում էի։

«Ինչքան չըլի՝ օտար տղա է, մտածում եմ,— ես նրանից ո՞նց փող վերցնեմ»։

Անցավ մի ամիս մի շաբաթ— նոր մի կտոր նամակ ե-

կավ. — «Մայրիկ, ես լավ եմ. բարևում եմ»: Հետո թե՝ «ղոչաղ կաց, իմ մասին մի մտածի, Վիկտոր Դանելյանց»:

Էդպես էլ գրում է՝ մի մտածի...

Ամբողջ օրը ուշք ու միտքս իր վրա է, իսկ նա՝ մի մտածի...Դրանից հետո մի նամակ էլ եկավ, էլի էդպես կարճ՝

«Ես լավ եմ, դու հանգիստ կաց, իմ մասին մի մտածի»...

Էսպես, հինգ թե վեց ամիս էր, հոկտեմբերն արդեն անցել էր, նոյեմբերն եկել, ես հանգիստ չեմ կարում նստեմ, ամեն տեղ կարծես ինձ հուշտ են անում, թե էս ի՞նչ մեր է, որ աղջկա մասին չի մտածում: «Էս էլ մի բան չի, ասում եմ ինձ ու ինձ,— մի աղջիկ ունենամ էս աշխարհում, էն էլ— լանտում ու հինգ-վեց ամիս երեսը չտեսնե՞մ: Էլ ի՞նչ մեր եմ ես» մտածում եմ:

Մտածեցի, մտածեցի— մի օր էլ վեր կացա գնացի Պետրեի մոտ: Էսպես-էսպես:

— Ուզում եմ գնամ Երևան, Պետրե ջան,— ասում եմ,— Վիկտորիս տեսնեմ:

Պետրեն թե՝ ոչինչ չկա, զուր մի գնա: Ես տեղեկություն ունեմ, որ ընկեր Վիկտորը լավ է:

— Չէ, ասում եմ, պետք է գնամ իմ աչքով տեսնեմ:

— Իսկ փող, ճամփի ծախս ունե՞ս, հարցնում է:

— Չէ, ասում եմ, մի կարպետ ունեմ. կծախեմ—կերթամ:

Պետրեն մտածեց:

— Դե որ էդպես է, ասում է,— որ հաստատ որոշել ես գնալ, է՛լ զուր ծախս մի անի, ես քեզ կուղարկեմ իմ մոր տեղը: Ես իրավունք ունեմ, ասում է, որ իմ մերը գնացքով ձրի գնա-գա:

— Է՛հ, շնորհակալ եմ, ասում եմ, որդի, աստված մուրազդ կատարի:

— Ոչինչ, մայրիկ ջան, դա իմ պարտքն է: Ընկեր Վիկտորին ես շատ եմ պարտական: Բայց հիմի, ասում է, դու է՛ս ասա— Երևան որ գնաս՝ ո՞րտեղ կամ ո՞ւմ տանը պիտի իջնես:

Ես էդ մասին չէի մտածել: Դրուստ, ասում եմ, էս որ ուզում եմ գնամ՝ ո՞րտեղ կամ ո՞ւմ տունը պիտի մնամ: Փողոցում հո չե՞մ կարա տպրեմ: Ամաո էլ չի, թե ասես՝ մի պատի

տակ կուչ կգամ — կանցնի։ Բայց համարյա թե ձմեռ էր։ Նոյեմբերը։ Մեր սարերումն արդեն ձյուն էր եկել։

— Ես էլ չգիտեմ, ասում եմ, Պետրե ջան, ո՛ւմ տանը կարող եմ գնամ. ոչ ծանոթ ունեմ, ոչ բարեկամ։ Առաջին անգամն է, որ Երևան եմ գնում։ Առաջին անգամն է, որ գնացք եմ նստում։

Ճիշտ որ— մինչև էդ ես մեր քաղաքից դուրս չէի եկած։ Մի քանի անգամ ոտով գնացել էի Սարիգեղ՝ ուխտի։ Էդքան։ Մինչև էդ՝ գնացք էլ չէի նստած։ Պատահել էր— դաշնիկեն-ի գալու ժամանակ— ո՛ւմ լվացքն անում էի— գնում էի՝ նրանց ճամփու գցում. ապրանքները, կապոցները վագոն էի դնում. բայց տեղ գնամ— չէ՛։

Էս որ Պետրեն լսեց— նորից մտածեց.

— Ոչինչ, ասում է, անհոգ կաց։ Ես քեզ մի ծանոթ կանդրխտորի հետ կուղարկեմ. նրան էլ կասեմ, որ տանի քեզ իմ լավ ընկեր Արտուշի տունը, որ հենց կայարանի մոտ է։ Նամակ էլ կտամ, ասում է, որ քեզ լավ մտիկ անեն։

Արևն ապրի. էդպես էլ արավ։

Մինչև գնալս ես էլի պաշար պատրաստեցի— նորից հավ, ձու, եփեցի, մի երկու կտոր լավ ոչխարի պանիր առա (Վիկտորը էդ պանիրը շատ էր սիրում), հավաքեցի Վիկտորի մնացած փոխնորդները, մի հին դերիա, ֆուֆայկեն, գուլպաները, ձմեռվա ձեռնոցները. էդ բոլորը մի կապոց արի, հացն ու ուտելիքը՝ մի։ Ինքս էլ մի քանի բան հագա իրար վրա, որ ճամփին չմրսեմ, հետո շալս վեր կալա ու գնացի կայարան։

Հա. գնալուց առաջ դեռ մի բարձրացա Միխակի տուն։ Մարդ ենք, մոտածում եմ, մահկանացու, հետու տեղ եմ գնում, ո՞վ է իմանում ետ գամ, ետ չգամ, գնամ մնաս բարով ասեմ սրանց, նոր ճամփա ընկնեմ։ Հա՛մ էլ խնդրեմ, որ տանս հրա աչք ունենան։ Շատ էլ կողպեքով փակել եմ, բայց ո՞վ է իմանում....

Մին ասի՝ չգնամ, բայց մտածեցի, որ լավ չի, հենց իրենք կրթշնամանան... Վերջապես իրանց տրնկեղն եմ, պետք է հայտնեմ ո՞ւր եմ գնում.. Գնացի։ Մութն էր. էսպես ութը կըլներ իրիկվա։ Մարդ ու կնիկ, այսինքն՝ Միխակն ու իրա կնիկը— Լիզինկեն— տանն էին։ Լամպը վառվում էր սեղանի

վրա, իրանք էլ նստած մուրաբով շայ էին խմում։ Մարդը, իր սովորութքի պես, յախա-յախեն բաց (հացի, շայի ժամանակը Միխակը միշտ կրախմալը վերցնում էր— «նեղում է»— ասում էր), կնիկն էլ՝ քիշմիրի շալը ուսերին։ Իսկ աղջկերքը՝ Անիչկեն ու Սոնիչկեն, սենյակի մի ծայրում հագնվում էին. իրար շորեր էին դզում։ Օ՜, էդ աղջկերքը։ Ջե՜ի սիրում ես դրանց։ Ալուրը քսում էին երեսները, պուդրները ներկում ու— հայդա փողո՛ց, բուլվա՛ր, կայարա՛ն։ Ամբողջ օրը զվիրն էին տալիս... էդ օրն էլ էդպես քավել էին, որ գնան։ Ամբողջ օրը դրանք տանը կռվում էին իրար հետ, մոր հետ, բայց հենց փողոց էին դուրս գալիս թե չէ՝ «Անիչկա ջա՛ն, Սոնիչկա ջա՛ն»... ես մի անգետ կին եմ. ուրիշ բաներ չեմ հասկանում, բայց աղջկերանց, կանանց բանը շատ լավ եմ հասկանում...

Մտա թե չէ՝ էդ Անիչկեն ու Սոնիչկեն իրար նայեցին ու ծիծաղեցին։

— Եկա՛վ, ասում են։

Քանի ամիս էր, ինչպես ասի, դրանց տունը չէի գնում։ Էս անգամ որ մտա, կարծեցին ճարահատյալ եմ, մի բան խնդրելու եմ եկել։ Նրանք ծիծաղեցին— ես տերը չեղա։ Կապոցը դրի դռան մոտ, ոտներս հանեցի, շալը թևիս, խալիչի վրով առաջ գնացի, մոտեցա սեղանին ու՝ «բարրիկուն ձեզ» ասի։ Գլուխ տվի։

Կնիկը՝ Լիզինկեն երեսը շուռ տվեց, իսկ ինքը՝ Միխակը հոնքերը հավաքեց, ծանր-ծանր մտիկ արավ ինձ ու, ոնց որ, խոսքերը քալփաթինով[1] քաշես.

— Բարով։ Ի՞նչ կա։

— Ոչինչ, խալփա, ասում եմ, սաղություն։ Ես էսօր գնում եմ Երևան, կխնդրեի որ...

Խոսքի կեսը դեռ բերանումս՝ կնիկը— Լիզինկեն ետ դառավ, աթոռը գոռացնելով։

— Ի՞նչ կխնդրեի՛ր, ասում է,— փո՞ղ, ճանապարհածա՞խս։ Նեղ տեղը որ ընկնում ես, մեզ հիշո՞ւմ ես, հա... Դու

---

[1] Քալփաթին—ունելի։

մեզանից բան մի խնդրիլ... Ո՛ւմ գործն անում ես— գնա նրանից խնդրիր։ Էսքան էլ որ քեզ պահում ենք, հերի՛ք է։ Հիմի էլ՝ եկել ես՝ «Երևա՞ն եմ գնում»։ Ո՛նց չէ, ասում է. կալասկա լծեմ, պաշար կապեմ, որ տանես քու լիրբ աղչկան...

Խոսում է, խոսո՛ւմ. էլ չի թողնում մի խոսք ասեմ. կարկուտի պես վրա է տալիս— Հա՛յ դու չուզեցիր իմ բանը անել. հա՛յ լվացքս ընկավ գաղթականի ձեռը ու քու երեսից փչացավ։

Նա խոսում է— աղչկերքը ծիծաղում են, նա խոսում է— աղչկերքը կչկչում են։

Ինչքան մաղձ ուներ թափեց գլխիս.

— Երևան ես գնո՛ւմ։ Արի՛, արի՛ զուքեմ-զարդարեմ քեզ, անաղուհաց քրդի շուն...

Մինչև էդ նա խոսում էր, ես լռում էի։ Ասում եմ՝ տեսնենք ի՞նչ է ուզում սաւ։ Դիտեմ սիրտը էրվել է. թող խոսի։ Բայց որ տարավ ու բերեց թե՝ «անաղուհաց քրդի շուն»,— էլ չհամբերեցի։ Մի ոտս ետ դրի, մյուսը առաջ, աչքերս խփեցի, բերանս բաց արի։

— Տո քրդի շուն էլ ես, հայի շուն էլ։ Քու ո՛չ փողն է ինձ հարկավոր, ոչ պաշարը։ Ես ձեզանից, ասում եմ, փող ու պաշար ուզելու չեմ եկել, ձեր փողն էլ ձեզ լինի, ձեր պաշարն էլ։ Ես եկա, ասում եմ, ոչ բարով ձեզ մնաս բարով ասելու ու ոչ թե փող ուզելու...

Ասում եմ ու էլ մարդ, Միխակ չեմ հարցնում։ Էնպես եմ բարկացել, որ գլխիս ղափաղը ժաժ է գալիս։

Ես խոսում եմ— աղչկերքը ծիծաղում են, ես խոսում եմ՝ աղչկերքը կչկչում են։

Շատ որ ծիծաղեցին— ետ գարձա հիմի էլ դրանց.

— Դուք ինչի՞ եք ծիծաղում, ասում եմ.— Մինը պիտի ձեզ վրա ծիծաղի, թթված պառավներ, որ քաղաքում մարդ չեք թողել— ամեն օր կայարան եք վազում՝ նոր մարդ գլտնեք, ուսերը թռչեք...

Դրանց որ շշպրեցի՝ փուշները թողին, ձեննները կտրեցին։ Իսկ Միխակը կարմրեց, տաքացավ, հանկարծ ձեռը սեղանին խփեց ու կանգնեց.

— Լռի՛ր, ասում է,— մի համարձակվիր իմ տանն էդպես լեզու բանեցնել, թե չէ էս րոպեին քեզ բռնել կտամ։

— Ինչո՞ւ համար, հարցնում եմ։

— Քո էդ խոսքերի համար։

— Բա ինչո՞ւ, ասում եմ, քու կնկանը բռնել չես տալի, երբ նա ավելի վատ խոսքեր է ասում։

— Չե՛նդ կտրի, ասում է։

Էնտեղից կնիկը, աղչկերքը՝

— Պապա, դուրս արա դրան, խելագար է։ Աղչկանը բըռնելու օրից խելագարվել է։

— Խելագարը դուք եք, ասում եմ, հողեմ ձեր պլուխը, անխիղճ անամոթներ։

Ասի, ոտներս հագա, կապոցը վերցրի ու դուրս։ Սիրտս բեթևացավ կարծես։ Մինչև անգամ ուրախ եմ, որ էդ խոսքերն ասի։

Դրա համար էր, ասում եմ, խեղճ աղչիկս ասում, թե հարուստները խիղճ չունին. նրանք լավ են, երբ քեզանից օգտվում են, երբ իրանց համար բան ես անում, երբ խոնարհ ես։ Դրո՛ւստ որ։ էդպես էլ եղավ։ Ու լավ էր, որ էդպես եղավ։ Աչքերս բացվեցին։

Դուրս եկա— տանս մի կողպեք էլ ավելացրի ու գնացի կայարան։ Էնտեղ հասա, որ Պետրեն վերարկուն հագին, մի ֆանտո ձեռին ինձ է փնտրում հավաքված խալխի մեջ։ Ինձ որ տեսավ.

— Էս ինչի՞ ուշացար, մայրիկ։

— Ոչինչ, բան պատահեց, ասում եմ։

Ու էլ չասի թե ի՛նչ։

Գնացինք ուղիղ վագոն մտանք։

Պետրեն ծանոթացրեց ինձ կանդըխտորի հետ։

— Սա իմ երկրորդ մայրիկն է, ասավ.— պետք է տանես Երևան։ Առաջին անգամն է գնում, ասում է,— էնպես արա, որ չտխրի։

Կանդըխտորը սև երկար տղա էր, շվին վզիցը կախած։ Միծաղեց Պետրեի խոսքի վրա։

— Հանգիստ կաց, ասում է, որ պոեզը չտանի— ես ինքս

կշալակեմ։ Էսքան մարդ տանում եմ, բա մի մայրիկ չեմ կարող տանե՞լ։

Պետրեն ԹԵ՝

— Գիտեմ կտանես, բայց լավ տանես։ Ու երբ Երևան հասնես, մայրիկին կտանես ուղիղ Արտուշի տուն։ Մենակ չթողնես, Երևանին անծանոթ է։

Կանդրխտորը ԹԵ՝ լավ։

Երեք անգամ զանգը տվին— գնացքը շարժվեց։ Բայց էնքան մարդ կա վագոնում— շունչս կտրվում է։ Լուսամուտները փակ, ժողովուրդը շատ։ Մեծ մասը զինվոր է ու կամավոր։ Գնում են Ղարս։ Ղարսի կռվի էն վատ ժամանակն էր։ Դրանք գնում են ու խոսում— կռվի մասին, թանկության մասին, էդ ժամանակվա փողի— բոների— մասին։ Բոլորն էլ գանգատվում են, թե էսքան էլ կռիվ կլինի. վեց, օխտը տարի է՝ աչք չենք թափում. վրանները շոր չկա, տներումը՝ հաց, էլի՝ կռիվ... Խոսում են էսպես ու ծխում։ Պապիրոսի ծխից շունչս կտրվում է, աչքերս մղկտում են, բայց բան չեմ խոսում։ Ի՞նչ ասեմ։ Մտածում եմ, որ խեղճ մարդիկ են, տնից-տեղից կըտրրված, ո՛րը կնիկն է թողել տանը, ո՛րը ով գիտի, մանր երեխեք, հեր, մեր. դրա համար, դարդից՝ պապիրոս են քաշում։ Քաշում են՝ դարդները մոռանան։ Հետո կրակի բերան են գնում, թոփի, սրի առաջ— էլ սիրտ կզորի էդպես մարդկանց բան ասե՞լ։ Ո՞ւմ հարցնում եմ՝ «Տղա ջան, ո՞ւր ես գնում».— «Կռիվ»... «Ղարս...»։

— Կուրանամ ես, ասում եմ. կուրանա ձեր մերը...

Դրանց նայում եմ՝ Երվանդիս հիշում...

Էսպես գնում ենք, կանդրխտորի անունը Սեդրակ էր — գնում-գալիս է, սրան-նրան «տոմա» է հարցնում ու գալիս կողքիս նստում.

— Մայրիկ, ո՞նց ես, պոյեզը հավանո՞ւմ ես...

Հանաքներ է անում, որ շատ չմտածեմ, չտխրեմ։ Լավ տղա էր— ասո՛ղ, խոսող։ Առավոտը որ լուսացավ— պաչարի կապոցը բաց արի, երկու ձու տվի, հավի մի բուդ՝ լոշի հետ։

— Կե՛ր, ասում եմ, Սեդրակ ջան, դու ինձ որդու համ տվիր։

Միծաղեց։

— Բա որ Երևան տանեմ, ասում է, ինչ պիտի նվիրես...։

Չինովորները, կամավորները Ալեքսանդրապոլումը իջան, մենք գնացինք։

Մի ամբողջ օր էլ գնացինք— նոր կեսգիշերին հասանք Երևան։ Էն ժամանակ էլ գնացքները լավ չէին բանում։ Ասում էին՝ նավթ չկա. ճամփեն էլ խանգարված էր։ Դրա համար երկու օրում զոռով տեղ հասանք։ Երևանի կայարանը մութն էր— ճրագ, կրակ չկար. մենակ զալումն էր լույս վառվում, էն էլ պեծի պես։ Մարդիկ իջան, վագոնները դատարկվեցին, պրծան, նոր կանդրխտոր Սեդրակը ինձ տարավ Արտուշի տուն։

Էդ Արտուշն էլ ճամփի ծառայող էր. ապրում էր հենց էդ-տեղ՝ կայարանին մոտիկ, կազոննի[1] տան մեջ։ Կնիկը ռուս էր, երկու էլ երեխա ուներ՝ շեկ մազերով, չալ աչքերով։ Որ իմացան Պետրեն է ղրկել ինձ— լավ ընդունեցին, պատվեցին, շնորհակալ եմ։

Գիշերը քնեցի, առավոտը վեր կացա, տեսնեմ, էդ ռուս կնիկը սամավար է քցել ու մի էնպես սեղան է բաց արել որ— մաքուր ձուն։ Տնարար կնիկ էր. քիչ ու միչ էլ հայերեն գիտեր։ Ջարթնեցի, ուզեցի վեր կենամ.— չի՛ թողնում։

— Չէ՛, ասում է, բաբուշկա, քնի նիչեվո. հոգնած ես։

Ես, իհարկե, չքնեցի։ Քնելու համար եմ եկե՞լ։ Ոտիս տակին կրակ է վառվում. ասում եմ՝ շուտ անեմ, գնամ Վիկտորիս տեսնեմ։ Մինչև վեր կացա, հագնվեցի— Արտուշը եկավ։ Գցովի չայ տվին, մխլով[2] արին, մուրաբա հանեցին։ Չայի վրա բոլոր հանգամանքը պատմեցի Արտուշին ու վերջն էլ՝

— Արտուշ ջան, ասում եմ, հիմի ո՞նց անենք. ես ուզում եմ գնամ Վիկտորիս տեսնեմ։

— Դա հեշտ է, ասում է։ Կասենք հեռվից ես եկել, կխընդրենք կթողնեն։

Չայից հետո վեր կացանք գնացինք։ Կապոցը Արտուշը վերցրեց ու առաջ ընկավ. ես էլ շալս առա՝ նրա հետևից։

---

[1] *կազոննի — պետական։*

[2] *Մխլով — թուլ ձվածեղ։*

Գնացինք հասանք բանտ։ Խնդրեցինք, որ ուզում ենք բրոնավոր տեսնենք։ Ասին՝ կարելի է։ Հարցրին ո՞ւմ եք ուզում տեսնել։ Ասի իմ աղջկան, Վիկտորիա Դանելյանցին։ Բանտի պետավո՞րն էր, ինչ— կանչեց ծառայողներից մեկին, թե՝ Վիկտորիա Դանելյանցին բերեք։ Ինձ էլ Արտուշի հետ տարան մի ուրիշ սենյակ, որ հետը խոսեմ։ Քիչ հետո հեռվի կարիդորից լսեցի թե ինչպես կանչեցին «Վիկտորիա Դանելյանց»։ Վախի՞ց թե ինչից, էլ չգիտեմ, սիրտս էնպես է թպրտում, ոնց որ բռնած ծիտ։ Ինչ հալի պիտի տեսնեմ Վիկտորիս, մտածում եմ, տեսնես առո՞ղջ է, հագին շո՞ր կա՞։

Էսպես մտածում եմ, մեկ էլ տեսնեմ մի աղջիկ՝ տղամարդու պինջակ հագած, եկավ երկաթների էն կողմը կանգնեց։ Ջճանաչեցի ո՛վ է. երեսին գույն չկար. վիզը բարակել, տանձի կոթ էր դառել. միայն աչքերն էին երեսին պսպղում, մեկ էլ կտրած մազերն էին ուսերից հետ։ Նկավ նայեց ինձ, ես՝ նրան։ Ինչպես երևում է՝ նա էլ ինձ չճանաչեց. չէր սպասում, թե եկած կլինեմ Երևան։

Նոր դա.

— Մայրի՛կ, ասում է, դո՞ւ ես։

Սիրտս թուլացավ։ Վեց ամիս էր ձենը չէի լսել։

— Ես եմ, Վիկտոր ջան...

Ասի, ու էլ չկարացի ինձ պահեմ,— լաց եղա։

— Դե լավ, ասում է.— լաց լինելու չես եկել։ Ասա՛ մի տեսնեմ ինչո՞ւ ես եկել, ի՞նչ կա։

— Քեզ տեսնելու, Վիկտոր ջան։

— Էհ, ասում է, դրա համար էլ ծախս ես արել, հասել էստե՞ղ։

Խոսեցինք էսպես-էնպես, ու ես հարցնում եմ.

— Բա ե՞րբ պիտի ազատվես, Վիկտոր ջան. ե՞րբ պիտի գաս տուն։

— Շուտով, ասում է, մայրիկ, շուտով բոլորս էլ կազատվենք։

Ասում է ու նայում պահակի կողմը, որ կանգնած՝ լսում է մեզ։

Ես ուրախացա։

— Ո՞նց, ասում եմ, ուրեմն գործը քննե՞լ են։



— Ո՞վ պիտի մեր գործը քննի, ասում է։

— Մենք կազատվենք առանց քննիչի էլ։ Մեր ընկերները կգան շուտով, կազատեն։

Դա որ էսպես սկսեց— պահակն էն կողմից, թե՝

— էդ մասին չի կարելի, գործի մասին խոսեցեք, օրիորդ։ Խոսեցինք մի քիչ էլ, ես «մնաս բարով» արի՝ դուրս եկա, որ էքսի օրը ճամփա ընկնեմ։ Բայց տուն հասա թե չէ՝ լուր եկավ, որ Թուրքերն Ալեքսանդրապոլը գրավել են, ճամփեն փակվել է։

Ա՛յ քեզ խայտառակություն։ Ի՞նչ անեմ հիմի...

Էլ ճար չկար։ Պետք է մնայի։

Ու մնացի Երևան, Արտուշի տանը։

Մտածում եմ. «Սա ի՞նչ վատ բան եղավ. եկա էս խեղճ մարդկանց տանը բեռ դառա»։ Բայց Արտուշը թե՝

— Ոչինչ, մայրիկ, մի մտածի, մեր մերն ես. քաշվիլ մի... Մի կտոր հաց կգտնենք...

Կնիկն էլ մի կողմից.

— Նիշեվո, բաբուշկա, եիշեվո...

Էսպես անցավ մի քանի օր։ Դարդ եմ անում, տեսնես կազատվի՞ Վիկտորը, կամ ե՞րբ կազատվի. իսկ Արտուշը ինձ սիրտ էր տալիս, թե շա՛տ չի քաշի. շուտո՛վ, շուտո՛վ։

Մի օր էլ դա եկավ թե՝ մայրիկ, վեր կաց գնանք բանտ։

— Ի՞նչ կա, Արտուշ ջան։

— Մեր ընկերները էսօր բանտից դուրս են գալիս։ Վիկտորն էլ դրանց հետ։

— Ո՞նց թե, զարմանում եմ։

— Բա, ասում է, կառավարությունը փոխվեց։ Իշխանությունը հիմի մեր ձեռքին է...

Նոր իմանամ, որ էդ Արտուշն էլ բալշևիկ է, Պետերի ընկերը։

Գնացինք։ Էն ինչ որ ես տեսա — պատմիլ չի լինի։ Ի՞նչ ուրախություն էր։ Հասանք էնտեղ, որ մարդիկ հավաքվել-կիտվել են բանտի դռանը։ Դրոշակներո՛վ, բանո՛վ։ Ու մեկը դրանց միջից մի քարի վրա բարձրացած ճառ է ասում բանտից դուրս եկածներին.

— Ընկերներ, դուք տանջվեցիք շատ, բայց...

Դա խոսում է, ես՝ աչքերս չորս արած, Վիկտորին եմ ման գալիս։

Բայց էդքան մարդու մեջ Վիկտոր կգտնվի՞։ Դես նայեցի, դեն նայեցի— չկա։ Մին էլ— երբ խոսողը վերջացրեց— նրա տեղը բարձրացավ Վիկտորը՝ էլի տղամարդու պինջակը հագին, կտրած մազերը բաց՝ ուսերին կախ։ Վեր կացավ ու՝

— Կատարվեց, ասում է, էն ինչ որ մենք սպասում էինք...

Դա խոսում է— ես լաց եմ լինում, դա խոսում է— ես լաց եմ լինում։ Էս անգամ ուրիշ տեսակ։

Լաց եմ լինում ուրախությունից...

Դա որ խոսեց պրծավ— ես, ժողովրդի միջով, զոռով մոտեցա դրան ու թևը բռնեցի.

— Վիկտո՛ր։

— Վա՛յ, մայրիկ, ասում է։

— Ես եմ, Վիկտոր ջան։

Բռնեցինք իրար, համբուրվեցինք, ու ես լաց եմ լինում։ Ախտասուքս չի կտրում։

Լաց եմ լինում էլի ուրախությունից...

Դրանից հետո ամիս ու կես մնացի Երևանում՝ Վիկտորի մոտ։ Մնացի, քանի որ ճամփեն փակ էր. թուրքերը նստած էին Ալեքսանդրապոլում։ Էդ ամիս ու կեսը ինձ համար շատ դժվար անցավ։ Ես քաղաքին անծանոթ, բոլոր ժամանակ էլ մտածում եմ՝ տեսնես տունս ի՞նչ եղավ, ի՞նչ պատահեց։ Թալանեցի՞ն, կտրեցի՞ն։ Մտածում եմ ու սիրտս չի հանգըստանում։ Վիկտորի հետ ճաշարան էի գնում, գալի տուն։ Նա գնում էր գործի, ժողով— ես մնում էի տանը ու մտածում էլի տանս մասին։ Թալանեցի՞ն, կտրեցի՞ն։ Ու սպասում եմ ճամփեն բացվի— գնամ։

Մի օր էլ— դա հունվարի մեջն էր— իմացանք մի գնացք է գնում Թիֆլիս։ Կամիսարի գնացք է։ Վիկտորը դես ընկավ, դեն ընկավ, սրան խնդրեց, նրան խնդրեց—գնացքում տեղ տվին ինձ։ Նստեցի եկա մեր քաղաքը։ Ձմեռվա էն թունդ ժամանակն է։ Հունվարը։ Ցուրտը քրի պես կտրում է։ Վագոնում սառչում էինք։ Հասա մեր կայարանը— Պետրեն պատահեց։

— Բարո՛վ, մայրիկ, բարո՛վ։

— Բարին արևիդ, Պետրե ջան։

— Ի՞նչպես գնացիր. ընկեր Վիկտորն ի՞նչպես է։

Հարց ու փորձ ամեն բանից։

Ասի՝ լավ գնացի, Վիկտորս էլ շա՛տ բարով է անում։ Ու ճիշտ որ... Նա ասել էր, որ բարև անեմ Պետրեին և շնորհակալություն հայտնեմ իրա կողմից։ Հետո տեսնեմ դրա դոշին մի կարմիր կտոր։

— Դու էլ բալշևի՞կ ես, Պետրե ջան։

Թե՝ հա՛. ինձ ընկեր Վիկտորն է բալշևիկ գրել։

Ա՛յ թե հա, մտածում եմ։ Հիմի հասկացա, թե ինչո՛ւ է նա հարգում Վիկտորին ու նրա հետ էլ ինձ։ Դա տեսավ տուն եմ գալիս, ձեռիս էլ բան կա— ֆայտոն կանչեց էլի, նստացրեց։

Ֆայտոն նստած գալիս եմ տուն ու մտածում եմ, թե տեսնես ինչպե՞ս է տունս— անվնա՞ս է, բան է պատահե՞լ.— Ծակ տուն։ Հարևաններս էն անգամվա պես սկի չզարմացան ինձ ֆայտոնով տեսնելիս։ Միխակի կնիկը— Լիզինկեն էդ ժամանակ բակի դռանն էր։ Ինձ որ տեսավ— ուրախացավ։

— Աղջի, Աննա՛։ Վերջապե՛ս եկար, ասում է։— Մենք էլ մտածում ենք, թե ի՞նչ պատահեց խեղճ կնկան. տեղ հասա՞վ, հիվանդացա՞վ։

Ես բան չխոսե՛ցի։

Նա էլի.

— Աչքներս ջուր կտրեց։ Վախենում էինք թե մի բան պատահած ըլնի։ Ու հրավիրում է իրա տուն չայի։

— Արի, ասում է, արի, հոգնած, մրսած կլինես։ արի՝ չայ խմի, սամավարը գեռ տաք է։

Բակը մտա, Միխակը պատահեց՝ բալկոնում կանգնած.

— Աղջի, Աննա, դո՞ւ ես, հարցնում է.— ես էլ ասում եմ՝ էս կնիկը ի՞նչ եղավ։

Ու սա էլ մի կողմից է հրավիրում չայի։

— Արի, ասում է, մրսած կլինես։ Արի՛։

Ես բան չեմ խոսում։ Սուս ու փուս կապոցը ձեռիս գնում եմ դեպի պադվալը— իմ սենյակը։

Իսկ նա՝

— Քեզ չեմ ասում, աղջի, արի՛ չայ խմի։

Շատ որ ասին— մարդը չոկ, կնիկը չոկ.

— Շնորհակալ եմ,— ասի՝ ու մտա պատվալի բալկոնը։ Մտա ի՞նչ տեսնեմ — իմ դռան վրա ուրիշ կողպեք...

Ոնց որ կացնով գլխիս տան։ Ծնկներս թուլացան, մնացի սառած կանգնած. սառ ու տաք քրտինք եկավ վրաս։ Սիրտս ոնց որ մզես։

«Ուրեմն տունս կտրել են, մտածում եմ, դրա համար սրանք ինձ վերև են կանչում, որ սիրտս առնեն»։

— Էս ի՞նչ բան է, ասում եմ, էն ո՞ւմ կողպեքն է։

Լիզինկեն թե.

— Մերն է... Արի վերև, բանալիքը մեզ մոտ է։

— Ի՞նչ է պատահել, ասում եմ, տունս կաթե՞լ են, ի՞նչ է։

Թե՝ չէ, արի վերև՝ կպատմեմ։

— Էլ ի՞նչ գամ, ասում եմ,— բանալիքը տվեք, տեսնեմ ի՞նչ օղրաթ է ձեկել գլուխս։

— Ոչ մի օղրաթ էլ չկա, ասում է։ Հանգիստ կաց. մենք էստեղ Բշնամի չենք, որ թողնենք քո տունը թալանեն։

Քաղցր խոսում է ու էլի հրավիրում չայ խմելու։

— Դու դեռ արի չայ խմի, ես ամեն բան կբացատրեմ։

Մարդը— Միխակն էլ մի կողմից։

Շատ որ ստիպեցին — գնացի։ Մարդ ենք, մահկանացու, մտածում եմ, խռով մնալն էլ մի բան չի։ Թող իրանց արածի համար իրանք ամաչեն։ Ամիս ու կես առաջ շան լափը թափեցին գլխիս, տանից համարյա դուրս արին— հիմի ի՛նչ է պատահել, մտածում եմ, որ էսպես հրավիրում են, ուզում են պատվել։

Քարը գոգիցս վեր ածի— գնացի։

Մտա դրանց սենյակը թե չէ— զարմանքից մնացի կանգնած։ Տունը ոնց որ կլպած. ոչ հատակին խալիչա կա, ոչ լուսամուտին վարագույր, ոչ սեղանին երես։

Բուֆետի շկաֆը դատարկ է, աթոռների մեծ մասը չկա, պիվանի խալիչեն ու նախշած բարձերը չկան։ Դիվանի վրա մի կարպետ է հասարակ։ Մի խոսքով՝ տունը կարծես պլոկած-թալանած։ Իրանք էլ հին շորեր են հագել-կանգնել։

Աղջկերքը եկան ներսի սենյակից։

— Բարով, Աննա, ասում են։— Երևանը հավանեցի՞ր։

— Կա էլի, քաղաք է իր համար։

Տեսնեմ դրանք էլ են հին հագնված։ Էլ առաջվանը չեն։ Շախները կոտրած է։ Չէ, մտածում եմ, էստեղ մի բան կա։ Կամ մի ցավ է պատահել սրանց, կամ բալշևիկները սրանց ապրանքը տարե՞լ են։

— Էս ի՞նչ բան է, ասում եմ, էս ձեր ապրանքը ո՞ւր է։

Լիզինկեն թե՝

— Պադվալումն է։

Ես մատս կծեցի։ Բալշևիկներից վախեցել են, մտածում եմ։ Չէ՞ որ խոսում են, թե բալշևիկները գրավում են։ Էդ ո՞ր մտածեցի՝ սիրտս էլի ահ ընկավ։

— Բա իմ կողպեքը խի՞ է փոխված։

Լիզինկեն թե՝

— Էդ ոչինչ... մենք ենք փոխել, որ պինդ լինի։

Տե՞ր աստված... Բան չեմ հասկանում։ Մարդիկ էսքան սրտացավ են եղել, իսկ ես կասկածում էի։

Սամավարը տաք էր. մի բաժակ չայ խմեցի՝ խաթրներից չլնելու համար, ու ասում եմ.

— Դե, բանալիքը տվեք, գնամ տեսնեմ տունս ինչ հալի է. մուկը հիմի շորերս կտրել է։

Լիզինկեն թե՝

— Վախիլ մի. մենք էնտեղ կատու ենք գցել։

Տե՞ր աստված...

— Կատու եք գցե՞լ, ասում եմ։— Բա որ ամաններս չարդի՞, բաց դրված են։

— Չի չարդի, ասում է, մենք տեղավորել ենք։

— Որտե՞ղ։

— Պահարանում։

— Ի՞նչ պահարան, ասում եմ։— Ես պահարան չունեմ։

— Մեր պահարանում, ասում է։

Ես զարմացա, ու նորից մատս կծեցի։

— Ձեր պահարանը իմ սենյակում ի՞նչ գործ ունի։

Միխակը թե՝

— Մենք ենք դրել։

Էդ ժամանակ նայեցի՝ տեսնեմ դրանց պահարանի մինն

էլ չկա սենյակում։ Իսկ Թե ինչո՛ւ են իմ տունը դրել— չհասկացա։

— Բայց ինչո՞ւ համար եք դրել, ասում եմ։

Լիզինկեն Թե՝

— Ոչինչ. կարող է պատահել, ասում է, ուրիշները տանեին— բանեցնեին. ասինք՝ ավելի լավ է մեր Աննան, մեր խեղճը բանեցնի։

Էնտեղից աղչիկները՝

— Պահարանի հետ ուրիշ բաներ էլ կան, Աննա, ասում են, դու կբանեցնես։

Իսկ հերը— Միխակն իրա կողմից.

— Իհարկե, ասում է, ավելի լավ է մեր Աննան բանեցնի։ Ես, շշմածի պես, մնացել եմ կանգնած։

— Բայց ինչո՞ւ համար եք դրել, ասում եմ։— Հլա մի բանալիքը տվեք, գնամ տեսնեմ ի՛նչ եք արել։

— Գնանք, ասում է Լիզինկեն,— կողպեքը սեկրետնի է, դու չես կարող բաց անել։

Գնացինք։ Դա դուռը բաց արավ— ի՛նչ տեսնեմ։— Իմ տունն է, բայց իմ տան նման չի. իրենց բուֆետի պահարանը դրել են աջ պատի մոտ, մեջը լցրել իրենց ամաններով։ Իրենց խալիչաներից մինը՝ ծալած գցել են իմ թախտին, մյուսը երկար փռել են հատակին. կատուն էլ— իրենց սպիտակ կատուն— պոչը .ժաժ տալով, մռմռալով էդ խալիչի վրովը գնո՛ւմ է, գալիս... Հետո՝ պատերի տակին աթոռներ են շարել. մի կլոր սեղան՝ իրա երեսով՝ դրել են սենյակի մեջտեղը, իսկ իմ հացի սեղանի վրա դարսել են իրենց բոլոր վարտգուլրները...

Տունս էնպես են արել— չեմ ճանաչում... Հա, պատերին էլ մի քանի պատկեր են կախել ոսկեվարաղ ռամկեֆի[1] մեջ... Մի խոսքով՝ տունս շինել են թավադի[2] տուն։ Սպիտակ սամավարն էլ մի կողմ են բազմեցրել. մի մեծ սունդուկ էլ դրել են փեչի կողքին։ Ուզեցի բաց անեմ— փակ էր։

— Սա ի՛նչ բան է, ասում եմ,— է՛ս սնդուկը։

---

[1] Рамка — շրջանակ։

[2] Թավադ — ազնվական։

— Էդ էլ մեր շորերն է, ասում է Լիզինկեն։— Սրանք կբանացնես, Աննա ջան, սա էլ կմնա էստեղ։ Քու աղջիկը բալշևիկ է։ Իմանան բալշևիկի մայր ես, քեզ բան չեն ասի...

Ես, իհարկե, ամեն ինչ հասկացա։

— Շնորհակալ եմ, ասում եմ, ձեր պատվից, իմ ունեցածն ինձ հերիք է։ Ձեր ապրանքն, ասում եմ, ոնց բերել եք, էնպես էլ տարեք։

Դրանք՝ մարդը—Միխակը ու Լիզինկեն կանգնել են թե՝—

— Թող մի քիչ մնա, Աննա ջան...Դու բանեցրու...

Իսկ ես— չէ՛։— Ինձ հարկավոր չի, ասում եմ։ Տարեք. չեմ ուզում իմ հալալին հարամ խառնվի։

Դրանք էլի խնդրեցին. ես՝ չէ որ չէ՛...

Ու սկսեցի դրանց ապրանքը մեկ-մեկ դուրս տանել։

Էդ որ տեսան, իրանք— հեր, մեր, աղչկերք— եկան իրանց ապրանքը տարան։

Ուրիշ ժամանակ ոչ մեկն էլ մի բանի ձեռք չէր տա։ Հիմի տեսնեիր— չորս ճանկանի էին դառել. կնիկը մարդուց էր ժրացել, մարդը՝ կնկանից, աղչկերքը— երկուսից էլ։ Կրում էն ու նեղացած փնթփնթում.

«Մեր ապրանքը քեզ չէր ուտի», «ի՛նչդ պիտի վնասվեր»...

Էսպես-էնպես։ Իսկ ես— բան չեմ խոսում։

Կրեցին— նոր իմ տունը մաքրեցի՝ նստեցի։

... Մնաց մի երկու ամիս— Վիկտորս գրեց թե՝ արի Երեվան։ Ունեցած-չունեցածս հավաքեցի, մի քանի բան ծախեցի, եկա աղչկանս մոտ։

Հիմի, էս երկու տարի է Երևան եմ։ Աղջիկս աշխատում է՝ ինձ պահում։ Ազատվել եմ սրա-նրա լվացքից։ Գործս էն է հիմա, որ կերակուր եմ եփում ու տունը պահում։ Վիկտորն առաջվա պես գնում է էլի ժողովներ, մեկ-մեկ էլ գեղերը, որ կնանոց ժողովներ անի, նրանց գրի սևն ու սպիտակը սովորեցնի։ Ապրում եմ ականջս դինջ— է՛լ ոչ Լիզինկի ձենն եմ լսում, ոչ մարդու, թե արի ոտնամանները սրբի, հատակը մաքրի։ Աստված եթե Երվանդիս խլեց, Վիկտորիս գոնե էնքա՛ն խելք տվեց, որ հողեց-հոգի չկորչեմ...

Էսպես եղավ բանը...

1925

ԽՈՒԺԱՆ ԱՐՇՈՆ

I

Գնացքը՝ փնչացնելով— փո՛ւ հա փո՛ւ— փախչող կենդանու նման— սլանում էր դաշտի միջով. երբեմն, կարծես վախից, սուլում էր ձորերում, կամուրջների վրա և դարձյալ արագ-արագ, արագ-արագ, շխկշխկոցով սուրում առաջ։ Ամենավերջին վագոնի բուֆերին նստած էր մի փոքրիկ՝ տասըտասներկու տարեկան տղա, և ուրախ սլանում էր վագոնների հետ, այսինքն վերջին վագոնի պոչին բազմած։ Բայց որովհետև քամի էր, նա մի ձեռով բռնել էր գլխարկը, մյուսով բուֆերը, որ վայր չընկնի։ Ու այդպես նայում էր դաշտին, որն իր ծառերով, բլուրներով ու գյուղերով պտտում էր շարունակ, ինչպես մի վիթխարի ջրաղացքար։ Տղայի ձեռները հոգնել էին բուֆերը բռնելուց, իսկ աչքերը ցավում էին անքընութիւնից և երկար այս ու այն կողմ նայելուց։ Բայց և այնպես նա ուրախ էր. ուրախ էր, որովհետև սարսափ ազդող մութն անցել էր արդեն և լույսը բացվել։ Գիշերը նա վախենում էր ամեն բանից— ուղենիշներից, սեմաֆորներից, գծի կողքին երևացող ցից ժայռերից և, վերջապես, մութ դաշտից, ուր երբեմն, հեռու կամ·մոտիկ, կրակներ էին երևում. թվում էին դայլերի աչքեր։ Նա վախենում էր ամանավանդ հանկարծ ուրիշ գնացք գա ետևից ու խփի իրեն։

Մի խոսքով՝ գիշերը շատ երկյուղալի էր և միաժամանակ խոնավ, ցուրտ ու քամի։ Բայց հիմա, լույսը բացվելուն պես ամեն բան լավ էր թվում նրան. և նույնիսկ հաճելի էր նայել, թե ինչպես է պտտվում դաշտը իր ծառերով, նորածիլ արտերով, բլուրներով։ Նա այնքան ուրախ էր, որ գծի կողքին և գծի տնակների առաջ մարդ տեսնելիս՝ գլխարկը վերցնում էր ու թափահարում։— Բարո՛վ, բարո՛վ...

Քամին ձայնը նրա բերնից պոկում-տանում էր դեպի դաշտը, հեռու-հեռո՛ւ, և այնտեղ հեռվում կրկնում— ո՛ո՛վ...։ Բայց երբեմն նա սթափվում էր իր ձայնից ու նայում վերև, դեպի վագոնի դուռը, լուսամուտը, թե ընկեր կոնդուկտորը չի՞ երևում արդյոք։ Նա կոնդուկտորից սաստիկ վախենում էր, որովհետև նստել էր նրանից թաքուն, գիշերը, իսկ այժմ արդեն լույս էր...

Բայց—լավ էր— կոնդուկտորը դեռ չէր երևում, և նա դաշտին նայելու ու մտածելու ժամանակ ուներ։ Իսկ նա մտածում էր, թե ի՛նչ պիտի անի քաղաքում, կարո՞ղ է արդյոք ապրուստ գտնել։ Թեև քեռու տղան ասել էր նրան, թե Օրևանում շատ գործ կա, թե ի՛նչ ծառայություն ուզում է կարող է գտնել, բայց վախենում էր. քաղաքին անծանոթ էր և չգիտեր, թե մինչև գործ գտնելը ի՛նչպես պիտի ապրի։

Վագոն նստելով՝ նա մտածում էր՝ որքան կարելի է շուտ հեռանալ գյուղից, հորից, որ միշտ երեսովն էր տալիս, թե ուրիշի յոթ տարեկան տղերքը գործ, աշխատանք են գտնում, իրենց կերած հացի փողը հանում են, իսկ ինքը—տասը-տասներկու տարեկան տղա—չի կարողանում։ Վերջին՛ երկու շաբաթն արդեն հայրը նրան տվել էր աշկերտ մի կոշկակարի մոտ, որ նրա բանն անի, նրա հացն ուտի։ Կոշկակարը մի կին ուներ և մի երեք տարեկան երեխա։ Ճիշտ է, իրեն լավ կերակրում էին, այսինքն ի՛նչ իրենք ուտում էին, տալիս էին և իրեն, բայց ամբողջ օրը՝ առավոտից մինչև երեկո՝ «Արշո՛, ջուր բեր», «Արշո՛, սամավար քցի», «Արշո՛, ուստիդ կոշիկները սրբի»... Արշոյին դուր չէր գալիս այդ. և՛ սովորեր, և՛ տան բան աներ. չէ՛, նա այդ չէր ուզում։ Այդ քիչ էր կարծես, ուստեն ու կինը իրիկունները մեկ-մեկ գնում էին հիվանդ բարեկամի տուն և իրեն թողնում տանը՝ քնած երեխային նայի,

որ չբացվի։ Մի քանի անգամ, գործից հետո, Արշոն մնաց երեխային նայելու. առաջին երկու երեք օրը, թեև քունը տանում էր, բայց դիմացավ մինչև ուստայի ու կնոջ գալը. բայց չորրորդ անգամ նա քնել էր, երբ նրանք վերադարձան։ Եկան և, ծեծելով զարթնեցրին, որովհետև երեխան վերմակը գցել էր հատակին, բացվել ու մրսել։ Ուստան ապտակեց նրան մի երկու անգամ, իսկ կինն սկսեց անիծել, թե «էդպես անկարգ աշկերտ հարկավոր չի» իրեն, որ քնում է ու երեխին մրսեցնում։ Մյուս օրը, հակառակի պես, մի ուրիշ բան էլ պատահեց. ուստակինը տվեց նրան կերակրի ամանները լվանալու։ Երբ լվաց ու դրեց տախտակի ծայրին, կատուն թռավ տախտակին և բոլոր ամաններն ընկան հատակին ու փշուր-փշուր եղան։ Նա մի րոպե կանգնեց, մտածեց ինչ անի, և մտածելով տեսավ արդարանալ չի կարող. որքան էլ ասի «կատուն կոտրեց», միևնույն է՝ չեն հավատալու. պիտի ծեծեն և, գուցե, դուրս անեն։ Մտածեց ու դուրս եկավ փողոց և, փոխանակ արհեստանոց գնալու, գնաց դեպի դաշտը։ Ջուզեց գնալ և իրենց տուն, որովհետև, գիտեր, եթե գնար, հայրը պիտի բարկանար, թե ինչո՛ւ է գործը թողել եկել։ Ամբողջ օրը և գիշերը մնաց դաշտում։ Երկրորդ օրը նրան տեսավ քեռու տղան և հայտնեց, որ հայրն իմացել է վարպետի ամանները կոտրելու մասին, իմացել է նաև, որ փախել է, ու փնտրում է։ Արշոն վախենում էր հորից, եթե ձեռն ընկներ— պիտի ծեծեր։ Այդ բանը գիտեր և քեռու տղան. դրա համար էլ խորհուրդ տվեց գնալ Երևան։

Եվ ահա գնում էր Արշոն Երևան։ Նա գնացք էր նստել գիշերը. ու մինչև լուսաբաց շատ անհանգիստ էր, շարունակ երկյուղով շուրջը նայելով՝ մտածում էր վարպետի, նրա կնոջ, իր հոր և մոր մասին։ Որ իմանան քաղաք է փախել՝ ինչքան կզարմանա՜ն... Մտածում էր ու սպասում, թե երբ պիտի լուսանա, որովհետև մութի մեջ նրան վախ էին պատճառում ամեն բան, բացի ապտղալից երկնքից, որ քանի գնում էին՝ դարձյալ նույնն էր կարծես ու չէր փոխվում, մութ կապույտի վրա աստղերը, թվում էր, թարթում, աչքով էին անում, հետո նրանցից մեկը կամ մյուսը հանկարծ ընկնում էին ցած։ Արշոյին թվում էր, թե ահա որևէ մի տեղ կտրաքեն կամ

կզրնգան ոսկու պես ու փշուր-փշուր լինելով՝ կայծեր կփըռեն իրենց շուրջը։ Բայց ոչինչ չէր լինում։ Ասենք, գուցե և լինում էր մի բան, բայց ինքը ոչ տեսնում էր, ոչ լսում։

Այսպես, գիշերը նա անցրեց աստղերին նայելով, երկյուղով և անքուն. երկյուղալի էր մանավանդ, երբ գնացքըն անցնում էր կամուրջների վրայով։ Այնպես էր գոգոում— թվում էր ահա կամուրջը պիտի խորտակվի։

Իսկ հիմա նա ուրախ էր. ուրախ էր նախ՝ նրա համար, որ անփորձ լուսացրեց, երկրորդ, որ գյուղից հեռացավ։

Բայց այդ ուրախության հետ միասին մի անհանգստություն կար նրա սրտում. ի՞նչպես պիտի ապրի Երևանում։

Նա քաղաք տեսել էր միայն նկարների մեջ, դասագրքերում. և քաղաքը պատկերանում էր նրան մեծ-մե՜ծ տներով ու շատ-շա՜տ մարդկանցով մի տեղ։ Քեռու տղան ասել էր, որ քաղաքում հեշտ կարելի է գործ գտնել կամ աշկերտ մըտնել։

Ու Արշոն մտածում էր այդ մասին, ծառայո՞ղ դառնա, թե՞ աշկերտ. ո՞րն է լավ։

Նա տարված էր այս մտածումներով, երբ գնացքը սուլոցով մոտեցավ մի նոր կայարանի. ուրախացավ, որ, վերջապես, կարող է ջուր խմել։

Բայց հազիվ գնացքը կանգ առավ և նա ուզեց իջնել՝ չրի տեղը գտնելու— մեկը հանկարծ բռնեց նրա թևը.

— Սպասի՛ր։

Արշոն մնաց սառած։ Նրա ետև կանգնած էր կոնդուկտորը՝ կակարդավոր գլխարկով, սուլիչը կրծքին կախած։

— Իջի՛ր,— հրամայեց կոնդուկտորը։

Արշոն դողալով իջավ։

— Դու, լակոտ, էս ի՞նչ տեղ ես նստել,— ասաց կոնդուկտորր նրա թևը չթողնելով։

Արշոն վախից դողում էր։

— Հը՞, խոսիր տեսնեմ,— շարունակեց կոնդուկտորը,— ո՞ր կայարանից ես նստել։

— Մեր կայարանից,— ասաց Արշոն, վերջապես, համարձակություն առնելով։

Արշոն ուզեց ստել, մոտիկ կայարանի անուն տալ, բայց վախից տվավ իրենց կայարանի անունը։

— Հիմի ո՞նց ես տանեմ, տուգանք առնեմ։ Հը՞։ Դու քանի՞ գլխանի ես, որ էդպես բան ես անում։ Հը՞։ Դե, քելե՛...

Ու կոնդուկտորը, նրա ձեռը բռնած, առաջ ընկավ, տարավ վագոն՝ ավագ-կոնդուկտորին ներկայացնելու։

Արշոն զգաց, որ վտանգը մոտ է. ձեռը ձիգ տվեց, կանգնեց վագոնի մեջտեղ ու լաց եղավ։

Ճամփորդները, հետաքրքրված, նայեցին նրան և հասկացան բանն ինչումն է, իսկ մի ակնոցավոր ծեր մարդ, որ լրագիրը ծնկներին փռած՝ կարդում էր, հարցրեց.

— Ի՞նչ է արել տղան։

— Առանց բլեթ նստել է. հիմի գուլա կը՛,— ասաց կոնդուկտորը, ու բարկացավ տղայի վրա։— Ինչի՞ գուլաս, լակոտ։ Կուզես օր ես խայտառակվե՞մ։ Քելե՛, քելե՛ օբերին քով։

Արշոն չէր ուզում գնալ, լալիս էր և աղերսով նայում ճամփորդներին։

— Ո՞ւր ես գնում, տղա,— հարցրեց լրագիր կարդացող մարդը Արշոյին։

— Երևան,— պատասխանեց Արշոն լացակնած։

— Ինչի՞։

— Գործի։

— Հապա ինչո՞ւ տոմսակ չես առել։

Արշոն վստահություն առավ լրագիր կարդացողի վերաբերմունքից և պատասխանեց, որ փող չուներ տոմսակ առնելու— դրա համար։

— Օր փարա չունես, ինչո՛ւ վագոն նստիս կը, լակոտ,— մեջ մտավ կոնդուկտորը,— հորդ սե՞ղն է։ Քելե՛, քելե՛ օբերին քով,— կրկնեց նա բարկացած։

Արշոյի աչքերը նորից լցվեցին արցունքով, և նա կրկին նայեց լրագիր կարդացողին, նայեց աղերսող, օգնություն խնդրող հայացքով։

— Ի՛նչ կնայես, քելե՛,— կրկնեց կոնդուկտորը։

Արշոն զգաց, որ ամեն ինչ վերջացած է. պիտի տանեն, ավ գիտի, բանտարկեն. բայց այդ ժամանակ լրագիր կարդա-

ցուլը հարցրեց կոնդուկտորին, թե ի՞նչ արժե տղայի տոմսը։

Կոնդուկտորը մտքում մատները ծալելով, հաշիվ արավ.

— Երեք ռուբլի, տուգանքով,— հայտնեց նա։

Լրագիր կարդացողը անխոս տվեց կոնդուկտորի ուզած դրամը և ապա դարձավ Արշոյին.

— Նստիր այստեղ,— ասաց, ցույց տալով մի ազատ տեղ։

Արշոն նստեց և սկսեց աչքի տակով նայել ծերունուն, որը նորից, ակնոցը քթին դնելով, շարունակեց կարդալ։

Ապա, քիչ հետո, նա լրագիրը ծալեց, դրեց կողքին, պայուսակը հանեց, այնտեղից վերցրեց հաց և, հավի մի թևի հետ, տվեց Արշոյին։

Արշոն, ամաչելով, վերցրեց ու սկսեց մանր կտորներով ուտել, որ չասեն անքաղաքավարի է։

Նա թեև ազատվել էր վտանգից, բայց դեռ անհանգիստ էր։ Ուտում էր ու մտածում, թե ի՞նչ պիտի լինի քաղաքում։ Եվ քանի մոտենում էին քաղաքին, այնքան ավելի անհանգստանում էր։

II

Քաղաք հասավ Արշոն կեսօրին— փոշոտ, հոգնած ու քաղցած։ Կայարանում իջնելով՝ չգիտեր ինչպես գնա քաղաք, բայց տեսնելով մարդիկ ու կառքեր գնում են բոլորը մի կողմ, ինքն էլ որոշեց գնալ այն կողմը։

Ու այդպես՝ ոտով գնալով՝ դուրս եկավ քաղաքային այգի։ Տեսնելով այստեղ շատ մարդիկ են նստոտած, ինքն էլ նստեց հանգստանալու և անելիքը որոշելու։ Հայրը միշտ ասում էր—մի բան անելու համար՝ առաջ պետք է նստել-մտածել։ Նա էլ, ուրեմն, նստեց մտածելու, թե ի՛նչ անի։

Այգին լիքն էր մարդկանցով. կին, մարդ, տղա, աղջիկ, զույգ-զույգ, լավ շորեր հագած, գնում գալիս էին ծառերի արանքի ճանապարհներով։

Արշոյին թվում էր, որ դրանք բոլորն էլ հարուստ, պարապ մարդիկ են։ Նա ուշադրություն գրավում էին առանձնապես տղաները, որ ազատ, անհոգ, իրենց գլխու ման էին գալիս այդտեղ. երևի հարստի տղա[illegible]ն, վարպետ չունեն, դրա


BERTH
LOVE

համար ազատ շրջում են, մտածում էր նա։ Բայց այդ տղանե-րի մեջ երևում էին և այնպիսիները, որոնք համարյա տկլոր էին. դրանք էլ երևի «անհեր-անմեր տղերք են», մտածեց Արշոն։

Այգին նրան դուր էր գալիս. ի՜նչ լավ կլիներ շուտով գործ գտներ. ազատ ժամանակը կգար կնստեր այստեղ ու կնայեր մարդկանց...

Բայց ո՞րտեղ գործ գտնի և ո՞ւմ դիմի... Նա կոշկակարու-թյուն չէր սիրում և առհասարակ նստակյաց գործ ու արհեստ չէր ուզում. ուտի վրա գործը լավ է. լավ է տան մեջ կամ առև-տրրական խանութում ծառայել. դես կերթաս, դեն կերթաս, բան կտեսնես, թե չէ մի տեղ նստել— մարդ հոգնում է։ Լավ է մանավանդ մարդ մրգի խանութում լինի. մեկ-մեկ կարելի է միրգ ուտել. որքան էլ խանութի տերը վատ լինի, որքան էլ ժլատ, բայց և այնպես միշտ էլ կարելի է մի բան ուտել...։

Երբ բավական հանգստացավ՝ վեր կացավ Արշոն և քայ-լերն ուղղեց դեպի խանութները։

Օ՜, որքան շատ էին այդ խանութները...

Անցավ նա մի քանի խանութ. կանգնեց նայեց նրանց ներսը. ոչ ոք ուշք չդարձրեց նրա վրա. բոլորն զբաղված էին։ Մի տեղ, ուր ամաններ էին ծախում, ուզեց հարցնել, թե ծա-ռայող չե՞ն ուզում, բայց ամաչեց. ներսը մի աղչիկ կար։

Սակայն հետևյալ մրգի խանութի առաջ նա վստահություն առավ, որովհետև խանութպանը մենակ էր և փոքրիկ, հասա-րակ հագնված մարդ էր։

— Ընկե՛ր, ծառայող հարկավոր չի՞,— ասաց նա ոտը խանութի շեմքին դնելով։

— Չէ,— ասաց փոքրիկ մարդը ձեռն այնպես շարժելով, որ կարծես ասում էր՝ «գնա՛, գնա՛»։

Կողքի խանութում, ուր մի կին էր առուտուր անում, նրան ծաղրեցին. «Ծառայո՞ղ։ Չէ մի՞։ Ուտող բերան քիչ ունեմ, քեզ էլ վրա դնեմ»։ Ու քշեց նրան. «Գնա՛, ոադ եղիր»։

Ինչպես երևում էր՝ կինը բարկացած էր։

Արշոն նորից անցավ առաջ։ Նա մտածում էր— Թող վերց-նեն միայն, ինքը փող, վարձ չի ուզի, հացուփոր կծառայի։

Բայց ծառա ուզող չկար։

Նա անցավ նորից մի քանի խանութներ, մտավ նույնիսկ դեղատունը, մտավ կոոպերատիվը, մտավ կաֆեներ,— ամեն տեղ նույն պատասխանն էր լինում։

«Չէ՛, չէ՛. հարկավոր չի»...։

Մինչև ճրագվառոց նա անցավ խանութից-խանութ, դիմումներ արավ, իսկ երբ ճրագները վառվեցին, նա անհարմար համարեց մարդկանց անհանգստացնել այդ ուշ ժամին, և որովհետև հոգնած էր ու սաստիկ քաղց էր զգում,— հինգ կոպեկի հաց առավ ու ետ դարձավ եկած ճանապարհով։

Նորից դուրս եկավ այգու մոտ։

Այգում էլ,— տարօրինակ բան,— ծառերի մեջ ճրագներ էին վառվում և, համարյա թե ցերեկվա պես լույս էր, և մարդիկ էլ գնում-գալիս էին առաջվա պես։ Ու թեև քաղցած, բայց ամաչեց հաց ուտել մարդկանց ներկայությամբ. կասեն՝ անքաղաքավարի, կոպիտ գեղացի է։ Դրա համար փնտրեց, գտավ ազատ մի նստարան այգու ստվերոտ անկյունում ու նստեց։ Նստեց ու սկսեց ուտել։ Ուտում էր ու մտածում, թե ի՛նչ պիտի անի վաղը։ Մեծ քաղաք է, ամեն մարդ գեղից գալիս գործ է գտնում, մի՞թե իր համար մի գործ չի գտնվի, մտածում էր Արշոն ու, հացից կտորներ պոկելով, ծամում։

Նրա քունը տանում էր միևնույն ժամանակ. բայց այգում անցուդարձ դեռ շատ կար— ամաչում էր քնել։ Նստած, հացը բերանում, ննջում էր, դարձյալ աչքերը բանում ու զբոսնողներին նայում։

Անցնում էին էլի կանայք, աղջիկներ, մարդիկ ու տղաներ. բոլորն էլ գույն-գույն հագնված, բոլորն էլ հանդարտ, քաղաքավարի խոսում էին, ծիծաղում. մի խոսքով այնպես չէին, ինչպես իրենց գյուղում։

Նա հիշեց հոր ու մոր խոսակցությունը, հիշեց իրենց հարևանների խոսակցությունները, որ միշտ լիքն էին լինում հայհոյանքներով ու վատ խոսքերով. հիշեց, տխրեց ու սկսեց ննջել նորից, մեջքը նստարանի թիկունքին։

Այս անգամ նրա ննջը սաստիկ էր և այնպես հաղթահարեց նրան, որ էլ չկարողացավ աչքերը բանալ, այլ ուղղակի աչքերը խուփ մեկնվեց երկար նստարանի վրա ու քնեց։

Նրա քունը շատ անհանգիստ էր։ Երազում մեկ տեսնում

էր հորը, մե՛կ վարպետին, արհեստանոցը... հետո մի փոշոտ երկար ճանապարհ, որով բազմաթիվ մեծ ու փոքր շներ էին վազում. վազում էին, իրար կծում, գզգզում ու նորից կլանչոցով շարունակում վազել։ Իսկ ինքը՝ Արշոն փախչում էր նրանց առաջին։ Փախավ, փախավ, ու հանկարծ ընկավ։ Շները հասան նրան և սկսեցին հաչել գլխավերևը։

Արշոն հանկարծ վեր թռավ ու վարթնեց։

Արգելն լույս էր. ճրագները հանգած էին, այգում էլ բազմություն չկար. ծառերն օրորվում էին քամուց և արևի լույսը նրանց արանքով ընկել էր գետնին ու նույնպես օրորվում էր։ Ականջները կտրած մի սև շուն և մի ուրիշը՝ նրանից փոքր՝ հաչում ու վազվզում էին ետ ու առաջ։ Նրանք խաղում էին ինչ-որ տղաների հետ, որ հաց էին ցույց տալիս նրանց ու վազում։ Եվ շները, կլանչելով, գնում էին նրանց ետևից, ծառս էին լինում, բայց տղաները հացը չէին տալիս։

Արշոն, աչքերը տրորելով, նստեց։

Տղաները, նրան տեսնելով, մոտեցան։

Դրանք երեք հոգի էին, երեքն էլ բորիկ ու վատ հագնված. մեկը, որ Արշոյից մեծ ու չեչոտ տղա էր, գլխին ուներ կարմիրբանակայինի սրածայր կոմունարկա, վրան մի հին մեշոկ, որի վրա գլխի ու թևերի տեղ էր բացել ու հագել, մյուս երկուսը՝ հին, մաշված ու կեղտոտ շորերով էին և գլխաբաց։

— Դու գիշերն էստե՞ղ ես քնել,— հարցրեց մեշոկ հագած չեչոտ տղան։

— Հա,— պատասխանեց Արշոն, տղաներին զննելով։

— Ինչո՞ւ, տեղ չունե՞ս։

— Ջէ՛, ես նոր եմ եկել քաղաք,— ասաց Արշոն էլի փոխեփոխ տղաներին նայելով.— գնում գործ չեմ գտնել, դրա համար էստեղ քնեցի։

Տղաները ժպտացին։

— Գո՞րծ,— ասաց քմծիծաղով չեչոտը։— Գործ գտնելը հեշտ բան չի։

— Ինչո՞ւ։

— Ինչո՞ւ։ Ջկա՛,— խոսեց ոտաբոբիկ տղաներից մեկը, որին Համզո էին ասում։— Մեզպեսներին գործ չեն տալ։

— Ես ուզում եմ ծառայել կամ արհեստ սովորեմ,— շա-

րունակեց Արշոն հուսալով, թե տղաները մի խորհուրդ, մի ցուցմունք կտան։

Բայց նրանք ծիծաղեցին։

— Արհե՜ստ։ Հի՛-հի՛-հի՛... Վարպետ է ուզում դառնա։

Խոսեցին տղաները դարձյալ, հարցուփորձ արին Արշոյին, թե որտեղից է եկել, ո՛վ է, և առաջարկեցին, թե եթե սոված է գնա իրենց հետ Ղանթար։

Արշոն չուզեց, որովհետև նախ կասկածով էր նայում տղաներին, և երկրորդ՝ չգիտեր ի՛նչ բան է Ղանթարը (ով գիտի ինչ վատ տեղ է,— մտածեց), և այդ պատճառով մերժեց նրանց առաջարկը։

Ու երբ տղաներն իրենց շների հետ միասին հեռացան, նա էլ վեր կացավ ու գնաց դեպի խանութները՝ գործ փնտրելու։

Ու մի քանի օր շարունակ Արշոն գործ էր որոնում խանութներում, արհեստանոցներում. բայց իզուր. ոչ մի տեղ հույս տվող չեղավ։ Եվ Արշոն, գնալով, հուսահատվում էր, հուսահատվում էր մանավանդ այն պատճառով, որ այլևս հացի փող չուներ. քեռու տղայի տված հիսուն կոպեկից մնացել էր միայն տասը կոպեկ։ Ջուներ մի այնպիսի ավելորդ բան, որ ծախեր ու դրանով ապրեր։

Քաղաք գալու երրորդ թե չորրորդ օրն արդեն քաղցած էր։ Ինչպես առաջին օրը, հիմա էլ քնում էր քաղաքային այգու նույն նստարանի վրա և ամեն անգամ զարթնելիս հանդիպում էր մեծոկավոր չեչոտ տղային՝ ընկերների և ականջները կրտրած շների հետ, որոնց մեկին Բիզո էին ասում, մյուսին Տրիզո։

Ու ամեն անգամ էլ տղաներն ուրախ խաղում էին շների հետ, և Արշոն դրանից եզրակացնում էր, որ նրանք կուշտ են. թեև ոտաբոբիկ են, գլխաբաց ու հին շորերով, բայց իրենից լավ են ապրում, նա մի քանի անգամ տեսել էր նրանց շուկայում և նկատել, թե ինչպես թաքուն միրգ են գողնում, հետո գրեթե ամեն օր տեսնում էր ճաշարանների առաջ. մեկ-մեկ կամ մի քանի հոգով մտնում էին ներս, իսկ դուրս գալիս՝ հետները բերում հացի կամ մսի կտորներ։ Եվ օրվա մեծ մասը անց էին կացնում խաղով։ Արշոն տեսել էր և նրանց գիշերելու տեղը. քնում էին եկեղեցու քարի սանդուղների

վրա, տակները փռում էին հին ճիլոպ, վրաները գցում էին մեշոկ, գլուխների տակ դնում էին մի-մի կտոր փայտ կամ ոչինչ...

Տղաները իրենից միշտ շուտ էին զարթնում և ամեն առավոտ, այգով անցնելիս, հարցնում էին.

— Հը՛, վարպետ, պաշտոն գտա՞ր։

Արշոն վեր էր կենում, նստարանին նստում և, աչքերը տրորելով, նայում նրանց անհոգ դեմքերին։

Տղաները շարունակում էին.

— Հը՞, չես գտե՞լ։

— Հաշվապա՞հ ես ուզում ըլես թե նախագահ։

Արշոն փորձող հայացքով նայում էր տղաներին ու լռում։

— Լավ է նախագահ ըլես,— շարունակում էին տղանեը,— նախագահը փող շատ է ստանում։

Ով հանաք էին անում մի քիչ ու գնում։

Մի օր էլ, երբ նրանք հանաք անելու համար կանգնեցին նրա նստարանի մոտ, Արշոն մեկնված տեղից չշարժվեց։

— Հը՞, ընկեր վարպետ, պաշտոն գտա՞ր,— հարցրեց բոբիկ տղաներից մեկը շանը երկու ոտի վրա կանգնեցնելով։

Արշոն թեև զարթուն էր, բայց չպատասխանեց. տխրությամբ նայեց նրան ու տնքաց։

— Հը՞, ի՞նչ է պատահել։ Ջըլի՞ հիվանդ ես,— հետաքրքրվեց այս անգամ չեչոտը, նստարանին մոտենալով։

— Գլուխս ցավում է,— պատասխանեց Արշոն, շաղված աչքերը նրա երեսին հառելով։

— Մրսո՞ւմ ես։

— Ջէ՛։

— Դոզացնո՞ւմ ես։

— Ջէ՛... Սոված եմ։

— Հա՛,— բացականչեց չեչոտը մեծի նման, ու, դառնալով մոտիկ կանգնած տղաներին, հրամայեց.— Գնացեք հաց, մի բերեք վարպետի համար։

Մեկը, մի փոքրիկ, շեկ մազերով տղա, որին ընկերները Մալականի Հորթ էին անվանում, վազեց դեպի իրենց «տուն», իսկ մյուսները շրջապատեցին Արշոյին և սկսեցին հանաքներ անել։

— Ղոչա՛ղ կաց, վարպետ,— ասում էր չեչոտը,— սկի դարդ մի անի, մենք քեզ գործ էլ կտանք, պաշտոն էլ. եթե ուզում ես— ոռճիկ էլ։

— Կնիկ էլ, եթե կնիկ չունես,— ավելացրեց մի ուրիշը։

— Չէ, վարպետին կնիկ հարկավոր չի, հլա նրան հաց է պետք. առաջ հաց, հետո՝ կտեսնենք։

Փոքր անց Մալականի Հորթը վերադարձավ, բերելով մի մեծ կտոր հաց ու մի կտոր միս և տվեց Արշոյին։

— Դե, վարպետ, վեր կա՛ց, ուտելով գնանք,— ասաց չեչոտը, հրամանատարի պես կարգադրելով։— Ինչքան նստես, էնքան գլուխդ կցավի։

Ու խուժանների խումբը շարժվեց առաջ։

Արշոն էլ, ստացած հացն ու միսը ուտելով, հետևեց նրանց։

III

Այդ օրվանից Արշոն ընկավ խուժանի մեջ. այժմ ինքն էլ նրանց հետ գնում էր այն բոլոր տեղերը, ուր նրանք էին գնում։

Գնում էին ճաշարանները. կառավարչից թաքուն անցնում էին սեղանից-սեղան և ճաշողներից խնդրում հաց ու մսի կտորներ կամ վերցնում էին ճաշից հետո այս կամ այն սեղանի վրա մնացած հացն ու միսը։

Գնում էին շուկա, ուր տղաները թռցնում էին մրգեր և ուրիշ ապրանքներ։ Նույնն անում էին և խանութներից։ Արշոն ամաչում էր այդպիսի բաներ անելուց. նա գերադասում էր՝ գնալ ճաշարանները միայն և պահակություն անել. այսինքն՝ մնալ եկեղեցու պատի տակ և պահպանել խուժանի գույքը։

Խուժանը բաղկացած էր տասնուվեց հոգուց և ուներ իր գլխավորը, դա կոմունարկայով չեչոտ տղան էր, որին բոլորը «Զոփուր» էին ասում՝ երեսը չեչոտ լինելու պատճառով։ Զոփուրն ամեն օր տղաներին բաժանում էր խմբերի և ուղարկում շուկա, ճաշարանները, խանութները։ Եվ այն, ինչ տղաները ձեռք էին բերում ճաշարաններից, շուկայից ու խանութներից— բոլորը, հաց, միս, միրգ, շաքար և այլն,—բերում միացնում էին իրար,

լցնում էին խուժանի տոպրակը, որ պահվում էր իրենց գիշերելու տեղը — եկեղեցու սանդուղների վրա, ուր միշտ, հերթով մի պահապան էր լինում։ Խուժանն ուներ իր խիստ կարգ ու կանոնը, իր օրենքները. օրինակ՝ խմբի մեջ մտնող ամեն մի խուժան իրավունք չուներ իր ձեռք բերածն ուտելու. պարտավոր էր ամեն ինչ բերել «տուն», հակառակ դեպքում խուժանից դուրս կանեին իբրև անկարգի և ընկերության չիմացողի։ Այս բանը առաջին իսկ օրը հասկացրին Արշոյին։ Խուժանն ուներ և իր դատավորները, որ քննում էին տղաների մեջ պատահած դեպքերը. օրինակ, թե ինչո՛ւ մեկը ծեծել է մյուսին կամ այն, թե ինչպես սա կամ նա կերել է ձեռք բերած բանը։ Իսկ նա, ո՛վ ուտում էր ձեռք բերածը, նրան՝ հարցաքննում, դատում էին և, եթե տեսնում էին մեղավոր է, դուրս էին անում։

Օրերն Արշոյի համար անցնում էին հետաքրքրական ու անհոգ։ Գլխավորը՝ Զոփուրը նրան լավ աչքով էր նայում, և ամեն անգամ տղաներին խմբերի բաժանելիս, այն խմբին, որի մեջ ընկնում էր Արշոն, ասում էր.

— Վարպետին չթողնեք մենակ, չթողնեք նեղն ընկնի, ֆանդը սովրեցրեք։

Հետո միշտ խրատում էր, թե ի՛նչ պիտի անել.

— Մուրացկանություն չանեք. մարդուց բան չխնդրեք,— ասում էր նա։— Եթե կարող եք՝ թոցրեք։ Էդ կարելի է։ Խընդրել՝ չէ՛։

Ու գնում էին տղաները. շուկայից, խանութներից տանձ, ծիրան էին թոցնում կամ, տեսնելով թղթի տոպրակը կրծքին դեմ արած, գնումներով տուն դարձող մարդ թե կին, դիպչում էին այնպես, որ տոպրակի բանները,— խնձոր, շաքար, պամիդոր—թափվում էին գետին ու ցրվում, և մինչ տերը ուշքի էր գալիս՝ հավաքում էին թափածից ամեն մեկը մի քանի հատ ու փախչում։

Մի օր խուժանները, Արշոյի հետ շուկա գնալիս, նկատելով մարդու մեկը սինիով կարագ է տանում հարձակվեցին վրան. ամենից առաջ Համզոն ձեռը կոխեց կարագի մեջ ու հայդա՛... Կարագ տանողը զարմանքից աչքերը ճպճպացնելով նայեց նրա ետևից, ու մինչ կնայեր, տղաներից երկրորդը՝ Վինավա-

տը (սրան այդպես կանչում էին նրա համար, որովհետև մի բան անելիս՝ միշտ ուսերին ասում էր «վինավատ») Թռավ մյուս կողմից, նույնպես չանչեց կարագը ու քամու պես սլացավ ուրիշ ուղղությամբ, և Արշոն լսեց միայն նրա սիրած բառը՝ «վինավատ»։ Նույն բանն արավ երրորդ խուժանը երրորդ կողմից, երբ կարագ տանողը ապշած նայում էր Վինավատի ետևից։

Արշոն տղաների ճարպկության վրա զարմացած՝ մնացել էր կանգնած. նա ոչինչ չվերցրեց, որովհետև՝ նախ չուզեց, երկրորդ՝ երկյուղալի էր. բայց չնայած դրան, կարագ տանողը մոտեցավ իրեն և քացով տվեց փորին.

— Դե՛ գնա, շան լակոտ։

Արշոն փորը բռնած. եկավ «տունը»։ Նրան թվում էր, որ ինքն անմեղ տուժել է, և այդ պատճառով ընկերները պիտի ցավեն ստացած հարվածի համար, սակայն երեկոյան տղաները, ցավ հայտնելու փոխարեն, նկատողություն արին, թե ինչու ինքն էլ մյուսների նման չի վարվել—կարագ չի թոցրել։

Բայց այդ երեկո կուշտ կարագ ու հաց կերան։ Կարագը քսեցին հացին ու կերա՜ն... Քսեցին ու կերա՜ն...

Այսպիսի հաջող դեպքեր սակայն քիչ էին պատահում։ Լինում էին օրեր, որ մնում էին միայն չոր հացի հույսով. երբեմն հացն էլ չէր լինում,- կերակրվում էին վարունգով կամ ծիրանով։ Հետո, այս էլ պիտի ասել, որ տղաները հեշտ չէին պրծնում «գործի» գնալիս։ Ճաշարանում՝ ոչինչ. շատ-շատ կառավարիչը բարկանում էր ու քշում. «Կորե՛ք, կոտորվե՛ք դուք»։ Բայց շուկան վտանգավոր էր. այդտեղ ոչ միայն քշում, այլ բռնում ծեծում էին։ Գրիշին, օրինակ, այնքան էին դնքսել, որ ամբողջ օրը քթի արյունը չէր կտրում. նրան բռնել էին ծիրան վերցնելիս։ Իսկ Համզոյին բռնել էին չամիչ թոցնելիս և տարել միլիցիատուն, բայց Համզոն շեմքից փախել էր՝ միլիցիոներների ոտների արանքով. մի ուրիշ անգամ նա փախել էր միլիցիատան բաց լուսամուտից, հենց հարցաքննելու ժամանակ։ Ճարպիկ էր Համզոն. քանի՜ անգամ միլիցիայի ձեռն էր ընկել և միշտ ազատվել։ Այդ պատճառով Ջուխուրը դժվար տեղերը նրան էր ուղարկում։ Բայց այս էլ պիտի ասել, որ տղաներին ծեծողը անպատիժ չէր մնում։ Մի մրգավաճառ,

օրինակ, մի օր բռնել էր Մալականի Հորթին— շեկ, փոքրիկ խուժանին՝ կաղին վերցնելիս և ծեծել։ Չոփուրն ընտրեց չորս հոգի— Համզոյին, Քրդին, Արտուշին, Վինավատին— և ուղարկեց վրեժ առնելու։ Տղաները գնացին մրգի խանութի դռռանը սուտկռիվ սարքեցին իրար հետ ու միմյանց հրհրելով, քացի ու ապտակ տալով՝ ընկան Մալականի Հորթին ծեծող խանութպանի մրգով լի ամանների վրա։ Ամաններում դարսած ծիրանը, կեռասը, մորին ճխլվեցին, շուռ եկան, թափվեցին ցած, իսկ վարունգներն ու պամիդորները գլորվեցին դեպի առուն... ու մինչև մրգավաճառը վրա կհասներ— տղաներն իրար հալածելով՝ փախան։

Այսպես էին պատժում չար մրգավաճառներին, խանութպաններին, իսկ նույն կերպ վարվող քաղաքացուն՝ դիպչում էին դիտմամբ, ձեռի բանները թափում ու իրենք հավաքում։

Մի խոսքով՝ օրերն անցնում էին Արշոյի համար հետաքրքիր. յուրաքանչյուր օր մի նորություն էր բերում։ Նա սովորում էր հաց, միս հավաքել, միրգ թոցնել, անցորդների գրպանից թաշկինակ հանել, երբեմն էլ կռվել քաղաքի ուրիշ խուժանների հետ, երբ նրանք, իրենց խմբի անդամ չլինելով գալիս էին իրենց ճաշարանը կամ իրենց ընկերների ձեռից որևէ բան էին խլում։ Չնայած քաղաքում խուժանների ամեն մի խումբ իր թաղն ուներ և իրավունք չուներ իր թաղից դուրս գործեր անելու, բայց երբեմն պատահում էր, որ անցնում էին միմյանց թաղ, և այդ ժամանակ ընդհարվում էին. խմբերը հարձակվում էին իրար վրա ու միմյանց արյունլվա անում։ Այդպիսի բան, սակայն քիչ էր պատահում։ Արշոն, խուժան մնած օրից, միայն երկու անգամ էր մասնակցել այդպիսի կռվի, որին մասնակցում էին նույնիսկ նրանց շները՝ Բիզոն ու Տրիզոն։ Հաչում-կլանչում էին հակառակորդ խուժանների վրա և պտտվում կռվողների շուրջը...

Մի խոսքով, Արշոյի համար հետաքրքրական էր այդ բոլորը. ցերեկը դես էին գնում, դեն, իսկ եթեկոյան հավաքվում էին փակ եկեղեցու սանդուղների գլխին, նստոտում էին շարքով, ընթրում, խոսում. ամեն մեկը պատմում էր իր գլխով անցածը, ու ծիծաղո՜ւմ էին... Հետո Չոփուրը կարգադրում էր, թե ով ո՛ւր պիտի գնա վաղը։ Ապա պառկում էին ու,

աստղերին նայելով, զրուցում այնքան, մինչև քուններըտա-նում էր։

Մի երեկո, քնելուց առաջ, Համզոն պատմեց, որ շուկա-յում արդեն սեխ է երևացել։

— Առաջ հատ ու կենտ էր,— ասաց Վինավատը,— բայց հի-մի սելերով են բերում։ Ի՞նչ եմիշ է...

— Ես դեռ նուբար չեմ արել,— ասաց Քուրդը, կասկածով նայելով Վինավատին, ենթադրելով, որ նա արդեն սեխ է թոցրել կերել և իրենց չի տվել։

— Ո՞վ է նուբար արել, որ դու անես,— պատասխանեց Վինավատը, հասկանալով նրա ակնարկի իմաստը։

— Դե լավ, էլ մի վիճեք,— ասաց Ջոփուրը հրամայա-բար։— Քնեցեք, որ առավոտը շուտ զարթնեք։

— Ի՞նչ կա որ,— հարցրեց Արշոն։

— Տեղ ենք գնալու։

— Ո՞ւր։

Արշոն կարծում էր, թե կերթան երևի շուկա կամ դրա նման մի տեղ, բայց Ջոփուրը հայտնեց, որ գնալու են գե-րեզմանատուն՝ գյուղերից եկող սեխի սայլերին ընդառաջ։

— Բայց ի՞նչ կարանք անենք,— խոսեց նորից Արշոն,— չէ՞ որ տերերը հետը կըլեն։

— Էդ քու բանը չի, վարպետ, ձենդ կտրի,— սաստեց նրան Ջոփուրը,— դու առավոտը շուտ վեր կաց, թե չէ փետ կուտես։

Երբ Ջոփուրը կարգադրում էր— պետք էր ենթարկվել։ Լռեցին ու քիչ հետո քնեցին։

IV

Առավոտը ամենից շուտ զարթնեց Ջոփուրը։

— Տղե՛ք, վե՛ր կացեք,— ձայն տվեց նա։

Ու, կոմունարկան գլխին դնելով, ձեռնափայտը ձեռքին կանգնեց սանդուղների գլխին։

Փալասներն ու լաթերը շարժվեցին. տղաները վեր թռան տեղներից, մի քանի րոպեում այդ լաթերը, (նրանք հագնե-լու բան չունեին, որովհետև քնում էին առանց հանվելու) հա-

վաքեցին, դրին մի անկյուն, թողին մի պահակ և տասը հոգով (հնգին ուղարկեցին շուկա) ճանապարհ ընկան։

Դրանց մեջ էր և Արշոն։

Նա գնում էր մի թաքուն երկյուղով, բայց միաժամանակ հետաքրքրված, որովհետև սայլերի առաջը գնալը նոր բան էր նրա համար։

Մյուս տղաները՝ բոլորն ուրախ էին. նրանք և՛ գնում էին, և՛ խաղում— խփում էին իրար, վազվզում և քար նետում միմյանց վրա։

Նրանց հետ էին և նրանց շները՝ Բիզոն ու Տրիզոն։

Երբ քաղաքից դուրս եկան, սկսեցին երգել.

— Աղջի բախտավո՞ր, երնե՞կ քո սերին,
Քո սարի սովո՞ր սև սև աչերին...

Երգում էին առջևից գնացողները, իսկ ետևից եկողները կանչում էին աջակ ու զիլ ձայներով.

Մեռնեմ գարունքիդ, ծաղկած գարուն ես,
Սարի պես մեջքիդ կանգնած յար ունես...

Խումբը երգում է խառնիխուռն ձայներով և ներդաշնակություն չէր ստացվում, այդ պատճառով Զոփուրը երգեց իր սիրած նոր երգը.

— Աղջի Թելլի, դուրս մի ելնի, կսևնաս,
Բոլըդ կարճ ա, լոթու խարչ ա, կսևնաս...

Տղաները ձայնակցեցին նրան, բացի Արշոյից, որ երգի խոսքերը չգիտեր։

Գարուն, զով առավոտ էր. արևը դեռ չէր ծագել. երգի խոսքերը զրնգում էին ջինջ օդում և գնում հեռուները. Քվում էր բարձրանում են, ապա փովում դաշտի վրա, և այդ հանգամանքը ոգևորում էր տղաներին, ու նրանք, քանի գնում՝ ձայները բարձրացնում էին։

— Մի տաս շահի փող տո՞ւր, մի տաս շահի փող տո՞ւր,
Հիվանդանաս, յարո չան, վրեդ բերեմ դոխտո՞ւր...

Երբ մոտեցան գերեզմանատանը, տղաները կանգ առան ու նայեցին առաջ, թե արդյոք սայլեր չե՞ն երևում, որովհետև այս ժամին էր, որ գյուղի սայլերը սեխ էին բերում քա-

զաք։ Հեռվում երևում էր ինչ-որ շարժվող բան. դժվար էր որոշել՝ ձի՞ է թե սայլ։ Բայց ավելի շուտ նման էր սայլի, ու թեև չէր կարելի իմանալ ի՛նչ է բերում սայլը՝ սե՞խ թե այլ բան, այնուամենայնիվ Ջոփուրը կարգադրեց.

— Անցեք գերեզմանատուն։

Տղաները հին, քանդված պատերից անցան գերեզմանատուն և, իրարից հեռու, շարվեցին պատերի ետև։

Տղաներին տեղավորելուց հետո՝ Ջոփուրը նորից դուրս եկավ ճանապարհը և, ձեռը ճակատին դրած, նայեց։ Սկողը, իսկապես, սայլ էր, և Ջոփուրը հավատացած էր, որ անպայման սեխի սայլ է։

Ու նա չէր սխալվում։ Սայլն իսկապես սեխ էր բերում. այդ երևում էր նրա խոտով պատած կողերից և այն բանից, որ բեռը նույնպես ծածկված էր խոտով։

Այդ նշանները տեսնելուն պես՝ Ջոփուրը թռավ պատի ետև։

— Վինավատ,— կանչեց նա գանգուր, արադաշարժ տղային— հենց որ սեյը մոտենա, կերթաս եմիշ կվերցնես ու ճվալով ետ կփախչես,— կարգադրեց նա։

Կարգ էր— երբ Ջոփուրը կարգադրում էր՝ պետք էր ենթարկվել։

Վինավատը վեր կացավ և թռավ պատի մյուս կողմը։ Տղաներին, դրանց հետ և Արշոն, պատի քանդված տեղերից նայեցին՝ ի՛նչ է լինելու։

Սայլը ճռնչալով մոտենում էր։

Վինավատը նստեց ճանապարհի եզրին, մանրած խճաքարի կույտի վրա ու անտարբեր նայեց սայլի կողմը այնքան ժամանակ, մինչև որ նա հավասարվեց իրեն։ Իսկ երբ սայլը հավասարվեց իրեն, նա վեր կացավ հանդարտ ու մոտեցավ սայլին.

— Քեռի՛ ջան, մի եմիշ տո՛ւր տեսնեմ։

Այդ ոչ թե խնդիրք էր, այլ առաջարկ և այնքան ինքնավստահ ու հանդուգն ձևով արված, որ սայլապանը պոռաց.

— Դե՛ կորի, լակոտ։

Բայց Վինավատը չհեռացավ. նա առաջարկեց մեկ էլ, սայլապանը մերժեց դարձյալ։ Վինավատն այլևս չխոսեց, գնաց սայլի ետևից մի քանի քայլ և հանկարծ, մի ակնթարթում,

կատվի արագությամբ, ցատկեց սայլի վրա, վերցրեց մի սեխ ու հայդա՜...

— Վինավատ,— ճչաց ու վազեց սայլի եկած ճանապարհով։

Սայլապանն այդ նոր հանդգնությունից վրդովված՝ սայլը կանգնեցրեց. իջավ և ճիպոտը ձեռին վազեց Վինավատի ետևից։

— Կանգնիր, շան լակոտ, կանգնի՛ր,— գոռում էր նա ու վազում ճիպոտը թափահարելով։

Բայց մինչ նա վազում էր, խուժանները դուրս եկան պատի ետևից և անձայն հարձակվեցին սայլի վրա։

Սայլվորը Վինավատին չհասնելով, ետ դարձավ և, սայլի վրա հարձակվող խուժանների խումբը տեսնելով, այժմ էլ հայհոյանքով վազեց դեպի սայլը։

Բայց մինչև կհասներ, տղաներից յուրաքանչյուրը մի-մի սեխ վերցրած՝ փախան— ոմանք դեպի առաջ՝ դեպի քաղաք՝ ոմանք դեպի աջ, մի քանիսն էլ դեպի ձախ։ Ինչպես ծառերի խմբին քար գցես— ցրվեցին այս ու այն կողմ։

Միայն Արշոն մնաց սայլի մոտ. նա չուզեց բավականանալ մի սեխով։ Հարձակվել սայլի վրա և միայն մի սեխ տանե՞լ... Նա ուզեց իր քաջությունը ցույց տալ ընկերներին ու, մինչ տղաները մի-մի սեխ վերցրած՝ փախչում էին, նա դեռ սայլի մոտ, մի սեխ կոնատակը դրած, աշխատում էր Ֆրկրորդն էլ վերցնել, երբ սայլվորը վրա հասավ։

Ուզեց Արշոն փախչել, բայց արդեն ուշ էր։

Սայլապանը բռնեց նրա վերնաշապկից ու թափ տվեց ուժով։

Արշոն քնկավ երեսն ի վայր. սեխերից մեկը կոտրվեց, իսկ մյուսը գլորվեց փոշու մեջ։

— Ա՛խ, շան լակոտ,— գոռաց սայլապանը։

Եվ Արշոն մեջքին, փափուկ տեղերին զգաց ճիպոտի ուժգին հարվածներ, հետո զգաց, որ քիթն ու շրթունքները թրջվում են ի՛նչ-որ բանից. ընկնելիս քիթը արյունել էր։

Փորձեց գլուխը բարձրացնել, բայց այս անգամ էլ գլխին իջնող ձեռքի հարվածից չկարողացավ վեր կենալ։ Նորից ընկավ գետին, փոշու մեջ. մի վայրկյան հիշեց մորը և այլևս չզգաց թե ի՛նչ է կատարվում իր հետ...

V

Փախած խուժանները հեռվից նկատելով, որ սայլապանը Արշոյին բռնեց, ծեծեց և, ծեծելուց հետո, Արշոն էլ ոտքի չէ-լավ,— եկան վերցրին նրան և գլխից ու ոտներից բռնած տա-րան, գլուխը դրին մոտիկ աղբյուրի ջրի տակ և ուշքի բերին... Այնպես որ, երբ Արշոն զարթնեց, տեսավ գլուխն ու շորերը թրջված. մեջքն ու գլուխը ցավում էին. թվում էր ոսկորները նվում են: Տղաները նրա մարմնին օղի քսեցին, որ վաղուց ձեռք էին բերել խուժանների ծեծված տեղերը քսելու համար: Այդ Չոփուրի հնարած միջոցն էր: Առաջին օրը ցավերը սաս-տիկ էին, երկու անգամ օղի քսելուց հետո սակայն երրորդ օրը ցավը մեղմացավ: Բայց չնայած ցավերին, Արշոն ա-ռաջվա պես տղաների հետ գնում էր դարձյալ ճաշարանները, շուկա: Չէին ուզում տանել միայն սայլերից սեխ կամ ուրիշ միրգ թոցնելու: Արշոն սակայն այդ բանից նեղանում էր.

— Ի՜նչ, մի անգամ սխալվեցի, մի եմիշի տեղ երկուսը վերցրի, հո էլ չեմ անի,— ասաց նա Չոփուրին:

Չոփուրը զիջեց:

— Դե լավ,— ասաց,— բայց քեզ լավ պահիր. ղոչաղ կաց:

Արշոն այնքան թույլ չէր, ինչպես կարծում էին. նա ասես իր «ղոչաղությունն» ապացուցելու համար այնպիսի կատա-ղությամբ էր հարձակվում սայլերի վրա, որ թվում էր վրեժ է առնում սայլապանից կերած ծեծի համար: Հարձակվում էր, մի կամ երկու սեխ վերցնում ու քամու պես թռչում. մյուսները ետևից հազիվ էին հասնում:

Այդպիսի դեպքերում Չոփուրը միշտ ասում էր.

— Կեցցե՛ս, վարպետ, կեցցե՛ս...

Սեխից, ծիրանից հետո՝ ձմերուկը դուրս եկավ, հետո ու-րիշ մրգեր: Խումբը շաբաթը երեք անգամ գնում էր սայլերի առաջ: Այդ հարձակումներից մեկի ժամանակ Արշոն գլխար-կը կորցրեց: Երկար որոնեց— չգտավ: Բայց որովհետև չէր ու-զում մյուսների պես գլխաբաց մնալ, մտքում դրեց մի տե-ղից մի գլխարկ թոցնել, և որովհետև ընկերներից մի քանի-սի գլխին կոմունարկա էր, շատ էր ցանկանում ինքն էլ մի այդպիսի բան ունենալ: Այդ գլխարկը նրան շատ էր դուր գա-

լիս, հարմար էր գիշերը դնել գլխի տակ ու քնել, թե չէ քարը շատ էր սառը։ Այդպիսի գլխարկ ուներ և Ջոփուրը, և Համզոն, և Վինավատը։

— Էդ քու գդակը ո՞րտեղից ես գտել— հարցրեց Արշոն մի օր Վինավատին։

— Կարմիրբանակայիններն են տվել,— ասաց Վինավատը, և ցույց տվեց կայազորի տեղը։

Արշոն նույն օրն ևեթ գնաց կարմիրբանակայինների մոտ —կայազոր։ Մի քանի հոգի բակում զենք էին մաքրում, լրագիր էին կարդում, մի երկուսն էլ սրբում էին իրենց երկարաճիտ կոշիկները։

Արշոն, շուրջն աչք ածելով, առաջ գնաց։

— Ի՞նչ կա, է՛յ,— ասաց կարմիրբանակայիններից մեկը։

— Հե՛յ, ընկեր ջան. գլխարկ եմ ուզում։

— Գլխա՞րկ,— զարմացավ լրագիր կարդացող կարմիրբանակայինը,— էստեղ խանո՞ւթ է, ինչ է...

Արշոն, մի քիչ ամաչելով, բացատրեց.

— Ձեր գլխարկներից եմ ուզում։

— Մեր գլխարկը ինչի՞դ է պետք։

— Գլուխս բաց է, արևը տալիս է, գիշերն էլ քնած տեղը մրսում է։

Կարմիրբանակայինը հասկացավ նրան։

— Գլխարկով կքնե՞ն, տո։

— Խի չեն քնիլ, ես գլխիս տակ բան չունեմ. գլուխս քարին եմ դնում ախր։

— Տղերք, սրան մի հին կոմունարկա տվե՛ք,— ասաց լրագիր կարդացողը։

Կոշիկներ սրբող կարմիրբանակայիններից մեկը գնաց և մի հին, ճակատը կարմիր աստղով կոմունարկա բերեց, տվեց Արշոյին։

— Շատ շնորհակալ եմ, ընկեր,— գլուխ տվեց Արշոն ուրախացած,— շնորհակալ եմ։

Կարմիրբանակայինների գլխավորը ժպտաց և մոտ կանչեց նրան։

— Դու խուժանների՞ց ես,— հարցրեց։

— Այո՛։

— Ինչո՞ւ ես խուժանությունն անո՞ւմ։

— Բա ի՛նչ անեմ, ընկեր։ Սոված մնա՞մ։

— Տղերք, սրան հաց տվեք,— կարգադրեց գլխավորը։

Կարմիրբանակայինները նրան մի մեծ կտոր հաց տվին։ Արշոն նորից գլուխ տալով շնորհակալություն հայտնեց ու դուրս եկավ բակից։ Փողոցում նա կոմունարական դրեց գլխին, մի ինչ-որ մահակ ձեռնափայտ շինած, հացը կռնատակին՝ հպարտ-հպարտ գնաց ընկերների մոտ՝ նոր գլխարկը ցույց տալու։

— Խուժաննե՛ր, պատրա՛ստ,— բարձրացրեց նա փայտը, սանդուղների ներքևը կանգնելով։

— Օ՛, վարպետը, վարպետը,— բացականչեցին խուժանները և մի քանիսը տեղներից վեր թռչելով, պատիվ տվին։— Կեցցե՛ վարպետը։

Ուրախությունից Արշոն այդ օրը քաղց չզգաց։ Կոմունարական գլխին, ձեռնափայտով շրջում էր փողոցներում և զգում էր, որ հաղթական տեսք ունի։ Այնքան ուրախ էր, որ շուկայում մի երկու ծիրան թռցրեց միայն և երկու վարունգ։ Որոշեց վարունգը տանել «տուն», իսկ ծիրանները կերավ։ Ընդառաջ թաքուն մի տեղ, խանութների ետև, և հանգիստ ուտում էր, մտածելով զինվորների բարության վրա։ Հազիվ մի ծիրան էր կերել և ուզում էր երկրորդը դնի բերանը՝ խուժաններից մեկը՝ Արտուշը վրա հասավ։

— Լա՛վ է, քո աշխատածը դու ես ուտո՞ւմ,— գլուխը թափ տվեց նա և ուզեց գնալ։

Արշոն սակայն կանչեց նրան։

— Արի՛, լավ արի՛,— ասաց։— Արի էս մեկն էլ դու կեր, ձենդ կտրի։

— Ջեմ ուզում,— գլուխը թափ տվեց նա ու գնաց։

Արշոյի սիրտը դող ընկավ. դող ընկավ այն պատճառով, որովհետև սա երրորդ անգամն էր նրան տեսնում էին իբր «աշխատանքը» թաքուն ուտելիս։ Երկու անգամ նկատողություն են արել և զգուշացրել, որ եթե երրորդ անգամ բռնվի՝ դուրս կանեն։ Նա ծիրանը հանեց բերնից, դեն գցեց ու, ահը սրտում, գնաց «տուն»։

Խուժանները չէին սիրում մի գործ հետաձգել մյուս օրվան,

և այդ երեկո, Չոփուրի գլխավորությամբ, քննեցին Արշոյի գործը։

— Դրո՞ւստ է, վարպետ, ինչ ասում են,— հարցրեց Չոփուրը։— Թաքուն ծիրան ես կերե՞լ։

Արշոն նստած էր բոլորից առանձնացած ու մտահոգ. ամաչում էր և չէր կարողանում ընկերներին նայել։

— Հալբաթ ես սուտ եմ ասում,— խոսեց Արտուշը նեղացած։— Իմ աչքով տեսա էլի։

— Էս քանի անգամ է էտենց է անում, էլի,— ասաց Քուրդը, որ Արշոյին՝ եկած օրից չէր սիրում։— Էդ հլա մեր տեհածն է. բա ինչքան ուտում է էնպես...

— Էդ էլավ ընկերութի՞ն,— ասաց Վինավատը, քիթը վեր քաշելով։

— Էդպես ընկերն սկի հարկավոր չի,— խոսեց մի ուրիշը։

— Մենք աշխատենք՝ ինքն ուտի. իրա աշխատածն էլ ինքը ուտի։

Խուժանները ծիծաղեցին։

Երբ ծիծաղը լռեց, բոլորն սկսեցին միասին դժգոհել, բողոքել։

— Որ էդպես է՝ քո՛ղ գնա։

— Հա՛, դա հո Մինասից ու Սեթոյից լավ տղա չի. նրանց որ դուրս արինք, դրան ինչո՞ւ պըտի պահենք որ...

— Էս իրեք անգամ է էսպես է անում,— խոսեց նորից Քուրդը շատ դժգոհ, որ հարցը ձգձգվում է։

— Ընկերը որ ընկերի մասին չի մտածում— ավելորդ է։

— Լավ, լավ,— ասաց Չոփուրը և, դեմքին մեծ լրջություն տալով, շարունակեց.—Պարզ է, տղեք, պարզ է... Վարպետ,— դարձավ նա գլուխը կախ նստած Արշոյին,— քանի որ դուս ախպեր չան, էդպես բան ես արել, այսինքն՝ քանի որ կարդին ընկերություն չես անում, այսինքն՝ քու աշխատածը բաբուն ես ուտում, գնա՛, ախպեր չան... դու քե՛զ համար, մենք մեզ համար...

Չոփուրը լռեց մի փոքր ու շարունակեց խիստ.

— Էգուց՝վանից գնա։ Հասկացա՞ր։ Մենք էսպես ենք։ Եթե ամեն մինը իր աշխատածն ուտի— էլ ի՛նչ խուժան։ Չէ, գնա՛

քեզ համար,— վերջացրեց Ջուփուրը ճառը և ավելացրեց.— Տղե՛ք, քնեցե՛ք։

Արշոն, որ բոլոր ժամանակ կուչ եկած, գլուխը կախ լսում էր ընկերներին և սիրտ չէր անում մի խոսք ասել, զղջալով արածի համար, սակայն հանկարծ, երբ հուզված, գրգռված որոշեցին դուրս անել նրան, նա վեր կացավ և ուզեց ներողություն խնդրել։

— Ես սխալվել եմ, ախպեր, էլ...

— Թարկը տուր,— ասաց Ջուփուրը,— իրեք անգամ արել ես, վերջացավ։ Էլ ոչ մի խոսք, քնի ու առավոտը գնա՛...

Արշոն, խոսքի կեսը բերանում, լռեց։ Լռեց ու նստեց տրխուր։ Գիտեր, որ խուժանից հեռացնել— նշանակում էր այլևս իրավունք չունի երևալ այն տեղերում, ուր խուժանն է լինում. այսինքն չի կարող գնալ շուկա, չի կարող գնալ ճաշարանները, սայլերի առաջ. խուժանները չէին Թողնի, ինչպես չէին Թողնում այն բոլոր տղաներին, որ իրենց մեջ չէին։ Նա այդ լավ գիտեր և դրա համար տխրեց ու տխուր էլ պառկեց քնելու։

Պառկեց, բայց քունը չտարավ։

Մտածում էր շարունակ, Թե ինչ պիտի անի և ինչպես պիտի ապրի։

Մտածում էր ու չէր կարողանում քնել։

VI

Խուժանից դուրս գալով՝ Արշոն չգիտեր ի՛նչ անի և ո՛ւր գնա։ Պտտվում էր քաղաքային այգում և նայում զբոսնողներին։ Շուկա, ճաշարաններ չէր ուզում գնալ ո՛չ Թե նրա համար, որ խուժանները չէին Թողնի. գուցե և բան չասեին իրեն ծանոթի, բայց չէր գնում նրա համար, որովհետև ամաչում էր ընկերներից։ Եվ այդ պատճառով առաջին օրը անցրեց գրեթե քաղցած, եթե չհաշվենք իրիկվանից պրպտնում մնացած հացի կտորը, որը, իր «գործի» քննության պատճառով, իրիկունը չկարողացավ ուտել։ Իսկ մյուս օրը, երբ քաղցը նեղեց՝ հիշեց կայազորի կարմիրբանակայիններին, որ գլխարկ ու հաց էին տվել իրեն, հիշեց ու գնաց նրանց մոտ։ Ինչպես առաջին

անգամը, այժմ էլ կարմիրբանակայինները բակում զանազան բաներով էին զբաղված. շոր էին թափահարում, ոտնաման էին սրբում, մարզանք էին կատարում և մի երկուսն էլ, առաջվա պես, լրագիր էին կարդում։

Կարմիրբանակայիններից մի քանիսը ճանաչեցին նրան։

— Հը՛, ի՞նչ կա, խուժան։

— Հե՛չ,— ասաց Արշոն, ու գլուխը կախ գցեց։

— Էլի գլխարկ ես ուզո՞ւմ

— Չէ... — Ու լռեց։

— Սովա՞ծ ես,— հարցրեց լրագիր կարդացողներից մեկը և, տեսնելով նա գլուխն ավելի իջեցրեց, ձայն տվեց.— Այ տղա, խուժանը սոված է, մի քիչ հաց բերեք։

Կարմիրբանակայիններից մեկը բերեց մի կտոր հաց ու տվեց Արշոյին։

Ուրախությունից նրա դեմքը փայլեց։

— Շնորհակալ եմ;— ասաց, աչքերը գցելով հաց տվող և տալու կարգադրություն անող կարմիրբանակայինների երեսը, ապա սկսեց ուտել։

Այնուհետև, երբ փողոցում բան չէր գտնում՝ գնում էր կայազորի կարմիրբանակայինների մոտ։ Իսկ գիշերները քնում էր այգու այն նստարանի վրա, ուր քնում էր քաղաք եկած առաջին օրերը։ Հիմա լավ էր. ոչ միայն օրերը, գիշերներն էլ տաք էին և նա չէր մրսում։ Ամեն օր, առաջվա պես, հանդիպում էր էլի խուժան տղաներին, բայց չէր մոտենում։ Մի երկու անգամ պատահեց՝ մարդիկ բեռ տվին տուն տանելու, մի անգամ ուտելիքներով լիքը կողով, հետո մի կապոց, ապա մի երեխա, և դրանց համար փող ստացավ։ Երեխան գրկելու համար, օրինակ, երեխայի մայրը տվեց ամբողջ 20 կոպեկ։ Այդ օրը նրա ուրախությանը չափ չկար։ Բայց այդպիսի «գործեր» քիչ էին պատահում, և նա շատ ժամանակ նստում էր այգում ու նայում զբոսնող մարդկանց։ Շոգ էր, և այգին, քանի գնում, լցվում էր ամեն տեսակ մարդկանցով, որոնք շարվում էին նստարանների վրա և, գլխարկները վերցրած, հովհարում իրենց։ Ու փոքրիկ տղաներն ամեն օր փոքրիկ կուլաներով ջուր էին ծախում.

— Լա՛վ ջուրը, սա՛ռը ջուրը։

Մահած ամեն մի բաժակ ջրին ստանում էին մի երկու կոպեկ, երբեմն շատ, նայած մարդուն։ Ով խղճով էր՝ շատ էր տալիս։ Մի օր Արշոն տեսավ ջուր ծախող տղաներից մեկն աշխատել էր հիսո՛ւն կոպեկ, չկարողացավ զարմանքը պահել։

— Էդքանը էսօր աշխատեցի՞ր,— հարցրեց նա փայլող աչքերով։

— Ըհը՛,— գլխով արավ տղան՝ իր աշխատանքից գոհ։

— Ամեն օր էդքան աշխատո՞ւմ ես։

— Ըհը՛։ Օրը գիդի. օր կա՝ ավել, օր կա՝ պակաս։

— Սա քանիսո՞վ ես առել,— հետաքրքրվեց Արշոն, ձևը կուլայի վրա դնելով։

— Հե՛չ, վեց շահի։

— Վեց շահի՞,— նորից զարմացավ Արշոն։

— Ըհը՛,— գլխով արավ տղան, փողերը գրպանը դնելով։

— Իսկ բաժակը քանիսո՞վ ես առել,— շարունակեց Արշոն իր հարցուփորձը։

— Էս հեչ, մեր տանից է,— ասաց տղան ու գնաց կանչելով։— Ա՛յ լավ ջո՛ւր, սառը ջո՛ւր...

Արշոն մտածմունքի մեջ ընկավ։ Ինքն ուներ քառասուն կոպեկ, որ ձեռք էր բերել բեռ կրելուց։ Մտածում էր՝ ինչո՛ւ ինքն էլ մի կուլա չառնի և տղաների նման ջուր ծախի. բայց հիշելով որ խուժանները ջուր ծախող տղաներին «սպեկուլյանտ» են ասում— ամաչում էր։

Այնուամենայնիվ, երկար մտածելուց հետո, նա գնաց շուկա՝ կուլա և թիթեղե բաժակ գնելու։

Եվ հետևյալ օրն արդեն ջուր էր ծախում մյուսների նման «լավ ջուր, սառը ջուր» կանչելով։ Կանչում էր մի քիչ ամաչելով, անվարժ, առանց երգեցիկ ձայնի, ինչպես մյուսները. կանչում էր ու կանգնում նստարանների առաջ, սպասելով որ ջուր ուզեն մարդիկ, ու թեև շատ քիչ մարդ էր ջուր ուզում, որովհետև ծախող շատ կար, այնուամենայնիվ Արշոն անցնում էր բոլոր ծառուղիները, մոտենում էր բոլոր նստարաններին. «լա՛վ ջուր, սառը ջո՛ւր»... Մի խոսքով՝ օրական հացի փող էր աշխատում։ Կեսրակրվում էր առաջվանից մի քիչ լավ—հաց, միրգ, մի երկու անգամ էլ գնաց ճաշարան, այժմ

ոչ թե հաց ու միս խնդրելու, այլ ճաշելու։ Գնում էր, իհարկե ամենաէժան ճաշարանը. սիրտն ուզում էր մեկ-մեկ էլ տաք բան ուտել. վաղուց տաք կերակուր չէր կերել։

Բայց այս քիչ էր պատահում, իհարկե։

Գործը, պետք է ասած, ծանր չէր, բայց մի անախորժ բան կար։ Խուժան ընկերները պատահելիս, նրան էլ, ինչպես մյուս ջուր ծախողներին, «սպեկուլյանտ» էին ասում. սակայն այնքան վատ չէին վերաբերվում, ինչպես մյուսներին։ Վատ էր նրա հետ միայն Քուրդը. պատահած ժամանակ խեթ-խեթ նայում էր և գոռում՝ «սպեկուլյանտ»... Մեկ-մեկ էլ, դիտմամբ ջուր էր ուզում, և երբ Արշոն մերժում էր,— հայհոյում էր և սպառնում բռունցքով.

— Սպասի՛ր...

Եվ Արշոյին թվում էր, որ Քուրդը նպատակ ունի իր կուլեն կոտրելու. այդ պատճառով իր նստարանի վրա քնելիս՝ կուլան, թիթեղե բաժակը հետ միասին, դնում էր կողքի ծաղկանոցը, փշալարերի տակ բուսած խիտ կանաչի մեջ, ծածկում էր կանաչներով ու տերևներով և քնում։ Սակայն ոտնաձայն լսելիս, վեր էր թռչում հաճախ և նայում կուլի կողմը, թե հո չեն գողանում։ Երբեմն էլ վատ, մութ, անկապ երազներ էր տեսնում. մեկ տեսնում էր իրեն գյուղում, կոշկակարի արհեստանոցում, մեկ քաղաքում՝ խուժանների հետ դողրջյուն աննելիս. հաճախ էլ գյուղ ու քաղաք խառնվում էին իրար և նա չէր կարողանում երազը հիշել։

Ու օրերն անցնում էին իրար նման. ամբողջ օգոստոս ամիսը ջուր էր ծախում, և չէր պատահում, որ մեկը բաժակին երկու երեք կոպեկից ավելի փող տար, սովորականը մի կոպեկ էր, կամ երկու. երբեմն պատահում էր այնպես, որ մեկը երկու բաժակ ջուր էր խմում և վճարում էր՝ միայն մի կոպեկ։

Մի խոսքով— մեծ օգուտ չկար։

Բայց մի օր Արշոյի բախտը բանեց։ Այդ օգոստոսի կեսերին էր, մի սաստիկ շոգ օր։ Այգում հայտնվեց մի հասուն, բարձրահասակ մարդ, որ ուներ շատ հաստ բեղեր և ոսկե մատանիներ. դրանցից մեկը բութ մատին։ Նա եկավ մի ջահել տղայի հետ, նստեց նստարանին ու սկսեց ճակատի քրտ-

տինքը սրբել թաշկինակով։ Արշոն հենց այգի մտնելուն պես հետևեց նրան. գիտեր որ այգի մտնողը, մանավանդ շոգած, գեր մարդիկ ջուր են ուզում։ Ուստի, երբ հաստ մարդն սկսեց ճակատը սրբել՝ Արշոն մոտեցավ և կանչեց.

— Լավ չո՞ւր, սառը չո՞ւր...

Հաստ մարդը, իսկապես, ծարավ էր. նա միանգամից խմեց երկու բաժակ և հարցրեց, թե ի՛նչ պիտի տա.

— Դու գիտես։

— Տասը կոպեկ հերի՞ք է,— ասաց մարդը թավ ձայնով։

Արշոյի աչքերը փայլեցին։ Առավ տասը կոպեկը և ուրախությունից ժպտաց մարդուն, որ ջուր խմելուց հետո բեղերը սրբում էր թաշկինակով։ Արշոն մեկ էլ նայեց նրան, նայեց կողքի տղային, ժպտաց կրկին և ուզեց հեռանալ, բայց մարդը կանգնեցրեց։

— Լսիր, տղա. ե՛կ այստեղ։

Արշոն մոտեցավ։

— Օրական ի՞նչ ես վաստակում։

Արշոն մի վայրկյան շփոթվեց, չիմանալով ի՛նչ ասել, բայց հետո իրեն հավաքեց.

— Հացի փող...

Ապա մարդը հարցուփորձ արավ, թե որտեղացի՞ է Արշոն, քանի՞ տարեկան է, հետո հանաքով խփեց ուսին և ասաց.

— Ի՞նչ տամ, որ երկու բաժակ խմես քու ջրից։

— Ո՞նց թե,— զարմացավ Արշոն։

— Խմիր էլի՛։ Երկու բաժակ խմիր հինգ կոպեկ տամ... լա՞վ։

Արշոն չէր հասկանում. ինչպե՞ս. իր ջուրը ինքը խմի և փողը ուրիշը տա՞։

— Ես խմեմ, փողը դու տա՞ս,— հարցրեց տարակուսած։

— Հա՛, երկու բաժակ խմի, հինգ կոպեկ տամ։

Արշոն նոր միայն հասկացավ նրա միտքը և, թեև ծարավ չէր, խմեց երկու բաժակ իր ջրից ու ստացավ հինգ կոպեկ։

Մարդը և նրա մոտ նստած տղան ծիծաղեցին, բայց Արշոն գոհ մնաց իր վաստակից. երկու բաժակ ջուրն ի՛նչ է որ... ծարավ չէր, բայց խմեց։ Մեծ բան չի...

Այդ օրը նա վաստակեց բոլոր օրերից շատ։ Աշխատածը

նա, սովորաբար, դնում էր ծոցագրպանը և գրպանի բերանը ամրացնում անգլիական քորոցով, ու չնայած դրան, գիշերը մի քանի անգամ, կուլին նայելիս, շոշափում էր գրպանը, տեսնելու՝ փողերն իրենց տե՞ղն են թե ոչ։ Իսկ այդ գիշեր նա առանձնապես ուշադիր էր դեպի գրպանը. երկու անգամ-վա փոխարեն զարթնեց չորս-հինգ անգամ ու ձեռը տարավ դեպի կուրծքը։ Մի քանի անգամ էլ երազում տեսավ հաստ մարդուն, որ իրենից ջուր էր ուզում ու ծիծաղում, ծիծա-ղո՜ւմ... Նա զարթնում էր, վեր թռչում ու շուրջը նայում. մո-տը մարդ չէր լինում, ծառերն էին միայն խշշում գիշերվա քամուց և առուներն էին գլգլում այգու ամայության մեջ։ Ու զարթնելիս ամեն անգամ ուրախությամբ հիշում էր վաստա-կածը։ Մի շաբաթ էլ այսօրվա պես աշխատի, ահագին փող կունենա,— մտածում էր ու նորից քնում։

Մյուս օրը, կեսօրից առաջ, երբ սովորաբար մարդիկ հա-վաքվում էին այգի և երբ առանձնապես ծարավում էին, Ար-շոն կուլան լցրած մտավ այգի և, ծառուղիներում շրջելով, սկսեց որոնել հաստ մարդուն, քանի դեռ ուրիշ տղաներ նրան չէին ճանաչել, ուզում էր գտնել. Արշոյի համար բոլոր «մուշ-տարիներից» ամենահուսալին այդ մարդն էր. ջուր շատ էր խմում և լավ էլ վճարում էր— ամեն անգամ տասը կոպեկ։

Շրջեց մի ժամի չափ՝ չգտավ։ Ուրեմն դեռ չի եկել,— մտա-ծեց,— կամ գուցե, գնացել է քաղաքից... Հուսահատված ու-զում էր արդեն ջուր առաջարկել մյուս մարդկանց, հանկարծ դեմ առ դեմ հանդիպեց հաստ մարդուն, որ երեկվա տղայի հետ նոր մտել էր այգի և, գլխարկը վերցրած երեկվա պես, ճակատն ու վիզը սրբում էր թաշկինակով։

Նրան տեսնելուն պես՝ Արշոն կանգ առավ ու ժպտաց։

— Ջո՛ւր, սառը ջո՛ւր,— ասաց նա մարդու ուշադրությու-նը գրավելու համար և, տեսնելով զբաղված է քրտինքը սրբե-լով, հարցրեց.— Ջուր չե՞ս ուզում, եղբայր։

— Ջո՛ւր. տո՛ւր։

Հաստ մարդը, նստելով, խմեց էլի երկու բաժակ, հետո առաջարկեց հետի տղային. նա էլ խմեց մի բաժակ, և այդ երեք բաժակի համար տվեց տասնուհինգ կոպեկ։ Հետո, կարծես ճանաչեց Արշոյին։

— Ծո, դու երեկվա տղե՞ն ես։

Արշոն ժպտաց ու գլխով արավ.— Այո՛։

Մարդը նույնպես ժպտաց։

— Հը, կարա՞ս էլի երկու բաժակ խմես։

Արշոն ուրախացավ։

— Կարա՞մ։

— Խմիր, հինգ կոպեկ տամ։

Արշոյի մարմնով ուրախության դող անցավ։

Խմեց երկու բաժակ և ստացավ էլի հինգ կոպեկ։

Հաստ մարդը ոգևորվեց։

— Հը, կարա՞ս մեկն էլ խմել։

— Կարա՞մ,— հպարտացավ Արշոն։

Թեև դժվար էր, բայց խմեց մի բաժակ էլ և նորից հինգ կոպեկ ստացավ։

Եվ այդ օրը նա շատ գոհ մնաց. մեկնակ հաստից ստացավ քսանուհինգ կոպեկ, մյուս մարդկանցից էլ մի տասնուհինգ կոպեկ— եղավ քառասուն կոպեկ։

«Օ՛, քառասուն կոպեկ», մտածում էր նա երեկոյան, փողը կրծքի գրպանում տեղավորելով և ուրախությամբ մյուս օրվա մասին մտածելով։

Եվ այնուհետև հաստ մարդը նրա ջուրն էր խմում— ամեն անգամ երկու-երեք բաժակ, հետո հանաքով գրազ էր գալիս Արշոյի հետ, խմեցնում էր նրան մի քանի բաժակ ու դարձյալ հինգ-տասը կոպեկ տալիս։ Արշոն ծարավ չէր լինում, դժվարանում էր խմել, բայց քանի որ փող էր ստանալու՝ խմում էր։ Եվ հաստլիկը կամաց-կամաց ավելացնում էր բաժակների թիվը. երկուսից անցավ երեքի, երեքից՝ չորսի, հետո մի օր էլ առաջարկեց խմել հինգ բաժակ։ Արշոն երեքը խմեց ու կանգ առավ. ապա ուժ առավ՝ խմեց և մեկը, կոկորդը լցվեց, բայց վիզը երկարեց և ջուրն իջավ ցած. այդ ժամանակ գլխին քաշեց և հինգերորդը։ Այս անգամ արդեն բերանը լցվեց և քիչ էր մնում թափվի...

Հաստ մարդն ու հետի տղան ծիծաղում էին, բայց Արշոն պահեց իրեն ու մի կերպ ջուրը ծծեց ներս, որ չխայտառակվի։ Թեև դժվար էր, բայց խմեց. աչքերը միայն արցունքոտե-

ցին. սակայն ուրախ էր, որ այդ հինգ բաժակի համար ստացավ տասնուհինգ կոպեկ։

Այսպես շարունակեց շաբաթից ավելի. հաստլիկը խմում է և Արշոյին խմեցնում ու ծիծաղում։ Մի օր էլ նա, երբ ինքն ու հետի տղան խմեցին, Արշոյին առաջարկեց ամբողջ կուլան խմել։

— Եթե խմես,— ասաց,— քսան կոպեկ կտամ։

Ամբողջ կուլա՞ն... Արշոն նայեց կուլին ու ժպտաց։

Հաստլիկը նույնպես ժպտաց.

— Հը՛, կխմե՞ս։

Քսան կոպեկի գայթակղությունն այնքան մեծ էր, որ Արշոն չդիմացավ և կուլան քաշեց գլխին— կը՛լ-կը՛լ-կը՛լ...

Կլկլում էր ջուրը կուլի կոկորդում և գնում Արշոյի բերանը։

Խմեց նա, խմեց և հանկարծ կանգ առավ. ջուրը լցվել էր մինչև բուկը՝ու էլ չէր գնում։ Նա որձկաց մի երկու անգամ ու ապա՝ աչքերը լցվեցին արցունքով։

Հաստլիկը, ձեռները ծնկներին, ծիծաղում էր.— «հա՛-հա՛-հա՛»...Ծիծաղում էր ու ասում.

— Ա՛յ չխմեցիր, բան չեմ տա։ Պայմանը՝ պայման է...

Արշոն ուղղվեց, հազաց և կուլան նորից քաշեց գլխին։

Մի քանի ջուր ծախող տղա և հարևան նստարաններին նստած մարդիկ նայում էին, թե կարո՞ղ է արդյոք Արշոն խմել մի կուլա ջուր։

Մինչ այդ ջուրը կլկլում էր կուլի կոկորդում և թափվում նորից Արշոյի բերանը... Թափվում էր, թափվում և, Արշոյին թվում էր, թե վերջ չունի կուլի ջուրը. եղավ մի վայրկյան, որ նրան թվաց թե խեղդվում է. մեկ էլ աչքերը կուլ գնացին, ոտներն ու ձեռները դողդողացին և նա վախեցած ցնցվեց. ջուրը թափվեց բերանից ու կուլից միաժամանակ և շորերը թրջեց. դրա հետ միասին աչքերից ցայտեցին արցունքի շիթեր և նա հեկեկաց։

Ջուր ծախող տղաներն ու հարևան նստարաններին նրստողները քրքջացին, իսկ հաստ մարդը, բեղերն ուղղելով, ժպտում էր, ծիծաղում և ասում.

— Ոչինչ, ոչինչ, տղաս, մի լար...

Բայց Արշոն շարունակում էր լալ և թևքով աչքերը սրբել։

— Դե լա՛վ, լա՛վ,— ասաց մարդը նորից ծիծաղելով,— չմտեցիր, բայց ոչինչ, ա՛ռ, ա՛ռ քեզ քսան կոպեկ։

Ու, զոռով, Արշոյի բուռը կոխեց մի քսան կոպեկանոց։

Բայց,— անսպասելի բան,—Արշոն քսան կոպեկանոցը ետ շպրտեց հանկարծ։

— Չեմ ուզում,— ասաց գրեթե հեկեկալով։

Քսան կոպեկանոցը դիպավ մարդու երեսին, հետո ընկավ գետին։ Իսկ ինքը՝ Արշոն վիրավորված, հուզված, աչքերը թևքով սրբելով, գնաց դեպի այգու ծայրը, արև մի տեղ, որ թրջված շորերը չորացնի։

Հազիվ Արշոն դուրս էր եկել այգու ծայրը՝ հանդիպեց Քրդին։ Քուրդը մի նոր մեշոկ ուսին գցած՝ կանգնեց նրա առաջ։

— Սպեկուլյանտ, մի քիչ ջուր տուր։

Արշոն չխոսեց. հեկեկանքը զսպելով՝ ուզեց շարունակել ճանապարհը, բայց Քուրդը նորից կտրեց առաջը։

— Ջուր տո՛ւր՝ ասում եմ։

— Կորի՛,— պատասխանեց Արշոն արհամարհանքով։

— Ջես տալի՞՞ս,— սպառնաց Քուրդը ձեռքի մեկը բռունցք շինած։— Ջես տալի՞...

— Չէ՛,— բարկացավ Արշոն, բնազդաբար կուլան դնելով թևի տակ։—Չեմ տալիս...

— Ջես տալի, դե՛ առ քեզ,— ասաց Քուրդը և բռունցք շինած ձեռից մի քար նետեց կուլի վրա։

Լավեց մի խուլ թրխկոց, կուլի փորը փշուր-փշուր թափվեց գետին և մեջը մնացած ջուրը թրջեց նորից Արշոյի թրջված շորերը։ Եվ միայն կուլի ունկն ու վիզը մնացին նրա թևի տակ։

Արշոն, հանկարծակիի եկած, մնաց ապշած, ու մինչ ուշքի կգար՝ Քուրդը փախավ։

Տեսնելով նրա փախուստը՝ Արշոն էլ չհամբերեց, ինքն ևս վազեց նրա ետևից՝ վրդովված ու լացակնած։ Նա վազում էր և ճանապարհից քարեր վերցնելով՝ նետում Քրդի ետևից։ Բայց ոչ մեկը ոչ միայն չէր դիպչում, այլև չէր հասնում նրան։ Այդ ժամանակ Արշոն զայրացած, ատամներն իրար սեղմած, քայլերն արագացրեց։ Նետեց մի երկու քար ևս— չդիպավ։

Քուրդը ոչ թե վազում, այլ կարծես թռչում էր։ Եվ այն է, այգուց դուրս գալով՝ ուզում էր անցնել փողոցը՝ Արշոն նետեց վերջին քարը, որ դրանով վերջ տա իր հետապնդումին։

Այս անգամ սակայն քարը չվրիպեց։

Եվ Քուրդն երեսն ի վայր փռվեց գետնին։

— Դե գնա՛,— ասաց Արշոն, և ուզեց ետ դառնալ, բայց միլիցիոները բռնեց նրա ձեռը։

VII

Միլիցոները Արշոյին ու Քրդին տարավ միլիցիատուն, ուր նրանց հարցաքննեցին— ո՞վ են, ո՞րտեղացի, ինչո՞վ են պարապում։ Հարցաքննեցին ու պահեցին։ Արշոն խնդրեց, որ իրեն բաց թողնեն, որովհետև մեղք չունի։ Պատմեց, որ Քուրդն ամեն օր ծաղրում էր, իրեն «սպեկուլյանտ» էր ասում, ինքը լռում էր, չէր պատասխանում, բայց երբ կուլան կոտրեց— էլ չհամբերեց ու խփեց։

Նրա խնդիրքը սակայն չհարգեցին, այլ ընդհակառակը, տարան նրան փակեցին մի փոքրիկ սենյակում, ուր կային երկու հասակավոր մարդ, որոնց բռնել էին գողության համար։ Դրանցից մեկը շարունակ քնում էր և, քնած ժամանակ, կա՛մ զայրացած խոսում էր, կա՛մ խելագարի պես ծիծաղում։ Արշոն դողում էր. չլինի հանկարծ այդ մարդը խեղդի իրեն։ Բայց, լավ էր, երկու օր պահելուց հետո, երկուսին էլ՝ Արշոյին ու Քրդին— տարան Մանկական գաղութ։ Արշոն վախենում էր, որ այդ նոր տեղն էլ միլիցիատան բանտի պես բան լինի, ուստի ճանապարհին շարունակ մտածում էր՝ լավ կլինի մի հարմար տեղից փախչի։ Բայց չփախավ, որովհետև միլիցիոները մի քայլ անգամ չհեռացավ մինչև գաղութ, որ գտնվում էր հեռո՜ւ, քաղաքի ծայրին։

Սակայն Մանկական գաղութը բոլորովին այլ բան էր, քան Արշոն երևակայում էր։ Հենց բակը մտան թե չէ՝ նա զարմացավ ծաղիկների առատության վրա։ Ինչքա՜ն ծաղիկ կար— գույն-գույն, մեկը մյուսից գեղեցիկ, բոլորը շարքով, խնամքով։ Ամեն ծաղկանոցի մեջ մի թումբ էր շինված, իսկ թմբի



մեջտեղը տնկված էր մեծ՝ կարմիր կամ կապույտ ծաղիկ։ Լա՜վ էր... Ծաղիկներից բացի՝ բակում կային խնձորի և տանձի ծառեր՝ պտուղներով ծանրաբեռ։ Մի քանի փոքրիկ տղաներ քաղհանում էին ծաղիկների մարգերը, մի երկուսը՝ ջրում էին ծառերը։

Բակը Արշոյին դուր եկավ. ընդարձակ էր և ամբողջովին սալած, մաքո՛ւր։ Բայց քանի մոտենում էին տանը՝ նրա անհանգստությունն ավելանում էր. ի՞նչ պիտի անեն արդյոք, ի՞նչպես պիտի վերաբերվեն...։

Միլիցիոները նրան և Քրդին տարավ վերին հարկը։ Սանդուղներով բարձրացան և մտան գրասենյակ։

Վարիչը միջահասակ, բեղերի ծայրերը կտրած, վերնաշապիկով մարդ էր, որին բոլորն «ընկեր Երվանդ» էին ասում։ Միլիցիոներն ինչ-որ բան ասաց նրան, իսկ նա Արշոյին ու Քրդին նայեց և ժպտաց։ Հետո հարցրեց նրանց անուն-ազգանունը և թե ո՛րտեղացի են։

— Իսկ դու գրել-կարդալ գիտե՞ս— դիմեց նա Արշոյին։

Արշոն պատասխանեց, որ մի քիչ գիտի, իսկ Քուրդը բոլորովին չգիտեր։

— Կուզե՞ս սովորել,— հարցրեց վարիչը Քրդին։

Քուրդը աչքի տակով նայեց վարիչի կտրած բեղերին, վերնաշապկի կրծքագրպանից կախած ժամացույցի շղթային և ժպտաց։

— Ինչի՞ համար սովորեմ,— հարցրեց նա։

— Որ գիրք կարդաս, նամակ գրես, հաշիվ պահես։

— Ո՞ւմ համար,— հարցրեց Քուրդը։

— Քեզ համար,— ասաց վարիչը։

Այս հարցուփորձից հետո՝ ընկեր Երվանդը կարգադրեց, որ նրանց տանեն բաղնիս։ Եվ նույն օրը երկուսին էլ, մի քանի ուրիշ տղաների հետ, որոնց նույնպես միլիցիան էր բերել քաղաքից, տարան բաղնիս, շորները փոխել տվին ու նորից բերին գաղութ։ Գաղութում շատ տղաներ կային՝ ութից մինչև տասնհինգ տարեկան։ Մի քանիսին Արշոն ճանաչեց, տեսել էր շուկայում, փողոցում խուժանություն անելիս։

Առաջին մի քանի օրը կյանքը գաղութում ձանձրալի էր թվում Արշոյին, բայց կամաց-կամաց ընտելացավ, որովհետև

օրերն անցնում էին գործի ու զբաղմունքի մեջ, էլ ձանձրանալու ժամանակ չէր լինում։ Առավոտը վեր էին կենում, լվացվում, սրբվում ամեն մեկն իր սրբիչով, մարզանք անում ու գնում սեղանատուն, ուր տալիս էին թեյ, հաց ու պանիր, հետո գնում էին արհեստանոց՝ փոքրերը կարտոնից բաներ շինելու, իսկ մեծերը հյուսնություն սովորելու. շինում էին աթոռներ, սրբիչ կախելու բաներ, փոքրիկ սեղաններ, պահարաններ։ Ինչ ուզեիր— վարպետը սովորեցնում էր։ Բայց այդ աշխատանքն Արշոյին դուր չէր գալիս, մանավանդ այն պատճառով, որ Քուրդն իր հետ էր լինում։ Նա ուզում էր Քրդից հեռու լինել, որովհետև Քուրդն իրեն լավ չէր պահում. մեկ-մեկ էլի, առաջվա պես, «սպեկուլյանտ» էր ասում։ Ճիշտ է, դաստիարակը՝ ընկեր Համբարձումը նրան զգուշացրեց մի քանի անգամ, որ այդպես լավ չի, ընկերների մոտ այդ խոսքը չասի, որովհետև մյուսներն էլ կսովորեն։ Բայց Քուրդը չէր խրատվում, գործի ժամանակ գալիս էր թեքվում Արշոյի ականջին և բարձրաձայն կանչում. «սպեկուլյանտ»։ Մի երկու անգամ էլ թեյի ժամանակ իր բաժակի մեջ աղ լցրեց, թե՝ «քող քաղցր ըլի»...։

Արհեստանոցի աշխատանքը վերջանում էր ճաշի ժամանակ։ Ուտում էին մեկ, երկու տեսակ կերակուր ու գնում դպրոց։ Արշոն առաջին խմբումն էր. բոլոր առարկաների մեջ նրան դուր էր գալիս թվաբանությունն ու աշխարհագրությունը։ Թվաբանության ուսուցիչ ընկեր Մինասը նույնպես դուր էր գալիս նրան, որ իրեն՝ «Արշոյի» փոխարեն, միշտ «Արշալույս» էր ասում։ Մինչ այդ Արշոն չէր իմանում, որ իր անունը «Արշալույս» է. նա մանկությունից միայն «Արշո» էր լսել, և զարմանում էր, որ չի իմացել թե այդպիսի լավ անուն ունի։

Հետո նրան ավելի դուր էին գալիս ակումբի զբաղմունքները։ Դասերից հետո, երբ քիչ խաղում էին, գնում էին ակումբ. տղաներն այնտեղ կարդում էին գիրք, լրագիր. խաղում էին շախմատ, տամա։ Ամենից հետաքրքիր էր շախմատը։ Ինչքա՜ն խելք էր հարկավոր խաղը տանելու համար... Այդտեղ՝ ակումբում հասակավոր տղաները երբեմն թատրոն էլ են խաղում, բեմից բաներ էին կարդում, երեկոները դաստիարակ

ընկեր Համբարձումը և վարիչը՝ ընկեր Երվանդը գալիս էին զրուցում, մեկ-մեկ էլ բժիշկն էր գալիս խոսում. նա ասում էր— հաց ուտելիս պետք է լավ ծամել, կերակուրի վրա շատ ջուր չխմել և հետո, ասում էր, ամեն օր պետք է ատամները լվանալ։ «Մարդ բան ու գործ չունի՝ պետք է ատամները լվանա», մտածում էր Արշոն և հիշում հոր ատամները, որ թեև չէր լվանում, բայց միշտ սպիտակ էին ու առողջ։ Շեկ մազերով ու ակնոցով մարդ էր բժիշկը, և այնքա՜ն բան գիտեր... Ասում էր՝ շատ մի ուտեք առհասարակ և մանավանդ երեկոները քիչ կերեք, որ լավ քնեք... Այս մեկը ճիշտ էր ասում բժիշկը. Արշոն այդ փորձով գիտեր. մի երեկո տղաները խնձոր էին բերել— լավ կերավ և գիշերը շատ անհանգիստ էր. վերակացու ընկեր Մեսրոպը կարծում էր, թե Արշոն տխուր է, դրա համար քունը չի տանում։

Չէր սիրում Արշոն, երբ գիշերը ննջարանում, տղաների քնած ժամանակ, վերակացուները գնում գալիս էին մահճակալների արանքով, և այդ պատճառով չէր կարողանում կարգին, մի քիչ երկար զրուցել ընկերների հետ։ Իսկ Արշոն հիմա շատ ընկերներ ուներ գաղութում, բայց մտերիմ էր միայն երկուսի հետ։ Մեկը Տաճատն էր, մի որբ տղա, որ բռնել էին խուժանության համար. մի տարի էր գաղութումն էր. ուզում էր հյուսնություն սովորի ու գնա գյուղ։ Մյուսը՝ Արամն էր. սրան էլ բռնել էին խուժանության համար. երկու տարի մնացել էր գաղութում և հիմա աշխատում էր քաղաքում— տպարանում։ Տպարա՜ն... Արշոն այդ խոսքը առաջին անգամ Արամից էր լսում։

— Էդ ի՞նչ բան է՝ էդ տպարանը,— հարցրեց նա,— դուքա՞ն է թե կոոպերատոր։

— Չէ, տպարանը ուրիշ է,— բացատրեց Արամը։— Էնտեղ գիրք, կազեթ են տպում։

— Գի՞րք,— զարմացավ Արշոն։

Հետաքրքրական էր տեսնել այդ տպարան անածը։ Արամը պատմում էր, որ իր համար տպարանում գործ գտել է ընկեր Երվանդը։ Պատմում էր, որ հա՛մ սովորում է, հա՛մ ռոճիկ է ստանում, համ էլ կեսօրից առաջ մի բաժակ կաթ են տալիս։ Շատ պատմություն էր անում Արամը տպարանի մասին, և

մեկը մյուսից հետաքրքրական։ Մի երկու անգամ էլ գիրք բերեց և ասաց, որ իրենց տպարանում են տպել։ Գրքերից մեկը պատկերազարդ էր և Արշոյին շատ դուր եկավ։

— Որ գամ տեսնելու, կթողնե՞ն,— հետաքրքրվեց Արշոն մի օր։

— Չէ,— ասաց Արամը,— կողմնակի մարդկանց մուտքն արգելված է։ Մեզ մոտ շատ խիստ է...

Արշոն մտածմունքի մեջ ընկավ. նա մտածում էր ինչպես անի, որ այդ տպարան ասածը տեսնի. արդյոք ընկեր Երվանդը կթողնի՞... Արշոյին, իբրև նոր եկածի, դեռ քաղաք չէին ուղարկում՝ որևէ բան բերելու. պետք է մնար մի, երկու ամիս, որ քաղաք ուղարկեին։ Այդ պատճառով նա մտածում էր ընկեր Երվանդից թուլտվություն խնդրել։

Բայց մի օր այնպես պատահեց, որ ընկեր Երվանդը առանց խնդրելու էլ, թույլ տվեց։ Ամեն օր լավ վարքի տեր տղաներից մի խումբ ուղարկում էր քաղաք— հաց կամ այլ բաներ բերելու։ Եվ որովհետև այդ օրը գնացող տղաներից մեկը հիվանդացել էր, Արշոյին ուղարկեց նրա փոխարեն։ Քաղաք գնալիս Արամն էլ իրենց հետ էր։ Ճանապարհին նա ցույց տվեց տպարանը, որ մի սև, բարձր տուն էր՝ մե՜ծ-մե՜ծ լուսամուտներով, որոնք բացվում էին փողոցի վրա։ Լուսամուտները սակայն նրա բախտից բարձր էին և նա չէր կարողանում բան տեսնել. լսվում էր միայն ինչ-որ խուլ աղմուկ...

Մի երկու անգամ նա գնաց եկավ՝ ոչինչ չերևաց։ Հետո անցավ բակը, մտածելով. թե այնտեղից, գուցե, մի բան երևա։

Բակի վրա բացվում էր տպարանի ընդարձակ պատշգամը՝ թղթերով ու տախտակներով լիքը։ Արշոն, զգուշությամբ, շուրջը նայելով, քայլ առ քայլ առաջ գնաց, մտավ պատշգամ, կանգնեց մի բաց լուսամուտի առջև ու նայեց։

Ներսը լիքն էր կապույտ շորեր հագած մարդկանցով ու տղաներով։ Տախտակե աչքե-աչք արկղների առաջ կանգնած՝ նրանք մեկ-մեկ վերցնում էին այդ աչքերից ինչ-որ փոքրիկ փոքրիկ բաներ ու դարսում ինչ-որ երկաթե բանի մեջ։ Այդպես անում էին ոչ միայն հասակավորները, այլև փոքր տղաները։

Զարմանալի էր. ո՞նց էին անում այդ մանր գործը, ու ի՞նչպես էլ արագ...

Այդտեղից սակայն բան չհասկանալով՝ Արշոն անցավ առաջ։ Դենը՝ մյուս սենյակում աշխատում էին մեծ-մեծ մեքենաներ. ամեն մեկի վրա մի մարդ կամ մի տղա։ Գրանք թուղթը դնում էին մեքենայի գլխին, մեքենան ինքն իրեն թուղթը քաշում էր ներս և մյուս կողմից դուրս գցում, ու այնպես էլ շուտ-շուտ— զարմա՞նք...

Ա՛յ քե ինչ բան է եղել տպարանը...

Արշոն մի քանի անգամ անցավ լուսամուտից լուսամուտ, նայեց բաժանմունքները ու գլուխը շարժեց զարմանքից։ Ամեն բան հետաքրքրական էր ու զարմանալի՛... Մեքենաներն այնպե՞ս էին գոռում, մարդիկ այնպես էին աշխատում...

Մարդ կարողանա մոտիկից տեսնել՝ ի՛նչ են անում։

Մի կես ժամ նայելուց հետո, նա վազեց դեպի փուռը, ուր ընկերները հաց պիտի վերցնեին։

Եվ այնուհետև, հացի կամ այլ բանի համար քաղաք գալիս՝ Արշոն մի քանի րոպեով, երբեմն կես ժամով, անցնում էր տպարան, կանգնում պատշգամի լուսամուտների առջև ու նայում՝ քե ինչպես գրաշարները, կազմարարները, փոքրիկ աշակերտները իրար ետևից գալիս— մտնում էին տպարան և, իրենց երկար կապույտ շորերը հագնելով, սկսում էին աշխատել։ Գրաշարները կանգնում էին աչքե-աչք արկղների առջև և փոքրիկ-փոքրիկ մեխի նման բաները վերցնում ու շարում ինչ-որ երկաթե բանի մեջ։ Նույնն անում էին և աշակերտները։ Իսկ մյուս բաժանմունքներում աշխատում էին մեքենաները, հետո կազմարարները... Գրաշարանոցում նրան ավելի զարմացնում էին իրեն հասակակից փոքրիկ տղաները, որ մեծերի պես կապույտ հագած, մեծերի պես արագ-արագ վեր էին քաղում մեխի պես փոքրիկ բաները աչքե-աչք արկղներից։

— Հը, ի՞նչ ես ուզում, տղա,— երբեմն հարցնում էին գրաշարները։

— Հեչ,— պատասխանում էր Արշոն,— նայում եմ։

— Նայի՛ր, նայի՛ր,— ծիծաղում էին գրաշարները։

— Մարդը կառավարիչ է, իհարկե, պիտի նայի,— ավելացնում էր մեկը։

Ու ծիծաղում էին։

Արշոն նրանց կատակների մեծ մասը չէր հասկանում և շարունակում էր դիտել նրանց ու մեքենաների աշխատանքը, որ քանի գնում՝ դառնում էր հետաքրքրական։ Մեքենաները շրխկում էին, գոռում, թուղթը նրանց վրա փայլում էր մի ակնթարթ ու կուլ գնում նրանց ահագին փորում. մեքենավարներն աշխատում էին մեքենաների պես կանոնավոր ու արագ. կազմարարները թղթերը ծալում էին, կտրում, կպցնում, իսկ գրաշարներն անընդհատ վեր էին քաշում մեխի նման փոքրիկ բաները, ու ամբողջ տպարանը լցված էր աշխատանքի աղմուկով։ Մի պարապ մարդ չկար. ամեն մեկը մի բան էր անում, ու բոլորն էլ կանոնավոր ու արագ։

Շատ բան այդտեղ Արշոն չէր ըմբռնում և շատ բան անհասկանալի էր նրան. իսկ ամենից անհասկանալին ա՛յն էր, ինչ անում էր իր հասակի մի տղա,— գրտնակի պես կլոր մի բան տանում-բերում էր նա սև, ձյութի նման բանի վրա ու քսում ինչ-որ կապած բաների և, վրանները թուղթ դնելով՝ գլանի պես մի մեծ կլոր բան քաշում։ Դուրս էին գալիս տպած թղթեր։

«Ա՜յ քեզ հրա՜շք»,՝ զարմանում էր Արշոն և մտքում նախանձում իր հասակի տղաներին, որ մոտից տեսնում, հասկանում են այդ բաները։

Կարողանա՜ր ինքն էլ մի անգամ մտնել ներս... Ու քանի՛-քանի՜ անգամ ուզում էր մտնել, բայց դժվար էր։ Արամի տված պատասխանները նրան չէին բավարարում. նա ուզում էր մոտիկից, իր աչքով տեսնել այդ հրաշք-բաները, այս սև, ահագին մեքենաները. գրտնակի պես, գլանի նման կլոր գործիքները, աչքե-աչք արկղները... մի խոսքով՝ բոլորը, ինչ կար։

Ով ահա մի օր, երբ նա, սովորականի պես, լուսամուտից նայում էր ներս, տպարանի վարիչը հարցրեց, թե ո՛ւմ է ուզում։

Արշոն ամաչելուց գլուխը կախ գցեց։

— Հեչ, ընկեր վարիչ, գաղութի տղա եմ։

— Այստեղ ի՞նչ ես անում։

— Տպարանին նայում եմ, ընկեր վարիչ,— ասաց նա այն եղանակով, կարծես պաշտոնը հենց այդ էր— տպարանին նայել։

Վարիչը ծիծաղեց։

— Նայո՞ւմ ես։

— Այո, ընկեր վարիչ, ուզում եմ մտիկ անեմ,— ուղղեց նա ու ժպտաց, ճերմակ ատամները բանալով։

Նրա հետաքրքիր հայացքներից վարիչը նկատեց, որ նա ագահ ցանկություն ունի տպարանը տեսնելու, ու ժպտալով հանձնարարեց տղաներից մեկին, որ տպարանը ցույց տան մեր «խուժանին»։

Արշոն սրտի տրոփյունով մտավ ներս։ Եվ այն, ինչ տեսավ շշմեցնող տպավորություն արավ նրա վրա...

Բայց այդ օրը Արշոն շա՜տ ուշացավ, համարյա ժամ ու կես. այնպես որ երբ հասավ գաղութ— տղաները վաղուց արդեն ճաշել— պատրաստվում էին դպրոց գնալու։ Դաստիարակ ընկեր Համբարձումը զարմացավ, որ այդքան ուշացել է և ուղարկեց վարիչի մոտ։

— Ընկեր Երվանդը ուզում է քեզ տեսնի,— ասաց։

Արշոյի սիրտը դող ընկավ, բայց և այնպես գնաց։

Ընկեր Երվանդը գրասենյակումն էր։

— Հը՛, որտե՞ղ էիր, Արշո, ինչո՞ւ ուշացար,— հարցրեց նա ուշադիր նրան նայելով։

Արշոն նայեց վարիչին ու գլուխն իջեցրեց. նա չգիտեր ինչպես արդարացնի իր ուշացումը, միևնույն ժամանակ և չէր ուզում խաբել վարիչին, այնքան նա բարեկամաբար, սիրալիր էր նայում իրեն, որ անհարմար էր սուտ խոսել և, վերջապես, ընկեր Երվանդն այնքան հասկացող էր, որ սուտը կարող էր իսկույն բռնել։

— Հը՛, խոսիր,— ասաց ընկեր Երվանդը,— ասա տեսնենք՝ ինչո՞ւ քաղաք գնալիս միշտ ուշանում ես... Խոսի՛ր, մի ամաչի։

Արշոն դարձյալ լռում էր։

— Գուցե բարեկամների, ընկերների ես հանդիպում, հը՞... Այստեղ բարեկամներ ունե՞ս։

Արշոն գլուխը շարժեց.— Ո՛չ։

— Իսկ ընկերնե՞ր... հը՞։

Արշոն դարձյալ լռում էր. մտածում էր նորից ինչպես արդարացնի իր ուշացումը, ու հնար չէր գտնում։ Ուստի՝ մեղավորի պես կանգնեց վարիչի առաջ մի րոպե, երկու րոպե, մի քանի անգամ աչքի տակով նայեց ընկեր Երվանդի սևեռուն, սպասողական հայացքով աչքերին. նայեց, նայեց, գլխարկը ձեռի մեջ տրորեց ու, է՛լ չդիմացավ, և պատմեց ուշանալու պատճառը։ Պատմեց, որ գնում է տպարան, այնտեղ, ուր Արամն է աշխատում. այնտեղ այնքա՜ն հետաքրքիր բաներ կան. նայում է, և դրա համար ահա ուշանում։

Ընկեր Երվանդն ուշադիր լսեց նրան, լսեց, ժպտաց ու հարցրեց.

— Հետաքրքրո՞ւմ է քեզ տպարանի աշխատանքը։

— Այո՛, ընկե՛ր Երվանդ,— ժպտաց Արշոն իր հերթին, գլխարկը ծնկներին խփելով։

Մի քանի օր հետո, գաղութի վարիչի միջնորդությամբ, Արշոն ընդունվեց տպարան, իբրև գրաշարի աշակերտ, և ինքն էլ արժանացավ երկար կապույտ շոր հագնելու։

Ու հիմա Արշոն աշխատում է տպարանում, և տպարանի՝ բաները հասկանում է այնպես, ինչպես մյուս գրաշարները։ Այժմ նա ինքն էլ աչքե-աչք կասսայի առջև կանգնած՝ գիրք է շարում, ու աշխատում է գերազանցել իր հասակի տղաներին և հասնել մեծերին։

Սկզբում՝ տպարանում բոլորը նրան «խուժան» էին ասում, բայց քանի որ նեղանում էր— վերջ տվին։ Այժմ սակայն, երբ մեկը, հին սովորությամբ, «խուժան» է ասում, Արշոն կանգնում է, նեղացած նայում ասողի դեմքին և հանդարտ ուղղում.

— Իմ անունն Արշալույս է, ընկեր...

1926

ՍԵՎ ՍԵԹՈՆ

I

Այս ի՞նչ աղմուկ, ի՞նչ իրարանցում է քաղաքում...

Այս ո՞ւր են վազում երեխաները ճամպրուկներն առած, և ծնողներն այդպես հևալով ինչո՞ւ են հետևում նրանց ու զգուշացնում, որ կամաց գնան։ Սակայն, երեխաները, մեծերի խոսքերին անուշադիր, սլանում են առաջ՝ մեկը ճամպրուկը գլխին դրած, երկրորդը ուսին, երրորդը... ու բոլորը փողոցներով վազում են դեպի քաղաքի կենտրոնը. վազում են, ճչում անզուսպ ու կանչում իրար.

— Եկե՛ք... շո՛ւտ... ուշացա՛նք...

— Ձեք ուշանա՛, չեք ուշանա...։ Մի՛ վազեք....

Այս ի՞նչ իրարանցում է խնկապետ։

Այդ պիոներներն են... նրանք այսօր ճամբար են գնում։ Այդ նրանք են աղմկում չվելու պատրաստվող թռչունների նման։

Իսկ հավաքատեղում հապա՛... Նույն աղմուկն ու իրարանցումն է և հավաքատեղում՝ մեծ հրապարակի մոտ, ուր խմբվել են նրանք իրենց իրերով։ Ոմանք արկղների վրա նստած, ոմանք վերարկուները թևներին կանգնած՝ սպասում են ավտոնեերի, ու կատակում են, քրքջում. — այնքա՛ն պայծառ է օրը՝ ճա-

նապարհ գնալու համար, և այնքան բարի են ծնողները, տան մեծերը, որ, ամեն ինչ թողած, եկել են նրանց ճանապարհ դնելու։

Այդտեղ՝ հավաքատեղում ավտոների են սպասում և հայտնի Լևիկն ու Գարիկը, երկուսն էլ Աբովյան դպրոցի աշակերտներ, որոնց բոլոր աշակերտներն ու պիոներները անվանում են «Շոր ու Շորշոր», թեև ոչնչով նման չեն նրանք կինոնկարի այդ հերոսներին. ոչ հասակով, ոչ վարքով. միակ հանգամանքը, որ կարող էր նրանց նմանեցնել այդ ծիծաղաշարժ մարդկանց— այն էր, գուցե, որ միշտ միասին էին. ամեն տեղ՝ թե՛ կինո, թե՛ թատրոն, թե՛ ցիրկ գնում էին միասին. իբրև պիոներներ էլ միևնույն կոլեկտիվի և անգամ միևնույն օղակի մեջ էին։ Գուցե նման էին դեմքով, արտաքինով. այդ էլ չկար. Լևիկը սպիտակ դեմք ուներ, սև աչքեր և խարտյաշ մազեր. Գարիկը, ընդհակառակը, սև դեմք, կապույտ աչքեր և այնպիսի գոռոզ մազեր, որ չէին ենթարկվում ոչ մի սանրի... Եվ «Շոր ու Շորշոր» անունը պարզապես բերանից թռած մի խոսք էր երևի, որ կրկնվելով, մնացել էր նրանց վրա։ Լևիկն ու Գարիկը սակայն դրանից չէին վիրավորվում. ընդհակառակը, ավելի մտերմանում էին. աշխատում էին լուրջ լինել, մեծերի նմանվել և, մինչև իսկ, խոսքը մեր մեջ, ընկերներից ծածուկ ոտանավորներ էին գրում, որ միասին հրատարակեն և ընկեր աշակերտներին ու պիոներներին զարմացնեն ու հետո... երբեմն այնպիսի բաներ էին մտածում, որ ուրիշի մտքով չէր անցնի... Ու միշտ միասին, իրար ականջի փսփսալով...

Բայց այսօր մենակ չեն. նրանց հետ է մի տասնչորս-տասնհինգ տարեկան տղա, որ ոչ աշակերտի նման է, ոչ պիոների, ճիշտ է, հագնված է պիոների պես, բայց հագուստը նրան չի սազում. դեմքը սև է, կոպիտ, հայացքն անհանգիստ. նայում է հոնքերի տակից, մի խուզարկու հայացքով, որ թվում է զննում է պիոներներին ու նրանց իրերը։ Երբեմն էլ դժգոհ նայում է հեռուն, և այդ ժամանակ նրա հայացքը կարծես ասում է. «Արժի՞ արդյոք մնալ այստեղ, սրանց մեջ»։

Բայց Լևիկն ու Գարիկն աշխատում են, որ նա չտխրի և իրեն մենակ չզգա, ու շարունակ խոսում են հետը, պատմում

են, թե անցյալ տարի ի՛նչպես են ճանապարհորդել դեպի ճամբար և որքան լավ է այնտեղ։

— Դիտես, Սեթո, այնքա՜ն ծառ, ծաղիկ կա այնտեղ,— ասում է Լևիկը, վերհիշելով անցյալ տարվա ճամբարային գեղեցկությունները։

— Հետո էքսկուրսիա կերթանք,— ավելացնում է Գարիկը,— խարույկների մոտ հետաքրքիր պատմություններ կլսենք... Դու խարույկ տեսե՞լ ես, Սեթո։

Սեթոն, պատասխանի փոխարեն, գլուխը տարուբերում է անխոս. նա նույնիսկ չի հասկանում «էքսկուրսիա» և «խարույկ» բառերը. նա առհասարակ շատ բան չի հասկանում Լևիկի և Գարիկի ասածներից, չնայած երեք օր է նրանց շըրջանում է, բայց դեռ չի կարողանում մտերմանալ նրանց, հասկանալ, ըմբռնել նրանց խոսքերի իմաստը։ Այդ է պատճառը, որ հաճախ կասկածով ու հոնքերի տակից է նայում և նրանց հարցերին մեծ մասամբ պատասխանում է գլխի թափահարումով կամ տարօրինակ ձայնով, որ նման է տնքոցի։

«Սեթո, հո տված չե՞ս»... Սեթոն ուսերը ցնցում է, գլուխը տարուբերում և «հը՛մ» անում, որ նշանակում է «ոչ»։ Բայց «այո»-ն էլ հնչում է որպես «հըմ»։ Ով ընկերներն էլ իրենց հերթին դժվարությամբ են հասկանում նրան։ Երևում է, Սեթոն չի բացվում ընկերներին, խորթություն է զգում, զուրկ և ամաչում է։ Ով դա հասկանալի է. չէ՞ որ ընդամենը երեք օր է, որ Լևիկն ու Գարիկը ծանոթացել են նրան, և այն էլ ինչպիսի՜ պայմաններում։

Երեք օր առաջ, տրամվայի կայանում սպասելիս, Լևիկն ու Գարիկը նկատեցին մի զարմանալի բան. այն ժամանակ, երբ ուղևորները խռնվելով՝ աշխատում էին վագոն մտնել— երկու տղա մտնում էին նրանց արանքը և ձեռները կոխում անուշադիր մարդկանց գրպանները ու հանում էին ինչ պատահում էր— թաշկինակ, պապիրոսի տուփ, լուցկի. մեկի գրպանից հանեցին նույնիսկ պուդրու տուփ և օդեկոլոն...

Մեկ-երկու՝ Գարիկն ու Լևիկը բռնեցին տղաներից մեկին (մյուսը փախավ), զգուշությամբ քաշեցին մի կողմ և հարցրին, թե ամոթ չի՞, որ գողություն է անում։ Տղան, որ նրան-



ցից մեծ էր, պատասխանեց, թե լավ է անում, ի՞նչու պիտի ամաչի։

— Բա որ միլիցիան բռնի՞։ Չե՞ս վախենում։

— Միլիցիա՜ն,— խնդաց տղան քթի տակ,— բռնել էլ է, թողել էլ,— ասաց նա և ուզեց հեռանալ-փախչել, բայց Լևիկն ու Գարիկը չթողին։

— Սպասի՛ր։ Դու այդ անում ես ապրելո՞ւ համար։

— Հը՛մ։

Գլխի թափահարումով ասված այդ խոսքը պետք էր հասկանալ «այո»։

— Իսկ եթե մենք տաննենք քեզ գործ տանք, կգա՞ս։

— Հը՛մ,— նորից գլխով էր արել տղան։

Ով Լևիկն ու Գարիկը տարել էին նրան իրենց կոլվար Բաբկենի մոտ։ Հանել էին նրա հին, աղտոտ շորերը, հագցրել հին պիոների հագուստ և վիզը կապել կարմիր փողկապ։

Այդ տղան Սեքոն էր, մի որբ տղա, որ ծնողների մահից հետո Երևան գալով՝ ընկել էր փողոցի տղաների շրջանը, որոնք նրա դեմքի սևուքյան պատճառով անունը դրել էին Սև-Սեքո։

Ով Լևիկն ու Գարիկն այժմ, բազավարի թույլտվությամբ, նրան տանում էին ճամբար, ու հպարտ էին դրանով, որովհետև Սեքոյի շեֆուքյունը վերցրել էին իրենց վրա։ Ահա ինչո՛ւ այդպես ուշադիր էին դեպի նա, և ամեն րոպե ուզում էին նրա ցանկությունն իմանալ, մոտից չէին հեռանում, կարծելով, որ եթե հեռանան՝ պիտի փախչի. այնինչ նրանք ուզում էին, շատ էին ուզում հասցնել նրան ճամբար և դաստիարակել այնտեղ, քաղաքի ազդեցուքյունից հեռու։ Ու անհամբեր սպասում էին ավտոյին։

Իսկ Սեքոն այդ ժամանակ նայում էր մի պիոների, որ մի հետաքրքիր դանակ էր ցույց տալիս ընկերներին։ Դանակը շատ լավն էր— երկու բերան ուներ, պատառաքաղ, խցանհան և, հետո, ուրիշ մանր բաներ, որոնց նշանակուքյունը Սեքոն չէր հասկանում։ Նա դեռ այդպիսի զարմանալի դանակ չէր տեսել։

— Չկա՞,— ասաց Գարիկը՝ ավտոյի ճամփին նայելով։

Դուցե հավաքված պիոներներից ոչ մեկն այնքան անհամ-

բեր չէր, որքան Գարիկն ու Լևիկը՝ երբ պիտի գա՜ր, վերջապես, այդ ավտոն... Ավտոյից ավելի նրանց մտահոգում էր և մի կարևոր, շատ կարևոր խնդիր.— ինչպես զգուշացնել Սեթոյին, որ ճամբարում իրեն լավ պահի և, գլխավորը, գողություն չանի։ Իրենք, ճիշտ է, պետք է հսկեին նրան, հետևեին, բայց և այնպես պետք էր նախապես զգուշացնել։ Բայց ինչպե՜ս... Այդ բանն ընկերները գցում էին միմյանց վրա, և հիմա, քանի ավտոն չէր եկել, իրար աչքով էին անում— սկսելու։ Սկսե՜լ— հեշտ չէր։ Ի՞նչ ձևով և ի՞նչ խոսքերով ասեին, որ չնեղանար, չբարկանար հանկարծ ու հեռանար— չէ՞ որ այնպես տարօրինակ բնավորություն ուներ այդ Սեթոն. մեկ էլ տեսար նեղացավ ու... հայդա՜։ Բայց և այնպես ժամանակ չկար— պետք էր մի բան ասել, և Գարիկը, գուցե մազերով այդ տղան, բռնեց Սեթոյի թևը, քաշեց մի կողմ։ Լևիկը հետևեց նրանց։

— Գիտես ի՞նչ, Սեթո,— սկսեց Գարիկը,— գիտես ի՞նչ եմ ուզում ասել...

— Հը՛մ...

Գարիկը չէր իմանում ինչպես շարունակի։

— Այ, տես, Սեթո, ճամբար որ գնանք, դու քեզ լավ կպահես չէ՞։ Մեզ ամոթով չես անի, չէ՞... Խոսք տալիս ես, չէ՞...

— Հը՛մ — գլխով արավ Սեթոն։

— Հետո...— Գարիկը կանգ առավ, պարզապես չկարողացավ շարունակել. ուզում էր ասել, որ գողություն չանի, բայց... ի՞նչպես ասեր։ Աչքով արավ, որ Լևիկը շարունակի։ Լևիկը սակայն գլխի թեթև տարուբերումով հրաժարվեց։ Եվ այդ ժամանակ Գարիկը նոր համարձակություն ստացավ կարծես.

— Հետո, ուրեմն, Սեթո, մենք՝ ես ու Լևիկը կարծում ենք, որ դու այդ բանն էլ չես անի... այսինքն գողություն, հը՜... խոսք տալի՞ս ես։

— Հը՛մ։

— Ուրեմն իմացիր. ինչ էլ անես՝ քո տեղը մենք ենք պատասխանատու։ Մենք՝ ես ու Լևիկը քո շեֆն ենք։ Գիտես ի՞նչ է շեֆը, Սեթո։

— Հը՛մ։

— Ուրեմն չես անի, չէ՞։

Սեթոն նորից գլուխը շարժեց, որ նշանակում էր, կամ պիտի նշանակեր, թե չի անի։

Այնուհետև գուցե շատ հետաքրքիր բաներ խոսեին նրանք, բայց պիոներների բարձրացրած աղմուկն ընդհատեց նրանց զրույցը։

— Եկա՛վ, եկա՛վ... ավտոն եկավ...

Իսկապես, իրար հետևից օրորվելով եկան երկու-երեք մեծ ավտո՝ կանաչ ճյուղերով զարդարված։

Մի երկու րոպեում բոլորը տեղավորվեցին։ Երկրորդ ավտոյում տեղ բռնեցին Լևիկն ու Գարիկը, նրանց հետ և Սեթոն։ Նրանք իրենց ճամպրուկները դրին նստարանի տակ, իսկ Սեթոն ծնկներին դրեց իր քաթանե պայուսակը, որ նվիրել էր նրան կոլվար Բարկենը։

Բայց ավտո նստելիս՝ կատարվեց մի բան, որ ոչ-ոք չնկատեց։ Սեթոն որ շարունակ հետաքրքիր հետևում էր դանակ ունեցող տղային, տեսավ թե ինչպես նա, ավտոն մոտենալիս, դանակը դրեց ամառային վերարկուի գրպանը, ապա ճամպրուկը ձեռին մոտեցավ ավտոյին։ Սեթոն քայլ առ քայլ հետևեց նրան, և այն րոպեին, երբ նա ճամպրուկը բարձրացնում էր՝ ընկերոջը տալու, Սեթոն մոտեցավ և աննկատելի դանակը հանեց նրա գրպանից ու, նույնպես աննկատելի, կոխեց իր պայուսակի մեջ։

Ով, իրարանցումի մեջ, ոչ-ոք չնկատեց այդ։ Չնկատեցին մինչև իսկ Լևիկն ու Գարիկը, որ նրա մոտ էին։

Ով Սեթոն ուրախ էր, որ ոչ ոք չտեսավ։

II

Ճանապարհը երկար էր, բայց հետաքրքիր։ Դեռ քաղաքի մեջ, ավտոները շարժվելուն պես, պիոներներն սկսեցին երգել, իսկ երբ դուրս եկան դաշտ՝ ձայներն ավելի բարձրացրին։ Մյուսների հետ երգում էին և Լևիկն ու Գարիկը, իսկ Սեթոն, պայուսակը ծնկանը, լսում էր և աշխատում հասկանալ նրանց երգերի իմաստը։ Ճանապարհը վազում էր նրանց առաջ և ավտոները վազում էին կարծես նրան հասնելու, բայց չէին

հասնում։ Ճանապարհի մոտ պլպլում էին առուները և ուռենիները օրորվում էին նրանց ափերին։ Երբ ավտոն անցնում էր մի նոր գյուղի միջով— բոլորը միասին «ուռա՛» էին կանչում, գյուղի երեխաները պատասխանում էին «ուռայով». խոտ բերող սայլերը կանգ էին առնում ճանապարհ տալու, եզները քիչ էր մնում խրտնեն-փախչեն. երեխաները ձեռները մեկնում էին խոտ վերցնելու, բայց կուլվարը չէր թողնում։ Մի տեղ կանգ առան, և շոֆերների օգնականները դույլերով ջուր բերին լցրին ավտոյի բերանը, պիոներներից մի քանիսն իջան վազեցին ջուր խմելու, և ավտոները նորից սլացան առաջ։ Ճանապարհը քանի գնում զարիվեր էր դառնում և կանաչը շատանում էր։ Տղաները՝ Գարիկը և մյուսները ասում էին, թե ճանապարհի մեծ մասն անցել են և թե շուտով տեղ կհասնեն։

Եվ, իսկապես, փոքր անց, մեծ ճանապարհը թողին ու ծրուվեցին մի ուրիշ խճուղի, որ տանում էր դեպի սարերն ու անտառները։

— Մոտենում ենք,— բացականչեցին տղաները և նորից սկսեցին երգել.

Հոկտեմբերն եկավ կարմիր նավակով,
Նավը լցված էր կարմիր բանակով...

Ջանցավ, իսկապես, մի կես ժամ՝ ավտոները տուլելով, իրար հետևից մտան սպիտակ տներով մի փոքրիկ քաղաք և, մի քանի փողոց անցնելով կանգ առան քաղաքի ծայրին, անտառի մոտ։

— Հասա՛նք... հասա՛նք...

Ու պիոներներն իջան ուրախացած...

Սեթոյին թվաց, թե իսկապես հասան, բայց շատ զարմացավ, երբ իրերը՝ ճամպրուկներն ու պայուսակները բարձեցին այդտեղ կանգնած սայլերին և տղաներն ու աղջիկներն իրենք առաջ ընկան ու մտան անտառ։ Սեթոյին տարօրինակ թվաց այդ. մի՞թե անտառում պիտի ապրեն. այդ այնքան էլ հաճելի չէր թվում նրան։ Մտածում էր՝ լա՞վ արավ արդյոք, որ եկավ։ Բայց առայժմ հետաքրքիր էր տեսնել ճամբարը. եթե լավ չլիներ, կթողներ-կփախչեր քաղաք։ Մյուս կողմից Սեթոյին տա-

րօրինակ թվաց, որ բոլորն իրենց իրերը հավատացին սայլապաններին ու առաջ ընկան։ Ինքը, սակայն, իր պայուսակը չտվեց։ Որքան էլ Գարիկն ու Վահիկը պնդեցին, նա չհամաձայնեց դնել սայլի վրա։

— Ես կտանեմ,— առաջ ընկավ նա։

— Կհոգնես։

— Հը՛…, ինչ է որ, մի մատ բան։

Սեթոն վախենում էր, իսկապես, որ սայլապանները պայուսակը բանան, միջի բաները վերցնեն. առանձնապես վախենում էր դանակի համար. հանկարծ յուրացնեն կամ ընկնի-կորչի։ Դրա համար պայուսակն ուսը գցած հետևեց տղաներին։

Ջառիվեր արահետը, որ սկզբում գնում էր մեներավոր կաղնիների մոտով ու բարձր կանաչների միջով, որոնց կարծես դեռ մարդու ոտ չէր դիպել, շուտով մտավ ստվերախիտ ծառերի արանքը, ուր օրը կարծես մթնեց. թանձր սաղարթը չէր թողնում արևի ճառագայթներն իշնեն ցած։ Եվ անտառից նեխահոտ էր գալիս, ինչպես քամու և արևի երես չտեսնող նկուղից։ Երեխաներն իծաշարուկ գնում էին արահետով և զանազան բացականչություններ անում, որ լսեն, թե ի՛նչ ձևեր է ընդունելու արձագանքը անտառի խորքում։ Վահիկն ու Գարիկը գնում էին Սեթոյի առջևից և նույնպես բացականչություններ անում կամ բացատրում Սեթոյին, թե դեռ ի՛նչ լավ խաղեր կան ճամբարում։

Իսկ նրանցից քիչ առաջ քայլում էր այն տղան, որի դանակը Սեթոն վերցրեց։ Բավական տեղ գնալուց հետո, երբ մթին անտառից դուրս եկան արևատ շեռուտը՝ այդ տղան, որի անունը Օնիկ էր, ուզեց ճիպոտ կտրել, բայց, ձեռը գրպանը տանելով՝ գունատվեց.

— Վա՛յ,— ասաց,— դանակս… չկա…։

— Երևի մոռացել ես տանը։

— Չէ, ավտո նստելիս գրպանս դրի։

Տղաները ենթադրեցին, թե ընկած կըլնի ավտոյի մեջ, և ուզեցին խորհուրդ տալ, որ գնա ավտոյի մեջ նայի, բայց ուշ էր արդեն. ավտոն վաղուց արդեն ճանապարհված կլիներ դեպի քաղաք։

Տղան քիչ մնաց լաց լինի. ընկերները նրան մխիթարելու համար, դանակ տվին, որ ճիպոտ կտրի, բայց չուզեց և մինչև տեղ հասնելը մնաց տխուր ու մտահոգ. նա ասում էր, որ այդ հոր դանակն էր. հայրը չէր կամեցել տալ, առաջարկել էր ուրիշ դանակ, բայց տղան խնդրել-աղաչել էր, և հայրը զիջել էր, զգուշացնելով, որ չկորցնի... Եվ հիմա ինչ պատասխան պիտի տա հորը։

— Ոչի՛նչ, ոչի՛նչ. կասես կորել է,— սիրտ տվին տղաները։

Լևիկն ու Գարիկը նույնպես հանգստացրին նրան, խոստանալով, որ բազավարից դանակ կխնդրեն նրա համար։ Սեթոն ոչինչ չասաց, շոշափեց միայն պայուսակը և, համոզվելով, որ դանակն այնտեղ է, հանգիստ շարունակեց ճանապարհը։

Որքան էլ ընկերները բացատրում էին, թե շուտով անտառից դուրս կգան բաց տեղ՝ ճամբարը, բայց Սեթոյին այնպես էր թվում, թե վերջ չկա անտառին, թե գնալով անտառը խտանում է և թե քանի գնան՝ ավելի սիրտ խտանա։ Բայց հանկարծ առաջին գնացող տղաները «ուռա՜» կանչեցին ու առաջ վազեցին։ Սեթոն նույնպես արագացրեց քայլերը և մի փոքր տեղ գնալուց հետո կանգ առավ հանկարծ.— Նրա առաջ բացվեց ճերմակ վրաններով ծածկված մի ընդարձակ բացատ. վրաններըը մի քանի կարգ շարված էին կանոնավոր, և նրանց արանքում տարածվում էր մեծ կանաչ հրապարակ. հրապարակի մեջտեղը բարձրանում էր մի երկար, շատ երկար ձող՝ ծայրին մի կարմիր ահագին դրոշ, որ թրթռում էր քամուց։

Որքան էլ Գարիկն ու Լևիկն ասին, թե դա պիոներական ճամբարն է և իրենք այդտեղ պիտի ապրեն, այնուամենայնիվ Սեթոն, որ երբեք պիոներական ճամբար չէր տեսել, կարծեց, թե այնտեղ զինվորներ են ապրում և ուր որ է ահա հրացանով մի զինվոր կգա և թույլ չի տա իրենց առաջ գնալու։

Բայց, երբ պիոներները ուրախությունից երգելով, անվախ-համարձակ, մի քանիսը նույնիսկ վազելով, առաջ գնացին, Սեթոն էլ, պայուսակը վզին հետևեց նրանց, շուրջը նայելով. նրան զարմացնում էր վրանների շատությունը և անտառը, որ միակտուր գորգի պես փռվում էր մինչև բարձր սարերի գլուխը։ Սեթոյին թվում էր, թե այդ վրաններում

երևի նեղվածք կլինի և խիստ կարգ ու կանոն։ Բայց հետաքրքրությունն ավելի էր, քան մտահոգությունը։ Նրան հետաքրքրում էր, թե արդյոք այս անտառի մեջ որտե՞ղ են հաց թխում, կերակուր պատրաստում։

— Էստեղ փուռ կա՞,— հարցրեց նա Գարիկին։

— Չէ։

— Բա հացը որտեղի՞ց են ստանում։

Եվ երբ Գարիկը պատասխանեց, թե հացն ստանում են ցածի քաղաքից, Սեքոն, քիչ լռելուց հետո, հետաքրքրվեց նորից.

— Իսկ խանո՞ւթ։

— Խանութ էլ չկա։

— Բա միրգ որտեղի՞ց են առնում։

— Քաղաքի՞ց։

— Քաղաքի՞ց,— ծոր տվեց Սեքոն։— Փառավորես աշխարհ հա՞...

Այս խոսքերով ասես նա արտահայտում էր իր հեգնանքը, իր հիասթափությունն ու դժգոհությունը։

— Բա էդտեղ էլ ի՞նչ կա։

— Այ կերթանք— կտեսնես։ Հետաքրքիր շատ բան կա,— ասաց Լևիկը նրան հանգստացնելու և հրապուրելու մտքով, ենթադրելո՞վ, թե՞ Սեքոյի ձայնից գուշակելով, որ ճամբարը նրան դուր չի գալիս։

Պիոներները մինչև այդ շարունակում էին երգելով առաջ գնալ. շուտով նրանց երգի վրա— վրաններից տղաներ ու աղջիկներ վազեցին-եկան դիմավորելու. քիչ հետո երևաց առաւսիկ և սպիտակ ու կապույտ շերտավոր մայկա հագած բարձրահասակ, քսան-քսաներկու տարեկան մի երիտասարդ մարդ՝ գլխին ծղոտե ահագին, հովանոցի չափ գլխարկ, որի ետևի եզրը ծածկում էր ուսերը, իսկ առաջինը ծալել էր դեպի վեր. գլխարկի տակից երևում էր ժպտուն աչքերով նրա կլոր դեմքը։

— Բարով, երեխեք,— ասաց նա այնպես ուրախ, մտերիմ ձայնով, որ Սեքոյին թվաց թե բոլորին ծանոթ է վաղուց։

Սեքոն դրանում ավելի համոզվեց, երբ գլխարկով մարդն սկսեց անուններ տալով՝ հարցուփորձել եկողներին։ Երբ բո-

լորին նայել, հետները խոսել էր, հանկարծ նայեց և Սեթոյին, որ կանգնել էր բոլորից հեռու, պայուսակն ուսը գցած։

— Քո անունն ի՞նչ է։

— Սեթո,— պատասխանեց Սեթոն, հոնքերի տակից նրա շերտավոր մայկային ու լայնեզր գլխարկին նայելով։

— Մենակ Սեթո՞ է,— կատակեց բազավարը։

Սեթոն շփոթվեց։

— Ջէ, տղերքն ասում են Սև Սեթո էլ։

Բազավարը ժպտաց և այդ ժպիտը դուր եկավ Սեթոյին։

— Ո՞ր դպրոցից ես,— շարունակեց բազավարը, բայց մինչև Սեթոն կպատրաստվեր մի բան ասել, Գարիկն առաջ եկավ և հայտնեց, որ Սեթոյին իրենք են բերել, որ... մնացածը նա առաց կամաց, և Սեթոն էլ ոչինչ չլսեց, բայց ենթադրեց, որ պիտի ասեր «խուժան ա»։

— Դե, գնացեք ճաշեք, երեխեք,— ասաց բազավարը, զրույցը վերջացնելով։— Մենք ձեզ վաղուց էինք սպասում. ուշացաք, բայց ձեր բաժինը պահել ենք։

— Բա մեր իրե՞րը,— հարցրեց մեկը։ — Սայլով բերում են...

— Իրերը՝ ոչինչ. կբերեն կդնեն վրաններրը, ճաշից հետո կտեղավորեք։

Ճաշարանը տախտակով շինած ընդարձակ ծածկ էր՝ չորս կողմը բաց, երկար սեղաններով ու նստարաններով։ Ճաշը մսով կերակուր էր. մատուցում էին երկու գյուղացի կին. մեկի ականջներին մատանու նման արծաթե օղեր կային, իսկ մյուսը գլխաշորը այնպես պինդ էր կապել, ասես մրսում էր կամ՝ ականջների ցավ ուներ։

Բոլորը հոգնած էին և քաղցած. դրանից էր, որ ճաշը կերան հանգիստ, առանց աղմուկի։ Ճաշը Սեթոյին շատ դուր եկավ. ախորժակով կերավ և ուզեց կրկնել, բայց ամաչեց, քանի որ կողքին նստած Գարիկն ու Լևիկը բավականացան մի-մի պնակով և երկու կոտլետով։ Նրանի ուզելն անհարմար կլիներ։

Երբ ճաշը վերջացրին՝ բազավարի ծղոտե գլխարկը նորից երևաց ճաշարանի ծայրում։

— Երեխաներ,— ասաց նա առաջ գալով,— եթե հոգնած

եք՝ գնացեք ձեր իրերը տեղավորեք ու քնեք, իսկ եթե կուզեք խարույկների մոտ գալ՝ կարող եք։

— Խարույկների մոտ, խարույկների՛ մոտ,—գոռացին բոլորը ու վազեցին ճաշարանից դեպի վրանները՝ իրերը տեղավորելու և իրենց համար տեղեր պատրաստելու։

Մինչև կվերջացնեին նրանք այդ աշխատանքը, սարերը ծածկվեցին մեգով, անտառը խոժոռեց, մութն ընկավ և խարույկները վառեցին վրանների երկու կողմը։ Բոցեր տեսնելով՝ երեխաներն «ուռա» կանչեցին ու վազեցին։ Եվ մի քանի րոպեից՝ խարույկների շուրջը բոլորել էին արդեն հին ու նոր պիոներները— տղաների ու աղջիկների մի ահագին բազմություն և հրճվանքով նայում էին փայտերին, որոնց ուրախ բոցերը բարձրանում էին մի քանի մետր և երբեմն կայծերի անձրև մաղում իրենց շուրջն ու պիոներների վրա։ Բոցերի հետ երկարում ու կարճանում էին պիոներների ստվերները, և կրակի լուսավ շրջագծից այն կողմն ավելի մութն էր երևում, քան էր։ Երեխաները մի քանի շարք նըստոտել էին կրակի բոլորքը շինված թմբերի վրա, ոտները կախել փոսերի մեջ. ու նրանց առաջ բռնկված վառվում էր խարույկը. և՛ տաք էր, և՛ հաճելի։ Բազավար ընկեր Տիգրանը, այժմ մայկայի վրա մի սև պիջակ հագած, բայց ցերեկվա ծղոտե մեծ գլխարկով, անցնում-դառնում էր խարույկի շուրջը ու խոսում, ինչ նորեկ պիոներներն ինչպես պիտի պահեն իրենց ճամբարում։

Սեքոն, նստած տեղը ծնկները ձեռներով գրկած, նայում էր կրակին, լսում բազավարի խոսքերը և մտքում ուրախանում, որ լավ արավ եկավ. քաղաքում երբեք այսպիսի հետաքրքիր բան չէր տեսնիլ։

Բազավար ընկեր Տիգրանի խոսքը տակավին չէր վերջացել, խարույկը դեռ վառվում էր բռնկված, երբ հանկարծ հեռվից, մթան միջից լսվեց շեփորի ձայնը. դա լագերի երեկոյան շեփորն էր, որ ազդարարում էր քնելու ժամը։

Բայց նախքան քնելը, բոլոր պիոներները բոլոր խարույկների մոտից վազեցին աղմուկով ու շարվեցին վրանների առաջ։ Նորեկ պիոներները նույնպես շարք կանգնեցին իրենց կոլվարների գլխավորությամբ։ Սեքոն կանգնեց Լևիկի ու Գա-

րիկի կողքին, և սպասեց, թե էլ ի՛նչ է լինելու։ Ու թեև իրիկնային մութն իջել էր արդեն, Սեթոն նկատեց, որ ընդարձակ հրապարակի մեջտեղը, դրոշակի երկար ձողի մոտ կանգնած են մի քանի հոգի՝ լապտերները ձեռներին։

Փռվեց մի խոր լռություն։ Բոլորն սպասում էին ինչ-որ բանի։ Եվ հանկարծ այդ լռության մեջ լսվեց մի ձայն.

— Առաջին բազայի ստուգումը վերջացած է։

Նույն բանը նույն բառերով հայտարարեցին մյուս բազավարները. ապա նորից լռություն փռվեց, և այդ լռության ու սպասումի մեջ հնչեց մի խրոխտ ձայն.

— Պատ-վի՛... ա՛ռ...

Թե պիոներները, թե կոլվարները՝ բոլորը միասին ու միանգամից ձեռները բարձրացրին քթերի պես։ Ու հանկարծ, Սեթոյին թվաց, թե խավարի միջից, կարծես անտառից անտես-աներևույթ երաժշտախումբը նվագեց «Ինտերնացիոնալ»։

Այդ նվագը մութ անտառի լռության մեջ տևեց մի քանի վայրկյան, որից հետո դարձյալ լռություն եղավ և լսվեց նորից նույն խրոխտ ձայնը.

— Բանվոր դասակարգի պայքարին պատրա՞ստ եք, պիոներներ...

Բոլոր վրաններից ու շարքերից լսվեց որոտագին ու միահամուռ.

— Մի՛շտ պատրաստ...

Եվ Սեթոն լսեց, թե ինչպես այդ խոսքերի արձագանքը երկար զրնգում էր անտառում ու լեռներում։

Մի քանի րոպեից հետո արդեն ճամբարում խորին անդորը էր տիրում. խարույկներն էին միայն վառվում թեթև ճարճատյունով և շրջիկ պահակների լապտերներն էին առկայծում այս ու այն կողմ։

Սեթոն տեղավորվեց այն վրանում, ուր տեղ էին բռնել Գարիկն ու Հաիկը. բոլորը միասին տասը հոգի էին. նրանց վրանում էր և այն ուղան, որի դանակը վերցրել էլ Սեթոն։ Այդ էր պատճառը, որ նա պահելիս պայուսակը դրեց գլխատակը, որ դանակը չկորչի կամ մեկը ձեռ չկոխի մեջը։

Օրվա տպավորությունները երկար անցնում էին նրա աչ-

քերի առաջ և նա երկար՝ քնել չէր կարողանում։ Իսկ երբ քնեց — երազում խարույկ տեսավ, որ բոցբոցում էր անվերջ և կայծերի փոխարեն աստղեր էր անձրևում անտառի վրա։

III

Առավոտը Սեքոն ու պիոներները զարթնեցին շեփորի ձայնից, և առաջին շարժումը, որ արավ Սեքոն այն էր, որ ձեռը տարավ գլխատակը և ստուգեց — դանակը պայուսակի մե՞ջ է թե ոչ։ Այնտեղ էր։ Այս հանգամանքը հանգստացրեց նրան և նա, արագ-արագ հագնվելով, տղաների հետ դուրս եկավ վրանից։ Դուրսը պարզ, զով առավոտ էր. պիոներները մեկ-մեկ դուրս էին գալիս վրաններից, ինչպես ճուտերը ծը-վարած թխսկանի թևերի տակից, և քնաթաթախ նայում վրան-ներին, խաղատեղերին, վոլեյբոլի ցանցերին, թարմ անտա-ռին, որ նեղնային նոր զարթնած՝ ժպտում էր արևին, և հե-ռու, հեռու հորիզոնում շար ընկած կապույտ լեռնագագաթնե-րին, որ կարծես լողում էին առավոտյան շամանդաղի մեջ։ Վրաններից դենը, անտառի մոտ — խոհանոցից ծուխ էր բարձ-րանում, ճերմակ հագած խոհարարն ու օգնականը աշխա-տում էին այնտեղ. բազավարը՝ երեկվա ահագին ծղոտե գլե-խարկով, շերտավոր մայկայով, ուսուցիչը և մի քանի անծա-նոթ մարդիկ ման էին գալիս վրանների առաջ. ճերմակ շորե-րով և ուսերին մոխրագույն վերարկու գցած մի կին գնում-գա-լիս էր բազավարի հետ և տաքացած խոսում։ Վևիկն ասաց, որ դա բժշկուհին է։

— Բժշկուհին ինչո՞ւ համար է,— մտածեց Սեքոն,— էստեղ հո ավտո ու տրամվայ չկա, որ մարդ տակն ընկնի։ Այդ զար-մանալի էր. և ամեն ինչ այդտեղ նրա համար նոր էր ու հե-տաքրքրական՝ թե՛ խոհանոցը, թե՛ այնտեղ աշխատող ճեր-մակ հագած մարդիկ, թե՛ բժշկուհին, թե՛ ձկնկուլի նման բազավարը, թե՛ խաղի ցանցերը, թե՛ մուգ-կանաչ անտառը, որ միագույն հավասար ծառերով տարածվում էր դեպի վեր։ Սեքոն այդքան շատ ծառեր, մի խոսքով՝ անտառ չէր տեսել. տեսել էր միայն խաղողի, ծիրանի այգիներ, բայց նրանք կտոր-կտոր էին ու փոքր, իսկ սա, է՛, փովում է ահագին, և

չգիտես ո՛րտեղից է սկսվում և ո՛ւր է վերջանում, ու բոլորը նրան թվում էր մի ամբողջություն։ Այնպես հրապուրիչ էր անտառը ու հետաքրքրական, որ Սեթոն ուզեց անմիջապես գնալ, պտտել, բայց Գարիկն ու Լևիկը չթողին, թե դեռ ժամանակը չի, հիմա մարզանք ենք անելու։

Եվ, իսկապես, շուտով պիոներները շարվեցին վրանների առաջ ու սկսեցին մարզանքը. նրանք ձեռները տարածում էին առաջ, վեր, կռանում էին, բարձրանում, կռանում-բարձրանում շարունակ... Սա, ասին, «լիցքն է», այդ բառը նույնպես չհասկացավ Սեթոն։ Բայց շուտով իրենց էլ՝ երեկվա եկողներին հավաքեցին և մարզանքի համար շարք կանգնեցրին։

— Ինչ որ մենք կանենք, Սեթո, դու էլ արա մեզ հետ,— ասաց Լևիկը։

Եվ Սեթոն կանգնեց Լևիկի ու Գարիկի մեջտեղը։ Կոլվար Բաբկենի ղեկավարությամբ սկսեցին մարզանքը։ Շուտով ամբողջ հրապարակը լցվեց մարզանք անող պիոներներով։ Սեթոն այդքան պիոներ մի անգամից չէր տեսել. քաղաքում գոնե երթերի ժամանակ այդքան շատ չէին թվում. բոլորն էլ ճերմակ ու կապույտ հագած՝ կռանում էին, բարձրանում, քայլում էին մի փոքր ու նորից կռանում-բարձրանում. ամբողջ դաշտն ասես կռանում էր, բարձրանում։ Սեթոյին այդ ամենը թվում էր ծիծաղելի ու ավելորդ. ինչո՞ւ համար է. մի՞թե այս բանի համար են քաղաքից գալիս այստեղ. էս հո քաղաքում էլ կարելի է։ Չէ, մարզանքը բոլորովին դուր չեկավ Սեթոյին, մանավանդ որ ինքը, ինչպես պետք էր, չէր կարողանում շարժվել. ու նա մեծ թեթևություն զգաց, երբ մարզանքը վերջացավ և բոլորը գնացին աղբյուրը՝ լվացվելու։ Այդ էլ զարմանալի էր։ «Աղբյուրը»— դա մի հաստ ու երկար խողովակ էր— կես մետր հողից բարձր, փայտե սյուների վրա. ջուրը թափվում էր երկու կողմի փոքրիկ ծակերից,— և երեխաները՝ տղա, աղջիկ լվացվում էին կատակներ անելով, սրբվում ու նորից վազում դեպի վրանները։

— Հիմա անտառ կարելի՞ է,— հարցրեց Սեթոն, երբ լվացվել էր արդեն։

— Չէ, հիմա ստուգում է լինելու,— բացատրեց Գարիկը։ Այժմ էլ, ինչպես երեկ իրիկուն, պիոներները, լվացվելուց

Պետո, շարք կանգնեցին վրանների առաջ, կոլվարները հաշվեցին նրանց, հայտնեցին բազավարին, իսկ բազավարն իր հերթին հայտնեց դրոշակի ձողի մոտ կանգնածներին, թե քանի հոգի կա իր բազայում։ Բազավարների հայտարարություններից հետո—իրիկվա դրոշակը նորից բարձրացրին ձողի ծայրը, և ինչպես երեկոյան, այնպես էլ հիմա, կենտրոնից, դրոշակի ձողի մոտ կանգնածներից մեկը կանչեց բարձր, թե բանվոր դասակարգի ազատության պայքարին պատրա՞ստ են պիոներները։ Եվ ինչպես երեկոյան, այնպես էլ հիմա, բոլոր խմբերից, բոլոր պիոներները պատասխանեցին միանին.

«Միշտ պատրա՛ստ...»։

Սեթոն զարմացավ, թե ինչպես դրոշակը ձողի վրայով ներքևից բարձրացավ վեր, այնքա՛ն վեր։ Միևնույն ժամանակ նրան անհասկանալի մնաց և այն, թե ինչո՞ւ դրոշակը իրիկունն իջեցրին և ինչո՞ւ առավոտը բարձրացրին։ Նրա հարցին Գարիկը պատասխանեց միայն.

— Սա նշանակում է, որ օրվա աշխատանքն սկսում ենք։

Սեթոն չըմբռնեց. բայց նա այլևս հարցեր չտվեց, որովհետև նրանց կանչեցին ճեյի, իսկ ճեյից հետո երեխաներին բաժանեցին խմբերի.— մի մասին ջողին վրանների ներսը կարգի բերելու, մյուս մասին ուղարկեցին անտառ—խարույկների համար վառելափայտ բերելու։

Սեթոն ընկավ անտառ գնացողների մեջ, և այդ բանը նրան ուրախացրեց. կերթա, վերջապես, այդ անտառ ասածը մի լավ կտեսնի։ Նրանց հետ էր և կոլվար Բարկենը, և՛ իհարկե, Լևիկն ու Գարիկը։ Եվ շատ տղաներ ու աղջիկներ։ Ճանապարհ ընկան երգելով. երբ անտառ մտան, աղջիկները բաժանվեցին ծաղիկ քաղելու, իսկ տղաները շարունակեցին ճանապարհը։

— Էստեղ ի՞նչ միրգ կա,— հետաքրքրվեց Սեթոն, ծառերին նայելով. երկու օր էր նա միրգ չէր կերել։

Տղաները ծիծաղեցին։

— Մի՛րգ...

Սեթոն տարակուսեց. հապա այսքան ծառերն ինչի՞ համար էին, մի՞թե սրանք միրգ չեն բռնում։ Նա վիրավորվեց, բայց լռեց։ Իսկ Գարիկը նրան բացատրեց, որ անտառում լի-

նում են միայն վայրի պտուղներ, բայց ոչ մրգեր. այստեղ կար միայն վայրի տանձ ու խնձոր, և ուրիշ ոչինչ։

Անտառում ավելի զով էր և հաճելի. ցողը հատ-հատ կաթիլներով շողում էր կանաչների վրա, թիթեռները ծաղիկներից պոկված թերթերի նման բարձրանում էին օդը և նորից իջնում ծաղիկների վրա։ Մի նեղ արահետ անցնում էր կանաչների միջով, ծառերի տակով ու գնում դեպի անտառի խորքը։

— Սա Թթու ջրի ճամփան է,— ասաց մեկը։

Որոշեցին գնալ Թթու աղբյուրը, որը, տղաների ասելով, մի կիլոմետր հեռու էր։ Պարզվեց, որ պիոներներից մի մասը այդ աղբյուրը տեսել էր դեռ անցյալ տարի։ Բայց նորից ուզում էին տեսնել՝ մնացե՞լ է այնպես, թե փոխվել է կամ, գուցե, քանդվել։ Ճանապարհը շարունակ գնում էր խիտ ծառերի միջով, ու գնալով բարձրանում։ Անտառը երբեմն անհանգստանում էր, խշշում, երբեմն էլ այնպես էր լռում, ասես շունչ, կենդանի չկար։

Երբ բավական տեղ գնացին, ճանապարհը հանկարծ թեքվեց ու սկսեց իջնել դեպի ձորը։ Այստեղ երեխաները, նրանք, որ անցյալ տարի եղել էին, ուռաներով վազեցին առաջ ու համարյա գլորվեցին ցած, իհարկե, ուրախությունից։ Նվ իմ քանի րոպեից արդեն ամբողջ խումբը հավաքվել էր մամռապատ մի ժայռի մոտ, որի տակից կանաչավուն ջուր էր բխում անձայն, և անձայն էլ հոսում ներքև ու խառնվում աղմկաձայն վտակին։ Մեկն, ամենից առաջ, շտապ-շտապ ծունկի եկավ և շուրթերը մոտեցրեց ջրին։

— Ո՜ւ, Թթու ա՜...

Մյուսները նույնպես փորձեցին իրենց ծալովի բաժակներով և նույնպես հայտնեցին, որ ջուրն իսկապես Թթու է։

Լևիկն ու Գարիկն էլ գտան, որ անցյալ տարվանից ավելի Թթու է։ Իսկ Սեթոյին ջուրն ավելի դառը թվաց, քան Թթու։

— Փառավորե՜ս աշխարհ, էսենց էլ չո՜ւր,— բացականչեց նա թևքերով բերանը սրբելով։

— Դե, երեխեք, գնա՛նք,— վեր կացավ կոլվար Բաբկենը, երբ հանգստացել էին։— Բաժանվենք խմբերի և փայտ հավաքենք խարույկի համար։

Անտառը լիքն էր ծառերից ընկած չոր ճղափայտերով. տղաները հավաքում էին և զարմանում, որ այդքան փայտ կա. չնայած անցյալ և նախանցյալ տարիները ճամբարը հավաքել վառել էր, բայց այս տարի դարձյալ լիքն էր մանր ցախով։ Եվ տղաներն աշխատում էին մեկը մյուսից շատ հավաքել։ Սեթոն իր հասակին և ուժին անհարմար համարեց զբաղվել այդ մանր ցախերով ու մագլցեց հաճարի մի ծառ. կանգնեց մի մեծ ճյուղի վրա ու նրանից բռնելով, կախ ընկավ. նա ուզում էր այդ ճյուղը պոկել-տանել, բայց ճյուղը չէր պոկվում. կռանում էր, բայց չէր կոտրվում. և Սեթոն այնքան բարձրացավ իջավ ճյուղի վրա, որ վերջապես մի սուր ճայթյուն լսվեց, և Սեթոն ճղան հետ ընկավ ցած։

— Թաց փայտ չի՛ կարելի, Սեթո՛,— զգուշացրեց Գարիկը մոտ վազելով։— Արգելված է։

Բայց Սեթոն ուշ չդարձրեց. նա ուզում էր տանելուց հետո— մեծ բան տանել. ու այնքան ձգեց, որ կոտրված ճյուղը պոկվեց բնից և ահագին թրմփոցով ընկավ գետին, տափակեցնելով տակի թփերն ու փոքրիկ ծառերը։

Սեթոն ուրախացավ, որ իր փայտն ամենից մեծն եղավ։

Բայց Գարիկը, Լևիկը և մի պեպենոտ պիոներ, որ անցյալ տարի նույնպես եղել էր ճամբարում, հասկացրին, որ այդպես չի կարելի, թաց փայտն արգելված է, կտրելու իրավունք չկա։

— Անտառապահը կբարկանա, գիտե՞ս,— ասաց պեպենոտ պիոները, երբ ճանապարհ էին ընկել։

— Անցյալ տարի, ելք մենք...

Նրա խոսքը կիսատ մնաց. հանկարծ ներքևից, ծառերի արանքից դուրս եկավ Հրաչյանն ուսին մի մարդ, որի երեսին աչքի էին ընկնում գարու հասկերի պես շեկ ու բարակ բեղերը։ Հագինն էլ մի դեղին անձրևաթափ էր։

Պիոներները շփոթվեցին, իսկ մի երկու տղա, որ ըստ երեվույթին անցյալ տարվանից ճանաչում էին նրան, բացականչեցին ուրախ-ուրախ.

— Բարև, քեռի, բարև...

— Բարո՛վ, երեխեք, բարո՛վ,— ասաց նա բոլորին, ավելի շուտ նրանց ձեռի փայտերին նայելով, և հանկարծ աչքն

ընկավ Սեթոյի ձեռքի տերևակալած ճյուղին, որ քաշում էր նա կանաչները սափակեցնելով։ Անտառապահը մոայլվեց.

— Էդ ի՛նչ է... էդ ո՞վ է քեզ իրավունք տվել։

Սեթոն խեթ նայեց անտառապահին։

— Ի՞նչ է... Անտառը հո քունը չի՛...։

— Լա՛վ. արի մի քեզ տանեմ ձեր շտաբը, տուգանքի ենթարկեմ, էն ժամանակ կիմանաս, թե ո՛ւմն է,— ասաց անտառապահը, դեպի նա գնալով։

— Ո՛ւմ կենթարկե՞ս...

Անտառապահն ավելի մոտեցավ նրան, հասկացնելու, որ թաց փայտ կտրել չի կարելի. բայց Սեթոն, կարծելով մոտենում է իրեն խփի, ինչպես անում էին քաղաքում,— դիք կանգնեց, կռվի պատրաստ։

Նրա դիրքն այնպես էր, որ թվում է պատրաստ է և՛ հարձակվել, և փախչել, նայած ինչպես կդասավորվեն հանգամանքները։

Անտառապահն ավելի մոտեցավ, և Սեթոն, չգիտես ինչ ենթադրեց նրա այդ մոտեցումից, հանկարծ վրա պրծավ անտառապահին, հրացանը խլեց ու նետվեց մի կողմ, դեպի անտառի խորքը։

Պիոներները զարմացած, շվարած կանգ առան. Լևիկն ու Գարիկը գունատված նայեցին Սեթոյին, սպասելով, թե ի՛նչ է անելու, որովհետև Սեթոյի դեմքն այդ րոպեին ա՛յնքան տարօրինակ էր, այնքան վճռական, որ նրանից ամեն ինչ սպասելի էր։

Բայց անտառապահը ժպտաց՝ «օհո՛...»— նրան թվում էր Սեթոն հանաք է անում և հրացանը հիմա կբերի-կվերադարձնի։

Սակայն Սեթոն կատակ չէր անում։ Նա, հրացանը ձեռին, դնաց մտավ ծառերի մեջ, և էլ չերևաց։ Այդ ժամանակ Լևիկն ու Գարիկն անհանգիստ վազեցին նրա ետևից, քիչ հետո ծառերի արանքից դուրս եկավ և կոլվար Բարկենը և, իմանալով ինչ է պատահել, նույնպես վազեց Սեթոյի ետևից։ Երեքով, վերջապես, համոզեցին, որ նա թող չվախենա, անտառապահը նրան չի բռնելու, և նա համաձայնեց հրացանը ետ տալ։

Ինչպես տարել էր, այնպես էլ հրացանի մեջտեղից բռնած՝ բերեց տվեց տիրոջն ու հոնքերի տակից նայեց նրան։

— Ա՛ռ նոր եկածներից է, քեռի, կարգը չի իմանում,— բացատրեց կոլվար Բաբկենը։

— Տեսնում եմ,— գլխով արավ անտառապահը և մատը թափ տվեց Սեթոյի վրա։— էլ մյուս անգամ թաց ճյուղ չպոկե՛ս...

Սեթոն ամոթահար վերցրեց ճյուղն ու հետևեց ընկերներին։

Պիոներներն այդ օրը շատ ծիծաղեցին վրաններում ու խարույկի մոտ, հիշելով ու պատմելով Սեթոյի դեպքը։

Բայց Սեթոն մռայլ էր։

IV

Առաջին օրերն անցան էքսկուրսիաներով։ Բազավարներն ու կոլվարները պիոներներին տանում էին շրջակաները ցույց տալու. գնացին մի օր սարերը, որտեղից ճամբարի վրանները երևում էին հովանոցների չափ. մի ուրիշ անգամ իջան քաղաք՝ տեսան հանգստի տունը և նրա մեջ հանգստացողներին։ Գնացին և գյուղ, ինչպես բազավար ընկեր Տիգրանն էր ասում, «կոլխոզին ծանոթանալու», ու պիոներներն այդտեղ՝ դպրոցում երկույթ տվին. Գարիկն ու Լևիկը ոտանավորներ արտասանեցին, մյուսները ճառ ասին, պատկերազարդ գրքեր նվիրեցին գյուղի երեխաներին, իսկ կոլխոզնիկները ծափ տվին և ճանապարհ դրին նրանց մինչև գյուղի ծայրը։ Այդ օրը շատ ուրախ ժամանակ անցրին, իսկ վերադարձին՝ լողացան գետում։ Այս վերջին ճանապարհորդությունը Սեթոյի համար նշանավոր էր նրանով, որ մի քսակ գտավ՝ մեջը մի քանի ռուբլի։ Դա պեպենոտ պիոներինն էր. գետափին հանվելիս՝ նա քսակը գցեց և չնկատեց, որ ընկավ։ Սեթոն, որ հանվում էր մոտիկ, վերցրեց ու գրպանը դրեց։ Եվ երեկոյան պառկելիս՝ որքան էլ պեպենոտ պիոները լաց եղավ— Սեթոն բան չասաց, և բոլորի քնելուց հետո դրեց պայուսակը՝ դանակի մոտ ու քնեց հանգիստ, ուրախ սրտով, մտածելով, թե մինչև երևան գնալը դեռ ինչքա՜ն բան կարող է հավաքել. միայն թե պայուսակը մարդու ձեռ չընկնի...

Երբ առաջին օրերն անցան իրենց նորություններով և սկսվեց ճամբարի առօրյան՝ իր խաղերով ու ճաշերով— Սեթոն սկսեց ձանձրանալ. նա երբեմն ժամերով քաշվում էր անտառ, պառկում զովում ու մտածում. հիշում էր քաղաքը, շուկաների ու կոոպերատիվների մրգերը, զրնգուն տրամվայը և ա՛յն, թե ինչպես ինքը երբեմն թռչում էր նրա ոտնատեղը ու գնում կայանից— կայան։ Հիշում էր Զանգուի մեջ լողանալը և չգիտես ինչո՛ւ ձմեռվա ցիրկը. ու զարմանում էր, որ ճամբարում ամեն տեսակ խաղեր կան, բայց ցիրկի խաղ չկա։

Երբ ճաշից հետո կարգադրում էին, թե ամենաչալ ժամ է, գնացեք պառկեցեք, Սեթոն տղաներին առաջարկում էր՝ սարը բարձրանալ կամ գնալ ձորի գետակում լողանալ։

— Չի կարելի,— ասում էին ընկերները։

— Բա ի՞նչ անենք։

— Պետք է պառկած մնանք մի ժամ։

Սեթոն հառաչում էր.

— Է՜հ... էս էլ եղավ դրութի՜ն։

— Էդպես է կարգը, Սեթո։

Հնազանդում, պառկում էր մի քանի րոպե անխոս, ապա գլուխը բարձրացնում.

— Տղերք, էս կոզմերը, բաղ-բախչա չկա՞։

Տղաները նայում էին իրար և հարցնում.

— Ի՞նչ ես անում, Սեթո։

— Գնանք մի քիչ միրգ-բան բերենք։

Այդ ժամանակ Լևիկն ու Գարիկը բացատրում էին, թե՝ նախ չկա և, երկրորդ, եթե լինի— չի կարելի «բաղ-բաղչա» մտնել։

— Ըհը՜,— զարմանում թե տխրում էր Սեթոն։— Փառավորե՜ս աշխարհ, էս էլ եղավ դրութի՜ն...

Զարմանում էր Սեթոն, որ ուրիշ տղաներ, ինչպես, օրինակ՝ Լևիկը, Գարիկը, իրենց վրանի պեպենոտ տղան կամ դանակի տեր Օնիկը, Շալոնը, Արտոն, զբաղմունք են գրտնում թե՛ էքսկուրսիաների ժամանակ, թե՛ ուրիշ օրեր. Լևիկն ու Գարիկը, օրինակ, առանձնանում էին իրենց տետրակներով և, տղաների ասելով, ոտանավոր էին գրում, պեպենոտ

պիոները և դանակի տեր Օնիկը, Արտոն՝ ճանճեր ու թիթեռներ էին հավաքում և տուփերի մեջ պահում։ Սեթոյին զարմացնում էր մանավանդ այն, որ այս տղաները անտառում ծառի կեղևը բանում էին միջատներ բռնում, ծաղիկներից ու խոտերից բզեզներ էին վերցնում, կամ խոտ, ծաղիկ էին քաղում ու դնում ինչ-որ թղթերի մեջ։ Ի՞նչի էին պետք— չէր հասկանում։ Բայց շատ ծիծաղելի էր... Ուրիշ բան է, եթե իր նման կոճակներ ու հուլունքներ հավաքեին. դրանք, եթե ծախեր, էլի մի բան կոտային. բայց ո՛ւմ էր պետք, ո՛վ կառներ չոր խոտը, ծաղիկը, միջատը, բզեզը։ Դրանք էլ անհետաքրքիր էին, ինչպես ճամբարի խաղերը։ Մանավանդ տխրում էր նա, երբ անձրև եղանակին ստիպված մնում էր վրանի ներսը. այնպես նեղվածք էր, ցած... Երբ մի անգամ նստել էր անխոս ու թախծոտ նայում էր հեռուն, Գարիկը հետաքրքրվեց.

— Հը, Սեթո, ճամբարը հավանո՞ւմ ես։

Սեթոն գլուխն օրորեց։

— Հը՛մ... (այսինքն ոչ)։

— Ինչո՞ւ։

— Հենց էն, որ առանց իրավունքի չի կարելի լողանալ, չի կարելի սար բարձրանալ, քաղաք գնալ։ Էս ինչ դրութին է։ Ջարթնելը՝ փչելով, ուտելը՝ փչելով, քնելը՝ փչելով...— Նա լռեց դժգոհ։— Հետո միրգը մի տեսակ ու քիչ։

— Ուրեմն քաղաքն ավելի լա՞վ է։

— Ըհը՛. հալբաթ որ։ Ինչքան ասես միրգ կա, մառոժնի կա։

— Է, մառոժնին ուտում են շոգի համար. այստեղ հո շոգ չի։

— Քաղցր բանն ամեն տեղ էլ կուտեն։ Թող ըլի՛...

Սեթոն միրգ շատ էր սիրում. ամեն անգամ, երբ մտնում էին անտառ, նայում էր վեր՝ այս ու այն կողմ, թե չկա արդյոք մի պտղատու ծառ, չնայած հասկացրել էին, որ այստեղ միայն վայրի պտուղներ են։ Բայց նա փնտրում էր. ո՛վ է իմանում, հանկարծ լինի։ Իսկ ճամբարում միշտ հետևում էր, թե տղաներից կամ աղջիկներից ո՛վ է միրգ ստացել։ Երբ իմանում էր մեկն ստացել է, անմիջապես հարցնում էր.

— Էդ որ ստացել ես, մենա՞կ ես ուտելու։

Պիոներ էր լինում, որ բաժին էր հանում նրան, և Սեթոն գոհ բացականչում էր. «Ըհը՛, Փառավորե՛ս աշխարհ»... Իսկ եթե պատասխանում էին, որ կերել են արդեն, նա գլուխն օրորում էր.

— Ըհը՛... էդ էլ եղավ ախպերութի՛ն...

Մի անգամ էլ պիոներներից մեկը կոպիտ ձևով մերժեց մրգ տալ նրան, այդ ժամանակ Սեթոն որոշեց պատժել տղային: Եվ գիշերը, երբ բոլորը քնել էին արդեն, նա մտավ վրանը և քնած տղայի երեսը ներկեց ածուխով: Առավոտը, երբ նա զարթնեց, ընկերները քրքջացին, տեսնելով նրա դեմքի տարօրինակ ու ծիծաղելի գծերը: Կոլվար Բաբկենը ինքն էլ ծիծաղեց և հետաքրքրվեց, թե ո՛վ կարող է արած լինել: Մեկը, որ, ըստ երևույթին, տեսել էր, տվեց Սեթոյի անունը: Այդ ժամանակ Լևիկն ու Գարիկը և կոլվար Բաբկենը կանչեցին Սեթոյին և բացատրեցին, որ այդպես՝ ընկերոջ երեսը ներկել չի կարելի: Ճիշտ է, խաղ է, ծիծաղելի է, բայց էլ չպետք է անել:

— Է՛հ, որ չեք ուզում՝ չեմ անի,— համակերպվեց Սեթոն հանգիստ, բայց քիչ հետո, կարծես իրեն արդարացնելու համար, ավելացրեց.— Բա ինչո՞ւ մրգի չտվեց:

— Ա՛խ, մրգի համա՞ր ես արել,— զարմացավ կոլվար Բաբկենը:— Այդ դեպքում հո բոլորովին չի եղել...

Սեթոն կարոտել էր քաղաքի մրգերին: Օրքեմն այնքան սաստիկ էր լինում այդ կարոտը, որ մտածում էր թողնել ճամբարը, ընկերներին և պայուսակն առնել-փախչել քաղաք:

Բայց ինչպե՞ս...

V

Շուտով սակայն ճամբարում այնպիսի հետաքրքրական բաներ եղան, որ Սեթոն թողեց փախչելու միտքը, ու ոչ միայն թողեց, այլև ինքը տարվեց ճամբարի կյանքով:

Մի քանի օր էր խոսում էին, և այդ խոսքը կամաց-կամաց տարածվում էր պիոներների մեջ, թե անտառում արջ կա և այդ արջը գիշերներն ոռնում է ձորում: Արջի վախը մնացել էր դեռ անցյալ տարվանից, բայց այս տարի նորից պիոներ

Ավետիսը, որ Հունաստանից եկած մի փոքրիկ տղա էր. իր գալն այդ հեռավոր երկրից նա բացատրում էր այսպես. եկել է ծովափ, մտել է նավ՝ տեսնելու, թե իր ծանոթներից ո՛վքեր են գնում Հայաստան։ Մինչև անցել է բաժնից-բաժին, հարկից-հարկ— նավը շարժվել է և նա մնացել է մեջը. ծնողներին, փոքրիկ քույրերին թողած՝ եկել է Հայաստան ու մնացել մենակ։ Եվ նրան էլ, ինչպես Սեթոյին Լևիկն ու Գարիկը, պիոներները վերցրել-բերել են ճամբար, ուր նա իրեն այնպես էր զգում, կարծես մանկությունից ճամբարում էր ապրել. ամեն օր հունական երգեր էր երգում և պիոներներին զվարճացնում։ «Ավետիս, մի երգ ասաս», առաջարկում էին պիոներները, և Ավետիսն սկսում էր առանց հույզի ու տրամադրության.

Ռե-ռե-ռիկա
Էռե-իսե պրամա-երո՜...

Պիոներները ծպտում էին, ծպիտը կամաց-կամաց փոխվում էր ծիծաղի. ծիծաղում էր և ինքն Ավետիսը, ապա պատմում, թե որքան մեծ էր ու կապույտ այն ծովը, որով եկել էր. «Մե՜ծ, մե՜ծ, տաս էս անտառի չափ», ասում էր նա, ձեռով անտառը ցույց տալով։

Այս Ավետիսն ահա մի օր իր նման փոքրիկների հետ գնաց անտառ՝ ծաղիկ քաղելու և հանկարծ ամբողջ խմբով փախած եկան։

— Մենք արջ տեսանք։

Ու բոլորը նորից սկսեցին խոսել, թե անտառում արջ կա։

— Արջը որտե՞ղ տեսար, Ավետիս։

— Այնտեղ,— գլուխը թափ էր տալիս նա դեպի անտառը։

— Ի՞նչ տեսակ էր։

— Մե՜ծ։ Ըհը՜,— ձեռները տարածում էր Ավետիսը։

— Ի՞նչ էր անում։

Ավետիսը բերանը բանում էր և ծռմռում այս ու այն կողմի վրա, իբրև թե ուզում էր կծել։

— Քանի՞ գլուխ ուներ, Ավետիս,— շարունակում էին իրենց հարցերը հասակավոր պիոներները։

Ավետիսը ծիծաղում էր այդ հանաքի վրա և լռում։

Ջնայած հանաքին, բայց լուրջ տարածվում էր այն լուրը, թե անտառում արջ կա և մինչև անգամ ասում էին, թե բացի այն, որ գիշերներն ոռնում է անտառում, նա գալիս է և վրաններից մոտ։ Պիոներները ցերեկը չէին հավատում այդ բոլորին, բայց մութն իջնելուն պես՝ սկսում էին կասկածել ու միմյանց վախեցնել արջով. քնելուց առաջ միշտ զրուցում էին արջի մասին։

— Որ գա, կարո՞ղ է վրաններին մոտենալ։

— Չէ՛. խարույկից կվախենա...

— Պահակները չեն թողնի...

— Բազավարը հրացան ունի— կկրակի...

Արջի պատմությամբ շատ էր հետաքրքրվում և Սեթոն։ Դուրսը թե իրենց վրանում՝ նա մասնակցում էր այն բոլոր զրույցներին, ինչ անում էին արջի մասին։ Նա չէր հավատում, թե արջ կա անտառում, իսկ եթե լիներ էլ՝ չէր կարծում թե նա վրաններին մոտենա։

— Իսկ եթե գա ի՞նչ կանես,— հարցնում էին Սեթոյին։

— Չի՛ գա։

— Եթե գա՞։

Սեթոն նայում էր խոսակցին, մտածում և նորից կրկնում, որ չի գա։

Մի գիշեր էլ, երբ բոլորը, խարույկի զրույցներից հետո, քնել էին արդեն և պահակներն էին միայն շրջում լապտերներով, հանկարծ պահակներից երկուսը մոտիկ արտի մեջ նկատեցին մի տարօրինակ ստվեր, որ կամաց-կամաց առաջ էր գալիս զարմանալի շարժումներով։ Պահակներն սկզբում, վախկոտ չերևալու համար, իրար բան չասին, իսկ հետո մեկը հարցրեց անտարբեր.

— Էն ի՞նչ է արտի միջին։

Ընկերը չկարողացավ որոշել, և երկուսին էլ թվաց կա՛մ գող է, կա՛մ արջ. բայց ավելի շուտ արջ թվաց։ Ու անմիջապես վազեցին պահակապետի մոտ՝ կասկածելի երևույթի մասին հայտնելու։ Պահակապետը վազեց ընկեր Տիգրանի հրացանը վերցնելու, որովհետև միայն նա հրացան ուներ, ապա սուլիչով կանչեցին մյուս բազաների պահակներին։ «Ի՞նչ կա», հետաքրքրվում էին եկողները։ Պատասխանի փոխարեն

ցույց էին տալիս արտում երևացող սև բանը, որ մերթ կռանում էր, մերթ բարձրանում, ասես հասկեր էր ուտում կամ դիտում էր եկողներին ու թաքնվելու փորձեր անում։ Թե՛ պահակապետը, թե՛ մյուս բազաների պահակները նույնպես չկարողացան ջոկել՝ ո՞րջ է դա, թե՞ մարդ։ Դողությյան համար այստեղ եկող մարդը պետք է իմանար, որ պահակներ կան, շրջում են լապտերներով, խարույկները վառվում են մինչև լույս, և ինքը ոչինչ չի կարող... Ուրեմն պետք էր ենթադրել՝ արջ է։ Բայց եթե արջ է— ինչո՞ւ է այդպես տարօրինակ շարժումներ անում— կռանում է շարունակ ու բարձրանում, և լապտերների լույսից էլ բոլորովին չի խրտնում։ Վերջապես, պահակապետը չհամբերեց.

— Գնա՛նք առաջ։

Եվ բոլորը, փայտերով ու քարերով զինված, շարժվեցին դեպի արտը։ Սև կերպարանքը դիրքը չփոխեց, և այս հանգամանքն ուրախ տվեց ենթադրելու, որ դա իսկապես արջ է։

Ու առաջ գնացին։

— Ը՛սսս,— ասում էր պահակապետը հրացանը պատրաստ բռնած քայլեր անելով,— կամաց, քար չգցեք, չհազաք...

Ու բոլորը, որպես արձագանք, զգուշացնում էին իրար.

— Ը՛սսս, չհազաք...

Երբ բավական մոտեցել էին՝ սև ստվերը հանկարծ չքացավ բարձր արտի մեջ։ Այս հանգամանքը նորից ենթադրել տվեց, որ գող է, վախեցավ— թաքնվեց։

Եվ համարձակ ու սրտապինդ առաջ գնացին։

Երբ արդեն մոտեցել էին և համարյա օղակել նրա տեղը, սև կերպարանքը հանկարծ բարձրացավ և մի այնպիսի ձայն հանեց, որ բոլորը ետ-ետ փախան, դրանց հետ և պահակապետը։ Այդ ահարկու ձայնի արձագանքը տարածվեց քնած ճամբարի վրա։

— Արջ է,— հազիվ շշնջաց մեկը։

Բայց պահակապետն այդ փնչոցի մեջ ինչ-որ ոչ կենդանական և ոչ գազանային բան զգաց, ու նորից համարձակ առաջ գնաց. նրան հետևեցին և մյուսները՝ սիրտ առած։ Սև կերպարանքն այս անգամ նորից «բոհ» արավ ու աներևույ-

թացավ. արտը ծածկում էր նրան. և թեև տղաներն այլևս չկարողացան տեսնել նրան, բայց ձայնից իմացան, որ կենդանու ձայն չէր: Եվ երբ անվախ առաջ գնացին՝ արտի միջից մի անգամ էլ լսվեց մի թույլ «բոհ», ապա մի բարձր ծիծաղ: Ու մեկը կանգնեց արտի մեջ, գլուխը տոպրակ հագցրած: Սկզբում լապտերների լույսով էլ չկարողացան իմանալ ո՛վ է: Բայց երբ տոպրակը հանեցին— նրանց առաջ կանգնեց Սեթոն:

Մյուս օրը պիոներները պատի լրագրում նկարեցին Սեթոյին արջ դառած, այսինքն՝ նկարեցին մի արջ ու տակին գրեցին.

«Ձերջ Սեթոն»:

VI

Բայց դրանից հետո էլ խոսակցություններն արջի մասին չդադարեցին: Պիոներները շարունակ վիճում էին արջի լինել-չլինելու մասին և հաճախ խմբերով, իրենց կարծիքն ասուգելու համար, գալիս էին բազավարի մոտ. «Ընկեր Տիգրան, անտառում արջ կա՞, թե՞ չէ»: Ընկեր Տիգրանը, որ ինքն էլ համոզված չէր կա թե ոչ, հանդարտ ետ էր տանում իր հովանոցաչափ գլխարկը, ձեռքը քսում էր շերտավոր մայկայի կրծքին և ասում. «Իհարկե չկա. եթե լիներ՝ ինձ կուտեր. որովհետև արջը առաջ մեծին է ուտում, հետո փոքրին»: Պիոներները ծիծաղում էին ու հեռանում: Բայց վեճը դրանով չէր սպառվում. խոսում էին բոլորն էլ, առանձնապես երեկոները, երբ մութն իջնում էր և անտառն ահարկու էր դառնում: Արջի մասին շատ խոսում էին մանավանդ Սեթոյենց վրանում: Լեվիկը, Գարիկը, դանակի տեր Օնիկը, Շալոն, բզեզներ հավաքող Արտոն, որին պիոներները նաև Դարվին էին ասում, պեպենոտ պիոները— պնդում էին, թե արջ կա, իսկ մյուսները, դրանց հետ և Սեթոն՝ կարծում էին որ ոչ մի արջ էլ չկա, այդ բոլորը փոքրիկ պիոներներն ու վախկոտներն են հնարել: Շալոնը, որ համառ տղա էր, կրկնում էր, թե կա և ինքը լսել է նրա ոռնոցը: Նրա կարծիքը կրկնում էին և մյուսները:

— Չկա՜,— ասում էր Սեթոն խոսքը երկարելով, այդպիսով, կարծես ավելի համոզելու համար։

— Չկա՜ ա՞,— տաքանում էր Շալոնը։— Ծեծ չկա, կարո՞ղ ես մենակ Թթու ջուր գնալ։

— Կարող եմ։

— Հենց հիմա՞։ Գիշերով։

— Կարող եմ,— կրկնեց Սեթոն։— Հենց գնամ՝ քեֆդ գա։

— Հա՞. գուցե լապտերով գնաս։

— Չէ՛, առանց լապտերի։

— Դե գնա՛։

— Ի՞նչ կտաք, որ գնամ։

— Ինչ կուզես,— պատրաստակամություն հայտնեց Շալոնը, հավատացած լինելով, որ Սեթոն չի գնա և, միևնույն է, ինչ էլ խոստանա՝ կորուստ չի լինի։

— Գլխարկս կտամ։

Շալոնն իր գլխարկի անունը տվեց նրա համար, որովհետև Սեթոն նրա գլխարկը շատ էր սիրում և երբեմն գլխին էր դնում-պարում։

Սեթոն համաձայնեց։ Պայման դրին, որ Սեթոն գինու դատարկ շիշը տանում է Թթու ջուր լցնում բերում և, իբրև վարձ, ստանում է Շալոնի ասեղնագործ գլխարկը կամ, ինչպես տղերքն էին ասում, թասակը։ Բացի դրանից, որպեսզի ապացուցեր, թե իսկապես աղբյուրն է գնացել, այլ ոչ ներքևից է լցրել— նա պարտավոր էր մի բան թողնել աղբյուրի մոտ։ Եվ դա պիտի լիներ պեպենոտ պիոների գոտին։ Չնայած խոսում էին, բայց ոչ ոք չէր հավատում, թե Սեթոն կերթա. այն էլ այս մութ գիշերը։ Այդ էր պատճառը, երբ նա վեր կացավ հագնվեց, բռնեց պատված տեղներից բարձրացան, իսկ Լևիկն ու Գարիկն ուղղակի վեր թռան.

— Թարկը տուր, Սեթո,— ասաց Լևիկը,— պառկի՛ր։

— Վտանգավոր է, Սեթո,— ավելացրեց Գարիկը։— Մի բան կպատահի, ա՛յ մենք ենք պատասխանատու։ Մի՛ գնա...

Սեթոն շարունակեց հագնվել, Լևիկն ու Գարիկը հիշեցրին, որ իրենք են նրա շեֆը, մի բան կպատահի, կկորչի— բազավորը՝ ընկեր Տիգրանը իրենցից կուզի։ Երբ համոզիչ խոսքերը չազդեցին, սկսեցին խնդրել.

— Սեթո ջան, մի գնա... Սեթո, ա՛յ միևնույն է, պահակները չեն թողնի...

Ոչինչ չօգնեց։ Սեթոն իր խոսքի տերն էր. նա այնպես կերթա, որ ոչ մի պահակ էլ չի տեսնի։

— Դե, ցտեսութիւն...

Ու Սեթոն գինու մի դատարկ շիշ վերցրած դուրս եկավ վրանից։ Դուրսը մութն էր. խարույկը դեռ վառվում էր, բայց առաջվա պես բոցավառ չէր. պահակները նրա մոտ նստած հանդարտ զրուցում էին. ավելի շուտ՝ մեկն ինչ-որ բան էր պատմում, մյուսները լսում էին. մի երկու պահակ էլ ներքևի վրանների մոտ էին. այդ երևում էր նրանց լապտերներից, որ պլպլում էին խավարում. այնքան մութն էր, որ անտառը չէր երևում և միայն վրաններն էին թեթև սպիտակին տալիս։ Դուրս գալով՝ Սեթոն, չնկատվելու համար, չոքեց և մի րոպե մնաց այդպես, վրանի առաջ, շիշը կրծքին սեղմած։ Հավասարանալով՝ տեսնող չկա— նա չորեքթաթ գնաց դեպի անտառ։ Կես ճանապարհին սակայն կանգ առավ հանկարծ ու նետ նայեց. պահակներն էլի զրուցում էին խարույկի շուրջը, իսկ մյուսներն իրենց լապտերներով շրջում էին հետու վրանների մոտ։ Նա մի փոքր էլ շարունակեց չորեքթաթ, ապա բարձրացավ ու լայն քայլերով իրեն գցեց անտառ։ Ըհը՛, էլ չեն տեսնի...

Այդտեղ, անտառի ճամփան արդեն լավ ծանոթ էր Սեթոյին։ Արահետը գնում էր ծառերի արանքով, բայց այժմ այնպես մութն էր, որ ծառերը թվում էր ձուլվել են իրար։ Ցերեկը, որ անտառում ձայներ չէին լսվում, հիմա, զարմանալի, տարօրինակ ձայներ էին գալիս. նախ՝ ջրի ձայնը, որ լսվում էր ցածից, ձորից.— մոտիկ ծառերը կարծես դողալով՝ խշշում էին և իսկույն դադարում. թվում էր, ականջ են դնում ինչ-որ ձայների. հետո խշշոցն անցնում էր մյուս ծառերին. թվում էր առաջինների անհանգստությունն անցնում է մյուսներին. ապա լսվեցին թռչունների ձայներ. նախ կռնչաց մի թռչուն, հետո մնչաց ու ծվծվաց մի ուրիշը։ Ապա, երբ քիչ առաջ էր գնացել, լսվեց մի վազք. թվաց ինչ-որ կենդանիներ են վազում, դիպչում ծառերին, հետո կանգ առնում ու նորից

շարունակում իրենց վազքը դեպի հեռուն... Ի՞նչ կենդանիներ են տեսնես, և արդյո՞ք կենդանիներ էին— Սեթոն չէր կարող իմանալ։

Սեթոյի սիրտը վախ ընկավ, բայց գնում էր, մտածելով, որ դրանք, երևի հասարակ նապաստակներ են. իսկ նապաստակն ինչ է, որ մարդ վախենա նրանից։

Անտառը նրա համար պարտեզի պես էր, իսկ պարտեզում ո՛վ է տեսել գազան...

Ամեն մի կոճղ տեսնելիս՝ ասում էր— երևի մարդ է. բայց հետո մտածում էր, թե մարդն այստեղ ինչ գործ ունի. ու առաջ էր գնում ծանոթ արահետով, որ մեծ մասամբ անցնում էր խիտ ծառերի տակով, որտեղից երկինքը չէր տեսնվում, իսկ տեղ-տեղ երևում էր փայլուն, պճպճին տվող աստղերով, և Սեթոյին թվում էր, թե աստղերը գնում են իր հետ կամ հետևում են իրեն։

Երբ նա հանապարհի կեսն անցավ և հասավ այն տեղը, ուր պետք է թեքվեր դեպի ձորը՝ աղբյուրը գնալու, հանկարծ իրենից քիչ հեռու մի խշրտոց լսեց. ասես ինչ-որ մի կենդանի պոկվեց տեղից ու վազեց ցած. Սեթոյին այնպես թվաց, թե կենդանին երևի վախեցավ իրենից, իր ոտնաձայնից և փախավ։ Սեթոն այստեղ նորից վախ զգաց, բայց իրեն սրտապնդելու համար սկսեց սուլել. նրա սուլոցին պատասխանեց մի թռչուն, որ մնչաց հիվանդոտ ձայնով. հետո ամեն ինչ լռեց ու խաղաղվեց անտառում. բոլորը կարծես, թե՝ ծառ, թե՝ կենդանի, թե՝ թռչուն— ականջ էին դնում նրան։ Այդպես թվաց Սեթոյին, և նա սուլոցից անցավ երգի։ Երգում էր Սեթոն Հունաստանից եկած փոքրիկ Ավետիսի երգը, ավելի շուտ այդ երգի առաջին խոսքերը.

Ռէ-ռի-ռիկա, հոպերո՛...
Հոպերա՛...

Կամաց-կամաց նա ձայնը գլուխը գցեց և, երգելով, էլ ոչինչ չէր լսում շուրջը— ոչ ծառերի խշշոց, ոչ թռչունի հանկարծական ձայն, ոչ անհասկանալի վազք, ոչ ջրի շաշյուն. թվում էր նրան՝ բոլորը շունչները պահած ականջ են դնում իրեն։ Հունական երգերից անցավ մյուս՝ նոր սովորած երգե-

րին։ Ու երգելով, իր համար էլ աննկատելի, հասավ աղբյուրին։ Ջնայած ձորը մութն էր, բայց նա ճանապարհը գտավ հեշտությամբ— քանի՜ անգամ եկել էր արդեն. անցավ քարերի կողքով, թռավ վտակը ու մոտեցավ այն մեծ ժայռին, որի տակից բխում էր աղբյուրը։ Հասնելուն պես, առանց հանգըստանալու— շիշը լցրեց, խցանեց և, որովհետև թեթև հոգնած զգաց իրեն, նստեց հանգստանալու։

Այժմ վտակի շառաչից բացի ոչինչ չէր լսվում անտառում. ջրի աղմուկը խլացնում էր մյուս ձայները և ձորից աստղերն ավելի հեռու էին թվում։

Վերադարձն ավելի կարճ տևեց, և Սեթոն ներից ճամբար մտավ այնպես, որ պահակները նրան չտեսան դարթյալ։ Իսկ երբ մտավ վրանը— ընկերների մեծ մասը քնած էր արդեն։ Արթուն էին միայն Շալոնը, Լևիկը և այն տղան, որի ավել անունը Դարվին էր։ Մյուսները, քնածները, խնդրել էին զարթնեցնել՝ Սեթոյի գալը տեսնելու։ Բայց Սեթոյի գալն այնքան զարմանալի և այնքան անակնկալ եղավ, որ նրանք մոռացան քնածներին արթնացնել։

— Բերի՛,— ասաց Սեթոն ներս մտնելով ու շիշը գլխից վեր բարձրացնելով։

Շալոնն ու Լևիկը վեր թռան ու սկսեցին փորձել շշի ջուրը։ Իրարանցումից քնածներից մի քանիսն էլ զարթնեցին և նույնպես ստուգեցին ջուրը։— Իսկապես քթու էր։

— Ա՛յ, կեցցե՛ս, Սեթո, կեցցե՛ս,— ասաց Լևիկը, ուրախացած, որ իրենց Սեթոն անվախ կատարել էր իր խոսքը։

— Բա գոտի՞ն,— հարցրեց պարտված Շալոնը, մտածելով իր ասեղնագործ թասակի մասին, որ պիտի տար արդեն Սեթոյին։

— Ենտեղ է...

Առավոտը, թեյից հետո, ընկերներն ստուգեցին այդ էլ։ Գոտին, իսկապես, օղակված դրված էր ժայռի կրծքին։

Ով Սեթոն ստացավ Շալոնի ասեղնագործ թասակը, բայց գլխին դնելու փոխարեն պահեց պայուսակի մեջ։

VII

Երկու օր հետո աղչիկների վրանը միրգ ստացավ, այն վրանը, որ գտնվում էր Սեթոյենց վրանի կողքին և աղչիկներն ամեն օր հավաքվում, երգ էին ասում։ Պիոներները, դրանց հետ և Լևիկն ու Գարիկը, և կուվար Բաբկենը՝ միայն տուսիկ հագած, աղմուկով վոլեյբոլ էին խաղում, երբ մեկը՝ քաղաքից եկած մի մարդ՝ մի կողով միրգ բերեց ու հանձնեց խաղին մասնակցող Անիկ Մարտունուն։

— Մայրդ ուղարկեց,— ասաց ու մի նամակ տվեց։

Անիկ Մարտունին, որ մի կլորիկ աղչիկ էր, խաղը թողեց և կողովն ու նամակը ձեռին վազեց վրան՝ կտրած մազերը ծածանելով։ Ապա, փոքր անց, նորից ետ եկավ վազեվազ, ընկերուհիներին մի-մի ծիրան ու տանձ տվեց և հրավիրեց, որ ճաշից հետո անցնեն իր մոտ՝ միրգ ուտելու։ Այդպես էին աղչիկները. մեկը միրգ ստանալիս՝ հրավիրում էր և մյուսներին։ Բայց Անիկ Մարտունին այս անգամ հրավիրեց մի երկու տղայի էլ, դրանց հետ և Գարիկին ու Լևիկին։ Իսկ Սեթոյին ոչինչ չասաց, չնայած որ նա անհանգիստ սպասում էր, թե ահա իրեն էլ կկանչի և մի տանձ, մի ծիրան կտա. բայց մոտովն անցավ— ոչի՞նչ։ Չտեսա՞վ արդյոք, թե՞ չուզեց ասել— Սեթոն չիմացավ, բայց վիրավորվեց։ «Ինձ բանի տեղ չդրեց», մտածեց նա և, խաղը թողած, գնաց իրենց վրանը, ու երկար չերևաց. ճաշի փողը փչեցին, պիոներները, ընկերները խումբ-խումբ գնացին ճաշարան, բայց նա տեղից չշարժվեց։ Գարիկն ու Լևիկը կանչեցին.

— Սեթո՛, արի՛...

— Հիմա կգամ,— պատվեց նա սանդալներով. հանում էր, թափ տալիս, հագնում-տուգում. թվում էր սանդալներին մի բան է պատահել։ Իսկ երբ ընկերները գնացին, նա դանդաղորեն հագավ դրանք ու վրանի ճեղքով նայեց, թե արդյոք բոլորն են գնացել ճաշարան. հավաստիանալով, որ բոլորը գնացել են, նայեց, թե պահակներն ի՞նչ են անում։ Բոլոր պահակները չէին երևում, բայց նրանք, ովքեր երևում էին— ճաշում էին թմբերին նստած. իրենց վրանախմբի պահակը նույնպես— Աշոտը, որին նաև Սմբատունի էին ասում՝ թմբին

նստած, ոտները փոսում կերակուր էր ուտում՝ երեսը հակառակ կողմը դարձրած։ Ճամբարի կարգն այդպես էր. ճաշի ժամին պահակներին նույնպես կերակուր էին տալիս, որ իրենց վատ չզգան. ու նրանք և՛ ուտում էին, և՛ իրենց պարտականությունը կատարում— հսկում, որ վրաններն օտար մարդ չմտնի, որ վրաններից բան չկորչի։

Տեսնելով Աշոտն երեսն այն կողմն է արել, Սեթոն ուրախ-ուրախ, բայց զգույշ քայլերով դուրս եկավ իրենց վրանից ու շուրջը նայեց նորից. մյուս վրանախմբի պահակը նույնպես կերակուր էր ուտում... Սեթոն կամացուկ անցավ աղչիկների վրանի ետևը. այդտեղից պահակները բոլորովին չէին երևում։ Վրանին հասնելուն պես կռացավ արագ, աղչիկների վրանի փեշը բարձրացրեց ու գլուխը ներս խոթեց ներսը։ Ոչ ոք չկար։ Այդ ժամանակ նա չորքթաթ սողաց ներս։ Ու այդպես էլ, առանց բարձրանալու, նայեց այս ու այն կողմ։ Առաջ էլ՝ դրսից տեսել էր աղչիկների վրանի ներսը, որ մաքուր, կանոնավոր էր ավելի, քան իրենցը, քան մյուս տղաներինը. սրանք մինչև անգամ զարդի սեղան ունեին, հայելի, գրքեր, պատկերներ... Բայց այժմ Սեթոյի սիրտը այնպես էր խփում, որ ոչ մի բան չնկատեց առանձին. նրա աչքերը փնտրում էին այսօրվա միրգը։ Բայց ո՞ւր էր մրգի այդ փոքրիկ զամբյուղը. չկար ոչ մահճակալների տակ, ոչ նրանց վրա, ոչ անկյուններում, ոչ էլ կախված էր առաստաղից։ Առանց բարձրանալու՝ Սեթոն աչք ածեց ամեն կողմ, և տեսնելով բան չի երևում— կուզեկուզ մոտեցավ հայելու սեղանին, որը ծածկված էր մի այնպիսի մեծ ճերմակ սփռոցով, որ մինչև գետին էր հասնում։ Սեթոն ձեռը մեկնեց ու արագ ետ քաշեց այդ վարագույր-սփռոցը.— ա՜, ա՛յ թե որտեղ են պահել...

Զամբյուղը բանալը և միրգը ծոցն ու գրպանները լցնելը մի քանի ակնթարթ տևեց, և այնուհետև նա չիմացավ ի՛նչպես դուրս եկավ վրանից, ի՛նչպես գնաց դեպի անտառ. չիմացավ նույնպես իրեն տեսնող, նկատող եղավ թե ոչ. նա այդ մասին չէր էլ մտածում— ա՛յնքան կլանված և ուրախ էր իր ավարով։ Անտառում միայն զգաց, որ սիրտը դողում է կրծքի տակ, և նա չէր կարող ասել դա վախի՞ց է, թե՞ ուրախությունից։ Բայց մի բան պարզ էր — նա շատ ուրախ էր.

ի՞նչ համեղ էին ծիրանը, տանձը,— վաղուց էր նա ծիրան չէր կերել և այն էլ այդպիսի ախորժակով։ Մի քանի ծիրանից հետո սակայն հանկարծ հիշեց, որ ընկերները գնացել են ճաշի, եթե ինքը ուշանա—կկասկածեն, մանավանդ Լևիկն ու Գարիկը։ Մի երկուսն էլ գցեց բերանը, ապա մնացածը— ինչքա՜ն շատ էր— թաքցրեց ծառի փչակում, ավելուկի տերևներով ծածկեց ու հայդա՜...վազեց անտառով և վրանների մյուս կողմից դուրս գալով՝ մտավ ճաշարան։ Ընկերներն առաջին տեսակը դեռ նոր էին վերջացրել, և սպիտակ ականջօղերով մատուցող գեղջկուհին հավաքում էր դատարկ ամանները։

— Ո՞ւր էիր,— հարցրեց Գարիկը, երբ Սեթոն հևալով ու արագ տեղավորվեց նրա կողքին, այսինքն իր մշտական տեղը։

— Անտառում բան էի մոռացել։

— Ի՞նչ։

Սեթոն չիմացավ ինչ ասել ու վրա բերեց։

— Մի բան։

Այդ Գարիկին շատ խորհրդավոր թվաց, և նա մտքում որոշեց խոսել Լևիկի հետ, և նրանք միասին իմանան, թե ինչ կա։

Սեթոն ուտում էր և շարունակ նայում այն կողմը, ուր նստած էր Անիկ Մարտունին՝ ընկերուհիներով շրջապատված։

Դեռ վերջին բաժինն ուտելիս Սեթոն նկատեց, թե ինչպես Անիկը ելավ, ընկերուհիներին հավաքեց, և բոլորն ուրախ խմբով, ծիծաղելով գնացին դեպի վրան՝ մերգ ուտելու... Սեթոն ակամա նայեց նրանց ետևից և քմծիծաղ տվեց. նա որոշեց հեռվից դիտել, թե ի՛նչ է լինելու. կամ Անիկ Մարտունին ի՛նչ է անելու...

Ճաշարանից դուրս գալով Սեթոն նկատեց, որ Անիկ Մարտունին, ձեռն աչքերին տանելով, գնում է բազավարի մոտ, իսկ ընկերուհիները վրանի մոտ կանգնած խոսում են տխուր։

«Իմացել են», մտածեց Սեթոն։

Մինչև այդ Անիկ Մարտունին՝ գրեթե հեկեկալով, բայց աշխատելով իրեն զսպել, մտավ բազավարի վրանը։

— Կարելի՞ է,— խոսեց նա ընդհատվող ձայնով։

Բազավար ընկեր Տիգրանը ճաշում էր ուսուցիչ՝ ընկեր Վարդանի հետ միասին. Տիգրանը շերտավոր մայկայով էր և այս անգամ գլխաբաց։

— Ի՞նչ կա, Անիկ։

Անիկը բեկբեկ ձայնով, ձեռը հաճախ աչքերին տանելով, պատմեց, որ տնից ստացած իր մրգերը գողացել են և զամբյուղի մեջ թողել ընդամենը մի քանի հատ։

Բազավարը ճաշն ընդհատեց.

— Բայց ինչո՞ւ ես լաց լինում։

— Ես, ես... ընկեր Տիգրան, մրգի համար չեմ լալիս, այլ... այլ... ամոթից...

Եվ Անիկը մեծ դժվարությամբ պատմեց, թե ինչպես ընկերուհիներին կանչել է հյուրասիրելու և հանկարծ...

— Քո կարծիքով ո՞վ արած կլինի։

— Չգիտեմ։

— Ո՞վ էր պահակը։

— Աշոտը... Սմբատունին...

— Աշոտին կանչեք այստեղ,— կարգադրեց բազավարը։

Հետաքրքրությունից խմբված պիոներներից մեկը վազեց Աշոտին կանչելու։

Ինչպես Անիկի, այնպես էլ Աշոտի հետ եկան ուրիշ պիոներներ՝ թե՛ աղջիկներ, թե՛ տղաներ, զգալով, որ ինչ-որ հետաքրքիր բան կա։ Ու բոլորը խմբվեցին բազմավարի վրանի առջև։ Բայց բազավարը նրանց հեռացրեց անմիջապես։

— Գնացեք հանգստի. ձեզ չեմ կանչել... Դո՛ւ էլ, Անիկ...

Բոլորը ցրվեցին, մնաց միայն Աշոտը— 10 տարեկան մի խարտյաշ տղա, որ կապույտ աչքեր ուներ և բարակ շուրթեր։ Նրա քթի նուրբ ռունգները դողում էին թեթևակի։

— Աշոտ, դու իբրև պահակ, պետք է իմանաս ի՛նչ է կատարվել քո շրջանում։ Ասա՛ տեսնեմ, Անիկ Մարտունու մրգերն ո՞վ է վերցրել...— և բազավարը, ճաշը թողնելով, նայեց ուղիղ Աշոտի աչքերին։

Աշոտը գույնը գցեց։

— Ամեն բան ճիշտ ասա՛։ Չթաքցնես ոչինչ։

— Ես մրգ չեմ տեսել, ընկեր Տիգրան։

— Ձեմ ասում դու ես վերցրել։ Դու վերցնողի անունն ասա... Տեսա՞ր, որ Անիկը միրգ ստացավ այսօր։

— Այո։

— Բայց չտեսա՞ր ո՛վ մտավ նրա վրանը։

— Ո՛չ։

— Ի՞նչպե՞ս,— գլուխն օրորեց ընկեր Տիգրանը։— Դու պահակ էիր և չտեսա՞ր... Ուրեմն լավ պահակություն չես արել։

— Ոչ, ընկեր Տիգրան, ես բոլոր ժամանակ պոստի վրա էի։

— Հապա ի՞նչպես է որ չես տեսել։ Արի ճիշտը խոստովանիր. դո՛ւ վերցրիր, թե՞ ընկերդ։ Մտածել եք, երևի, ճաշում են, չեն տեսնի, վերցնենք-ուտենք, հը՞։

Աշոտը հուզումից գունատվեց. նա դողում էր և չգիտեր ինչ ասի։

— Ես չեմ վերցրել, ընկեր Տիգրան, ես...

—Եթե դու չես վերցրել, ուրեմն անփույթ ես եղել։ Ի՞նչ ես կարծում՝ երկու դեպքումն էլ դու մեղավո՞ր ես, թե ոչ։

Աշոտը քիչ էր մնում հեկեկար. բայց շուրթերը հուպ տալով՝ զսպում էր իրեն։ Նա զգում էր, որ չպետք է լաց լինել, այլ պետք է ապացուցել, որ ինքը չի վերցրել։ Վերցնե՞լ... այդ մասին խոսք անգամ չի կարող լինել. եթե վերցրած լիներ— մեկը կտեսներ, կամ ուտելիս՝ կնկատեր, երկրորդ— ինչ վերաբերում է անփութությանը— նա շատ լավ է հետևել իր պարտականության, պոստից երբեք չի հեռացել. բայց չի իմանում ի՛նչպես է եղել այդ գողությունը. Անիկին գուցե թվում է, թե գողացել են։

Քաղավարը տեսնելով Աշոտի հուզումը՝ իսկույն հասկացավ, որ միրգը Աշոտը չէր վերցրել։ Բայց ո՞վ կարող էր արած լինել։ Արդյոք Սեթոն։ Չէ՞ որ նա նոր է լագերում, և Լեվիկն ու Գարիկը իրեն նախազգուշացրել են նրա վատ հակումների մասին։

— Լավ, Աշոտ, գնա. մենք այդ բոլորը կքննենք՝ կիմանանք,— ասաց ընկեր Տիգրանը։

Իսկ ի՞նչ էր անում այդ րոպեին Սեթոն. սկզբում նա հեռվից հետևում էր, թե ինչպես Անիկը հուզված, լացով գնաց

ընկեր Տիգրանի մոտ, թե ինչպես հետո կանչեցին փոքրիկ Աշոտին... Այնուհետև ոչինչ չտեսավ նա, որովհետև դեսլքից անհանգստացած Գարիկն ու Լևիկն անմիջապես կանչեցին նրան և առանձնացան։

— Հը, Սեթո, դու հո չես վերցրել,— եղավ հուզված Լևիկի առաջին խոսքը։

— Երեխա՞ եք,— զարմացավ Սեթոն։

— Դու մեզ խոսք ես տվել, որ էդպես բան չես անի, չէ՞...

— Հհը,— գլխով արավ Սեթոն։

— Մեզ ամոթով չանես ա՛յ, Սեթո։ Եթե վերցրել ես, հը՞...

Սեթոն գլխով մի այնպիսի բացասական շարժում արավ, որ այլևս դժվար էր կասկածել։

— Եթե սիրտդ մի բան ուզի, մեզ ասա՛, մենք կգտնենք։

— Լավ,— խոստացավ Սեթոն։

— Մնացել է 10—12 օր, էն էլ շուտով կվերջանա. քեզ լավ պահել ես, լավ էլ մնա, որ տանենք դպրոց։

Սեթոն դարձյալ գլխով արավ.— հհը...

Բայց ընկերներն այնուամենայնիվ նրա խոսքերին մինչև վերջը չհավատալով, խնդրեցին, որ նա ճամբարում ձեռք բերած արկղիկը բանա։

— Դե սնդուկդ բաց արա տեսնենք։

Սեթոն արկղիկը բաց արավ շեֆերի առաջ։

— Կեցցե՛ս, Սեթո... կարծեցինք դու ես վերցրել։

Սեթոն կարմրեց ու երեսը շրջեց։

VIII

Անիկի միրգը այնպես էլ չգտնվեց, և ոչ ոք չէր կարող ասել, թե ո՞վ է վերցրել։ Ընկեր Տիգրանը և ավագ ջոկատավար Բաբկենը երեխաներին առաջարկեցին քննել այդ դեպքը ջոկատներում։ Աշոտի մասին ասացին, թե տղան հազիվ թե այդպիսի բան աներ, մինչև այժմ նա լավ պիոներ է եղել։ Բայց եղան պիոներներ, որ Աշոտից հեռու էին մաև գալիս և մութ ակնարկներ էին անում նրա մոտ, իսկ ոմանք ուղղակի հարցնում էին.

— Էնքան ծիրանը մենակ կերա՞ր, Աշոտ։

Երբեմն չարաճճի պիոներները, նրա մոտով անցնելիս, զգուշացնում էին իրար.

— Գրպանդ պահիր, Աշոտը գալիս է։

Աշոտը այդպիսի դեպքերում կանգնում-նայում էր ասողներին, բայց չէր իմանում ինչ պատասխանել. ի՞նչպես հասկացնել, որ միրգը ինքը չի վերցրել, որ ինքն անմեղ է... Ու հեռանում էր լուռ, հեկեկանքը զսպած, և լաց լինում ծածուկ տեղերում— աչտառում, վրանում, թե մենակ էր լինում։

Մի անգամ Սեթոն տեսավ, թե ինչպես երկու տղա Աշոտին «գող» ասին. տեսավ թե ինչպես Աշոտը լուռ, չկարողացավ պատասխանել վիրավորողներին և, տղաների հեռանալուց հետո, ձեռն աչքերին դրավ, ապա գնաց նստեց վրաններից հեռու մի տեղ ու լաց եղավ։ Սեթոն հեռվից տեսավ, թե ինչպես է նա գլուխը կախ լալիս և արցունքները սրբում թևքով։ Այդ րոպեին Աշոտն այնպես մենակ, անօգնական ու խեղճ թվաց Սեթոյին, այնպես տխուր ու հուսահատ, որ Սեթոն մոտեցավ նրան։

— Ինչո՞ւ ես լաց լինում,— նստեց Սեթոն նրա կողքին։ —Հը՞...

Մի առ ժամ Աշոտը հեկեկանքից չէր կարողանում պատասխանել, հետո ասաց աչքերը տրորելով.

— Ասում են «գող»... ով գիտի ո՛վ է գողացել՝ ինձ են ասում... ես որ բան չեմ գողացել... ես երբեք ուրիշի բան չեմ վերցրել...

Նա ոչ թե Սեթոյին էր պատասխանում, այլ ավելի շուտ խոսում էր ինքն իր հետ, պատասխանում էր իրեն մեղադրողներին։ Եվ խոսքը դեռ չվերջացրած՝ նորից հեկեկաց։

— Լա՛վ, լավ, ղոչաղ կա՛ց,— ձեռն Աշոտի մեջքին խփեց Սեթոն։— Ես նրանց... Թող հլա մեկ էլ ասե՛ն...

Ու Սեթոն բռունցքով սպառնաց այն բոլոր տղաներին, ովքեր վիրավորել կամ կարող էին երբևէ վիրավորել Աշոտին։

Եվ նա, իսկապես, հավատարիմ մնաց իր խոսքին։ Այդ օրվանից, երբ պիոներներից մեկն ու մեկը որևէ խոսքով վի-

բավորում էր Աշոտին կամ մանավանդ գող էր ասում, Սեթոն վրա էր պրծնում.

— Զե՛նդ...

Այսպես մի քանի օրվա մեջ Սեթոն զարմանալի մտերմացավ Աշոտին ու սկսեց հովանավորել նրան։ Բացի դրանից, անտառից փայտ բերելիս, Աշոտի փայտը ինքն էր բերում՝ իր փայտի հետ, սանիտարական ժամին օգնում էր նրան՝ վրանների շուրջը մաքրելու, կարգի բերելու. ապա սկսեց նրա հետ բասկետբոլ ու վոլեյբոլ խաղալ։ Միծաղելի էր, երբ Սեթոն իր խոշոր մարմնով վազում էր գնդակի ետևից և լսում Աշոտի կարգադրություններ։ Սեթոն այդ խաղերից բան չգիտեր, և Աշոտը սովորեցնում էր նրան, թե ինչպես պիտի խաղալ։ Ու Սեթոն հնազանդ լսում էր նրան։

Գարիկին ու Լևիկին զարմացնում էր Սեթոյի մտերմությունը փոքրիկ Աշոտի հետ, և նրանք այդ մտերմությունը բացատրել չէին կարողանում։

Այդ պարզվեց միայն մի շաբաթ հետո՝ խարույկի մոտ։

IX

Սեթոյի կանաչ պայուսակը կամաց-կամաց լցվում էր նորանոր իրերով. բացի դանակից, պեպենոտ պիոներկի քոշակից և Շալոնի թասակից, որ տարավ գրազի ժամանակ, նա գտել կամ վերցրել էր կոճակներ, մի սուլիչ, մի երկու մատիտ, մի գոտի և ուրիշ մանր բաներ։ Իսկ վերջին անգամ նրա իրերի վրա ավելացավ բժշկուհու մկրատն ու մատիտ։ Եվ ահա այս մկրատն ու մատիտն շատ բան պարզեցին։

Ամեն անգամ անտառ գնալիս՝ Սեթոն միշտ ծառ էր բարձրանում՝ ոչ թե թաց ճյուղ պոկելու, ինչպես արավ այդ առաջին օրը, այլ թռչունի բույն, ձագեր տեսնելու կամ պարզապես ծառի կատարից շրջապատը դիտելու։ Այս վերջինը շատ հետաքրքիր էր. երբեմն այնպիսի տեսարաններ էին բացվում. ո՛ր կողմը նայում էր— կանաչ անտառ էր, որ ձգվում-տարածվում էր մինչև հեռու սարերը կամ իջնում ցած՝ դեպի դաշտ, ուր ծխի նման մշուշ էր երևում և բարդիների շարքեր, որոնք նրան թվում էին գյուղեր։ Երևի քաղաքի ճանապարհն

այդ կողմով է գնում,— մտածում էր նա, և երբեմն, հրճվանքից սկսում էր բարձր կանչել. «Օո՜ո՜— հո-հո-հո՜»... և նրա ձայնի արձագանքը տարբեր ձևերով մի քանի անգամ կըրկընվում էր անտառում... Արդյոք տե՞ղն էր հրճվանք պատճառում նրան, արձագա՞նքն իր ելևէջներով, թե՞ ուզում էր պիոներներին զարմացնել,— նա կանչում էր այնքան ժամանակ, մինչև հոգնում էր։ Իջնելիս՝ դեռ գետնից բավական բարձր, թռչում էր ցած, իր քաջությունն ընկերներին ցույց տալուս։

Մի անգամ էլ ահա այդպես ցած թռչելիս՝ նա ընկավ մացառների մեջ ու ձեռը քերծեց ահագին տեղ, և արյուն սկըսեց գնալ. նա վերքը ծածկեց տերևով, մատը վրան դրեց, սեղմեց— ոչինչ չօգնեց. արյունը չէր կտրում. վազում էր շարունակ, և Սեթոյին այնպես էր թվում, թե ամբողջ արյունը կարող է գնալ, և որովհետև նա ոչ մի բանից այնպես չէր վախենում, ինչպես արյունից, մի ձեռքով ամուր բռնեց մյուս ձեռի վերքը ու վազեց ճամբար։

Եվ ուղիղ բժշկուհու մոտ։ Գիտեր, որ միայն նա կարող է դրա առաջն առնել։

Ճիշտ է, Սեթոն առաջին անգամն էր լինում բժշկուհու վրանում, բայց դրսից մի քանի անգամ տեսել էր նրա փոքրիկ սպիտակ պահարանը, վերևը՝ ապակիների ետև տեսակ-տեսակ փայլուն գործիքներով, վարը՝ փոքրիկ դարակներով, որոնց մեջ բժշկուհին ինչ-որ բաներ էր պահում, ով գիտի ի՞նչ զարմանալի դեղեր, որ ուզած վերքը կարող էր լավացնել։

Երբ Սեթոն ձեռը բռնած. ներս մտավ, բժշկուհին ճերմակ հագած, գլուխը ճերմակ կապած, դեղերով շրջապատված, նայում էր մի պիոների վիրավորված ոտ. քաց բամբակով սրբում էր և ինչ-որ դեղ քսում։ Պիոները դեմքը կուչ էր ածում, ուզում էր կարծես ճչա, լաց լինի, բայց զսպում էր իրեն։

— Տե՛ս, տե՛ս, մեծ տղա ես, ամոթ է,— ասում էր բժշկուհին, և տղան ամոթից չէր լալիս, չնայած ցավը սաստիկ էր։

Եվ ահա այն ժամանակ, երբ բժշկուհին պիոների վերքն էր կապում կուացած, Սեթոն, տեսնելով ինքը մենակ է և իրեն նկատող չկա, զգուշությամբ վերցրեց մոտիկ ընկած փոքրիկ

մկրատը և կոխեց սանդալի մեջ, ոտի տակը։ Հետո նկատեց մի քիչ հեռու դրված կլորած մառլան, այդ էլ վերցրեց ու ծոցը կոխեց, և նորից, առողջ ձեռով վիրավոր ձեռը բռնելով, հանգիստ սպասեց իր հերթին։ Իսկ երբ իր հերթը հասավ, բժշկուհին նրա ձեռին նայելով գլուխը օրորեց։

— Տե՛ս, տե՛ս, մեծ տղա ես, ինչո՞ւ ես կռվել, ամոթ չի՞...

— Ծառից եմ ընկել, բժշկուհի ջան, չեմ կռվել։

— Ի՞նչ ծառ...

— Անտառում... Ուզում ի բունը բարձրանամ...

Բժշկուհին գլուխն ավելի օրորեց.

— Տե՛ս, տե՛ս, քեզ բերել են բուն քանդելո՞ւ։

Սեթոն լուռ մինչև բժշկուհին վերջը լվաց, գեղ քսեց, հետո փաթաթելու համար մառլան որոնեց՝ չգտավ. նա պահարանի մի դարակից նոր մառլա հանեց, բայց այս անգամ էլ մկրատը չգտավ մառլան կտրելու։ Որքան էլ փնտրեց, նույնիսկ գետնի վրա— չկար։

— Այս մկրատն ի՞նչ եղավ,— զարմացավ նա։

Սեթոն ուրը հուպ տվեց մկրատին ու լուռ։ Նրան թվում էր, թե մկրատը հանկարծ կարող է չխկալ ոտի տակ, ու ինչ անշարժ, մինչև բժշկուհին դանակով կտրեց մառլան ու վերքը կապեց։

— Տես, մյուս անգամ էլ ծառ չբարձրանաս,— ասաց բժշկուհին վերջացնելով, ու նորից սկսեց մկրատը որոնել։

Բժշկուհու վրանից դուրս գալիս՝ Սեթոն ոտի տակ ահագին ծանրություն էր զգում և նրան թվում էր, թե չի կարողանում քայլել, և թե պիոներները, թե Գարիկն ու Լևիկը կարող են նկատել այդ ու հանկարծ հարցնել պատճառը։ Ու այդ րոպեին էլ մտածեց, թե ինչո՞ւ վերցրեց այդ մկրատն ու մառլան, ինչի՞ն են պետք... Իսկ բժշկուհին չէ՞ որ ոչինչ չի կարող անել առանց մառլայի և մկրատի, եթե մյուս պիոներների վերքը կապելու լինի... Եվ Սեթոն մտածեց, թե ավելի լավ չի՞ լինի տանել դրանք ետ՝ իրենց տեղը դնել։ Բայց ինչպե՞ս գնար ու տեղը դներ. չէ՞ որ բժշկուհին կնկատեր, կարող էին նկատել և ուրիշները... Չէ՛, թող մնա մի ուրիշ օր, գենց էգուց կամ երեկոյան, երբ բժշկուհին մենակ է լինում։

Եվ նա վիրավոր ձեռը կրծքին կապած՝ գնաց իրենց վրա-

նը։ Նրա բախտից վրանում ոչ մի տղա չկար, և նա մկրատն ու մոմլաո հանգիստ տեղավորեց պայուսակի մեջ ու պառկեց իր անկողնու վրա։

Նա չէր կարող ասել որքան էր պառկել, երբ դրսի խաղաղ օդի մեջ լսվեց երեկոյան շեփորի ձայնը։

— Տո՛ւ-տո՛ւ-տո՛ւ-տո՛ւ-ո՛ւ...

Սեթոն վեր թռավ ու դուրս գնաց։ Պիոներներն ամեն կողմից վազում էին դեպի խարույկները, ամեն բազայի պիոներ դեպի իր խարույկը։ Իսկ խարույկներն արդեն վառվում էին բոցբոցելով. երբեմն բոցն այնքան էր բարձրանում, որ ծուխ չէր երևում. հետո կայծերի անձրև էր թափվում իր շուրջը. կայծերից մի քանիսն ընկնում էին պիոներների վրա և նրանք ծուլ էին լինում ուրախ վախով։ Բայց չնայած դրան՝ հասակավոր պիոներներից երկուսը շարունակ բորբոքում էին կրակը՝ նորանոր փայտեր ավելացնելով, և պիոներներն, ինչպես միշտ, այսօր էլ շատ ուրախ էին. տեսնես ի՞նչ հետաքրքիր բաներ պիտի պատմեն այսօր...

Սեթոն էլ, չնայած կապած ձեռին, ուրախ տրամադրությամբ եկավ խարույկի մոտ։ Նա, պետք է ասած, շատ էր սիրում խարույկն ու նրա զրույցները, կարելի է ասել՝ ճամբարում նրա ամենասիրած բանը խարույկն էր։ Այնպիսի՜ բաներ էին պատմում այնտեղ... Մանավանդ այսօր ուսուցիչը խոստացել էր լավ բան պատմել. հետո ոտանավորներ պիտի ասեին. Գարիկն ու Լևիկը երկու օր էր պատրաստվում էին դրա համար, իսկ փոքրիկ Ավետիսը երգելու էր հունարեն նոր երգ...


Այդ էր պատճառը, որ պիոներներն անհամբեր վազում էին ամեն կողմից— վրաններից, անտառից, ճաշարանից, ուր թեյ էին խմում ուշացողները։

Ահա բազավարը, բժշկուհին, ուսուցիչը նույնպես շտապում են դեպի խարույկը։— Նշանակում է այսօր շատ հետաքրքիր է լինելու։

— Ըկե՛ք, եկե՛ք,— շտապեցնում են պիոներները ընկերներին, ընկերուհիներին։

Ու հավաքվում նստում են իրենց տեղերում։

Սեթոն էլ նստեց իր տեղը՝ թմբի վրա, Գարիկի և Լևիկի



կողքին, և մյուսների նման անհամբեր էր, թե ե՞րբ են սկսելու։

Բայց բազավար ընկեր Տիգրանը, բժշկուհին և ուսուցիչը դեռ մի կողմ կանգնած՝ խոսում են առանձին, խորհրդակցում ինչ-որ...

Իսկ պիոներներն անհամբեր ծափահարում են, որ շուտ սկսեն։

Վերջապես, բազավար ընկեր Տիգրանը, սովորականի պես ծղոտե լայն գլխարկը ետ դրած, մտնում է շրջանի մեջտեղը, իսկ բժշկուհին, ուսուցիչը և մի երկու կոլվար կանգնում են շրջանից դուրս։

— Երեխաներ,— ասում է բազավար ընկեր Տիգրանը։— Մենք այսօր չենք կարող մեր հերթական պարապմունքին անցնել, մինչև չպարզենք մի շատ կարևոր խնդիր...

— Ի՞նչ խնդիր,— լսվեց մի անհամբեր ձայն։

— Հիմա կասեմ,— շարունակեց բազավարը դարձյալ մտահոգ։— Այսօր մեր ճամբարում կատարվել է մի տխուր դեպք, որ շատ վշտացրել է բոլորիս, թե՛ ինձ, թե՛ բժշկուհուն, թե՛ ձեր ուսուցչին՝ ընկեր Վարդանին։

Վերջին խոսքերը բազավարն ասաց մի այնպիսի տխուր ձայնով, որ պիոներներն անհանգստացան։

— Ի՞նչ, ի՞նչ է պատահել, ընկեր Տիգրան,— լսվեցին մի քանի ձայներ միասին։

— Այսօր, երեխաներ, բժշկուհու վրանից՝ մեր հիվանդանոցից գողացել են բժշկուհու մկրատն ու մաուլան։ Դուք երևի կարծում եք՝ մկրատն ու մաուլան փոքրիկ բաներ են։ Ո՛չ։ Դրանք շատ խոշոր բաներ են մեզ համար։ Իսկ կատարված հանցանքը ավելի քան ծանր։ Մեր ճամբարում, երեխաներ, գողություն չպիտի լինի։ Ով որ գողացել է թող վեր կենա և ասի։ Կամ գուցե չի գողացել, վերցրել է՝ վերադարձնելու համար՝ թող ասի, և մենք անցնենք մեր հերթական զբաղմունքին։ Որովհետև բժշկուհին առանց մկրատի է մնացել և եթե հիմա կարիք լինի մեկի վերքը կապելու, բժշկուհին չի կարող...

Սեթոն նստած տեղը տաքանում էր, կարմրում և աշխատում էր երեսը լույսից հեռու պահել։

Բոլորը լուռ էին։

— Հը՞, երեխաներ, ի՞նչ կասեք։ Ո՞վ է վերցրել,— հարցըրեց բազավար ընկեր Տիգրանը, հերթով նստած շարքերին նայելով։

— Աշո՛տը, Աշոտը գողացած կլինի,— ասաց մի անհամարձակ ձայն։

Երեխաները աղմկեցին հուզված։

— Ը՛սսս, երեխաներ,— ձեռը բարձրացրեց բազավարը.— Աշոտն արած լինի, նա այնքան ազնիվ տղա է, որ չի թաքցընի։

— Բա ինչո՞ւ Անիկի միրգը գողացավ ու չասաց,— լսվեց նույն ձայնը։

Աշոտը, որ նստած էր Սեթոյին մոտիկ՝ հանկարծ վեր կացավ տեղից՝ աչքերը բազավարի երեսին հառած. ուզեց ինչոր բան ասել, բայց մեկ էլ ձեռն աչքերին տանելով՝ հեկեկաց։

— Ես չեմ գողացել... ես գող չեմ,— ասաց նա լացախառն ու ընկավ գետին։

Բոլորը մոռացան խարույկն էլ, պատմություններն էլ ու վեր կացան տեղներից, իսկ բազավարը, բժշկուհին և ուսուցիչը առաջ եկան նրան վերցնելու։ Բայց մինչև նրանք կմոտենային,— Սեթոն, որ նստած տեղը չէր հանգստանում՝ իր մտերիմ Աշոտին այդ դրության մեջ տեսնելով, հանկարծ ցատկեց տեղից։

— Ընկեր Տիգրան,— ասաց նա ընդհատվող ձայնով,— ընկեր բազավար, Աշոտը ճիշտ է ասում. նա չի գողացել. ես գիտեմ— ո՛չ միրգը, ո՛չ մկրատը նա չի գողացել...

Բոլորը հետաքրքիր, իսկ Գարիկն ու Լևիկն անհանգիստ՝ Սեթոյին նայեցին։

— Լա՛վ,— ասաց բազավարը,— իսկ գիտե՞ս ո՛վ է գողացել, Սեթո։

Բոլորի դեմքերը լարվեցին։

— Ո՞՛վ,— կրկնեց Սեթոն բազավարի հարցը։— Ե՛ս եմ վերցրել մկրատն էլ, մառլան էլ։

Զարմանքից բոլորը լռեցին։ Բայց ամենից ավելի զարմացած էին Լևիկն ու Գարիկը։ Զարմանքի մեջ էլ կարծես չէին տեսնում խարույկը, ոչ էլ լսում էին նրա ճարճատյունը։ Բոլորը նայում էին Սեթոյին։

— Իսկ ինչո՞ւ համար վերցրիր, Սեթո,— հարցրեց ընկեր Տիգրանը։

— Ինչի՞... Ես ի՞նչ գիտեմ։ Տեսա հարմար է՝ վերցրի. հետո որ դուրս եկա— փոշմանեցի։ Ուզեցի ետ տանեմ՝ ամաչեցի...

Աշոտն արցունքները սրբեց թևքերով և աչքերը հառեց Սեթոյի երեսին։ Նա շատ զարմացած էր։

— Հետո՞, Սեթո, հետո՞,— հետաքրքրվեց բժշկուհին։

— Հետո, աղջիկների միրգն էլ Աշոտը չի գողացել, էդ էլ ես եմ գողացել...

Ու Սեթոն պատմեց, թե ինչպես էր ծիրանը, տանձը տարել անտառ, ինչպես էր ծառի փչակում պահել ու կամաց-կամաց կերել. պատմեց, որ պեպենոտ պիոների քսակն էլ ինքն էր գտել ու չէր տվել իրեն։ Պատմեց և այն դանակի մասին, որ քաղաքից ճանապարհվելիս հանել էր պիոներ Օնիկի գրպանից։ Պատմեց բոլորը պարզ, առանց թաքցնելու, առանց ամաչելու։

Նա պատմում էր, և ամենքը՝ թե՛ բաղավարը, թե՛ բժշկուհին և թե՛ պիոներները լսում էին և ուրախանում, որ այդպես անկեղծ տղա է Սեթոն։ Վերջում էլ նա հայտնեց, թե էլ այդպիսի բան չի անի։

— Լավ, Սեթո,— ասաց բաղավարը, ձեռով Սեթոյի գլուխը շոյելով,— երբ սիրող միրգ էր ուզում՝ ինչո՞ւ ինձ չէիր ասում։

— Ամաչում ի, ընկեր Տիգրան։ Սրանից հետո կասեմ...

Այնուհետև, երբ անցան հերթական զբաղմունքին ոչ ոք նախկին հետաքրքրությամբ չէր լսում ուսուցիչ ընկեր Վարդանի պատմությունը, որքան էլ նա աշխատում էր, ձայնը բարձրացնելով ու իշեցնելով, խորհրդավոր դարձնել այն։ Բոլորը Սեթոյի խոստովանության տպավորության տակ էին և մտածում էին, թե ինչպես իզուր տեղը Աշոտին գող էին համարել։ Միաժամանակ մտածում էին օգնել Սեթոյին, որ ուղղվի և իր վատ սովորությունները թողնի, մանավանդ որ ինքն ուզում էր այդ։

Երեկոյան էլ, մինչև քնելը, բոլորը խոսում էին Սեթոյի մասին, իսկ ինքը՝ Սեթոն վատ քնեց այդ գիշեր. նա վախենում էր, որ պիոներները չեն հավատա իրեն, կզգուշանան

իրենից և կծաղրեն իրեն, ինչպես առաջ ծաղրում էին Աշոտին։ Բայց ուրախ էր, որ Աշոտին ազատեց կասկածներից։

Մյուս օրը, կանուխ առավոտ, բազավար ընկեր Տիգրանը կանչեց Սեթոյին և հայտնեց, որ այսուհետև նրան է հանձնում իրենց վրանախմբի հսկողությունը։

— Իմացա՞ր, Սեթո, ի՛նչ կորչի, դու ես պատասխանատու։ Գե, քեզ տեսնեմ...

— Աչքիս վրա, ընկեր բազավար,— ձեռն աչքին դրեց Սեթոն։

Եվ իրեն հանձնված գործը Սեթոն այնպես լավ տարավ, որ բազավար ընկեր Տիգրանը երկրորդ հերթին էլ պահեց նրան ու նշանակեց օղակավար։

X

Երկու ամիս անց, երբ հանդիպեցի բազավար Տիգրանին, իմացա, որ Սեթոյին վերցրել է իր մոտ դաստիարակելու լազերի բժշկուհին, որի վրանից՞ նա մի ժամանակ տարել էր նրա մառլան ու մկրատը։ Այժմ Սեթոն սովորում է դպրոցում, և Լևիկը, Գարիկն ու Աշոտը նրա մոտիկ մտերիմ բարեկամներն են։

ՎԱՆՈՒՇԸ

Դուք Վանուշին, իհարկե, չեք ճանաչում. նա դեռ հայտնի մարդ չի, իրենց գյուղից էլ բոլորովին դուրս չի եկել ու, բացի դրանից, այնքան փոքր է, որ այս տարի նոր միայն փոխադրվել է երրորդ դասարան։

Բայց իրենց թաղի երեխաները նրան լավ են ճանաչում. գիտեն, որ Վանուշը լա՛վ քար է գցում ընկույզի ծառերին, այսինքն նրա քարը զուր չի անցնում ու միշտ ընկույզ է գցում ցած. ամենից արագավազը նա է խաղերի ժամանակ, իսկ երբ մայրը գնում է բամբակ հավաքելու, նա հաճախ գնում է դաշտը՝ մորը օգնելու, հետո, երբ հոգնում է՝ վերադառնում է և նորից խաղում երեխաների հետ։

Ու այնքան է խաղում, որ իրիկունները երբեմն քնում է առանց հացի կամ հացը բերանին։ Իսկ երբ ցանկանում է դասը լավ սովորել — նստում է մինչև կեսգիշեր։

Տարօրինակ տղա է Վանուշը։

Բայց մի անգամ նա հայտնի դարձավ իրենց գյուղում, և կոլտնտեսականները մի քանի օր շարունակ նրա մասին էին խոսում։

— Այ քեզ Վանուշ, հա՜...

— Ա՛յ դու Վանուշ...

Ի՞նչ էր պատահել։

Մի երեկո, երբ դուրսը մութն էր ու անձրև, երբ Վանուշը նստած դաս էր պատրաստում, թրջված հագուստներով ներս մտավ նրա հայրը. հրացանը դրեց սենյակի անկյունում և հոգնած ու տխուր ձայնով ասաց մայրիկին.

— Դողս բռնել է, այ կնիկ։ Տեղ գցի...

Նրա ատամները գրեթե զարկվում էին իրար։

Վանուշի հայրիկը վաղուց դողերոցք ուներ. երբ հիվանդանում էր՝ մայրիկը մոռով թեյ էր պատրաստում, խմեցնում, անկողին էր գցում ու խնամքով ծածկում, և հայրիկը լավանում էր մի կամ երկու օրից։ Այս անգամ էլ, երբ մայրիկը տեղը պատրաստեց ու թեյ տվեց, հայրը կարգադրեց Վանուշին.

— Վազի, Վանուշ ջան, գրասենյակ, նախագահին ասա՝ «հայրիկս հիվանդացել է», թող մեկին պահակ նշանակի պահեստի վրա։

Վանուշն անմիջապես մի ձեռնափայտ վերցրեց՝ շների համար, տոպրակի ծայրը, ինչպես ինքն էր ասում, «պոպոզը» արավ՝ գլուխն անցրեց ու դուրս եկավ։

Դուրսը մութն էր ու բարակ անձրև էր մաղում, և անձրևի պատճառով տների ճրագները ավելի աղոտ էին երևում. փողոցներում անցորդներ չկային, շներն էլ չէին հաչում, գուցե դարձյալ անձրևի պատճառով։

Կոլտնտեսության գրասենյակը շատ էլ հեռու չէր։ Իրենց փողոցի կեսից թեքվելով՝ Վանուշը մտավ մի ուրիշ փողոց և շուտով հասավ գրասենյակ։

Բայց, զարմանալի բան, գրասենյակում լույս չկար։ Ինչպես երևում է. փակ էր, և նախագահը երևի տուն էր գնացել։

Ա՛յ քեզ բա՜ն։

Վանուշը մեկ մտածեց.— վերադառնալ՝ հորը հայտնել, որ գրասենյակը փակ է, նախագահը չկա, բայց խոհուն էլ ենթադրեց, որ նախագահը կարող է իր տանը լինել, ավելի լավ է գնա տանը հայտնի. միևնույն է, եթե վերադառնա իրենց տուն էլ, հայրիկը դարձյալ կուղարկի նախագահի տունը։

Ու Վանուշը, ձեռնափայտը ձեռին, տոպրակի «պոպոզը» գլուխն անցրած, գնաց դեպի նախագահի տունը։

Անձրևը շարունակում էր մաղել։

Ճանապարհին մի երկու տեղ շները բակերից հաչեցին նրա վրա, բայց առաջ չեկան, մի ուրիշ տեղ մի գամփռ հաչելով դուրս եկավ փողոց, բայց տեսնելով երևի անցնողը փոքրը տղա է, բանի տեղ չդրեց և չհարձակվեց, իսկ Վանուշն այնպես կարծեց, թե նա իր փայտից ու «պոպոզից» վախեցավ։

Երբ նա հասավ, վերջապես, նախագահի տունը, փողոցից ձայն տվեց հևալով.

— Ընկե՛ր Նիկոլ, ընկե՛ր Նիկոլ,— կրկնեց նա մի քանի անգամ։

Նախ մի փոքրիկ շան հաչոց լսվեց, ապա մի կանացի ձայն.

— Էդ ո՞վ է։

— Ընկեր Նիկոլը տա՞նն է։

— Չէ՛, տանը չի... Դեռ չի եկել...

Վանուշն էլ ոչինչ չասաց։ Քանի որ նախագահը տանը չէր, էլ ինչ ասեր— միայն նա կարող էր նոր պահակ նշանակել հոր փոխարեն։ Ուրեմն պետք էր վերադառնալ տուն։

Եվ Վանուշը վերադարձավ հորը հայտնելու, որ նախագահը ո՛չ գրասենյակումն էր, ո՛չ տանը։

Բայց երբ վերադարձավ՝ հայրն արդեն քնած էր վերմակներով ծածկված։ Նրա ներս մտնելուն պես մայրը ձեռն իր բերանին դրեց, որ Վանուշը կամաց խոսի՝ քնած հորը չարթնացնելու։

Ու Վանուշը, մի աչքը հոր կողմը, կիսաձայն հայտնեց, որ նախագահը ո՛չ գրասենյակումն էր, ո՛չ տանը։

— Վա՛յ, էդ լավ չեղավ,— ասաց մայրը,— պահեստին մի բան կարդ է պատահել հետո...

— Ի՞նչ կպատահի որ,— շշուկով հարցրեց Վանուշը։

— Կարող են գողեր մտնել, ցորենը գողանալ և հետո հորդ կմեղադրեն, որ մարդու բան չի ասել և, պահեստն անտեր թողած, եկել է տուն։

Մոր խոսքերը մտահոգության մեջ գցեցին Վանուշին։

— Կուզե՞ս ես գնամ, մայրիկ։ Հրացանը վերցնեմ ու գնամ,— ասաց նա մի փոքր լռելուց հետո։

— Չէ՛, չէ՛, դու քնի։ Հիմա ո՞վ է իմանում պահակ կա,



չկա։ Բոլորն էլ գիտեն, որ պահեստի վրա միշտ պահակ է լինում։ Բան չեն անի, չէ... Քնի՛...

Եվ մայրը, Վանուշին հանգստացնելով պառկեցրեց. քիչ հետո էլ, լամպը հանգցնելով, պառկեց ինքը։ Նա այնքան հոգնած էր չանաքի աշխատանքից, որ իսկույն քնեց։

Բայց Վանուշի քունը չտարավ, պառկած մտածում էր, թե ի՞նչ կլինի, եթե հանկարծ թշնամիներն իսկապես մտնեն ւպահեստի ցորենը գողանան։ Այն ժամանակ, ինչպես մայրիկն ասավ, հայրիկին կմեղադրեն... բացի դրանից, եթե ցորենը գողանան՝ իրենց էլ ցորեն չեն տա։ Ոչ միայն իրենց, ուրիշների համար էլ ցորեն չի մնա։ Սուրիկենք, Ռուբիկենք, իր բոլոր ընկերներն ու հարևաններն էլ ցորեն չեն ստանա, եթե պահեստը թալանեն...

Եվ Վանուշին պատկերացավ, թե ինչպես գողերը մըտնում են պահեստը ու ցորենը պարկերով շալակում-տանում։ Ցորենի հետ տանում են և պահեստում եղած գետնախնձորը, ճակնդեղը և ուրիշ բաներ... Տանում են այնպես, որ պահեստում էլ բան չի մնում... ու առավոտը մարդիկ տեսնում են պահեստը դատարկ, իսկ նախագահը գալիս-հանդիմանում է հայրիկին, որ լավ պահակություն չի արել։ Նույն բանը կասեն հետո և ժողովում...

Վանուշը մտածում ու հետն էլ ականջ էր դնում հոր և մոր շնչառությանը։

Հայրիկն, առաջվա պես, շնչում էր խորն ու ծանր, իսկ մոր քնաձայնը դեռ չէր լսվում։ Երբ, վերջապես, լսվեց և մոր քնաձայնը, Վանուշը մի փոքր էլ սպասեց, ականջ դրեց անձրևին։

Անձրևի ձայնն էլ չէր լսվում. երևի կտրվել էր։

Այդ բանն ուրախացրեց Վանուշին. նա զգուշությամբ վեր կացավ տեղից, կամացուկ հագնվեց մթան մեջ. ցորենի տոպրակն իր «պոպոզով» նորից գլուխն անցրեց, հոր հրացանը վերցրեց անկյունից և, դուռն զգուշությամբ բանալով, դուրս եկավ։

Անձրևն, իսկապես, դադարել էր. երկնքում տեղ-տեղ աստղերն աչքով էին անում իրար, բայց մութն էր առաջվա պես և խաղաղ։ Ո՛չ մարդ էր անցնում, ո՛չ շուն էր հաչում։

Վանուշը նայեց երկնքին, ապա սկսեց արագ-արագ քայլել փողոցով դեպի վեր։

Նա գնում էր պահեստը, որ հեռու չէր իրենց տանից։ Դա հին եկեղեցին էր, որ գյուղացիները դարձրել էին կոլտնտեսության պահեստ։

Հազիվ Վանուշը մոտեցել էր պահեստին, մի հիսուն-վաթսուն քայլի վրա երկու ստվեր նկատեց նրա դռան մոտ, ոչ թե մեծ դռան, որ նայում է փողոցին, այլ կողքի փոքր դռան մոտ, ուր երեխաները պահմտոցի են խաղում մարդահասակ կանեփների մեջ։

Բայց դրանք մարդի՞կ էին արդյոք, թե ուրիշ բան...

Վանուշը կանգ առավ՝ ավելի լավ տեսնելու։

Եվ նրա սիրտը ծուլ եղավ հանկարծ. երևացող ստվերները մարդիկ էին. նրանք ինչ-որ բան էին անում այնտեղ. թե ի՞նչ՝ Վանուշը չէր կարող տեսնել... ա՛յնպես մութն էր։

Նորից նա մի քանի զգուշ քայլ արավ, մոտեցավ անկյունին ու, պատի ետևը թաքնված, նայեց։

Մարդիկ ինչ-որ բան էին անում տնքալով ու մեկ-մեկ ետ նայում։

— Շո՛ւտ, անձրևը կտրեց, հիմա կգա,— ասաց նրանցից մեկը։

Վանուշը գլխի ընկավ, թե ինչ էին անում. նա զգաց ամբողջ մարմնով ու գոռաց մեծի հաստ ձայնով՝ կրծքով մեկ.

— Էդ ի՞նչ եք անում, է՛յ...

Մարդիկ այս-այն կողմ նայեցին ու փախան դեպի կանեփները, նախ կուզե-կուզ, հետո արագ քայլերով։

— Գողե՛ր, գողե՛ր,— կանչեց Վանուշը, որքան ուժ ուներ։— Բռնեցե՛ք, բռնեցե՛ք...

Ու այդ խոսքերը կրկնում էր շարունակ, հավատացած, որ հիմա իր ձայնի վրա տներից մարդիկ դուրս կգան՝ նրանց բռնելու։

Եվ, ճիշտ որ, շատ չանցած մի մարդ դուրս եկավ հարևան տնից՝ շապիկի վրա ինչ-որ բան հագած, հետո մյուսը, երրորդը, չորրորդը...

— Ի՞նչ գողեր, ո՞ւր են գողերը...

— Ա՛յ քեռի, ա՛յ, էս կողմը գնացին,— ասաց Վանուշը շնչակտուր։— Գոռացի՝ փախան...

Մարդիկ մոտեցան պահեստի փոքրիկ դռանը, լուցկի վառեցին և այնտեղ գտան մի ունելի. հետո տեսան կողպեքը կիսով չափ ջարդված։

— Բա էս պահակն ո՞ւր է,— ասաց մեկը։

— Պահակը ես եմ,— առաջ եկավ Վանուշը, հրացանը ձեռին։

— Դո՞ւ... դու ո՞վ ես...

— Ես Օհանեսի տղեն եմ։ Հայրս դողացրեց, տուն եկավ, ես եկա նրա տեղը...

Մարդիկ ծիծաղեցին.

— Ա՛յ քեզ պահակ...

— Անունդ ի՞նչ է։

— Վանուշ...

— Հա՛, դու Վանո՞ւշն ես... Ա՛յ քեզ Վանուշ...

Կոլխոզնիկներից մի երկուսը մնացին պահակ, իսկ մեկը Վանուշին տարավ իրենց տուն։

Ու մի քանի օր գյուղում բոլորը խոսում էին այն մասին, թե ինչպես Վանուշը հոր տեղը պահակ էր կանգնել ու գողերին փախցրել...

Ա՛յ ինչ տղա էր Վանուշը։

1936

ՍԱՎԱՌՆՈՂ ԴՐՈՑ

Բուլղարական Բրագա քաղաքում մի խուլ, ընդհանուր անհանգստություն էր տիրում։ Անհանգիստ էր ոստիկանությունը, անհանգիստ էին քաղաքացիները, անգամ երեխաները։ Ամենքն ահով սպասում էին ինչ-որ արտակարգ դեպքերի, որոնք ալեկոծեին պիտի փոքրիկ քաղաքի խաղաղ կյանքը։

Վաղը մայիսի մեկն էր, և իշխանությունը կարգադրել էր, որ չլինի ո՛չ մի ցույց, ո՛չ մի կարմիր դրոշ, ո՛չ մի համախմբում։ Կարգադրված էր նույնիսկ, որ այդ օրը կարմիր կտոր չլինի անգամ տների պատուհաններում, խանութների ցուցափեղկերում և թե մարդկանց վրա։ Առհասարակ կարմիրը, որպես հեղափոխության նշան, չպետք է երևար քաղաքում։

Այդ էր պատճառը, որ ոստիկաններն այժմյանից զույգ-զույգ շրջում էին փողոցները, զննում պատուհաններն ու խանութները, անգամ կտուրները՝ տեսնելու կարմիր դրոշակ չե՞ն ամրացնում որևէ տեղ կամ թռուցիկ չե՞ն փակցնում։ Գիտեին, որ կոմունիստները համարձակ մարդիկ են, կարող են հանկարծ մի այնպիսի բան անել, որ քաղաքի իշխանությունն ու ոստիկանությունը խայտառակվեր կենտրոնական կառավարության առաջ։ Դրանից էր, որ նրանք կրկնապատկել էին իրենց հսկողությունը։

Եվ ոստիկանների ուժեղացած այդ հսկողությունը, ինչ ասել կուզի, անհանգստացնում էր քաղաքացիներին, ոմանք վախենում էին խուզարկությունից, ձերբակալությունից, իսկ քաղքենիները՝ անսպասելի աղետներից։

Բայց այդ օրն ամենից ավելի անհանգիստ էին երկու փոքրիկ տղա՝ Պետկոն ու Խրիստոն։ Դեռ մի քանի օր առաջ նրանք լսել էին, որ միտինգ է լինելու, և իրենք էլ որոշել էին մայիսի մեկին, ընկերների հետ կարմիր դրոշակով փողոց դուրս գալ և մասնակցել հասակավորների միտինգին, հետո նրանց հետ այցի գնալ հինգ տարի առաջ սպանված հեղափոխականների գերեզմանը, ուր թաղված էին նաև Պետկոյի հայրը և Խրիստոյի մեծ եղբայրը։ Բայց իշխանության սպառնալից արգելքն ամբողջովին քանդում էր նրանց ծրագիրը և նրանք այժմ անհանգիստ մտածում էին այնուամենայնիվ մի բան անել, մի այնպիսի բան, որ ոստիկանությունը գլուխը կորցնի և ավելի կատաղի։ Եվ գրա համար Խրիստոն առաջարկում էր՝ գիշերը նավթ լցնել ոստիկանատան շենքի վրա և վառել։ Պետկոն համաձայն չէր. դրանից կարող էր քաղաքը հրդեհ բռնկել և անմեղ մարդիկ կվնասվեին իզուր։

Շատ բան մտածեցին ընկերները, շատ առաջարկներ արին իրար, բայց բոլորն էլ անհարմար գտան։ Վերջում, երբ արդեն հուսահատվել էին, Պետկոն վեր թռավ տեղից։

— Գտա՛։

— Ի՞նչը,— հետաքրքրվեց Խրիստոն։

— Գնանք այգինները՝ կասեմ։

Ու ընկերները ճանապարհ ընկան դեպի քաղաքի այգիները։

Բայց թե ինչ էր Պետկոյի գաղտնիքը, այդ պարզվեց միայն հետևյալ օրը—մայիսի մեկին։

* *
*

Փոքր է Բրագա քաղաքը, բայց մեծ, ընդարձակ է նրա շուկան։ Այնտեղ է հավաքվում ժողովուրդը տոներին, հանդեսներին, այնտեղ են խանութները. շրջանից եկած գեղական

ներն այնտեղ են ծախում իրենց կաթը, մածունը, կանաչեղենն ու հավեղենը, գառը, ոչխարը, նույնիսկ տավարը։ Այդ հրապարակի վրա է գտնվում նաև ոստիկանության երկհարկանի շենքը, որ հսկող աչքի նման հետևում է շուկայի առևտրին ու շարժումին։

Մայիսի մեկի առավոտը ոստիկանները սովորականից ավելի էին այդտեղ. նրանք՝ աչքները չորս՝ հսկում էին հրապարակին ու մյուս փողոցներին, որ ցույց լինելու դեպքում ցրեն, կամ՝ հարկ եղած պարագային— կրակեն։ Դրա համար զինված էին սովորականից ավելի։

Առավոտը, երբ շուկան լիքն էր արդեն մթերք ծախող գյուղացիներով և առևտրի ելած քաղաքացիներով, Պետկոն ու Խրիստոն շուկա եկան՝ մի փակ կողով ձեռներին։ Տպավորությունն այն էր, թե եկել են ինչ-որ բան վաճառելու։ Այդ էր պատճառը, որ մի ծերունի հարցրեց.

— Ձո՞ւ եք ծախում։

— Ո՛չ,— ասին նրանք ու անցան առաջ, ուր խմբված էին գյուղացիներն իրենց ապրանքով, արկղներով ու հավերով։ Մտան նրանք բազմության մեջ և կողովն զգուշությամբ դրին գետին։

— Հիմա ի՞նչ անենք,— հարցրեց Խրիստոն։

— Սո՛ւս. սպասիր,— զգուշացրեց Պետկոն։

Երկու ոստիկան թուր ու ատրճանակ կապած և տուիչը վզներից կախ՝ շրջում էին շուկայում, ուշադիր զննում յուրաքանչյուրին ու նրա ապրանքը։ Երբ նրանք եկան ու, սրա-նրա ապրանքը հոտոտելով, անցան ամեն մեկը շուկայի մի կողմը,— Պետկոն արմունկով հրեց Խրիստոյին ու շշնջաց.

— Բա՛ց թող...

Ուռագործ կողովի կափարիչը բացվեց, այնտեղից դուրս թռավ հանկարծ մի կարմիր բան և, առևտրով զբաղված բազմության միջից, բարձրացավ վեր։

Զարմանքի ձայներ լսվեցին, իսկ ոստիկաններից մեկը, որ ավելի շուտ տեսավ,— ապշեց մի վայրկյան. կարմիրը նրան այնպես շփոթեց, որ մի քանի քայլ ետ վազեց. մեկ նրան թվաց թե «ֆոռան» է, թղթից շինած այն խաղալիքը, որ երեխաները թոցնում են դեպի երկինք, մեկ էլ կարծեց՝ ծալած կարմիր

դրոշակ,— երկու դեպքումն էլ կարմիր ու անթույլատրելի,— ուստի նա առաջ վազեց, որ բռնի, բայց որքան մեծ եղավ նրա զարմանքը, երբ այդ թռչող կարմիրը թևերը բաց ու խուփ արավ և մի տարօրինակ ձայն հանեց. «կըրլը՛կ»...

Մի վայրկյանում ամենքը՝ կին, մարդ, երեխա, առևտուրը թողած, նայեցին թռչող կարմրին, իսկ ոմանք տարբեր բացականչերով՝ հետևեցին ոստիկանին: Սակայն ոստիկանը, հասնելով թռչողին և միաժամանակ տեսնելով ժողովուրդն իրար անցավ, դա համարեց ցույցի նշան ու սուլեց.

— Սը՛ը՛222...

Սուլոցի վրա ոստիկանատնից անմիջապես դուրս թափվեցին կազմ ու պատրաստ ոստիկաններ և վազեցին անկարգության վայրը, ուր բոլոր գլուխներն արդեն նայում էին վեր՝ օդում սավառնող կարմրին:

— Արագի՛լ է, արագի՛լ է,— առաջինը բացականչեցին երեխաները:

Իսկապես, կողովից վեր թռչողն արագիլ էր: Նա թևատարած մի երկու պտույտ գործեց շուկայի վերևը, մի երկու անգամ գլուխը թեքեց դեսուդեն, կարծես որոշելու, թե ո՛ւր գնա, ու մեկ էլ թեքվելով, ուղիղ գնաց դեպի ոստիկանատուն և հանդարտ իջավ նրա աշտարակի գլխին, ժամացույցից վեր... Շուկայում ծիծաղ բարձրացավ: Իսկ երբ նա իրեն հանգիստ զգալով, ոտի մեկը ծալեց դրեց փորի տակ — ծիծաղը փոխվեց քրքջի:

Դա փոքրիկ քաղաքին, նաև ոստիկաններին ծանոթ արագիլն էր, որ օրվա որոշ ժամերին սիրում էր թառել կա՛մ եկեղեցու գմբեթին, կա՛մ ոստիկանատան գմբեթանման աշտարակի գլխին, քաղաքի երկու բարձր կետերին, ուր, մարդկանցից հեռու, հանգստանում էր նա՝ կարծես մտքերի մեջ խորասուզված:

Բայց ինչո՞ւ էր կարմրել—այդ էր զարմանալին:

— Ներկոտված է,— ասում էին մարդիկ:

— Ծրևի վիրավորված է:

— Ներկե՛լ են, ներկե՛լ,— բացականչեց մեկը հանկարծ:— Չե՞ք տեսնում, մինչև՛ անգամ գլուխն ու ոտները կարմիր են...

Ու սկսեցին փսփսալ, թե ո՛վ կարող է ներկած լինել:

Պետրոսն ու Հրիստոն, բակմուխյան մեջ կանգնած, լսում էին այդ փսփսոցները և հրճվում, որ ոչ-ոք գլխի չի ընկնում, թե իրենք են ներկել. ոչ ոք չգիտի, թե երեկոյան ինչ դժվարությամբ էին բարձրացել արագիլի բույնը, ինչ տանջանքով էին իջեցրել նրան, բերել տուն ու գիշերը, բոլորից ծածուկ, ներկել թանաքով, ապա դրել մառանը, որ առավոտը կողովի մեջ փակած բերեն շուկա։

Եվ այժմ, երբ արագիլը կարմիր դրոշի պես տնկվել էր ոստիկանատան գլխին—Պետրոն ու Հրիստոն չէին կարողանում իրենց զսպել, հպարտությամբ նայում էին նրան ու ժպտում ոստիկանների ճիգերի վրա, որոնք աշխատում էին քարով, շարժումներով ու սուլոցով քշել նրան աշտարակից։

Արագիլն անտարբեր նայում էր այդ բոլորին ու չէր շարժվում։ Իսկ ոստիկանները, ժողովրդի ծիծաղը տեսնելով, կատաղում էին, բայց կրակել չէին համարձակվում, որ ոստիկանապետը չիմանա։

Սակայն, ընդհանուր իրարանցումը, սուլոցն ու կանչերը հասան, վերջապես, նրան էլ. և շուտով շեմքի վրա երևաց ոստիկանապետի խոշոր մարմինը՝ խոշոր բեղերով, պսպղուն ուսադիրներով և թուրը կողքից կախ։

Իմանալով բանի էությունը՝ նրա մսոտ դեմքը կաս-կարմիր կտրեց։

— Բռնե՛լ թռչունը և հանցավորին գտնե՛լ,— կարգադրեց նա զայրացած։

Հազիվ էին ոստիկաններից երկուսը բարձրացել տանիքը,— արագիլը կարմիր թևերը թափ տվեց իսկույն ու բարձրացավ վեր։

Ոստիկանները, շուկայում գտնվող պարապ մարդիկ, մանավանդ երեխաները, խմբերով վազեցին նրա ուղղությամբ։ Իսկ այդ բոլորի ետևից դանդաղ, իբրև անտարբեր հետաքրքրվողներ, գնացին Պետրոն ու Հրիստոն՝ դատարկ կողովը ձեռներին։

Արագիլը, երկար ոտները երկու չոր ճիպոտի պես ետևը մեկնած, ուղիղ գծով սավառնեց դեպի եկեղեցին։ Բայց, եկեղեցու գլխին իջնելու փոխարեն, պտույտներ գործեց նրա վերևը և, չգիտես ինչո՛ւ, միտքը փոխեց նորից ու ետ դարձավ։

Նրա հետ և բազմությունը, որին այժմ բակերից ու փողոցներից միացել էին հասակավորների ու մանուկների նոր խմբեր։

Ծտ դառնալով՝ արագիլը մի քանի հանդարտ, լայն պտույտներ արավ քաղաքի, ավելի շուտ բազմության գլխավերև, կարծես ուզում էր իմանալ նրա հուզմունքի պատճառը. ապա, երբ ժողովուրդը եկեղեցու մոտից դեռ հրապարակը չէր հասել,— եկավ իջավ իր սիրած տեղը՝ ոստիկանատան աշտարակին, ժամացույցից վեր։

— Կրակե՛լ, կրակե՛լ,— հրամայեց այս անգամ զայրույթից բռնկած պետը։

Միանգամից պայթեցին մի քանի ատրճանակներ։

Արագիլը պոկվեց տեղից, նորից բարձրացավ վեր ու, թևվերը լայն տարածած, սավառնակի պես պտույտ տվեց մի քանի անգամ, հետո հանդարտ թևածելով, ուղղվեց դեպի այգիները, ուր հնօրյա բարդու ճղների արանքում գտնվում էր նրա մեծ բույնը։

Սակայն բազմությունն այս անգամ չհետևեց նրան. ոստիկանները նույնպես։— Ապարդյուն բան էր կտրել մոտ երկու կիլոմետր տարածություն։ Միայն Պետկոն ու Խրիստոն էին, որ ուրախ-ուրախ գնացին նրա ետևից. այն էլ ոչ թե այգիները, այլ իրենց տները։ Նրանք այնքա՛ն ուրախ էին իրենց հաղթանակով...

* *
*

Կարծո՞ւմ եք արագիլի պատմությունը սրանով վերջացավ։—

Ո՛չ։

Այնուհետև մի ամբողջ շաբաթ, և ավելի, նա, կարմիր թևվերը դրոշի պես պարզած, հաճախ սավառնում էր քաղաքի գլխին ու մեկ-մեկ իջնում եկեղեցու գմբեթին կամ ոստիկանատան աշտարակին,— երկու բարձր կետերի, որոնք իշխում էին Բրագայի վրա։

Նրա թևերը կարմիր մնացին այնքան, մինչև որ անձրևները

լվացին նրանց։ Ի միջի այլոց՝ ոստիկանապետը շատ ուշ արդեն իմացավ, որ մինչ իր «կարգ ապահովները» վազվզում էին կարմիր արագիլի ետևից՝ կոմունիստները քաղաքից հեռու տոնել էին մայիսի մեկը։

Բայց մինչև այսօր էլ Բրագայում չգիտեն, թե ո՞վ էր նեռակել արագիլին։

Այդ բանը գիտեն միայն իրենք—Պետկոն ու Խրիստոնա։

1932

ԱՆԻԿԸ

Նա տասը-տասներկու տարեկան մի թուխ աղջիկ է՝ խոշոր խաժ աչքերով, որոնք աշխարհին ու մարդկանց նայում են մերթ զարմացած, մերթ մտախոհ, բայց միշտ հետաքրքիր։

Այդ փոքրիկ աղջիկն իմ հարևանուհին է. ավելի ճիշտը— ապրում է իմ դիմացի միհարկանի տանը, որ երկար պատշգամ ունի և մի փոքրիկ պարտեզ, ուր վտիտ դեղձենիներին և գանգուր ծիրանիներին նախագահում է մի բազկատարած վիթխարի ընկուզենի, որի տակ փռված կանաչների վրա նա հաճախ սովորում է իր դասերը կամ զբաղեցնում իր փոքրիկ եղբորն ու քրոջը։

Սկզբում, պետք է ասեմ, ես նրան ծանոթ չէի, բայց գիտեի, որ նրա անունն Անիկ է և գրեթե ամեն օր իմ բնակարանի լուսամուտից կամ պատշգամից տեսնում էի նրան, նրա զբաղմունքները, թե ինչպես առավոտը վաղ գնում է դպրոց, ինչպես է ճաշում ծնողների և փոքր եղբոր ու քրոջ հետ, ապա ինչպես առանձնանալով խորասուզվում դասերի մեջ՝ պատշգամում կամ ընկուզենու տակ, ուր ինքը կամ մայրը փռում էին մի փոքրիկ, վառ ծաղկավոր գորգ։ Տեսնում էի նույնպես, թե ինչպես իրիկնադեմին գալիս էին նրա մի քանի ընկերուհիները—թիթեռների պես թեթև աղջիկներ։ Եվ Անիկը, հապնելով կարճ, ծնկներին հասնող մի զգեստ, գնում էր նրանց

հետ զբոսանքի, գուցե կինո կամ կրկես։ Ու նա այդ անում էր մեծ սիրով, անհոգ ու խնդուն, ինչպես լինում է միայն ծնողներից սիրված ու փայփայված նրա հասակի աղջիկը։

Եվ Անիկի ծնողներն իրոք սիրում ու փայփայում էին նրան։ Հայրը, որ երեսունն անց բանվոր էր գործարանում, և մայրը, որ միայն տան տնտեսությամբ է զբաղվում օրն ի բուն — անում էին ամեն ինչ, որ նա ուրախ լինի, զբաղվի միայն իր դասերով և ետ չմնա ընկերուհիներից թե՛ հագնելու և թե՛ զբոսանքի ու զվարճության մեջ։ Այդ երևում էր մանավանդ կիրակի օրերը, երբ Անիկի ծնողները երեխաներին, հագցրած ու զուգած, տանում էին զբոսանքի. և այդ ժամանակ ամենից ավելի աչքի էր ընկնում Անիկը. նա՝ թուխ խոպոպներով ուսերը ծեծող մազերին կապում էր կապույտ կամ կարմիր ժապավեն և կարճ ու թեթև շրջազգեստով, ամառային վերարկուն անփութորեն թևին՝ քայլում էր ծնողների առջևից, փոքր եղբոր կամ քրոջ թաթից բռնած, կամ նրանց հետ հանաք անելով. և այդ ժամանակ թվում էր Անիկից ավելի անհոգ աղջիկ չկա աշխարհում, այնքան թռվռուն ու խնդուն էր։

Բայց ահա պատերազմը միանգամից, մի օրվա մեջ փոխեց նրա կյանքը։

Պատերազմի երրորդ թե չորրորդ օրը, երբ քաղաքում զորահավաք էր, ես նկատեցի, որ Անիկը հասարակ հագնված, գլխին մառլայից մի գլխաշոր կապած, հոգածությամբ ու եռանդով սրբում է իրենց պատշգամը, աստիճաններն ու բակը, մի բան, որ անում էր միայն մայրը։

Այդ նույնը նկատեցի և հետևյալ օրերը։ Բացի պատշգամն ու բակը մաքրելուց, նա գլուխը դարձյալ մի ճերմակ գլխաշոր կապած, մի լաթ ձեռին սրբում էր սեղանի, աթոռների և առհասարակ տան իրերի փոշին, ճիշտ այնպես, ինչպես մայրն էր անում — ուշադիր, խնամքով։ Թեև տասը-տասներկու տարեկան, բայց Անիկն իրեն ձևացնում էր մի տեսակ տարեց տանտիկին. փոխել էր անգամ քայլվածքը. մանր էր գալիս մեծավարի — լայն ու հաստատուն քայլերով, իսկ երեխաներին՝ եղբորն ու քրոջը կարգադրություն կամ դիտողություն անելիս՝ խոսում էր մոր ձևով. պինդ ու թավ ձայնով, երբեմն աչքերը նեղացած ոլորելով.

— Էդպես բան չուևսնե՞մ...

Ով երեխաները նրա ձայնի մեջ փոփոխություն, թերևս և ուրիշ նոտաներ նկատելով՝ սթափվում էին, գուցե և զգում, որ քույրն իրավունք ունի իրենց վրա, որովհետև ահա քանի օր էր առավոտից իրիկուն նա՛ էր խնամում նրանց։ Երբ զարթնում էին՝ Անիկը մեկ-մեկ գրկած բերում էր նրանց պատշգամ՝ թախտի վրա հագցնում, ապա լվանում երեսներն ու ձեռները։ Բայց ամենից հետաքրքրականն սկսվում էր թեյի ժամանակ։ Անիկը ուշադիր հետևում էր վեց տարեկան եղբոր և հազիվ չորս տարեկան քրոջ ուտելուն. թեյն զգուշությամբ, որ ոչ մի կաթիլ չթափի սփռոցին կամ թերևս վախենալով ձեռը վառել, լցնում էր ափսեների մեջ, հովացնում փչելով, ապա նույնպիսի զգուշությամբ խմացնում երեխաներին, մեջընդմեջ պանրով պատառներ պատրաստում յուրաքանչյուրի համար և տալիս նրանց, խնդրելով ու սպառնալով, որ ուտեն, որովհետև երեխաները դժկամությամբ էին ուտում։

— Այ, եթե չուտեք՝ ես ձեզ հետ չեմ խաղա,— զգուշացնում, սպառնում էր նա։

Երեխաները հնազանդում էին՝ խաղի հեռանկարով հրապուրված և աշխատում շուտ վերջացնել թեյը։

Թեյից հետո Անիկը նրանց առջև դնում էր հին ու նոր խաղալիքներ կամ ավելի շուտ՝ թղթից նավակներ ու աղավնիներ էր շինում — տալիս նրանց և ինքը նորից զբաղվում տան գործով։

Այս անգամ այդ տասը-տասներկու տարեկան աղջիկը կապում էր մոր աշխատանքի գոգնոցը, որ հասնում էր մինչև նրա ոտների երեսը, ու սկսում էր ճաշի պատրաստություն տեսնել.— նախ, մեծ վախով ու զգուշությամբ վառում էր նավթավառը, էմալե կաթսայով ջուրը դնում վրան, միսը գցում մեջը և դարձյալ զարմանալիորեն մորը նմանեցնելով — նրա պես ցածրիկ աթոռի վրա նստած, ձեռները մինչև արմունկները քշտած։ Երբեմն Անիկն իր այդ աշխատանքի մի մասն անում էր ընկուզենու տակ, երեխաներին գորգի վրա նստեցնելով, որոնք նրա շուրջը թղթե աղավնիներ էին թռցնում կամ թղթե նավակներ քշում առվի ջրում։

Մի քանի օր փոքրիկ Անիկին այդ աշխատանքների մեջ տեսնելով՝ ինձ շարունակ զբաղեցնում էր մի միտք, թե ո՞ւր է արդյոք նրա մայրը, ի՞նչ է պատահել նրան. հիվա՞նդ է, թե՞ տեղ է գնացել։ Բայց չէր երևում և հայրը...

Ու ամբողջ տան հոգսը կարծես մնացել էր այդ նիհար, նուրբ աղջկա վրա, որ, սակայն, թվում էր ոչ մի ծանրություն ու դժվարություն չէր զգում, ամեն բան անում էր այնպես սիրով ու խնամքով և նույնիսկ կարծես մի տեսակ հպարտ, որ տան գործը, մեծի գործը ինքն է անում։

Բայց և այնպես ինձ անհանգստացնելու չափ հետաքրքրքրում էր, թե ուր են Անիկի ծնողները, ինչ է պատահել այդ համեստ ընտանիքին, որ այդ փոքրիկ, փխրուն աղջիկն է կատարում տան ամբողջ գործը, անգամ ջրում է պարտեզը, մի բան, որ հայրն էր անում միշտ։ Չլինի՞ երկուսն էլ հիվանդ են կամ մի աղետ է պատահել։

Եվ ահա մի օր, իմ այս անհանգիստ հետաքրքրությունից մղված, գնացի-մտա Անիկենց բակը, երբ նա երկար ավելը ձեռին սրբում էր այն։ Թեև անծանոթ՝ ես իր անունով դիմեցի նրան և հետաքրքրվեցի, թե ո՛ւր են ծնողները և ինչո՛ւ տան բանն ինքն է անում։

Անիկն սկզբում շատ զարմացավ, չգիտես իմ հարցերի՞ վրա, թե ինձ իրենց բակում տեսնելով. նրա խոժ աչքերն ուղղակի չռվեցին, բայց իսկույն էլ իրեն հավաքեց։

— Ինչո՞ւ համ տան բանը ես անում,— կրկնեց նա նորից շփոթվելով ու կարմրելով։— Հապա ի՞նչպես. ո՞վ անի։ Չէ՞ որ հայրս գնացել է բանակ... մայրս աշխատում է նրա տեղը՝ գործարանում։ Ես էլ պահում համ տունը, երեխաներին,— ասավ նա մեծի պես լուրջ և, մի փոքր լռելով, ավելացրեց։— Չէ՞ որ պատերազմ է...

Ու այս խոսքերը նա ասավ մի այնպիսի եղանակով, որ կարծես զարմանում էր, թե ինչպես ես մինչև հիմա չեմ հասկացել մի այդպիսի հայտնի բան. ու նորից, ասես ժամանակ չկորցնելու համար, շարունակեց ընդհատված աշխատանքը՝ բարակ, նիհար թևերը քշտած։

Այդ օրվանից մենք ծանոթացանք, և ամեն օր դարձյալ տեսնում եմ, թե ինչպես է Անիկը մենակ անում ամբողջ տան



գործը—ճիշտ, հավաքում, երեխաներին պահում-կերակրում կամ տանում զբոսանքի՝ մինչև մայրը գալիս է գործարանից։ Իմանալով, որ մայրը գործարանում հոգնած կլինի և հանգստի կարիք կունենա—նա ճաշը պատրաստում է ինքը՝ դասագիրքը միշտ ձեռին։ Կերակրի կաթսան դնելով նավթավառի վրա՝ նա, դասը կարդալով, մերթ կերակրին է նայում, մերթ խաղալիքներով զբաղված երեխաներին, որ երբեմն խանգարում են նրան, բայց միշտ էլ ենթարկվում, երբ սաստում է։

Ինձ զարմացնում է այդ փոքրիկ աղջկա հանգիստ ու զուսպ բնավորությունը, նրա հավաք, զգույշ լրջությունը, հավաք աշխատանքը և ես այլևս չեմ կարողանում մնալ անտարբեր հետաքրքրվողի դերում. ընդհակառակը, համակրանք եմ զգում դեպի այդ մանկահասակ աղջիկը և ուզում եմ պարզապես հանդիպել նրան, խոսել հետը և գովել... այո՛ և գովել նրան, խրախուսել. գուցե և օգնել, եթե նա դեմ չլինի...

Ով քանի որ հիմա ծանոթ ենք, ես ամեն անգամ Անիկին հանդիպելիս՝ հետաքրքրվում եմ, թե ի՞նչպես է նա, ի՞նչպես է հասցնում դասերը։ Ու Անիկը միշտ պատասխանում է թեթևակի շառագունելով, որ ինքը լավ է, դասերն էլ՝ ոչինչ, հասցնում է. չէ՞ որ հիմա երեկոներն է գնում դպրոց, որովհետև մայրը ցերեկն աշխատում է գործարանում։

— Իսկ հայրիկդ ի՞նչպես է։ Ի՞նչ է գրում։

— Հայրիկս լավ է. թնդանոթաձիգ է ճակատում,— ասում է Անիկն ուրախ-ուրախ։ — Այն օրը նորից նամակ ստացանք, գրում է, որ մեզ լավ պահենք, ամեն բան լավ կլինի...

Լսելով նրան՝ ես միևնույն ժամանակ նկատում եմ, որ Անիկը զարմանալի հետաքրքրվում է պատերազմով, լրագրեր է կարդում, ռադիո է լսում և ամեն պատահելիս-խոսելիս հարցնում է.

— Իմացա՞ք, քևոր, որ մերոնք քշել են գերմանացիներին, քսանհինգ ինքնաթիռ են գցել, թնդանոթներ են խլել, գնդացիր... Եթե ամեն օր այդքան բան խլեն՝ պատերազմը շուտ կվերջանա չէ՞...

— Իհարկե,— ասում եմ,— իհարկե...

Ով մեր հանդիպումներն անցնում էին միշտ այսպիսի կարճ հարց ու պատասխանով, մի քանի խոսքերի փոխանակու-

թյամբ, որոնց ընթացքում Անիկը կա՛մ շիկնում էր, կա՛մ ժպտում աշխույժ ու զվարթ, ինչպես կարող է լինել միայն տասը-տասներկու տարեկան աղջիկը։ Բայց մի օր էլ,— (մեր ծանոթությունից կարծեմ երեք-չորս ամիս հետո) հանդիպեցի Անիկին փողոցում. նա շատ տխուր էր. խաժ աչքերը լիքն էին ինձ համար անբացատրելի թախիծով ու տխրությամբ։ Ինձ տեսնելով՝ նրա աչքերն ավելի մթագնեցին։

— Հը, Անիկ, ի՞նչպես ես, ի՞նչ է գրում հայրիկդ։

Այս անգամ նա իր սովորական աշխույժ պատասխանի փոխարեն՝ բարակ շուրթերը հպեց իրար, նրա բկի ոսկորը մի երկու անգամ խաղաց ջղաձիգ նուրբ մաշկի տակ և նա աչքերը խոնարհեց գետին։

Ինձ համակեց մի վատ նախազգացում։

— Գիտեք,— ասավ նա մի պահ հապաղումից հետո գլուխը նորից բարձրացնելով,— ասում են... ասում են, որ... հայրիկս... սպանվել է...

Սպանվե՞լ... Նա հազիվ է արտաբերում այս խոսքը, և ես ինքնաբեր բռնում եմ նրա ձեռքը, նրա փոքրիկ ձեռքը և ուզում եմ սիրտ տալ նրան, մխիթարել. վերջապես, ասել մի այնպիսի բան, որ նա չտխրի, չընկճվի։

— Ո՞վ է ասում,— հարցնում եմ ես առերևույթ թերահավատ ու փոքր ինչ բարկացած, կամենալով ներշնչել նրան այն միտքը, որ կարևորություն չտա այդպիսի լուրերի, որոնք շատ հաճախ սուտ են լինում։

Բայց նա կարծես հասկացավ միտքս և վրա բերավ.

— Ոչ, ինձ պաքացում ասին... Բայց մայրիկս չգիտի... ես նրան չեմ ասում... չեմ կարող ասել... լաց կլինի շատ ու... չի կարող...

Անիկը չվերջացրեց. նա երեխայի նման բռունցքով սրբեց աչքերը լցված արցունքները և իսկույն էլ նոքից սթափվեց, արիացավ, շուրջը նայելով։

— Չէ՛, չեմ ասի... նա չի կարող... լաց կլինի...

Եվ մինչև ես կարողանայի մի խոսք ասել՝ նա պայուսակն ուղղեց թևի տակ և շտապեց դպրոց, որ չուշանա...

Ո՞վ էր գրել այդ փոքրիկ աղջկա մեջ այդքան կորով ու զգուշավորություն...

1941

ԿԱՂ ԿԱՐՈՆ

Ես չգիտեմ Կարոն կաղ էր ի ծնե, թե նրա այդ արատը հետևանք էր մի դժբախտ պատահարի. համենայն դեպս դա մեծ վիշտ էր պատճառում խեղճին, որովհետև կաղում էր աջ ոտքից և այնպես, որ յուրաքանչյուր քայլն անելիս՝ բավական ծռվում էր մարմնով և նրան թվում էր, թե շատ ծիծաղելի տեսք է ընդունում։ Երեխա ժամանակ, երբ գյուղի տղաները՝ ընկերակիցները, խաղի միջոցին, նրա անճարակ շարժումների կամ ծուռ վազքի համար «այ դու կաղլիկ» էին ասում,— Կարոն զգում էր վիրավորանքը, բայց շուտով էլ մոռանում էր. չէր վշտանում, չէր տխրում ու ամաչում, ինչպես պատանության օրերին, երբ մարդ սկսում է հետամուտ լինել իր գեղեցկության, և մանավանդ երիտասարդ հասակում, երբ աշխատում է ցուցադրել իր բարեմասնությունները։ Այդ տարիքում ահա Կարոն շատ զգայուն էր իր արատի նկատմամբ. այսինքն՝ կաղ ոտը նրան դարձրել էր զարմանալի դյուրազգաց. ուստի և ամեն մի ակնարկ դրա մասին,— երկար ժամանակ տխրեցնում էր Կարոյին։

Երիտասարդի իր արժանապատվությունը վիրավորող արատը նա զգաց մանավանդ զինվորակոչության օրերին, երբ բժշկական քննությունը նրան գտավ «ոչ պիտանի», հեգնաբանների ասելով, անպետք։ Կարոն դրան սպասում էր։ Սա-

կայն այդ հանգամանքն առիթ դարձավ, որ ընկերները նորոգեն հին կատակները նոր ուժով։

— Պե՛տք չեկար, Կարո. քեզ տղամարդ ասողին,— ասում էր մեկը։

— Պրծար, Կարո. էլ ոչ մի աղջիկ քեզ չի առնի,— ավելացնում էր մյուսը։

Ու այսպես երրորդը, չորրորդը, հինգերորդը...

Լսում էր Կարոն ընկերների և հանաքի ազարտի մեջ ընկած համագյուղացիների կատակները և ժպտում անչար սրտով։ Հանաքով, ծիծաղով խփում էին նրա ուսերին, հրում էին կողերը — դարձյալ ժպտում էր ներողամտաբար կամ երեսն վրա բերում.

— Թող կարգին ուտ ունենայի՝ ինձ էլ տանեին ձեզ հետ...

Կարոն անկեղծ, սրտանց էր ասում. ուռը նրա համար մեծ վիշտ էր այդ ժամանակ, որովհետև համոզված էր, թե կաղությունը մեծ պակասություն է, մանավանդ աղջիկների աչքում, և մտածում էր, թե կարող է պատահել իսկապես ոչ մի աղջիկ էլ չցանկանա իր կինը լինել... Բայց այդ կասկածն իզուր էր. շուտով նա սիրահարվեց ջրաղացպան Մարգարի աղջկա վրա և, չհանդիպելով ոչ մի դժվարության, ամուսնացավ հետը։ Առաջին անգամ այստեղ միայն Կարոն զգաց, որ կաղությունը չխանգարեց իրեն մյուսներին հավասար մարդ լինելու. ուրեմն իր արատը, որքան էլ անցանկալի ու տխուր, այնքան էլ հուսահատական չէր։

Եվ քանի տարիներն անցնում ու Կարոն հասակ էր առնում — այնքան քիչ էր նշանակություն տալիս իր կաղությանը, այլևս սրտի մոտ չէր ընդունում դրա մասին եղած ակնարկները, մանավանդ որ հասակակիցները, զինվորական ծառայությունից վաղուց վերադարձած և ընտանիք կազմած, Թողել-էին նախկին հանաքներն ու կատակները։ Մեկ-մեկ միայն լսում էր, որ ետևից խոսելիս՝ «կաղ Կարոն» են ասում, իսկ երեսին — ոչ ոք, ոչինչ։

Սակայն պատերազմի հենց առաջին օրերին, երբ ընկերները և հասակակից համագյուղացիները նորից բանակ կանչվեցին—հին կատակներն ու հանաքները կարծես հարություն առան նորից։

— Էլի բանի պետք չեկար, Կարո ջան։

— Էլի ետ մնացիր, Կարո... Էլի մարդամիջից ընկար,— ավելացնում էին մյուսները։

Ով դարձյալ հանաքներ, ծիծաղ, ուսերին ու կողքերին խփել։

Իսկ Կարոն, ինչպես զինվորակոչության օրերին, ընկերներից բնավ չնեղանալով, ժպտում էր նորից, բայց այս անգամ ավելի ներողամտաբար։ Ժպտում էր ու հետն էլ ասում սրտանց.

— Տղերք ջան, հիմա ճակատ, թիկունք մեկ է։ Ես էլ հալբաթ մի բան կանեմ...

Ընկերները և առհասարակ բանակ գնացող համաքյուղացիները լսում էին Կարոյին քմծիծաղ, մտածելով, թե ի՛նչ աշխատանք կարող է անել Կարոն թիկունքում, որ հավասար լինի ճակատին։ Այնինչ Կարոն այդ իսկ միջոցին, ընկերներից չնեղանալով հանդերձ, մտածում էր, թե մի՞թե իրոք այնքան անպետք է, որ պատերազմի այս դժվար օրերին չի կարող անել մի այնպիսի բան, որ օգտակար լինի մեկին, հարևաններին, մարդկանց... Կարոն այդ վայրկյանին շատ էր զգացվել— մի՞նչքան հուզիչ էր բանակ գնացող ընկերների և նրանց ընտանիքների բաժանման տեսարանը, երբ մեկնողները սիրտ էին տալիս մնացողներին, իսկ սրտանք բարեմաղթություններ էին անում գնացողներին, որ լավ կենան և հաղթությամբ վերադառնան։

— Հաղթությա՛մբ, տղերք, հաղթությա՛մբ...

Կարոն ինքն էլ ոգևորվեց և մի երկու անգամ բացականչեց.

— Տան մասին չմտածեք, տղերք։ Հաղթությամբ վերադարձեք, հաղթությամբ։

Բայց նրան կարծես ոչ-ոք չլսեց։ Գոնե Կարոյին այդպես թվաց, սակայն ինքն իրենից դժգոհ չմնաց. նա ցուցադրվելու նպատակ չուներ. իր զգացմունքներն արտահայտեց—բավական էր։

Ու Կարոն այդպես էլ երկար մնաց ինքնամփոփ, հուզված. անգամ ընկերների մեկնելուց հետո նրա սիրտը խռոված էր, տեղահան եղած։ Հասարակ բան չէր. ընկերները, բարեկամները հարսանիք չէին գնում, այլ պատերազմ... տուն, ընտա-

նիք, երեխաներ թողած՝ գնում էին պատերազմ, որտեղից բո-
լորը չէ որ դառնալու են։

Կայարանից վերադարձավ Կարոն ընկերներից մեկի՝ Հա-
րութի մոր ու կնոջ հետ, և ամբողջ ճանապարհին աշխատում
էր նրանց մխիթարել, սիրտ տալ, թե ամեն բան լավ կլինի.
տղաները կերթան էլ, կգան էլ... Խոսում էր Կարոն ու հետն էլ
մտածում, թե կասեն՝ ինքը պատերազմ չի գնում, դրա համար
է հեշտ խոսում, բայց շարունակում էր սիրտ տալ, մանավանդ
Հարութի մորը։ Պառավը, սակայն, իր վշտի մեջ կրկնում էր,
թե «շատ բան ախր կիսատ մնաց». Հարութը բանջարանոցը
պիտի ջրեր, հնձած խոտը պիտի հավաքեր ու բերեր, և ուրիշ
բաներ։

— Դարդ մի անի, Մովի նան,— ասում էր Կարոն՝ կայա-
րանի տեսարաններից տակավին հուզված։— Կոլխոզը քեզ
առանց օգնության չի թողնի, իսկ բոստանը էգուց ես կգամ
կջրեմ, մեծ բան չի։

— Բոստանը ջրեցիր, Կարո ջան, բա հնձած խոտը, որ
մնացել է հանդում. ամեն բան հո չես անելու։ Ջե՞ր որ դու էլ
տան տեր ես, դու էլ գործ ունես։

— Դրա մասին էլ մի մտածի, Մովի նան։ Մեծ բան չի։
Խոտը շատ լինի մի անել, երկու անել։

Ամառային արևը վաղուց անցել էր ամբի ծառը, և երեկոն
մթնում էր դանդաղորեն. կայարանից դարձող կանայք, տղա-
մարդիկ, ճանապարհի երկարությամբ ցրված գնում էին
խմբերով, բարձրաձայն զրուցելով։

Կարոն էլ, խոսակցելով, Մովի նանին ու հարսին ուղեկցեց
մինչև նրանց տուն և ինքը, կոլտնտեսականներին խաունվե-
լով, շարունակեց ճանապարհը։

Կայարանում ապրած հուզումը և այդ մտքերը նրանից
չհեռացան և դիշերը։ Սակայն նա իր մտածումները չհայտնեց
կնոջը, չնայած նա հետաքրքրվեց և ուզեց իմանալ, թե ինչո՛ւ
է Կարոն հուզված։ Նրա մտքով հերոսություններ էին անցնում,
ուզում էր այնպիսի մի բան արած լինել, որ մարդիկ տեսնեին,
թե կաղն էլ կարող է հերոսություն անել։ Բայց առայժմ չգըտ-
նելով այդ արտակարգ հերոսությունը, որը նրա վրայից պի-
տի չնչեր աբատավորիչ «անպետք» կոչումը,— Կարոն մյուս

օրն այնուամենայնիվ գնաց Տովի նանին տված իր խոսքը կատարելու. այսինքն՝ ամենից առաջ սայլը լծեց և փոքր եղբոր՝ Խաչիկի հետ գնաց նրանց հնձած խոտը հավաքեց ու բերեց դիզեց։

— Քեզ փեշքեշ, Տովի նան,— ասավ նա դեզը դնելուց հետո։

— Արևդ ապրի, Կարո ջան,— օրհնեց պառավը։

— Հիմա մնաց բոստանը. էն էլ ճաշից հետո,— ավելացրեց Կարոն։

Ու ճաշից հետո, իսկապես նա բահն առած գնաց դեպի գյուղի ծայրը՝ բանդից ջուր կապելու, որ հետո բանջարանոցը գալով, Տովի նանի ցուցմունքով չրի ի՛նչ հարկավոր է՝ եվ այստեղ ահա՝ բանդում, ջուրը նոր կապած-չկապած, Կարոն հանդիպեց հենց երեկ բանակ մեկնած մյուս ընկերոջ՝ Սումբաթի մորը՝ Ջան ազուն, որ հորթն առաջին, նրա թոկը բռնած, վերևից գալով, կանգնեց-հետաքրքրվեց, թե ինչ է անում Կարոն։

— Էդ ձեր բոստա՞նն ես ջրում,— հարցրեց պառավը։

— Չէ, Ջան ազի։ Տովի նանի բոստանն եմ ջրում։ Հարուքը երեկ գնաց. ասի՝ ընկեր տղա է, չրող չկա, պառավը մեղք է, մի քիչ հասնեմ։

— Հա՛,— տնքալով հառաչեց պառավը և հեռացավ ո՛չ հավանություն տալով, ո՛չ դժգոհելով։ Անտարբեր։

Բայց Կարոն, նրա ետևից նայելով, գլուխը տարուբերելով մտածեց, թե Ջան ազին, երևի, նեղացավ, որ Հարուքենց բանին հասել եմ, իրենց որպիսությունը չեմ էլ հարցնում։ Չէ՞ որ Սումբաթն էլ Հարուքի պես ընկեր տղա է։ Եվ մտածելն ու ձայն տալը մեկ արավ.

— Ջան ազի՛, Ջա՛ն ազի, մի րոպե կանգնի...

Պառավը, որ դանդաղորեն գնում էր վիզը թոկով կապած հորթի հետ, կանգ առավ՝ հարցական նայելով կաղնիկաղ մոտեցող ջրոտ բահն ուսին դրած Կարոյին։

— Ջան ազի, էգուց տանը կլինե՞ք։

— Ի՞նչ կա որ,— հարցրեց պառավը մի տեսակ տարակուսանքով, նրա հարցումի վրա զարմացած։

— Հեչ, ասում եմ գամ տեսնեմ ի՞նչ ունեք պակաս, անելու բան։ Ինչքան չլինի Սումբաթն ախպեր տղա է, չէ՞։

— Շնորհակալ ենք, Կարո ջան։ Դու էլ տան, գործի տեր ես. քու բանը պիտի թողնես, գաս մեզ համար աշխատե՞ս։ Ձէ, տղա ջան, դու քո բանին կաց։ Մենք մեր հալիվորի հետ, մեր հարսի հետ յոլա կտանենք։

Չնայած Ջան ազու այդ խոսքերին՝ Կարոն այնուամենայնիվ մտածեց, թե լավ կլինի մի օր անցնի Սումբաթենց տուն, նրա ծերունի հոր և Ջան ազու «որպեսութինը» հարցնի և իմանա նրանց ինչ կարիք ունեն. գուցե կարողանա օգնել։

Գյուղում առհասարակ այն կարծիքը կար Կարոյի մասին, թե նա մի առավելություն ունի, որ ինչ մտադրում է անելու— չի սիրում հետաձգել։ Այս անգամ էլ այդպես։ Ջան ազուն տեսնելու երկրորդ թե երրորդ օրը, իր տան-դրսի գործերից ազատ լինելով, նա գնաց իր ընկեր Սումբաթի ծնողների «որպեսութինը» հարցնելու։ Ամառային չերմ, հաճելի օր էր, մեկն այն օրից, երբ մարդու սիրտը այնպես է բացվում, որ ուզում ես ամեն ինչ սիրել, ամեն բան ներել և տարվել միայն խաղաղ մտքերով։ Սումբաթենց տանը մոտենալով՝ Կարոն նկատեց, որ ընկերոջ ծերունի ծնողները նստած են կարծես մի այդպիսի խաղաղ տրամադրության մեջ՝ իրենց բակի թթենու տակ, որ բազկատարած բարձրանում էր նրանց կտուրից վեր։ Բայց Կարոն, նախքան նրանց մոտենալը, նկատեց և մի ուրիշ բան. տեսավ բակի պատի քարերից մի քանիսը — սայլն անզգուշաբար քշելո՞ւց թե այլ բանից — թափվել էին դռան երկու կողմը։

«Ինչպես երևում է՝ հալիվորը ուժ չունի վերցնի տեղը դնի», մտածեց նա և անմիջապես կուացավ ու սկսեց քարերը, մեկ-մեկ վերցնելով, դնել պատի վրա, քանդված տեղը, հետն էլ ստուգելով պի՞նդ նստեցին, թե ոչ։ Ծերունիները, չնայած շարունակ հակառակ կողմն էին նայում, հանկարծ (երևի քարի ձայնից) ետ դարձան և տեսան Կարոյին։

— Էդ ի՞նչ բանի ես, Կարո ջան,— առաջ եկավ Սումբաթի հայրը՝ ծերունի Ազատը, որ գրեթե զառամ մարդ էր՝ բոլորովին ճերմակած, նիհար ու բարձրահասակ։— Ի՞նչ ես անում։

— Հեչ,— պատասխանեց Կարոն, աշխատանքը չընդհատելով։— Տեսա էս քարերն ընկած, ասի՝ քեռի Ազատի ուժը չի պատի...

Ու ընկած վերջին քարն էլ ամրացնելով՝ նա հետաքրքրվեց, թե ի՞նչպես է քեռի Ազատը, տունը ո՞նց է կառավարում, Սումբաթից դեռ գիր-նամակ չե՞ն ստացել արդյոք։ Սերունին շնորհակալություն հայտնեց Կարոյի հոգատարության համար և, խոսքի մեջ, ասավ, թե այսօր առավոտից նորոգում է գոմի մարդակները։

— Հնացել, փչացել են,— ասավ նա տխրությամբ,—նոր մարդակացու էլ չկա, որ տեղը դնեմ։ Պակասում են։

Կարոն հետաքրքրվեց։

— Ի՞նչքան է պակաս։ Մի տասը, քսան հա՞տ...

Չէ, այդքան չէ։ Քեռի Ազատը կարծում է, որ մի հինգ-վեց մարդակով բանը կվերջանա. բայց, ափսոս, չկա։

— Գնանք մի տեսննենք,—կաղալով առաջ շարժվեց Կարոն։

Գնացին։ Կարոն տեսավ իսկապես գոմի կտուրի մի մասը, մի չատ փոքր մասը՝ բաց, որտեղից արևն ընկել էր ներս, և այդ բաց տեղի մոտ՝ գերանից-գերան մի մետր տարածությամբ շարված էին նոր տաշած, թարմ մարդակներ, ինչպես նոր կտորից կարկատանք հին լաթի վրա։ Ներսից նայելուց հետո՝ Կարոն բարձրացավ կտուրը և, աչքով ու ճիպոտով մարդակների երկարությունն ու հաստությունը չափելով, հեռացավ անխոս, Ազատ քեռուն թողնելով կես զարմանքի, կես տարակուսանքի մեջ.— ինչո՞ւ եկավ այս մարդը, ինչո՞ւ չափեց ու գնաց՝ առանց մի բան ասելու։ Նա չէր հասկանում։

Սակայն հաջորդ օրը, ամառվա արևը դեռ նոր բարձրացած, Կարոն նորից եկավ մի շալակ մարդակացուներ բերելով, որ նրա խնդրանքով տվել էր կոլխոզի նախագահը։

— Բերի, Ազատ քեռի,— ասավ Կարոն,— էսօր կարող ենք շինել։

Աշխատանքը երկար չտևեց։ Մինչև ճաշ նրանք երկուսով մարդակացուները տաշեցին և, իրար հավասարեցնելով, շարեցին գերանների արանքում, ապա վրանները կոճոն խուտ լցնելով՝ ծածկեցին հողով ու սկսեցին տրորել, որ պնդանա։

— Հիմա էլ չի կաթի,— ասավ նա, աշխատանքը վերջացնելով և պատրաստվելով գնալ։

Որքան էլ ծերունիները հրավիրեցին նրան ճաշի — Կարոն չմնաց, բայց խնդրեց, որ եթե մի բան պատահի կամ պակասություն լինի — թող իրեն իմացնեն։

Այսպես երկու ընկերոջ ընտանիքների «որպեսութինը» հարցնելուց հետո, մի քանի օր թե մի շաբաթ անց, Կարոն իր երրորդ ընկերոջ՝ Շեկ Վասիլի տան առջևից անցնելիս՝ հիշեց որ, Վասիլի բանակ գնալուց հետո, դեռ ոչ մի անգամ չի հետաքրքրվել, թե նրա կինն ու քույրերն ինչպես են ապրում։

«Էս էլ մի բան չի,— մտածեց,— էսքան ժամանակ սրանց չգնացի իմանամ ո՞նց են, ի՞նչ են։ Ճիշտ է, իրենք տունը կառավարում են, բայց տղամարդու բան կունենան տանը»...

Ու հավատարիմ իր սովորությանն, որ մտադրածը չէր հետաձգում, Կարոն մեկ երկու օր հետո գնաց Շեկ Վասիլի տուն, հետաքրքրվեց, թե ինչպես են ապրում նրա կինն ու քույրերը, պատահեց և տղամարդու մի գործ. բակում ընկած մի հատ ու պինդ կոճղ, որ ուզում էր ջարդել Վասիլի կինը և չէր կարողանում,— Կարոն կացինն առավ, և, կոճղը ճղոտելով, օջախի փայտ արավ, որի համար և արժանացավ կանանց շնորհակալութեան։

Եվ այնուհետև Կարոն այսպես՝ ոչ թե ժամանակ առ ժամանակ, այլ շարունակ հետաքրքրվում էր պատերազմ գնացած մոտ ընկերների ընտանիքների գործերով կամ, ինչպես ինքն էր ասում, «որպեսութինով» — նրանց տները գնալով կամ ճամփին ու որևէ տեղ նրանց հանդիպելիս։

Ու հետզհետե Կարոն այնպես ընտելացավ այդ ընտանիքներին, որ հետաքրքրվում էր անգամ նրանց անասունների կերով, կովերի կաթով։ Երբեմն ազատ ժամերին կամ գիշերները կնոջ հետ խոսում էր ընկերների ծնողների, կանանց, նրանց մոտ եղած անախորժութիւնների և ուրախութիւնների մասին. «Գիտե՞ս, Սալբի, Վասիլը գրել է թե՝ երկու գերմանացի է սպանել խշտիկով։ Ա՜յ տղեն»... կամ «լսե՞լ ես, Սալբի, Տովի նանը շեմքում վեր է ընկել՝ ձեռը վնասել։ Ասում եմ՝ գնա բժշկի մոտ։ Չի ուզում... «Մեր հեքիմ Ավետն ավելի լավ է» ասում է»...

Կարոյի կինը՝ Սալբին ընդհատում էր նրան թեթև հանդիմանքով.

— Լավ, այ մարդ. թող դրանց. մեր բան ու գործի մասին մտածիր։

— Ո՛նց թե,— զարմանում էր Կարոն։— Մարդիկ հարամու առաջ են գնացել՝ ես նրանց մասին մտածեմ՝ մե՞ծ բան է...

Սալբին առհասարակ գոհ չէր Կարոյի այդ վարմունքից, որ շարունակ, ինչպես ինքն էր ասում, գնում էր սրա-նրա տուն, հետաքրքրվում, բան անում, օր կորցնում։

— Թող, այ մարդ, դու էնքան չան ունե՞ս, որ երկու-երեք տան բան անես,— ասում էր նա հաճախ։

Կարոն հաճախանում էր ակնարկը և անմիջապես վրա էր բերում նեղացած.

— Շատ էլ կարգին ոտ չունեմ, ձեռ հո ունե՞մ...

Ու շարունակում էր իրենը. այսինքն՝ շարունակում էր հետաքրքրվել ընկերների «տննցոց որպեսութինով». մեկ էլ տեսար, ճաշից կամ իրիկնահացից հետո, վեր կացավ ու ասավ կնոջը.

— Սալբի, մի շաբաթ է Սումբաթենց տանը չեմ եղել, գնամ տեսնեմ հալիվորը ո՛նց է...

Ճիշտ է ասված, թե սովորությունը մեծ ուժ է. Կարոն ոչ միայն ինքն էր սովորություն դարձրել այդպես գնալ-խոսել — ընկերների ընտանիքներն էլ այնպես էին ընտելացել նրան, որ ամեն ինչ համարյա, իրենց տներում անցած-դարձած բաները պատմում էին Կարոյին կամ մի բան պատահելիս՝ կանչում էին նրան։ Մի օր, օրինակ, Շեկ-Վասիլի փոքր քույրը եկավ թե՝ «Քեռի Կարո, մեր կովը վատ խոտ է կերել, ուռել է. հարսս ասում է՝ արի մի տես»։ Գնաց Կարոն՝ կովին բան խմացրեց, վազեցրեց, և կովը լավացավ։ Մի ուրիշ անգամ էլ եկան թե՝ «Քեռի Ազատը թեք է ընկել — սիրտն ուզում է աղջկանը տեսնել» — Կարոն անմիջապես ճանապարհ ընկավ մոտիկ Հոզաբերդ գյուղը և երեկոյան դեմ բերեց ծերունու աղջկան։ Վերադարձին, երբ Ջան ագին «երկար արև» մաղթեց նրան — Կարոն ասավ միայն.

— Արածս մեծ բան չի, Ջան ագի։ Հիվանդի սրտի ուզելիքը բերելը վարձք է։

Այսպես անցավ մի քանի ամիս—մի օր էլ մեր Կարոյին մի ծանր դժբախտություն պատահեց, որի մասին խոսում են մինչև այսօր։

Մի ճաշի եկան հայտնեցին, թե Շուվի նանի փոքրիկ թոռը՝

Հարութի տղան ծանր հիվանդ է. մայրը և պառավ տատը չգիտեն ինչ անեն։ Հինգ-վեց օր Կարոն չէր եղել նրանց մոտ։ Այդ լսելով՝ ճաշն շտապ վերջացրեց ու վեր կացավ։

— Կարգին հաց կեր, այ մարդ,— ասավ կինը։

— Գնամ, ոչինչ։ Վաղուց է չեմ եղել, պառավը կմտածի՝ իրենց մոռացել եմ։

Ու գնաց։ Գնաց տեսավ իսկապես երեխան հիվանդ, բարձր տաքության մեջ, իսկ պառավ տատը՝ Սովի նանն ու հարսը՝ երեխայի մայրը երկու կողքին նստած՝ տրորվում են վըշտահար։

— Ի՞նչ է պատահել, Սովի նան,— հարցրեց Կարոն, երեխայի կարմրած երեսին նայելով։

— Երեք օր է էսպես տաքության մեջ վառվում է րեխեն. քացախ բան ենք դնում ճակատին—չի անցնում։

— Բժիշկ կանչե՞լ եք։

— Ո՞նց չէ. հենց երեկ եկավ։ Շնորհակալ եմ, նախագահը կանչեց. եկավ նայեց, դեղ գրեց. բայց մենք դեռ չենք բերել, Կարո ջան։ Մտածում էինք, թե տաքություն է՝ կանցնի էլի...

— Է, բա ինչու ինձ չէիք ասում, ա՛յ նան,— նեղացավ Կարոն։— Դեղը ես կբերեի։

— Քեզ ո՛նց նեղություն տանք, Կարո ջան։ Էս ձյունին, ցրտին դու ո՛նց գնայիր...— Պառավն ուզում էր ավելացնել «սախատ (կաղ) մարդ ես», բայց չասավ, մտածելով, թե Կարոն կվիրավորվի։— Այ, եթե քաղաք գնացող պատահի՝ մեզ ասա — բժշկի թուղթը տանք՝ դեղ բերի,— շարունակեց պառավը, տրորվելով նայելով թոռանը, որ, տաքությունից նեղվելով, թուխ գլուխը բարձի վրա շրջում էր դես ու դեն։

Կարոն մի երկու րոպե նայեց տաքությունից տապակվող երեխային, նրա կարմրությունից վառվող անօգ դեմքին և գլուխն օրորեց։

— Բժշկի թուղթն ո՞ւր է։

— Ի՞նչ ես անում, Կարո ջան, գնացող կա՞,— հարցրեց պառավը։

— Է, ես ինչ եմ։ Տվեք գնամ... երեխան մեղք է։

Պառավը նորից դժվարացավ այդ բանը հանձնարարել

նրան, պատճառ բռնեց նորից ձյունը, ցուրտը և այն, թե ուշ է, շուտով կմթնի, ճանապարհին էլ, ով է իմանում, ինչ կպատահի։ Ամեն ժամանակ է, գել-գազան...

— Թող մնա առավոտը, Կարո ջան։

— Ինչո՛ւ մնա, երեխան մեղք է։ Մինչև քաղաք հասնեմ՝ նոր կմթնի։

Որքան էլ Սովի նանն ընդդիմացավ այդ ժամին գնալու մտքին, Կարոն դեռատոմար դրեց գրպանը, մի ձեռնափայտ առավ ու, տնից դուրս գալով, ճանապարհ ընկավ դեպի քաղաք, առանց իր տունը գնալու. միայն ճանապարհին, դեռ գեղամիջին մեկին ուղարկեց ասելու, որ ինքը գնում է քաղաք։

Ձյուն էր, ցուրտ... չնայած պնկտեմբերը նոր էր սկսվել, բայց թվում էր խորին ձմեռ է սրգին. դաշտն ամբողջ ծածկված էր ձյունի հաստ շերտով, անգամ անտառի ծառերը ծանրաբեռնված էին փրփուր ձյունով, կարծես, ձերմակ մուշտակների ձորձեր էին հագել ու ցրտից կքել նրանց տակ։ Քաղաք տանող խճուղին նույնպես ծածկվածէր ձյունով, բայց շատ անցուդարձից տրորված, տափակած, տեղ-տեղ էլ անասելի ճաճռում էր մարդու ոտների տակ և խշրտում։

Ճանապարհն այդպես գնում-մտնում էր անտառ, ապա, դուրս գալով, թեքվում դեպի քաղաք։

Կարոն գնում էր ձեռնափայտը ձեռին և, շտապելուց, սովորականից ավելի արագ էր քայլում, ու այդ պատճառով նրա կաղությունը հետևից էլ նկատելի էր։ Մյուս կողմից՝ չէր մրսում, թեև իրիկնաժամի ցուրտն սկսել էր արդեն։ Արագ քայլելուց, ընդհակառակը, նա տաքանում էր և հագի վերարկուն նրան ծանր էր.գալիս, թվում էր մինչև թոկ խանգարում է քայլելուն։

Այդպես գնալով՝ նա կես ժամում հասավ անտառ և անտառում հանդիպեց քաղաքից եկող համագյուղացիների, որ երևի մթերք էին տարել ծախելու և հիմա վերադառնում էին իրենց էշերով։

— Էդ ո՞ւր, Կարո, էս մթնովը,— հարցրին նրանք։

Ով լսելով ինչի է գնում՝ շտապեցրին.

— Լավ, գնա՛, գնա՛, մութը չընկնի...

— Որ ընկնի ի՞նչ կա որ։

— Ով է իմանում... Գնա, գնա. ճամփի կեսն արդեն անցել ես։

Ու գյուղացիներն շտապեցրին իրենց էշերը, իսկ Կարոն շարունակեց առաջ գնալ։ Գյուղից քաղաք ընդամենը երկու ժամվա ճանապարհ էր, բայց առողջ ոտների համար. և թեև ճանապարհը դեռ կես չէր եղել, բայց գյուղացիներն այդ տախն չգիտես նրան խրախուսելու համար, թե մի բան ասած լինելու. այնուամենայնիվ Կարոն քմծիծաղ տվեց նրանց անտեղի խրախուսանքի վրա, շարունակելով ճանապարհը և մտածելով. «Ջեն իմանում, որ դեռ պիտի նա գառնամ»...

Երբ ճանապարհը մոտավ անտառ՝ ցուրտը կարծես մեղմացավ, և Կարոյին թվաց, թե ցրտի մեղմության հետ միասին հանկարծ մթնեց և լուսյունը խորացավ։ Որ կողմը դարձնում էր աչքը՝ դարձյալ ձյուն էր և սառը լուսյուն. ծառերի տակն աւլդեն մթնել էր, և ձյունը կապտին էր տալիս, որից ցրտի զգացում է համակում մարդուն։

«Նտ դառնալիս ավելի ցուրտ կլինի»—մտածեց նա և խակույն էլ մխիթարեց իրեն. «Ոչինչ, ման եկող մարդը չի մրսի»...

Քանի գնում՝ մութը կամաց-կամաց թանձրանում էր անտառում և փոքր անց, երբ նա դուրս եկավ անտառից, մութն էր արդեն և դաշտում, որտեղից երևում էր քաղաքը մի քանի ճրագներ վառած։ Իսկ երբ հասավ քաղաք — այնտեղ արգեն կատարյալ մութն էր։ Նա առանց դժվարության գտավ դեղատունը, ուր ճերմակ հագած դեղագործը այդ պահին ինչ-որ դեղ էր պատրաստում՝ այդ աշխատանքի մեջ խորասուզված։

Դեղատումսը գրպանից հանելով՝ Կարոն մոտեցավ նրան.

— Եթե կարելի է՝ շուտ պատրաստեք. ես գեղ պիտի վերադառնամ։ Երեխան ձեռքից գնում է։

Դեղագործը կարդաց Կարոյի տված դեղատոմսը և ասավ.

— Կես ժամից հետո...

Եվ մինչ նա կպատրաստեր՝ Կարոն տեղավորվեց երկար նստարանի վրա և սկսեց նայել դարակներին շարված մեծ ու փոքր սպիտակ բանկաններին, տարբեր ձևերի ու չափերի շշերին, պատերին փակցրած պլակատներին, ամենից շատ նրա

ուշը գրավեց մի պատկեր, որի վրա գալարված օձը, գլուխը բարձրացնելով, լեզուն կախել էր մի ամանի մեջ։ Կարոյին թվում էր, թե ամեն մի պատկեր հասկանում է, բայց այդ մեկն անըմբռնելի է իր համար... Նայում էր Կարոն և միաժամանակ զգում, որ ներսի հաճելի տաքությունը համակում է մարմինը։ Ճանապարհի ցրտից հետո դա ա՛յնքան դուրեկան էր, որ նա ինքնամոռացության մեջ չնկատեց, թե ինչպես դեղագործը պատրաստեց մի շիշ հեղուկ դեղ, և նա սթափվեց միայն այն ժամանակ, երբ դեղագործն ասավ.

— Ստացիր, օրը երեք անգամ՝ հացի գդալով։

Երբ Կարոն դեղատնից դուրս եկավ՝ էլ հոգնածություն չէր զգում. շիշը դրեց վերարկուի գրպանը, ձեռնափայտը նորից ձեռն առավ ու բռնեց գյուղի ճամփան։ Շտապում էր, որ դեղը հասցնի երեխային։

«Մի բան չպատահի խեղճին — մեղք է», մտածում էր Կարոն ու գնում։

Նա արդեն դուրս էր եկել քաղաքից, այժմ անցնում էր կամուրջը։ Եվ այստեղ նա, չգիտես ջրի հոսանքի՞ց թե ինչից, զգաց, որ ցուրտը սաստկացել է։

«Գիշերը պարզկա է լինելու» — մտածեց, վերարկուի օձիքըն ականջներին քաշելով։

Եվ այդպես քայլում էր նա ու մտածում, որ մի երկու ժամից տանը կլինի։ Կհասնի այն ժամանակ, երբ գյուղում դեռ քնած չեն լինի։ Եվ հասնի թե չէ — դեղը կտանի Ծովի նանին, կպահանջի, որ անմիջապես խմացնեն երեխային, ապա նոր կերթա իր տուն։ Քայլում էր Կարոն, և սառած ձյուները ճըռճըռում էին նրա ոտների տակ ու շրջապատի լռությունը վրդովում անախորժ ճռինչներով, որ արձագանքում էին հեռուներում և մանավանդ Կարոյի ականջներում։

Այսպես, ձյունները ճռնչացնելով և հետն էլ ամենատարբեր բաներ մտածելով՝ Կարոն անցավ համարյա դաշտը և այն է երևացին անտառի առաջին ծառերը ճանապարհի երկու կողմը — Կարոն ձյունների վրա, հենց անտառի մոտ, մի ստվեր նկատեց, որ իրեն տեսնելուց թե ինչից — փախավ-մտավ անտառ։

«Երևի չոբանի շուն է»— մտածեց Կարոն, հիշելով, որ

մոտակայքում գոմեր կան, ուր ձմեռը ոչխար են պահում, և հիմա հովիվներից մեկը երևի այնտեղ է գնում իր շան հետ։

Այս մտքերով նա մտավ անտառ, ուր լուսթյունը հիմա ա՛յնքան խորն էր, որ լսվում էր ամեն մի փոքրիկ ձայն ու շարժում, երբ նա ոտը դանդաղեցնում էր մի ակնթարթ. մերթ լսվում էր, թե ինչպես է ձյունը թափվում ծառի ճղներից, ինչպես են ցրտից ծառերը ճաքում-տրաքում, ու էլի ինչ-որ շարժումներ. թվում էր՝ «մկծեռն» է երևի իր բույնը թռչում, մրկներն էին գուցե բնից-բույն անցնում, կամ նապաստակներն էին վազվզում մի բանից վախեցած։ Սկզբում դրանք գրավեցին Կարոյի ուշը, բայց հետո այնքան սովորական ու միօրինակ դարձավ այդ ամենը, որ էլ չուզեց ականջ դնել, մանավանդ որ պետք էր շտապել, իսկ շտապելիս ոտների ճռճռոցը խլացնում էր ամեն ինչ։

«Էնքան է սառած, որ երկու ոտը մի սելի ճռճռոց են հանում» — մտածեց Կարոն և նորից հանկարծ նկատեց այն ստվերը, որ տեսավ քիչ առաջ՝ անտառի պռունկին։ Այս անգամ ըստվերը երևաց ծառերի արանքում, մի բաց տեղ, ու նորից չքացավ արագ, տարօրինակ արագ քայլերով, կարծես վախեցավ իրենից։

«Սա էլի է՞ն չորանի շունն է, թե ուրիշ է» — մտածեց Կարոն, բայց իսկույն էլ նրա մտքով անցավ գյուղում լսածները, թե գիշերները մեկ-մեկ գայլեր են երևում։ Ծովի նանն էլ, քաղաքից դարձող գեղացիներն էլ կարծես նույն բանն էին ակնարկում։

«Ուրեմն գել է» — մտածեց նա, դեղի շիշը գրպանում շոշափելով, և ճանապարհը շարունակեց մի տեսակ զգաստացած, իրեն հավաքած՝ ձեռնափայտը ամուր բռնած և ուշադիր շուրջը նայելով։

Մի փոքր տեղ էլ գնալով՝ նույն ստվերը դարձյալ երևաց նրան ծառերի արանքում, որ շուտով ճանապարհը կտրեց նրա առջևից ու անցավ՝ աչքերը փայլեցնելով։

«Իսկական գել է», ասավ Կարոն կամացուկ, առանց շուրթերը շարժելու, բայց և առանց մեծ երկյուղի, մտածելով, որ դա այն կատաղի գայլերից չէ, որ մարդ է վնասում. ավելի շուտ — դա աչքը վախեցած գայլ է, որ փախչում է։

«Հառաջ, երևի, կարծեց ձեռքս քան չկա, բայց ձեռնափայտս տեսավ-վախեցավ», ասավ էլի Կարոն ինքն իրեն և իր միակ զենքը՝ ձեռնափայտն ավելի պինդ բռնեց ու թրխկացնելով առաջ գնաց. ապա, գայլին ավելի վախեցնելու համար, սուլեց այնպես, կարծես շներ էր հիս անում նրա ետևից։ Կարոյին թվում էր, թե իր այդ սուլոցներից և փայտի թրխկոցից գայլը յոթ վերստ հեռու կփախչի իրենից։

Այդ ամենի հետ միասին նա քայլերն արագացրեց, որ շուտ դուրս գա անտառից. ով է իմանում — այդ մեկի փոխարեն կարող են մի քանիսը երևալ հանկարծ. պետք է շտապել։ Ուրիշ բան է մեկի դեմ կռվել, ուրիշ է — շատվորի...

«Ահա ինչու Մովի նանը ասաց գել-գազան կպատահի,— նորից հիշեց Կարոն։— Իշավորներն էլ, երևի, բան գիտեին, որ ասին՝ շտապի»...

Նվ ձյունների ճռճռոցն այժմ նրա մեջ առաջ էր բերում երկու տեսակ զգացում. մեկ թվում էր, թե դա լավ է. եթե մոտիկ գայլեր լինեն — կկարծեն շատ մարդ է անցնում, չեն մոտենա. մեկ էլ մտածում էր, թե, ընդհակառակը, այդ ճրոճճրոցը կարող է գրավել և հեռվում գտնվող ուրիշ գայլերի ուշադրությունը։ Բայց ինչ էլ լիներ, Կարոն գտնում էր, որ ամենից լավը, ամենից կարևորը — շտապելն է։ Շտապելով միայն կարող է ազատվել վտանգից և գեղը ժամանակին հասցնել հիվանդ երեխային։ Ափսոսում էր, որ իզուր լուցկի չի վերցրել, որովհետև լսել էր, որ այսպես ժամանակ լուցկին մեծ գործ է տեսնում։ Բայց ոչինչ. փայտը ձեռին է. մի փայտ, որ տասը գայլի գլուխ կարող է ջարդել...

Նվ երբեք ձեռնափայտը Կարոյին այնքան անհրաժեշտ ու կարևոր չէր թվացել, ինչպես այդ ժամին։

— Մոտեցիր մի՝ գլուխդ ջարդեմ,— ասավ նա լսելի ձայնով, գայլի հասցեին, որ էլ չէր երևում։

«Ով գիտի, հենց վախեցավ-փախավ», մտածեց նա, հիշելով, որ մենակ գայլը վախենում է հարձակվել մարդու վրա։

Բայց, պատկերացրեք նրա զարմանքը, երբ հանկարծ, ճանապարհի ուղղությամբ նայելիս, նկատեց, որ գայլը ետին ոտների վրա նստած է ճանապարհի մեջտեղը և զույգ ճրագի պես վառ աչքերով նայում է իր կողմը։



Այս ... արույի սիրտը ահ ընկավ։

— Ինչպես երևում է՝ սրա գլուխը ցավում է,— ասաձ նա նորից լսելի ձայնով և, մի ձյան կոշտ վերցնելով, նետեց դեպի գայլը, մտածելով փախցնել նրան։

Բայց այս անգամ գայլը չփախավ. նստած տեղից վեր կացավ՝ ետ-ետ գնաց մի քիչ՝ աչքերը միշտ Կարոյի վրա, և նորից կկզեց ճանապարհի մեջտեղը։

Կարոն նորից ձյունակոշտ նետեց։

Գայլը նույնն արավ։

Եվ այս բանը կրկնվեց մի քանի անգամ։

Գայլը համառում էր։

Տեսնելով այդ՝ Կարոն, վախից ձեռնափայտը բարձրացրած, գնաց դեպի գայլը՝ նրան վախեցնելու և փախցնելու։

Եվ փայտն իրոք ազդեց։

Այս անգամ գայլը ճանապարհից դուրս եկավ դանդաղ, կարծես ակամա, ու մտավ անտառ։ Եվ Կարոյին թվաց, թե նա բոլորովին փախավ, ինքը ճանապարհը շարունակեց խրոխտացած, որ, վերջապես, քշեց նրան, բայց մի տասը-քսան քայլի վրա հանկարծ ետևից թեթև ոտնաձայն լսեց. ետ նայելով՝ տեսավ նորից գայլը գալիս է զգույշ ցատկումներով։ Կարոյի շրջվելուն պես՝ նա կանգ առավ բավական հեռավորության վրա։

— Չէ, մինչև քու գլուխը չջարդեմ՝ դու չես հանգստանա,— խոսեց Կարոն ինքն իրեն ու նորից մի ձյունակոշտ նետեց դեպի գայլը։ Սա, աչքերը փայլեցնելով, մնաց համարյա նույն տեղը կանգնած. չփախավ։

Այդ զարմացրեց Կարոյին և նա դարձյալ կռացավ նոր, ավելի խոշոր ձյունակոշտեր վերցնելու, բայց հանկարծ ըզգաց, ավելի շուտ ականջին հասավ։ էլի մոտիկ քայլերի ձայն և, մինչև գլուխը կբարձրացներ նայելու, տեսավ գայլը ատամները բաց գալիս է դեպի իրեն։ Գայլը, երևի, նկատեց՝ մարդը ազդող զենք չունի — համարձակություն ստացավ։

Բայց Կարոն էլ ժամանակ չկորցրեց. ձեռի ձյունակոշտը խփեց ուղիղ գայլի ճակատին...

Գայլը վնգաց, ատամները չրխկացրեց ու նորից գնաց դեպի Կարոն։

Սակայն այս անգամ էլ Կարոն իրեն չկորցրեց. ձեռնափայտն էլ ո՞ր օրվա համար էր. նա անմիջապես վրա բերեց ձեռնափայտը, որ հարվածի գայլի ճակատին, բայց հանկարծ... չգիտես անզգույշ շարժումի՞ց, թե կաղ ոտն անսովոր դիրք ընդունեց — նա սահեց ու ընկավ մի ծունկի վրա, իսկ գայլը բերանով բռնեց ձեռնափայտը և իսկույն էլ, կարծես արհամարհանքով, գցեց գետին և նորից գնաց դեպի Կարոն։

Փայտից զրկված Կարոյի զենքը մնացին ձեռները. նա մեկ ուզեց վեր կենալ և ձեռներով սեղմել գայլի կոկորդը, բայց ուշ էր.— գայլն այնքան մոտ էր, որ վեր կենալու ժամանակ չեղավ. այդ պատճառով նա հենց չոքած տեղը ձեռները բռնեց այնպես, որ գայլի մոտենալուն պես՝ օղակ անի և սեղմի նրա կոկորդը...

Բայց գայլը կարծես հասկացավ նրա միտքը, թե վախեցավ նրա ձեռների այդ դիրքից,— թեքվեց իսկույն, երևի, կողքից կամ թիկունքից հարձակվելու։ Կարոն օգտվեց գայլի այդ շարժումից և ձեռով ձյունափոշի նետեց գայլի երեսին, աչքերին ու, արագ ոտի ցատկելով, գնաց դեպի ձեռնափայտը, որ ընկած էր մոտիկ. բայց գայլը ձյունոտ գլուխը թափ տվեց ու նորից առաջացավ, պատրաստվելով հարձակվել ուղիղ նրա փորին կամ կրծքին։

Այստեղ Կարոն տնքաց հուսահատ՝ մոնչալու պես, և ձեռը, վերարկուի թևքով փաթաթած, վրա բերեց՝ նրա ճակատին զարկելու, բայց գայլը միայն ցից ատամներով բերանը բաց արավ նրա բռունցքի առաջ։

Այդ ժամանակ կատարվեց անսպասելի մի բան.— Կարոն կատաղած, էլ անելիքը չիմանալով, ձեռը թափով տարավ դեպի նրա բաց բերանը և տնքաց.

— Դե՛, առ, ըհը՛...

Եվ ձեռը կոխեց գայլի բերանն ու սեղմեց առաջ, էլ չմըտածելով, թե ինչ է անում։ Նրա վերարկուի քիպ թևքը ձեռի հետ միասին մտավ գայլի բերանը։

Գայլը, այդ անակնկալից կարծես զարմացած, ետ ընկրկեց, որ բերանն ազատի, բայց Կարոն էլ չթողեց նրան— ինքը գնաց գայլի հետ և աշխատեց ձեռը թևքի հետ մասին՝

ավելի խորը խրել նրա բերանը, զգալով, որ դա նեղում է նրան։ Գայլը շարունակում էր կկզած ետ-ետ գնալ, և Կարոն գնում էր նրա հետ միասին. այժմ միայն գիտակցում էր, որ եթե ձեռը հանի, գայլն այս անգամ կատաղած պատառ-պատառ կանի իրեն... Ու այս մտքերով նա շարունակում էր ձեռն էլի մղել գայլի կոկորդը, չզգալով որ էլ առաջ գնալու տեղ չկար։

Եվ մի առ ժամանակ Կարոն ու գայլը անձայն, բայց կատաղի տնքալով ու հևալով մենամարտում էին ձյունների վրա, ետ ու առաջ գնալով կամ պտտվում միևնույն տեղը՝ սառած ձյունները քանդելով։ Գայլն այլևս չէր կարողանում ո՛չ բերանը բանալ, ո՛չ ձայն հանել. երբեմն միայն ջանում էր ծառս լինելով, առաջին ոտներով խփել Կարոյին։ Սակայն Կարոն շարունակում էր նույնը.— աշխատում էր ձեռն առաջ մղել նրա կոկորդում, և նրան թվում էր, թե ձեռն էլի առաջ է գնում...

Կարոն ջուրջն այլևս ոչինչ չէր տեսնում, մանավանդ չէր զգում ցուրտը։ Ընդհակառակը — վերաբերում թվում էր նեղում է, քրտնեցնում։

Որքան տևեց մարդու և գազանի այդ պայքարը,— Կարոն չէր կարող ասել — մեկ էլ նա զգաց, որ գայլն ընկավ խեղճացած։ Կարոն ձեռը չհանեց նրա բերանից. նրան թվաց՝ գայլը խորամանկություն է անում.— ընկնում է, որ ձեռը դուրս գա բերանից։

«Ներողություն կանեմ», ասավ Կարոն մտքում և ինքն էլ կռացավ գայլի հետ միասին, այս անգամ ձախ ձեռքով դրբոից սեղմելով նրա վիզը։

Գայլն ընկավ ու փռվեց մի կողքի. Կարոն ավելի կռացավ, նորից ուժ տալով ձեռքին. բայց հիմա զգում էր, որ ձեռն այլևս առաջ չէր գնում։ Գայլը խռխռում էր, և Կարոյին նորից թվում էր, թե գազանը կեղծում է։ Մի երկու անգամ նա ցընցվեց ու ոտները ձգեց, բայց Կարոյին դարձյալ թվաց, թե «ստում է անում»։

Ու մի առ ժամ գայլը ո՛չ շարժվում էր, ո՛չ խռխռացնում, և Կարոն ձեռը նրա բերանի մեջ, կռացել էր նրա վրա այնպես, որ հեռվից տեսնողը կարող էր կարծել, թե գայլի բերանից բան է հանում...

Այդ դիրքում, եղավ մի րոպե, նա հիշեց իր տունը, ապա դեղատունը, հիվանդ երեխային և առողջ ձեռով փորձեց շոշափել դեղի շիշն ու... կորցրեց ուշքը։

Առավոտը քաղաք գնացող կոլտնտեսականները գտան նրան գյուղից երկու կիլոմետր հեռու. նախ, հեռվից նկատեցին մի տարօրինակ տեսարան.— ճանապարհի վրա ընկած էր սև վերարկու հագած մի մարդ, ձեռը գայլի բերանում։ Դա շատ զարմացրեց նրանց։ Բայց նրանք ավելի զարմացան, երբ ճանաչեցին Կարոյին։ Գայլը սատկած էր, իսկ Կարոյի մարմինը դեռ տաք էր։ Գազանի կարկամած ծնոտները ետ տանելով՝ գայլի բերանից հանեցին նրա ձեռքը, որ աքյունոտ էր, և սկսեցին ստուգել, կենդանի՞ է Կարոն, թե ոչ։ Մեկը ձեռը դրեց նրա բերանին։ Շունչ կար։ Այդ ժամանակ աշխատեցին ուշքի բերել նրան՝ ճակատին, քունքերին ու սրտին ձյուն քսելով։

Երկար աշխատելուց հետո, վերջապես, նրան ուշքի բերին.— նա տնքաց հանկարծ ու աչքերը բաց արավ։ Եվ նրա առաջին խոսքը եղավ.

— Դեղը հո չի՞ կոտրել,— և թույլ, սառած առողջ ձեռը տարավ դեպի գրպանը և ասավ, շիշը հազիվ շոշափելով։ — Էս տվեք Ծովի նանին, Հարութի երեխի համար է...

Բայց քաղաք գնացողները Կարոյին է՛լ ցյուղ չթերին. սայլ նստեցրին ու հետները տարան քաղաք՝ վիրավոր ձեռը բժշկին ցույց տալու։

Գայլի ատամները երկու տեղ քերծել էին նրա ձեռի երեսը և մի երկու տեղ խրվել դաստակը։

Երբ երեկոյան դեմ նա տուն վերադարձավ ձեռը կրծքին կապած, կինը՝ Սալբին գլուխն օրորեց.

— Ոտդ քիչ էր, այ մարդ, գնացիր ձեռդ էլ սախատեցի՞ր...

Կարոն կնոջ խոսքերի մեջ զգաց և՛ վիշտ, և՛ հանդիմանություն, ու կարծես նրան հանգստացնելու, թե մխիթարելու համար նկատեց.

— Ոչինչ, այ կնիկ, կպատահի. մարդիկ հարամու առաջ կռիվ են գնացել, գելն ինձ կծի մե՞ծ բան է...

1941, 5/XII

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընթերցողներ	3
Հնձորի այգին	10
Ջրհորի մոտ	32
Գրադարանի աղջիկը	93
Հուժան Արշոն	155
Սև Սերոն	198
Վախուշք	246
Սավառնող դրոշ	253
Անիկը	261
Կաղ Կարոն	268

Խմբագիր՝ Հ. Գաֆիեյան, նկարիչ՝ Գ. Խուճուշյան,
գեղ. խմբագիր՝ Մ. Բադդասարյան, տեխ. խմբագիր՝ Է. Ջանջղավաձյան.
Վերատուգող սրբագրիչ՝ Ռ. Հովսեփյան

ՎՖ 01243 Պատվեր 1440 Տիրաժ 10 000

Հանձնված է արտադրության 11/XII 1959 թ.
Ստորագրված է տպագրության 12/II 1960 թ., թուղթ՝ 84×108 1/32,
տպ. 16,0 մամ. =14,76 պայմ. մամ., հրատ. 13,3 մամ.,
գինը 5 կ.

ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների և
պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության
Պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տիրյան 91։